

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԱՐԻ
ՀԱՅ ՌԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

ВАРАГ АРАКЕЛЯН

ЯЗЫК И СТИЛЬ АРМЯНСКОЙ
ПЕРЕВОДНОЙ ЛИТЕРАТУРЫ
ПЯТОГО ВЕКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

8
Ch-70

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱԺԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ

1787



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտ. քեկնածու
Ա. Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել զբախսներ՝
բանաս. գիտ. քեկնածուներ Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆԸ և
Պ. ԽԱԶԱՏՐՅԱՆԸ

Առաջին լրացումը Վ. Գ.

Ա. 706 Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության
լեզուն և ոճը /Պատ. խմբ. Ա. Ն. Մուրադյան.—Եր.: ՀՍՍՀ
ԳԱ հրատ., 1983.—229 էջ:

Աշխատությունը նվիրված է հայ անդրանիկ գրքի՝ Աստվածա-
շնչի լեզվի ու ոճի ուսումնասիրությանը: Տրված են լեզվի ու ոճի
ընթացությունը, հայոց լեզվի բառապաշարի գրականացման
պայմանները, բառերի իմաստային ու ֆրականական կառուցված-
քի ուսումնասիրությունը: Հանգամանորեն քննված են բառակազ-
մության եղանակները՝ բառարարդում, ածանցում, հարադրում,
որոնք հսկայական նշանակություն ունեցան գրարարի՝ գրական լե-
զու դառնալու հետագա ողջ պատմության համար:

Գիրքը նախատեսվում է հայոց լեզվի պատմությանը, ոճաբա-
նությանը, բառագիտությանը զբաղվողների և բոլոր նրանց հա-
մար, ովքեր հետաքրքրվում են մեր լեզվի հարցերով:

4602000000

Ա —————51—82
703 (02)—83

ԳՄԴ 81. 2 Հ
4Աբ

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կորյունը ասում է, թե գրերի գյուտը տեղի ունեցավ Մեսրոպի
մահից 35 տարի առաջ: Մեսրոպը վախճանվեց 439 թ. փետրվարի 17-ին:
Գրերի գյուտից հետո անմիջապես ձեռնարկվեց Աստվածաշնչի թարգ-
մանությունը, որը կատարվեց ասորերենից: Սակայն այս շտապանքով
կատարված թարգմանությունը չէր բավարարում մեր թարգմանիչներին՝
հատկապես Մեսրոպին ու Սահակին:

432 թվականին Եզնիկը և Կորյունը Բյուզանդիայից Հայաստան
վերադարձան՝ իրենց հետ բերելով Աստվածաշնչի մի ճշգրտված օրի-
նակ (Յոթանասնից թարգմանությունը), որ Բյուզանդիայի Մաքսիմիա-
նոս Երկրորդ կաթողիկոսը նվեր էր ուղարկել հայոց կաթողիկոս Սահա-
կին: Հիշյալ օրինակը ստանալով՝ Սահակը, Մեսրոպը և իրենց ավագ
աշակերտները՝ Հովհան Եկեղեցացին, Հովսեփ Պաղնացին, Մուշե Տարո-
նացին, Տիրայր Խորձենացին, որոնք մասնակցել էին վաղորոք կատար-
ված թարգմանական գործին, կրկին ձեռնարկեցին Աստվածաշնչի նոր
թարգմանությանը ըստ նոր բերված վավերական օրինակի: Այս նոր ձեռ-
նարկին մասնակցից դարձան նաև Եզնիկ Կողբացին, Ղևոնդ Վանանդեցին,
Կորյունը, Հովսեփ Վայցձորեցին, Աբրահամ Արած գյուղից և Արձան
Արծրունին: Ավագ աշակերտների թվում են եղել Բասենի եպիսկոպոս Թա-
գիկը, Դանանը և Ենոկը: Վերջին երկուսը Հայաստանի հունական մասից
էին, որոնց Մեսրոպը դպրոցների վերակացու էր նշանակել հունական մա-
սի Հայաստանում:

Ըստ Կորյունի Մեսրոպի առաջին իսկ թարգմանական փորձերին,
որոնք կատարվեցին Սամոսատում, մասնակցից են եղել Հովհան Եկե-
ղեցացին և Հովսեփ Պաղնացին: Սրանք Մեսրոպի հետ են եղել, երբ նա
վերջնականորեն ձևավորելով մեր հոյակապ այբուբենը հենց Սամոսա-
տում՝ սկսեց Առակաց գրքի թարգմանությունը: Ավագ աշակերտների
մեջ հիշատակվում է նաև Աբրահամ Խոստովանողը, որ ասորերենից
թարգմանել է «Վկայք արևելից» գիրքը:

Աստվածաշնչի թարգմանությունը V դարի սկզբում միանգամից

չէր կարող զլուս բերվել, առնվազն 10-ից 15 տարի էր հարկավոր, որպեսզի մեր դեռևս մեծ փորձ շունեցող թարգմանիչները այն ժամանակվա դժվարին պայմաններում կարողանային այդ հսկա գրքի հասցումը զլուս բերել: Այլ լեզուներով Աստվածաշնչի թարգմանության տեղումը մեզ այդ է թեկադրում: Յոթնասնից թարգմանությունը (հունարեն) տևել է 150 տարի. այդ թարգմանությունը կատարվել է ընդհատումներով և ունի բազմաթիվ անճշտություններ: Լատիներեն թարգմանությունը տևել է 20 տարի: Լուսիքը երկու այլ թարգմանիչների օգնությամբ Աստվածաշունչը գերմաներենի թարգմանեց տասներեք տարվա ընթացքում: Անգլերեն թարգմանությունը, որին մասնակցել են 47 թարգմանիչներ, տևել է չորս տարի:

Նշված փաստերը ցույց են տալիս, որ այդպիսի մի գրքի թարգմանությունը թե՛ ժամանակի և թե՛ դժվարության զույգ տեսակետներից մի բարդ ու պատասխանատու գործ էր մեր մտավոր շարժման արշալույսին: Բոլոր հին թարգմանությունների սրբագրությունները վեր են հանում բազմաթիվ սխալներ, վրիպումներ, անճշտություններ, որոնք հին ժամանակների համար հասկանալի են ու ներելի:

Հայերեն Աստվածաշնչի համեմատությունները երբայական և հունական բնագրերի հետ բացահայտում են ավելի քան երեք տասնյակ հազար զանազանություններ, վրիպումներ, թերացումներ և այլն: Հին կտակարանի համեմատությունները տալիս են ավելի մեծ քանակությամբ զանազանություններ, քան նորինը: Սրա պատճառն այն է, որ հայերեն Հին կտակարանը թարգմանված է հունարենից, և հայերենի ու Եբրայերենի անհամապատասխանությունները գերազանցապես հունարեն թարգմանության վրիպումների հետևանք են:

Ինչո՞ւ Մեսրոպը սկսեց Առակաց գրքից, երբ Աստվածաշնչի բազմաթիվ թարգմանություններ սկսում են Սաղմոսներից, որոնք եկեղեցական ասմունքի նյութեր են, իսկ Առակաց գիրքը նման նյութեր չի պարունակում, մինչդեռ առաջին հերթին անհրաժեշտ էր եկեղեցական ասմունքի նյութերը թարգմանել: Աստվածաշնչի թարգմանության պատմությունը ուսումնասիրողները այն կարծիքն են հայտնում, որ Մեսրոպի ձեռքի տակ Աստվածաշնչի լիակատար օրինակ չի եղել: Նա ունեցել է այնպիսի մի օրինակ, որ սկսվել է Առակաց գրքով:

Կան նաև այնպիսի ուսումնասիրողներ, որոնք հենվելով Փարպեցու և Թովմա Արծրունու հաղորդումների վրա՝ պնդում են, թե Սաղմոսները նախապես թարգմանված են եղել, և Մեսրոպը չէր կարող այդ թարգմանություններին քաջածանոթ ըլինել, ուստի և նա Սաղմոս-

ները թողեց, սկսեց Առակաց գրքով: Փարպեցին գրում է. «Որ և զմնացորդս ժահհոտ, շարահամ խորակին իւրոյ գթող զաւակին իւրում ըստ գրեցելումն ի վեշտասաներորդումն Սաղմոսին. «Յագեցան կերակրօք, ասէ, որ միւս թարգման խողենեաւ ասէ»¹:

Փարպեցին առանց կասկածանք թողնելու հիշատակում է երկու թարգմանությունների մասին: Պարզ է, որ երկու թարգմանություն միաժամանակ չէր կարող լինել. մեկը պետք է առաջ լիներ կատարված: Իսկ նախնական թարգմանությունը, որ բերվում է իբրև հակադրություն նորի, որտեղ բառն է կերակուր, կերակուր-ի փոխարեն ունի խոզենի է:

Ավելի բացահայտ է Թովմա Արծրունու վկայությունը: Թովմա Արծրունին գրում է, թե (Խուլթթ) «գիտեն զՍաղմոսսն զհին թարգմանեալս վարդապետացն Հայոց, զոր հանապազ ի բերան ունին»²: Արծրունին պարզ գրում է, որ եղել է նաև հին թարգմանություն, իսկ խուլթցիները այդ թարգմանությունը անգիր գիտեին: Այսպիսի տվյալները չի կարելի աչքաթող անել, չնայած Կորյունի այն պարզ ցուցումին, թե Մեսրոպը կարևորություն տվեց իմաստությանը, որ սրանով խրատի իր ժողովրդին, ուստի և սկսեց Առակաց գրքից: Հավանորեն Կորյունը Մեսրոպի հեղինակությունը բարձրացնելու համար չի հիշատակում նախորդ թարգմանությունները, որոնք հատ ու կենտ հատվածներ են եղել և այն էլ Սաղմոսներից: Կան ուրիշ վկայություններ ևս Սաղմոսների նախնական թարգմանության մասին: Եկեղեցական գրքերում բազմաժամ Սաղմոսների լեզուն զանազանվում է ընդունված ու կանոնիկ թարգմանությունից, որը մեսրոպյանն է:

Մյուսինս ենում պահպանվում է մի ձեռագիր, որտեղ առանձին գրությունամբ նշվում է, թե Թեոդոսը լսելով Սաղմոսների հայերեն թարգմանության մասին, խիստ բարկացել է, որ այլևս հունարենը չի գործածվելու հայկական եկեղեցիներում:

Իհարկե, այս ամենը ավելի պատշաճում են Աստվածաշնչի թարգմանության պատմությանը և լեզվին վերաբերում են այնքանով, որքանով բառական և նույնիսկ քերականական տարբերություններ կան հին պատառիկների և ընդունված կանոնիկ թարգմանության միջև: Ընթացքում այս մասին պատշաճ չափով կխոսվի, որովհետև հին թարգմանությունը գրական լեզվի պատմության համար շատ կարևոր նշանակություն ունի: Եվ եթե թեկուզ Աստվածաշնչի թարգմանության սահման-

1 Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 41:

2 Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 121:

ներում մեր գրականության սկիզբը դեպի առաջ շարժվի մի քսան-երեսուն տարով, մեծ բան կլինի:

Հինգերորդ դարի հայերենը իր առաջին գրական մկրտությունը ստացավ թարգմանական գրականության ավազանում: Բնական է, որ գրականության առաջին ստեղծողները շէին կարող անմիջապես ինքնուրույն երկեր գրել: Նրանց անհրաժեշտ էր ուսումնառության մի որոշ ժամանակաշրջան, մինչև որ վարժվեին գրելու արվեստին և հունի մեջ մտնեին: Գրելու ուսումնառությունը սկսվեց թարգմանությամբ:

Հայ գրագետ դասի հիմնական նպատակը սկզբնապես քրիստոնեական գրականություն ստեղծելով էր սահմանափակվում: Հեթանոսությունը դեռևս նոր թողած հայր լրիվ չէր կարող ձեռքադառնալ իր հին կրոնի ծեսերից ու սովորություններից, որոնք ունեին գրավիչ շատ կողմեր և նրան առիթ էին տալիս ունենալու զվարճալի և ուրախ կյանքի բազմաթիվ հնարավորություններ: Քրիստոնեական կրոնը շուայլ ու ցոփ կյանքը, հեթանոսական զվարճալի հանդեսները և կյանքի բազմաթիվ այլ գրեկտորումներ համարում էր մեղսական և ձգտում էր կանխել դրանք՝ համարելով աստվածային օրենքներին հակառակ, մարդու հոգեկան կյանքի և կատարելության թշնամի: Հեթանոսությունը առաջնությունը տալիս էր մարմնին, իսկ քրիստոնեությունը՝ հոգուն, անձնազրկությունը, այլասիրությունը: Բանավոր քարոզներով հնարավոր չէր մարդուն կտրել իր ցոփ ու շուայլ կյանքից, գերհաճելի զվարճանքներից ու հանդեսներից: Անհրաժեշտ էր հեղինակավոր գրական խոսքը իսկ այդ դարերում ամենահեղինակավոր խոսքը Աստվածաշունչը կամ Սուրբ գիրքն էր, որի հանդեպ հայ քրիստոնյա մարդը չէր կարող երկյուղածություն չունենալ: Հայ մարդը ի բնե գրքի հանդեպ պաշտամունքի խորհրդավոր զգացում է տածել, առավելապես այդպես է վերաբերվել Աստվածաշնչին, որից նրան հատվածներ էին կարդում և թարգմանում, և որը նա կոչում է «Աբբազան պատմություն»: Այն կարծիքը կա, որ Աստվածաշունչը սկզբնապես բանավոր է թարգմանվել և անգիր արվել: Այդպիսի կտորներ կան ճաշոցներում, որ մոտ են ասորական բնագրին:

Մեր առաջին գրագետների հիմնական մտահոգությունը Աստվածաշնչի հայացումն էր, որին էլ անմիջապես ձեռնարկեցին նրանք, երբ Մեծ Մեսրոպը իր փրկակար գյուտով վերադարձավ Հայաստան V դարի նախաշեմին:

Իսկ ինչո՞ւ ամենից առաջ հենց այս գրքի թարգմանությունը ձեռք գարկեցին մեր առաջին ուսուցիչները: Նախ և առաջ ասենք, որ այս

գիրքը պաշտոնապես ընդունված էր իբրև քրիստոնեական կրոնի ուսմունքի հիմք: Այս գրքի քարոզները, պատմությունները, ճառերը, հորգորները, ողբերն ու հերոսապատմաները իրենց բովանդակությամբ և նպատակադրությամբ համապատասխանում էին քրիստոնեական կրոնի ուսմունքի բուն էությունը և պահանջներին:

Աստվածաշունչը իր հիմնական մասով մի հին ժողովրդի փոթորկալից կյանքի բազմադարյան պատմությունն է, նրա մտավոր ու հոգեկան կյանքի հանրագիտարանը, ուր կուտակված են դարերի իմաստությունն ու փորձը՝ ձևավորված բարոյագիտական, իր ժամանակի համար բարձր, առաջադիմական գաղափարներով ու հայացքներով: Սա միաժամանակ այդ ժողովրդի գեղարվեստական մտածողության բարձր արտահայտությունն է, ուր բովանդակված են ժողովրդի գոյատևման համար մղված տևական ու դաժան պայքարների բազմազան դրվագները, նրա կյանքի ու կենցաղի, ապրելակերպի, պաշտամունքի, աստվածների ու հերոսների նկարագրությունն ու բնութագրերը, կրոնական հիմներն ու փառաբանությունները: Յոփություն, անառակության դատապարտումը, տոկոսություն, կամքի, հավատքի դրվատումն ու ջատագովումն է Աստվածաշունչը, իմաստությունների, գեղարվեստական փայլուն դրվագների, տեսիլքների, խրատական կանոնների մի հսկա ժողովածու է, որի հայացումը մեր գրական լեզվի կազմավորման շեմին չափազանց անհրաժեշտ էր ժողովրդին հեթանոսական խավարից դուրս բերելու և գրական մշակույթին վարժեցնելու համար:

Հեթանոսական բազմաստվածություն, բարոյական խառնակեցության, արյունապղծության, կյանքի ու ապրելակերպի անսանձության ու ապերասանության փոխարեն այս գիրքը հայ մարդու առաջ բաց պիտի աներ իմացական կյանքի ու բարոյական խստակեցության նորություններ: Այստեղ քարոզվում էին սեռական ժուժկալություն, ընտանեկան միասնություն ու հավատարմություն, մարդասիրություն, հայրենապաշտություն, հերոսական անձնուրացություն: Տրվում էին երկնքի ու երկրի մասին իմացություններ ու գաղափարներ: Աստվածաշնչի մեջ անողորարար պատժվում են դավաճանությունը, հայրենադավությունը, անօրինականությունը, պարտազանցությունը, վախկոտությունը, ամեն կարգի մոլություններ:

Գողթան երգերով, հեքիաթներով, հնավանդ առասպելներով հոգեվոր սնունդ ստացած հայության սրտին ու մտքին իր ոգեշունչ դրվագներով, արևելյան վառ երևակայության թռիչքներով, կյանքի իմաստուն խորհուրդներով, միաստվածության թարմ քարոզներով շատ էր պատ-

շահում Աստվածաշունչը: Հայության համար սա սթափման խթան էր ու ազդակ, որ թափ ու թոփշ պետք է տար նրա մտքին ու երևակայությանը, օժտեր նրան հերոսական սխրանքներով և մոլի կյանքի նկատմամբ երկյուղածության զգացումով: Եվ մեր առաջին զրագետները ժողովրդի մտավորական առաջնորդները Աստվածաշունչի թարգմանությունները լիովին հասան այն նպատակներին, որոնց հետամտում էին:

Մեր թարգմանիչները ոգեշունչ քրիստոնյաներ էին, մի բազմադարյան ժողովրդի իմացական ու գեղեցկագիտական մտքի ընտրանին, որ ստացել էր ժամանակի դասական կրթություն և քաջատեղյակ էր լեզվական արվեստի գաղտնի շնորհներին ու գեղեցկություններին: Այս ոգեշունչ ընտրանին Աստվածաշունչը թարգմանեց շքեղ մի հայերենով, որ ժողովրդի լեզուն էր, գեղեցիկ էր ու ծաղկուն, ուներ նոր հնչեղություն, բառապաշարի ու բառակապակցությունների թարմ ու գրավիչ մի հարստություն, որ իր նոր իմաստավորումով, անսովորությամբ հանդերձ հարազատ էր ժողովրդին, մոտ ու մտերմիկ էր նրա մտքին ու ոգուն:

Մեր թարգմանիչները Աստվածաշունչը վերածեցին ինքնուրույն գրքի, ազգայնացրին, հայացրին: Եվ այդ գրքի հեղինակությունը մեր ժողովրդի մեջ բարձր է ոչ միայն նրա համար, որ այն քրիստոնեական կրոնի ուսմունքի ամփոփագիրն է, այլև նրա համար, որ իր լեզվով ու ոճով հայացել, ազգայնացել է:

Հայ թարգմանիչները թարգմանական արվեստի հմտության հետ դավանում էին լեզվատճական առաջադիմական սկզբունքներ: Նրանք այդ հսկայական գիրքը թարգմանեցին՝ հավատարիմ մնալով ժողովրդի ոճին, խոսքաշինության արվեստին՝ ունենալով գեղեցկագիտական ներզգացողություն: Նրանք երբեք չհասարակացան, միշտ մերժեցին պարզունակությունն ու գոեհաբանությունը: Եվ սա իր պատճառները ուներ:

Աստվածաշունչը թարգմանվում էր ժողովրդի համար. թարգմանիչների ազնիվ մտահոգությունն էր այնպես թարգմանել, որ ժողովրդի բոլոր խավերը կարդան ու հասկանան. բայց և կար մի այլ պարագասրբազան գիրքը պետք է ունենար իր պատշաճ լեզվատճական մակարդակը, որ թարգմանիչները չէին կարող նկատի չունենալ, մանավանդ որ հին կրթության մեջ ոճաբանությունը ճարտասանական արվեստի սկզբունքների տեսանկյունով ուսուցվում էր: Ահա այդ երկու հակադիր թվացող սկզբունքներին միացած թարգմանիչների մեծ հմտությունն ու տեսլական ոգեշնչությունը՝ ստեղծեցին լեզվական արվեստ

այն բարձր կոթողը, որ կոչվում է հայերեն Աստվածաշունչ: Համարձակվում ենք ասել, որ դրանից հետո էլ հայերեն լավ թարգմանություններ եղան, բայց դրանք չազգայնացան, չհայացան, մնացին իբրև թարգմանություններ՝ օտար մտածողության հետքերով, որոնք արտահայտվեցին բառակապակցություններով, շարադասությամբ, անհետևողությամբ, բառիմաստների անորոշությամբ, մասամբ բառապաշարով և մանավանդ հայերենին անհարազատ խրթնարանությամբ:

Որքան էլ որ մեր թարգմանիչները անփորձ են եղել, որքան էլ Մուրք գրքի հեղինակությունը կաշկանդել է նրանց հավատարիմ մնալու այդ գրքի ոգուն և տառին, բայց այն հանգամանքը, որ այդ գիրքը ըստ ամենայնի պետք է հասկանալի դառնար հային, պետք է ոգեշնչեր նրան, պատրաստեր իբրև նոր կրոնի ու հավատքի երկրպագու, մեր թարգմանիչները ձգտել են ամեն ինչ հայացնել, թագմանել են մինչև իսկ օտար անունները և իրենց կարողությունների սահմաններում ամեն ինչ արել են, որ Աստվածաշունչը դառնա ազգային գիրք, որ հայի համար այնտեղ ամեն բան պարզ ու հասկանալի լինի:

Այսօր նույնիսկ զարմանալ պետք է, թե ինչպե՞ս են երկնային մարմինների անունները մեր թարգմանիչները հայացրել. օրինակ՝ Որ արար զբազմաստեղսն և զգիշերավարն և զսայլն և զշտեմարանս հարաւոյ (Յովք. Թ, 9): Այսպես հայացված են օրիոնը (Հայկ), էսոֆորոսը (Արուսեակ), Պլեյադեան՝ (բազմաստեղք), տամիեոն նոսու (շտեմարան հարաւոյ), դեամե օրիոնոս (պատրուակ Հայկին), Արկտուրոս՝ (սայլ) և այլն:

Դժվար գործ է եղել թարգմանիչների համար նաև ոգիների և այլ աստվածությունների անունները հայացնել: Այդ անունները այնքան խառնակ են, որ անկարելի է միմյանցից զանազանել: Այսպես՝ մաեափս թարգմանված է գէտ, և իլձ, պնեումա՝ վնուկ, օրոնոմանափա՝ հաաեմայ և ուրիշ շատ հայացումներ. ինչպես գեանակոչ, համբարու, յուկապարիկ, ճիւաղ, հրաշաղեա կամ կիւսահմայ (թաումասիոս), Վաեազե, Վանատուր, սպանդարամէտ, նեռն և այլն:

Հայացված են բազմաթիվ կենդանիների ու բույսերի անուններ, որոնք լինելով հայերին անծանոթ՝ կարող էին մնալ նույնությամբ, բայց մեր թարգմանիչները ձեռնարկել են բոլոր հնարավոր միջոցներին թարգմանելու դրանք, որ նույնպես դժվար մի խնդիր է եղել. օրինակ հունարեն μόνοχερως, որ եբրայերեն reem է (վայրի ցուլ, գովեշ) թարգմանված է միեղջերու (եթե կամիցի՞ քեզ միեղջերուն ծառայել կամ հանգչել առ մսուր քո. Յոր 1Թ, 9):

Յաճախ թարգմանված է հունարեն πύργος բառին համարժեք, որ անթիլոսի մի տեսակն է. Խարբուզ թարգմանված է իբրև հունարեն πύργος բառին համարժեք. եբրայերեն aggo Անալուք, եբրայերեն zemer հունարեն χαμηλοπάρδαλις, որ ընձուղտ է նշանակում, իսկ եբրայերեն ունի վայրի ոչխար իմաստը: Պասկուճ, գետարծուի (Այլ պիղծ իցէ ձեզ արծուի, և պասկուն, և գետարծուի, Ղևոս ԺԱ, 13) համապատասխանում են հունարեն γρουπαστός μελαναετος, եբր. péres ozniyha: Լորամարգի (ծրύκια) եւ ևլ լորամարգին և ծածկեաց դրանակն. Ելք. ԺԶ, 13 (եբր. selav): Սրանց հետ մեզ ավանդված են հաւալուսն (πελέκανος), հաւապատիր (νοκτοκόραξ), հողամաղ (καταράχτης), քաջաճաւ (ίβρις), սիրամարգ, կոճվաղիաց (σαδρα), գետնափուժ (γαλαλέων), տիտեւն, մկնաքիս և այլն:

Բառապաշարի մասին խոսելիս՝ դեռևս կտեսնենք, թե Աստվածաշունչը ինչպիսի բառական գանձարան է ավանդել մեզ մեր կյանքի ու կենցաղի բազմաթիվ բնագավառներին:

Բայց մինչև այդ աճա մի փոքրիկ հատված, որ արձանագրված են զարդեղենների ու հագուստների ավելի քան երեք տասնյակ անուններ, որոնք վկաներ են մի ժողովրդի հարուստ լեզվի ու շքեղ կյանքի ու կենցաղի գոյություն: «Եւ խոնարհեցուցէ Աստուած զիշխանս գետեր Սիոնի և մերկասցէ Տէր զզարդ նոցա: Յաւուր յայնմիկ հանցէ Տէր զփառս հանդերձից նոցա և զպատմունանս նոցա, և զմիսս, և զժամակայս և զպսակակայս, և զմանիկս, և զզարդ երեսաց նոցա, զպատմունանս զարդու փառաց նոցա, և զօղէս, և զպարանջանս, և զմեհեւանդս, և զգինդս, և զմատանիս, և զկշտապանակս նոցա, զղիպակս և զճեղանակս, զեգրածիրանին, և զմիջնածիրանին, զառտոնին արկանելի և զերկելի լակոնացին, զբեհեզն, և զերկնագոյն և զկարմիր շղարշատեոն, և զճամկատուն, և զոսկեհամուկն և զոսկետառուն:

Եւ եղիցի փոխանակ հոտոցն անուշից փոշի, և փոխանակ կամարացն՝ շուանգօտի, և փոխանակ ոսկի զարդու զլիսոյն՝ կնտութիւն... և փոխանակ ոսկեհոն գիպակին քուրձ զգեցցիս: (Եսայի Գ, 17—25):

Հայերեն աստվածաշնչում հայացված ենք գտնում եբրայական բնագրի տեղանունները: Այսպես՝ Փաստան Արամ թարգմանված է Միջագետք Ասուրոց, Բեքսաբէլ՝ Զինուր Երդման, Մափեկա՝ Այր կրկին, Բեքէլ՝ Տուն Աստուծոյ, Գաղաադ՝ Կարկառ վկայ, Մասփա՝ տեսիլ, Մանայիմ՝ բանակներ, Առկփովր՝ խոհաններ և այլն:

Հայերենը երբեմն ընդարձակում է բնագրի արտահայտությունը, դարձնում է պատկերավոր. հունարեն՝ ձիով սպիտակօք-ը հայերենը դարձրել է ձիով զգեցեալ բեհեզս սուրբս և սպիտակս (Յայտ ԺԹ, 14): Հունարեն՝ նախանձեցուցից գմարմին իմ անորոշ նախադասությունը հայերենում դարձել է՝ նախանձ արկից նոցա մարմնով իմով (Հոովմ. ԺԱ, 11): Հունարենը՝ Ի վերստին ծննդեանն, հայերենում՝ Ի միսանգամ զլստեանն:

Հունարենում բազմաթիվ նախադասություններ պակասում են. հայերենը ավելացնում է կամ ավելի հասկանալի դարձնելու և կամ լրացնում է. Հայերենում՝ Եւ ստացուածք ամենայն՝ առչառ ոչխար... կապակցութեան մեջ հունարենը շունի Եւ ստացուածք ամենայն (Յայտ. ԺԹ, 14): Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք... այր մի տնկեաց այգի. հայերենը այր բառից առաջ ավելացրել է և աւել, որովհետև միայն հայերենը է ուրիշի ուղղակի խոսքը կապակցվում հեղինակային խոսքի հետ (Մարկ. ԺԲ, 1): Յորժամ կոշիցէ ոք զքեզ ի հարսանիս. հայերենը այստեղ ավելացնում է նաև կամ ի կոշունս (Ղուկ. ԺԴ, 8): Եւ հոսէին ի նմանէ քրտուեք իբրև զկայակս արեան հեղեալ յերկիր. հայերենը հեղեալ բառից առաջ ավելացրել է ոլոռ-ն ոլոռն (համեմատիր ժողովրդական՝ քրտիւք զլուլ-զլուլ կարում էր (տե՛ս Ղուկ. ԻԲ, 44): Այսպիսի փոփոխությունները դրբի անորոշությունները դարձնում էին պարզ ու մեկին, խոսքին տալիս էին հայացի կերպարանք և օժտում էին որոշ պատկերավորությամբ ու արտահայտչությամբ: Անշուշտ այն ժամանակ դյուրին չէր Աստվածաշնչի նման մի ահռելի դրբի թարգմանությունը, դյուրին չէր Աստվածաշնչի նման մի ահռելի դրբի թարգմանությունը, երբ չկային օժանդակ գրքեր ու բառարաններ: Եվ ճշմարտության դիմ մեղանչում չի լինի, եթե ասենք, որ թարգմանիչները հաճախ հանդիպել են զժվարին ու անհասկանալի արտահայտությունների և դրանք մեկնել են յուրովի: Այս իր հերթին. բայց կան տեղեր, որոնք թարգմեկնել են յուրովի: Այս իր հերթին. բայց կան տեղեր, որոնք թարգմանված են հայացման նպատակադրումներով, հայ ընթերցողին հաջողատունք նոցա» արտահայտությունը թարգմանված է «Հայկին հանդերձ և ամենայն զարդուն երկնից» (Եսայի ԺԳ, 10): «Եւ քո բացեալ իցէ զպատրուակ Հայկին» (Յովթ ԼԸ, 31): Հրեական Երկիրն Արարադայ, արտահայտությունը թարգմանված է «Ի Հայս» (Եսայի ԼԷ, 38): «Եւ անուն նորա եբրայեցերեն Աղբաղոն, որ կոչի ի հայ բարբառ կորուստ» (Յայտ. Թ, 11): «Եւ եմուտ Եսթեր առ արքայն յերկոտասաներորդ ամսեանն Ադար, որ է հայերեն Արեգ» (Եսթ. Բ, 16):

Աստվածաշունչը հրեական ու հունական բնագրերից վերածվեց

հայկական բնագրի, որ դարձացրեց աշխարհահռչակ աստվածաշնչագետներին իր թարգմանական արվեստով ու ինքնուրույնությունով և կոչվեց «Իշխոյ համօրէն թարգմանութեանց Սուրբ Գրոց»:

Աբեղյանը խոսելով Աստվածաշնչի լեզվի մասին նկատում է. «Ս. Գրքի ազդեցությունը մեծ է եղել ոչ միայն հայկական ժողովրդական բանահյուսության վրա, այլ նույնչափ, և ավելի ևս գրավոր դպրութեան վրա, թե իր բովանդակությամբ և թե ձևով: Մի կողմ թողնելով այդ գրքի ազդեցությունը կրոնական գրվածքների բովանդակության և գաղափարախոսության նկատմամբ, պետք է շեշտել, որ նրա լեզուն օրինակելի է դարձել բոլոր գրողների համար և հարատև իշխել է բոլոր դարերում: Աստվածաշնչի լեզուն սկզբից հենց մեր հին գրականության համար դարձել է կլասիկական իր քերականությամբ, իր բառերով ու դարձվածքներով, պատկերավոր ասացվածքներով ու բանաձևերով. և այսպես ոչ միայն կրոնական, այլև պատմական ու բանաստեղծական երկերի համար, մանավանդ այն հետագա շրջանում, երբ գրաբար լեզուն այլևս կենդանի խոսակցական չի եղել»³:

Մեր պատմիչները իրենց գրքերը Աստվածաշնչի ընդօրինակությամբ սկսում են Աշտարակաշինությունից, Նոյից ու նրա որդիներից և աստվածաշնչական այլ պատմական ելակետերից, իրենց խոսքերը այս կամ այն հարցի վերաբերյալ հաստատում են Աստվածաշնչի բանաձևերով. հաճախ էլ իրենց միտքը ուղղակի շարադրում են Աստվածաշնչի խոսքերով. օրինակ՝ «Իսկ մեր յոյսն այսմ ակն կալեալ սպասէ. և ձեր յուսահատութիւն այն է, զի ոչ ճանաչէք զԱրարիչն ձեր, որ պահանջէ ի ձէնջ վասն այնորիկ, զի ոչ ելէք ի խնդիր տեառն Արարչին ձերոց և ոչ ծանեայք զնա: Առդարև իսկ իբրև զձիս եղեք կամ իբրև զշոբրիս, զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն, և քան զեզն և զէշ ևս պակասամտագոյն գտայք, զի ոչ ծանեայք զձեր հաստիւն, որ ի ժամանակի իբրում ի սանձս և ի դանդանաւանդս ճմլեսցէ զկզակս ձեր, որ առ նա դուք ոչ մարթայցէք մերձենալ»: Սկսած առդարև բառից մինչև մերձենալ Ազաթանգեղոսը իր խոսքի մեջ է ներառել Սաղմոսից (ԼԱ, 9), Եսայուց (Ա, 3) և դարձրել է սեփական շարադրանք: Այդպես են վարվում նաև մյուս պատմիչները: Մեր գեղարվեստական գրականության վրա ևս շատ ուժեղ է եղել Աստվածաշնչի ազդեցությունը: Նարեկացու «Մատեան ողբերգութեան» շատ հատվածներ ավել կամ պակաս չափով ներշնչված են Սաղմոսներից, համեմատիր. «(Ընկալ

քաղցրութեամբ, տէր Աստուած հզօր, զաղաչանս, մատիր գթութեամբ առ պատկառեալս դիմօք. փարատեա, ամենապարզև, զամօթական տխրութիւնս, բարձ յինէն, ողորմած, զանբերելի ծանրութիւնս, անջրբպետեա, հնարաւոր, զմահացու կրթութիւնս. աւարեա, միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս... (նարեկ ժԲ, հատված Գ): Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում, քաւեա զանօրէնութիւնս իմ: Առաւել լուս զիս յանօրէնութենէ իմմէ և ի մեղաց իմոց սուրբ արա զիս... ցօղեա յիս մշտկաւ և սուրբ եղէց: Լսելի արա զցնծութիւն և զուրախութիւն և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք (Սաղմոս Ծ):

Մեր Շարականների մեծ մասի ներշնչումները գալիս են Աստվածաշնչից, հատկապես ակնհայտ են աղերսները Սաղմոսների հետ: Նրկատված է, որ մեր հնագույն շարականները նրանք են, որոնք աղերսվում են Ելից ԺԵ, Դանիելի Գ, Սաղմոսների ձև, Մ գլուխների և այլ գրքերի հետ: Դրանք սկզբնավորվում են «Օրհնեսցուք զտէր, զի փառք և փառաւորիչ է», «Օրհնեալ էս, տէր Աստուած հարցն մերոց», «Մեծացուցէ անձն իմ զտէր», «Օրհնեսցէք զտէր երկնից», «Ողորմեա ինձ, Աստուած», «Օրհնեսցուք զտէր, զի փառք է փառաւորեալ», «Համբարձի զաշս իմ ի կերինս» և այլն, որոնք Աստվածաշնչի հիշյալ գրքերից վերցրած բնաբաներ են:

Եղիշեն «Տիկնայք փափկասունք»-ը գրել է «Երեմյայի ողբ»-ի զորեղ ազդեցությամբ: Մերկացուցին իբրև վիշապք զստինս իւրեանց և դիեցուցին զկորինս իւրեանց, Եղեն զստերք ժողովրդեան իմոյ ի տանջանս հարուածոց, զի չիք նոցա բժշկութիւն, և տառապեցան իբրև ջալամունք յանապատի: Կցեցան լեզու դիեցիկ մանկանց ի քիմս իւրեանց ի ծարաւս իւրեանց. տղայք հաց խնդրեցին, և ոչ ոք էր, որ բրդեր նոցա: Որ ուտէին զկերակուր, եղձան ի վերայ անցից ճանապարհաց, որ ի գիրկս գրգեալք և զգուեալք էին, գիրկս արկեալ աղբուաց թաթաւեալ թաւալէին (Երեմ. Գլուխ Դ): Համեմատիր. Մոռացան զկանացի տկարութիւն և եղեն արուք առաքինիք ի հոգևոր պատերազմի. մարտ եղեալ կոռեցան ընդ մեզսն կարևորս, հատին կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նոցա (Եղիշէ):

Խորենացին իր ազգային «Ողբ»-ը գրել է Եսայու Մարգարէութեան Ա գլխի զորեղ ազդեցությամբ: Համեմատիր. Զիարդ եղև պոռնիկ քաղաքն հաւատարիմ Սիոն, լի հաւատովք, յորում արդարութիւն հանգուցեալ էր, և արդ սպանօղբ են: Արժաթ ձեր անփորձ, վաճառականք ձեր խառնեն ջուր ընդ գինի: Իշխանք ձեր ապստամբք, գողակիցք են գողոց,

3 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 108:

ոգեղնչութիւնը բավական չէին. գրականութեան դժվարին ճանապարհը նոր ոտք դնող լեզուն պետք է նյութ ու պաշար մատուցեր հմտութեանն ու ոգեղնչութեանը: Եվ հայերենը բաց արեց իր լեզվական թաքուն գանձերը: Հայ գրի ու գրականութեան զարգացման հեռանկարներով լուսավորված մեր թարգմանիչները պեղեցին այդ գանձերը և սրա բոլոր հակոտնյա շերտերից օգտվեցին առանց երկյուղի ու խտրութեան: Նրանք ճիշտ էին դատում՝ օտար անհասկանալի բառը պետք է հայացվեր: Այդ նպատակի համար նրանք անշուշտ ըստ իրենց ճաշակի ընտրություն կատարում էին, բայց եթէ ընտրության հնար չկար, օգտվում էին նաև հայերենի բարբառներից, որոնք մայրենի խոսվածքներն էին Հայաստանի հեռավոր ու մոտավոր գավառներից եկած հենց այդ թարգմանիչների:

Աստվածաշնչի լեզուն համաժողովրդական հայերեն է, որի կենտրոնները Այրարատյան և Տուրուբերանի նահանգներն էին: Սրանք հայութեան քաղաքական, մտավոր և հոգևոր կյանքի դարբնոցներն էին, ուստի և այստեղերը խոսվող լեզուն էր, որ պետք է լիներ համաժողովրդական և տարածվեր հեռու արևելք ու արևմուտք, հարավ ու հյուսիս ճիշտ լույսի ճառագայթների նման, որոնք կենտրոնից տարածվում են բոլոր ուղղություններով: Եվ Աստվածաշնչի բառապաշարի հիմնական շերտը հենց այդ համաժողովրդական հայերենին է պատկանում: Սա ապացուցվում է այն հազարավոր բառերով, որոնք այնտեղ կիրառվելով՝ մոտ հազար վեց հարյուր տարի հայ ժողովրդի կենդանի խոսքի բառերն ու արտահայտություններն են այսօր: Դա ապացուցվում է բազմաբանակ դարձվածքներով, բառակազմության այսօրվա գործուն օրինաչափություններով, իմաստաբանական հիմնական դաշտերով:

Մի հարյուրամյակում որևէ լեզվի բառապաշարում իմաստների աղոտացման, հասկացությունների վերացման, անհաշտ ու սխալ կազմությունների և այլ պատճառներով հսկայական թվով բառեր գործածությունից դուրս են գալիս կամ իսպառ չգործածվելու հեռանկարով և կամ անցնում են հազվագեղ կիրառությունների պահեստավորման:

Աստվածաշնչի գրի առման տարիներից անցել է ավելի քան 1570 տարի, և նրա բառապաշարի հնացումը փոքրիկ մասն է կազմում այն բառերի, որոնք մեր այսօրվա լեզվի բառաֆոնդի հիմքն են, որ փոխանցվելով մեր բազմադարյան գրականության ու ժողովրդին՝ հասել են մեզ և դարձել մեր գրական լեզվի բառապաշարի հիմնական կորիզը:

Մեր հին գրական լեզվի զարգացման պատկերը աղոտ կլինի, եթե մենք մանրամասնորեն չժանոթանանք Աստվածաշնչի բառական շեր-

տերին: Այս բառական շերտերի համեմատությամբ միայն հայտնի կըլլան, թե այս գրքի գրությունից հետո մեր որ պատմիչը կամ այլ ուղղության հին գրող ինչ նպաստ է բերել մեր գրական լեզվի զարգացման ողջ ընթացքին, և որոնք են այն բառական շերտերը, որ կազմվել են միջին հայերենի ու աշխարհաբարի զարգացման շրջաններում: Աստվածաշունչն է այն գիրքը, որ առաջինը մեր համաժողովրդական բանավոր խոսքին գրական քաղաքացիություն տվեց և այդ գրական խոսքի մեջ միայն բանավոր կերպով կիրառված բառերը ձերբազատվեցին իրենց հասարակախոսական, գոեհպարանական նեղիմաստ, տեղային և իրենց հասարակախոսական, գոեհպարանական նեղիմաստ, տեղային և իրենց հասարակախոսական արտահայտություններից և օժտվեցին բարձր գրական այլ ոչ գրական արտահայտություններից և օժտվեցին բարձր գրական հնչեղությամբ, իմաստային լայնարձակությամբ, համազգային նշանակություններով ու ոճաբանական ընտիր հատկանիշներով:

Եվ Աստվածաշունչը իր պատմական ու արդիական արժեքը ամբայնդում է առաջին հերթին շքեղ բառապաշարի այն շերտերով, որոնք մեր նոր գրական լեզվի երկու ճյուղերի հիմունքն են կազմում՝ նոր իմաստավորմամբ ու ոճավորմամբ, որ արդեն հին ու դասական է, իսկ այդ հին ոճավորումը քիչ դեր ու նշանակություն չունի մեր այսօրվա գրական ու բանավոր խոսքի մեջ:

Աստվածաշունչը մեզ ժառանգել է դասական բառերի հսկայական շարքեր, որոնցից շատերը պիտի կորչեն առհավետ, եթե այնտեղ չամբարավեն հավիտենականության հեռանկարով: Եվ որովհետև Աստվածաշունչը հայ ժողովրդի ամենից շատ կարդացվող, անգիր արվող, պարոցական գործին ծառայող մատյանն էր, այդ պատճառով նրա բազմաբանակ գործին ծառայող մատյանն էր, այդ պատճառով նրա բազմաբանակ գրական բազմադարյան դպրոց անցան, կենդանի մնացին, բազմաբանակ իմաստացան իրենց կիրառության երկար ճանապարհին:

Աստվածաշնչից ժառանգություն ենք ստացել բազմաթիվ բույսերի, կենդանիների ու պտուղների անուններ, որոնցից հազվագյուտ անուններ են հնացած: Մեծագույն մասը այսօր կիրառվում է և՛ գրական, և՛ բանավոր խոսքի մեջ:

Աստվածաշնչից են գալիս կյանքի, կենցաղի, տնային առարկաների, արվեստի ու արհեստների հազարավոր բառեր, որոնք այսօր էլ նույնքան թարմ ու գործածական են, որքան եղել են գրի առնվելու պահանջները: Գուցե ավելին կարելի է ասել: Քիչ կիրառվող, հին՝ V դարի սկզբին: Գուցե ավելին կարելի է ասել: Քիչ կիրառվող, արդեն հնացող կամ հնացած շատ բառեր IV դ. վերջին մուտք գործելով Աստվածաշունչ, ոչ միայն գրականացան՝ ձեռք բերելով կիրառություն մեր լեզվի, այլև վերանորոգվեցին, թարմացան ու հետագա կիրառության հեռանկարներով օժտվեցին: Աստվածա-

շունչը դարձավ այն բուրան, որտեղ հայերենը ոչ միայն փորձարկվեց, այլև զտվեց, բյուրեղացավ և իր համաժողովրդական լեզվի տարածման սահմանները ավելի ընդարձակեց՝ դառնալով համընդհանուր հայության գրական լեզուն: Աստվածաշնչում ավանդված են մեր լեզվի բառաբարդության բոլոր տիպերն ու տեսակները: Իբրև անսպառ մի շտեմարան Աստվածաշունչը իր մեջ է ամփոփել հայերենի հազարավոր հարադրական բարդություններ, որոնք հայոց լեզվի նյութական հարստության թանկագին գանձերն են և իրենց մեջ խտացնում են իմաստաբանական ու ոճաբանական մի զարմանալի ճոխ ու շոայլ աշխարհ: Ահա հարադրական բարդությունների մի փունջ, որ ժամանակին և հետագայում վերածվել է կցական կամ իսկական բարդությունների և մնացել է մեր լեզվի մեջ իբրև նրա բառական հարստության այն բաղկացուցիչ տարրերից, որոնք հնացում շունեն. ազդ առնել (ազդարարել), ակն ածել (ակնածել), ակն առնուլ (ակնառու), ակն արկանել (ակնարկել), բակ առնուլ (բակառություն), հոտ առնուլ (հոտառություն), կաշառ առնուլ (կաշառառու), բողոք արկանել (բողոքարկել), առաջի արկանել (առաջարկել), զան հարկանել (զանհարել), գերի վարել (գերեվարություն), գիր առնել (գրառություն), դատ վարել (դատավարություն), թագ դնել (թագադիր, թագադրություն), զանց առնուլ (զանցառու, զանցառություն), զմտալ ածել (մտածություն), բափ անցանել, (թափանցել), բոյլ տալ (բուլլաություն), ժամ դնել (ժամադրություն), խաղ արկանել (խաղարկություն), խնամ տանել (խնամատար, խնամատարություն), ծուր դնել (ծուրդրություն, ծնրադրություն), հիմն արկանել (հիմնարկել), հոգ տանել (հոգատարություն), ձեռն արկանել (ձեռնարկել), միտ դնել (մտադրություն), յայտ առնել (հայտարարել), յանձն առնել (հանձնարարություն), յանձն առնուլ (հանձնառություն), յառաջ խաղալ (առաջխաղացություն), յոգոց հանել (հոգոցհանություն), յուշ առնել (հուշարար, հուշարարություն), ուխտ դնել (ուխտադրություն), ունկն դնել (ունկնդրություն), ուշ դնել (ուշադրություն), պատասխանի տալ (պատասխանատվություն), պատուէր տալ (պատվիրատու), պարգև բաշխել (պարգևբաշխություն), սակ արկանել (սակարկել), վաշխ առնուլ (վաշխառու, վաշխառություն), վրեժ առնուլ (վրիժառություն), վրէժ խնդրել (վրէժխնդրություն), տեղի տալ (տեղատրվություն, փող հարկանել (փողհար), փորձ առնուլ (փորձառություն), օրէնս դնել (օրենսդրություն) և բազմաթիվ ուրիշներ:

Աստվածաշունչը մեզ ավանդել է անհոգակապ բարդությունների ամեն տեսակները, որոնց ծագումը գավառական ու ժողովրդախոսակ-

ցական է, բայց որոնք մեր գրական լեզվում կենդանի են առայսօր, և մենք այժմ էլ դրանց նմանությամբ բառեր ենք կազմում, իսկ դրանք մեր լեզվի բառակազմի ամենահյուսիս տարրերն ու նրա ժողովրդային ծագման հիմունքի վկաններից են: Այդ անհոգակապ բարդությունները հենց այն կովաններից են, որոնք Այտրնյանը վկայակոչում է Բուզանդի, Փարպեցու, Զգոն գրքերից իբրև ուսմկորեն բառեր՝ անուղղակիորեն հակադրելով Աստվածաշնչին, որի բառապաշարի մեջ նա ուսմկորենի տարրեր չի կամենում տեսնել, մինչդեռ Աստվածաշնչում այդպիսի կազմությունները իրենց պատշաճ տեղն ունեն, օրինակ՝ ակնկալել, ակնկալութիւն, այլպէս, այժմ (այսժամ), այնպէս, այսպէս, այսուհետև, անձեռնհաս, անջրդի, արևմտաք, բանգէտ, երկդիմի, երկձի, երկնիւղ, երկմիտ, երկսայրի, երկրպագու, լրջմտութիւն, լրտես, խրատու, կաթնկեր, կարկամ, կարճմտել, կարճմտութիւն, նաբարձմտութիւն, նեղսրտութիւն, ներսկողմն, նոյնպէս, նոյնգանակ, նոյնժամայն, շախտութիւն, շորեֆկուսի, ողջմտութիւն, ջրբեր, ջրմուղ, ջրկիր, ջրբուլխ, վրէժխնդիր, ուսնրեկ, վրէժխնդրութիւն, տնտես, տնտեսութիւն, տասներփեղկեան, օրէնսդիր, օրհաս, ունկնդիր, ունկնդրութիւն, քաղցկեղ, քարկոծ, քարկոփ:

Մեր գրական լեզվի ծագման շրջանի համար ու շաղկապը նույնպես համարվել է ժողովրդախոսակցական լեզվի գրական լեզուն թափանցելու վկաններից մեկը: Ուով կցական բարդությունները իրոք հատուկ են եղել գավառական խոսվածքներին, որտեղից և մուտք են գործել գրական լեզուն: Այդպիսի կցական բարդություններ են այսուձի, տանուալր, տարուբեր, պատուհան, հարցուփորձ, իննուտասներորդ:

Հին և հազվագյուտ կազմություններ են նաև և-ով, ի-ով կցական բարդությունները. օրինակ՝ ապիկար, այրեձի, գերիվերոյ, խառնիխուռն, խառնիճաղանջ, սարդիոստայն, տրիտուր, երթեկ, զառիվայր, յափսիքերս. սրանց գալիս են միանալու բազմաթիվ ու բազմաձև ժողովրդական կրկնավոր բարդությունները՝ անփոփոխ և փոփոխված հիմքերով. աղտաղտուկ, ազազուն, աղաղակ, աղախել, աղտաղտին, արհամարհել, բարբառ, բարբառել, բողբոջ, գունդազունդ, գէշագէշ, գոյնզգոյն, դարձադարձ, դանդաղել, երփն երփն, զլեռնլեռնայն, թրթուր, ժանտաժուտ, խլխլել, խորխորատ, խաժամուժ, ժիրաժիր, ծործոր, ծանծաբել, կախախլխլել, խորխորատ, խաժամուժ, ժիրաժիր, ծործոր, ծանծաբել, կախաղան, կորակոր, կսկծելի, կամակոր, կասկարայ, կական, կարկատել, կարկառել, կերկերել, կերակուր, կողկողել, կղկղանք, կոշկոճել, հոտոտել, հայհոյել, հեծեծելի, հեղեղ, ձգձգել, ճենճեր, մրուր, մրմնջել:

մորմոքել, մեծամեծար, յեղյեղուկ, երերել, յեղյեղուկ, նորանոր, շաղ-
փաղփութիւն, շեղջաշեղջ, շրջշրջել, ողողել, ոստոստել, շարաշար, շար-
շարանք, պէսպէս, պապանձել, պապակել, պաղպաջուն, ջերմաջերմ, սոր-
սորել, սարսուռ, վաղվաղել, վաղվաղել, վաղվաղուկ, տատանել, փող-
փողել, փողփողուկ:

Սակայն բառակազմութեան հիմնական միջոցը մնում է դարձյալ ա
հոգակապով բարդութիւնը, որով կան դասական բառերի շքնաղակերտ
զանձեր:

Աստվածաշնչում գտնում ենք բոլոր այն բառաձևերը, որոնք դառ-
նում են բարդութեան առաջին բաղադրիչ և բառակազմութեան հենարան՝
իրենց լրացական նշանակութիւններով:

Բարդութեան առաջին բաղադրիչը բառակազմութեան մեջ է մըտ-
նում ուղղականի ձևով և ունի համարյա բոլոր հոլովների նշանակու-
թիւնները, օրինակ՝ արծաթագործ (արծաթ գործող), արծաթապատ
(արծաթով պատված), գիշերապան (գիշեր ժամանակ պահակ կանգ-
նող), բերանաբաց (բերանը բաց մնացած), գետեգր (գետի եղը), դասա-
կարգ (դաս և կարգ. նշանակութիւններով հավասարազոր բաղադրիչ-
ներ), գործակից (գործին կից եղող), երագտես (երազ տեսնող), հող-
մալար (այնպիսին որին հողմը վարում է), հողմաշարժ, մազալուր
(մազից՝ մաղով պրծած), շորհառանի, վնասապարտ (վնասի պարտա-
կան), վրանաքնակիչ (վրանում բնակվող): Բարդութեան առաջին բա-
ղադրիչը հոգնակի հայցական ձևով է լինում և ունի մեծ մասամբ ուղիղ
խնդրի նշանակութիւն, օրինակ՝ օրէնսուսույց, բանասերիւ, բանասերիւ-
րիւն, յետամիտ, շուքոյս:

Բարդութեան առաջին մասը եղակի կամ հոգնակի սեռականի կամ
տրականի ձևով է հանդես գալիս և հաջորդ բաղադրիչի հետ կազմում
է իսկական կամ կցական բարդութիւն հատկացուցիչի պաշտոնով, օրի-
նակ՝ եղբորդի, եղբորդեակ, հօրեղբայր, հօրախյուր, քնորդի, մտա-
ցածին, շանանան, սերմանախաղ, աստեղագէտ, կանացածին, շաքեղա-
պարտ, սերմանահան:

Բառ է կազմվում նաև գործիական հիմքով՝ արամբի, կանամբի:

Աստվածաշնչով մեզ ավանդված է նախածանցական մասնիկների
մի խումբ, որոնք անընդհատ նորոգվում են մեր գրական լեզվում և
ստեղծում են նորանոր բարդութիւններ: Այդ նախածանցական մաս-
նիկներն են՝ ան-(անարգ). զ-(զատանել, զարկանել). ապ-(ապաշնորհ,
ապաշխարհել). ապ-(ապուշ). ան-(վրա). անտոն (անկողնու ոտքերի
կողմը): Հակառակ սնար. համեմատիք անկողին, անբահի). առ-(առկալ-

ծել, առանձին, առանցք). առ (առագաստ). գեր-(գերարտօսարար. դժ-
(դժպատեհ). ընդ-(ընդարձակ, ընդգրկել). յ-(յանել, յանկարծ). շ-(շար-
ժել). տ-(տգեղ, տգէտ), տի-(տիկին). ց-(ցայգ, ցերեկ, ցանկ). հ-(հպարտ,
հմուտ). ըստ-(ըստգտանել, ստունգանել):

Մրանց համեմատութեամբ անշափ մեծ քանակ են կազմում վերջ-
ածանցները, որոնք քիչ բացառութեամբ կենդանի ու արդյունավետ են
մինչև այսօր:

Այս ածանցներով կազմվել և այսօր էլ կազմվում են անհաշիվ բա-
ռեր, որոնք հարստացնում են մեր լեզուն ոչ միայն բառերով ու իմաստ-
ներով, այլև արտահայտչական նրբերանգներով: Ահա այդ ածանցները
այբբենական կարգով.

արար (առիծարար), -ագին (ահագին), -ալի (ամօթալի), -ալուտ
(մօտալուտ), -ախ շաղախ, տաղախ (շաղախ), -ած (արարած), -ածու
(գօտիածու), -ակ (զանգակ), -ակ (աւերակ), -ական (անապատական),
-ակի (ուղղակի), -աղակ (փակաղակ), -աղ (կենցաղ), -արծի, (աղար-
ծի), -այ (անզգայ, անլուայ), -այն (միանգամայն), -ային (ամարա-
յին), -այն (առժամայն), -անկ (տնանկ), -ան (ամուսնանալ), -անակ
(շրջանակ, փոխանակ), -անակի (շուրջանակի), -անի (բազմոտանի),
-անի (աւագանի), -անոց (ամարանոց), -անչ (մեղանչել), -անք (ամօ-
թանք), -առուտ (կարճառուտ), -ատուն (բարասուն), -աստ (զգաստ),
-ատ (փայտատ), -ատակ (փայտատակել), -ար (կափարիչ, գալարել),
-ար (փողար), -արակ (տափարակ), -արան (զանձարան), -արդ (խո-
րանարդ), -արէն (յունարէն, փոխարէն), -աց (ամուսնացուցանել), -ացի
(առնացի, բարեւացի), -ացու (անապականացու), -ացք (զնացք,
խրացք), -աւ (հաւաստեաւ), -աւէտ (այգաւէտ), -աւուր (թագաւուր),
-աւուրտ (հաճանշաւուրտ), -ափ (խուսափել), -աքի (արմատաքի),
-գին (զայրագին), -գոյն (իմաստնագոյն), -դի (անջրդի), -եալ (դար-
ձեալ), -եակ (մաշկեակ, երկուտրեակ), -եայ (առօրեայ, փախստեայ),
-եայն (լուսեայն), -եան (եպիկուրեան), -եաց (հրայրեաց), -ելի (գար-
շելի), -ելին (եօթնասնեկին), -եղ (ահեղ), եղէն (արծաթեղէն), -եղ
(աղտեղել), -եղի (մսեղի), -ենի (դղմենի, այծենի), -եստ (գովեստ),
-երէն (հայերէն), -երուր (եօթներուր), -եց (գեղեցիկ, երգեցիկ), -եւ
(արդարեւ), -եւան (օթեւան), -եւին (ամենեւին), -է (զոնէ): -էն (նկա-
րէն, արդէն), -ի (արդի, ընկուղի, արամբի), -իկ (փոքրիկ), -ին (անկո-
ղին, առտնին), -ինք (նախատինք), -իչ (ոսկերիչ), -իստ (հանգիստ),
-իցս (երկիցս, երիցս), -իւն (գոչիւն, մնչիւն), -իք (արմտիք, աւետիք,
ընթրիք), -լիւ (բունալիւր), -լուտ (մօտալուտ), -խած (ամօթխած), -ծոյ

(կոածոյ), -կ (խեթկէլ), -կան (ծննդկան, վարձկան), -կէն (հիսկէն),
 -կին (երեքկնէլ), -կոտ (նախանձկոտ), մ(տիղմ), -մաց (ծովամաց),
 -մես (գաղտամես), -մոյն (ծովամոյն, բարեմոյն), մ(ունք) (պաշտա-
 մունք), -ն (ոստնու, առնէլ), -նակ (խոտորնակ), -նի (գաղտնի),
 -նորդ (պահնորդ), -շի (գոլորշի), -շիռ (արբշիռ), -ոդ (ծնող), -ող
 (աջող), -ոմ (խորշոմ), -ոյ (երեկոյ), -ոյք (ծածկոյթ, աւագոյք), -ոյկ
 (խարոյկ), -ոյն (ողջոյն), -ոյց (ուռուցիկ), -ոյք (ամօթոյք, բաշխոյք,
 գրկոյք), -ովին (բոլորովին, ճարպովին), -ոտ (ժանգոտ, լուսնոտ), -ոտի
 (անոտի, փորոտի), -որ (բեկոր), -որայ (արտորայ), -որդ (աւելորդ, որ-
 սորդ), -որի (երկուորի), -ոց (խայթոց), -ու (ակնաուու, ահարկու), -ուած
 (անկուած, խնդրուած), -ուքին (իմաստութիւն), -ուկ (թեփուկ, շշուկ,
 հարցուկ, նախանձուկ), -ունի (թագունհի), -ում (անպատում), ումն
 (շարժումն), -ուն (շարժուն, վարուն), -ունի (զողունի, ծերունի), -ունչ
 (անտերունչ), -ունջ (շշունջ), -ուր (զինուոր), -ուչ (տեսուչ), -ուտ
 (արտաբուտ, թաքուտ), -ուտ (աւագուտ), -ուր (թափուր), -ուրդ (յա-
 գուրդ), -չ (մատչիմ), -չոտ (խաւարչուտ), -չեայ (առահաւատչեայ),
 -պանակ (կշտապանակ), պէս (առատապէս), -ս (յաղագս), -ստան
 (մուրտաստան), -սուն (վաթսուն), -տ (բեկտնէլ), -րորդ (երրորդ), -ցի
 (բռնցի), -ի (կալանք, կուռք, խառնք), -օք (ծանօթ), -օն (պաշտօն,
 գողօն), -օշ (թեղօշ), -օտ (ծնօտ, -օրէն (համօրէն):

Աստվածաշնչում կաղմված կամ ուղղակի ժողովրդախոսակցական
 ընդհանուր հայերենից բնականորեն անցած կան փոքրացուցիչ ակ, եակ,
 իկ, ուկ մասնիկներով գեղեցիկ բառեր, որոնցից շատերը առ այսօր
 մնացել են մեր գրական լեզվում և ապացույց են այն բանի, որ հայերեն
 գրավոր խոսքի սնման ակունքները համաժողովրդական լեզուն ու բար-
 բաններն են. օրինակ՝ փոքրիկ, վաղահասուկ, փողոշուկ (կանացի գարդ),
 սակաւիկ, այժմիկ, մժղուկ, ոչխարակ, ճանճիկ, նախանձուկ, քաջիկ
 (մի քիչ), վայրիկ, վաղվաղուկ, երիվարիկ, պողովատիկ, ջրեակ, սա-
 կաւիկ:

Հոգնակի և հավաքական նշանակութիւն ունեցող մի շարք մաս-
 նիկներ, որոնք համարվել են ժողովրդախոսակցական լեզվից կամ բար-
 բաններից գրական լեզուն մուտք գործած լեզվական տարրեր, իրենց
 առաջին գրական մկրտութիւնը ստացել են Աստվածաշնչում: Այդ մաս-
 նիկներն են աի (փորոտի, կալտի), որայ (կալորայ, արտորայ), եան
 (խոզեան), եար (որեար):

V դարի գրական լեզվի համար հնչյունական խորթ երևույթներ
 նույնպես տեղ են գտել Աստվածաշնչում, որոնք համարվում են դարձ-

յալ դավառական ձևեր. ինչպես օրինակ՝ վարձկան (փոխ. վարձական),
 վարձուոր (վարձաւոր), ասղնագործ (ասեղնագործ կամ ասղանագործ),
 արմտիք (արմատիք), զինուոր (զինաւոր, զինուորակից), զինուորու-
 թիւն, ձեռագիր, ձեռագործ, ձեռակապ, ձեռակերտ, մահկանացու),
 (մահականացու), նեարդապատ (ներդապատ), շուրջանակի (շրջանակի),
 ուռկան (ուռական), ստորոտ (ստորոտն), աւասիկ (ահաւասիկ),
 աւաղիկ (ահաւաղիկ), աւանիկ (ահաւանիկ), բծկան (բծական), վարա-
 դոյրածիք (վարադուրածիք), զոնէ/զոնեայ. մեր խոսվածքում (Ա. Աբով-
 յանի շրջան, Կոտայք) պահպանված է գոնեա ձևով:

Մեր դասական լեզվի ձևաբանութեան կանոնները ճշտվում են Աստ-
 վածաշնչի տվյալներով: Հոլովման, խոնարհման այն բոլոր ձևերը, որ
 իբրև ընդհանուր օրինակափութիւն կամ իբրև հաղվաղեպ բացառութիւն
 արձանագրված են Աստվածաշնչում, դասական են համարվում, իսկ
 հետագա բոլոր փոփոխութիւնները տարբերակվում ու զնահատվում են
 Աստվածաշնչում ամրագրված ձևաբանական երևույթների զուգահրու-
 թյամբ ու բաղդատմամբ:

Լավագույն Չալրիսյան-Այտրնյան քերականութիւնը կաղմված է
 հատկապես Աստվածաշնչի քերականութեան ընձեռած օրինակներով,
 որոնց անհամապատասխան այլ ձևերը բերվում են իբրև զուգահրու ու
 երկրորդական ձևեր: Թվում է, թե այդ և նման քերականութիւնները
 պետք է որ լրիվ սպառած ու մեր քերականագիտութիւնը մատուցած լի-
 նեին Աստվածաշնչի քերականական բոլոր յուրահատկութիւնները. սա-
 կայն հետագոտութիւնը վեր է հանում քերականական այնպիսի ձևեր,
 որոնք ծանոթ չեն մեզ: Այսպես՝ Տի բառի ներդրականը արտահայտ-
 վում է ի տուէ ձևով, սակայն քերականութիւնները իբրև ներդրականի
 ձև տալիս են միայն ի տուրնջեան, որ Աստվածաշնչում ի տուէ ձևի հետ
 համեմատած շատ սակավ է: Քերականութիւնները սովորեցնում են
 իբրև ներդրականի ձև միայն ի տուէ և ի գիշերի կայուն կապակցու-
 թյան մեջ: Մինչդեռ ի տուէ իբրև ներդրականի կայուն ձև սովորական
 է. օրինակ՝ Եւ ոչ պակասէր սին ամպոյն ի տուէ (Ելք ԺԳ, 22): Եւ ամպն
 հովանի ունէր ի վերայ նոցա ի տուէ ի շուի նոցա ի բանակէ անտի
 (Թիւք Ժ, 34): Աստուած իմ, ի տուէ կարդացի առ քեզ, և ինձ ոչ լուար
 (Սաղմ. ԻԱ, 3): Ի տուէ ես ոչ երկեայց, զի ի տէր յուսացայ (Սաղմ.,
 ՄԵ, 4): Այսպես և այլ օրինակներ: Այս նշանակում է, որ է-ն եղել է
 նաև ներդրականի վերջավորութիւն:

Գիւղ բառը 54 անգամ է կիրառված. այս ընդունված ձևը միայն 6
 անգամ կա Աստվածաշնչում. մեկ գիւղէ, երկու անգամ գիւղս ձևով և

երեք գիւղից: Պետք է ասել, որ գիւղ ձևը հանված է գիւղից սեռակա-
նից. բուն դասական ձևն է գեօղ, որ 46 անգամ նույնությամբ հիշատակ-
ված է. գեղ, որ բարբառային է, գտնվում է միայն երկու անգամ: Ուրեմն
դասական ձևը գեօղ-ն է, որ եղակի սեռականն է գեղջ (եօ>ե ձայնա-
փոխությամբ), իսկ հոգնակի սեռականն է գիւղից (եօ>իւ փոփոխու-
թյամբ): Գիւղ ձևը V դարի սկզբում չկա: Այլ մատենագիրների գիւղ բառը
տարբերակներում նույնպես ունի գեղ, գեօղ, գեւղ ձևերը: Հետագայում
գեօղ, գեղ խոսակցական ձևերը դասական ձևի պատրանք են հաղորդել
գիւղ-ին, որ, ինչպես ասացինք, սարքված է գիւղից՝ հոգնակի սեռականից:

Արկանեմ բայը քերականությունների մեջ և այլուր հիշատակվում է
իբրև կանոնավոր ներգործական բայ արկի, արկեք, արկ, արկաք,
արկէք, արկին. մինչդեռ Աստվածաշունչը այս ներգործական ձևերի
հետ միևնույն ներգործական իմաստի համար ունի նաև արկար, արկաւ,
արկան, օրինակները. այսպես՝ Արկար զլոյս որպէս զօթոց, ձգեցեր
զերկինս որպէս խորան (Սաղմ. 9, 2): Եւ զգեցաւ իբրև զրահս զարդա-
րութիւն և եղ ի զլուխ իբրև զսաղաւարտ զփրկութիւն և արկաւ զիրև
հանդերձ և պատմուճան վրէժխնդրութեան (Ես ԾԹ, 17): Սիմովն Պետ-
րոս իբրև լուաւ, թէ տէր է, արկաւ զիրև զսփածանելին, քանզի մերկ էր
(Յովհ. ԻԱ, 7): Վասն այսորիկ կալաւ զնոսա ամբարտաւանութիւն, ար-
կան զիրեամբք զամպարշտութիւն և զանիբաւութիւն իւրեանց (Սաղմ.
28, 6):

Մանրախնդիր հետազոտությունները, մանավանդ հնավանդ պատա-
ռիկներում և անվավերական ու նախնական թարգմանությունների մեջ
կարող են հետաքրքրական և անծանոթ ձևեր հայտնաբերվել:

Կեզվի նյութական ծովածավալ հարստության հետ Սրբազան այդ
գիրքը մեր գրողների համար ծառայել է իբրև գրելու ուսումնասիրության
օրինակ և նրանց սովորեցրել է լեզվական արվեստի ճանաչելի ու թա-
քուն բազմաթիվ եղանակներ ու ձևեր, որոնք մշակվելով առավել ևս
աղղայնացել ու դարձել են հայերենին հատուկ ոճաբանական հարըս-
տություններ և փոխանցվել են սերունդից սերունդ:

Համանիշ բառերի կիրառության ձևերը, գեղեցիկ հավելադրու-
թյունները, ձևավոր կրկնությունները, շարադասական շրջումները, հա-
կադրություններն ու համեմատությունները իրենց դասական առաջին
կիրառությունները գտել են այս գրքում և այստեղից են շրջանառու-
թյան մեջ մտել: Բանաստեղծական արվեստի շատ գաղտնիքներ ևս այն-
տեղից են սովորել մեր հին բանաստեղծներն ու գրողները:

Աստվածաշունչը ունի չափածո գրքեր. դրանք են Յովբ-ը, Սաղ-
մոս-ը, Գիրք Առակաց-ը, Երգ երգոց-ը, Ժողովող-ը, Մարգարէու-
թիւնք-ը, Ողբք Երեմեայ և այլն: Սրանց մեջ կան բազմաթիվ կտորներ,
որոնք օրհնություններ, ողբեր, գովբեր, հիմներ ու խրատներ են:

Երբայական չափածոն բնութագրվում է անհանգստությամբ և վան-
կաբաժանման անհավասարաչափ տողատումով. սակայն տողերի եր-
կայնությունն ու կարծությունը ունեն մի սահման, որից այն կողմ եր-
բեք չեն անցնում, որպեսզի խոսքի կշռույթը չխախտվի: Տողերի բա-
ժանումը չի հենվում չափի և ձևի (նույնահանգստություն) վրա, այլ հիմք
է ընդունվում տողի բովանդակությունը: Հաճախ հաջորդ տողը նախոր-
դի բովանդակության վերարտադրությունն է բառական միանգամայն
նոր ձևով. այս հնարը ծառայում է իբրև տողատման միջոց: Եվ պարզ
ցույց է տալիս տողերի սահմանները: Օրինակ՝ «Ապրեցո զիս, տէր, ի
մարդոյ շարէ, (Յառնէ անիրաւէ փրկեա զիս): Խորհեցան զանօրէնութիւն
ի սիրտս իւրեանց (Ձօր ամենայն պատրաստեցան ի պատերազմ) Մե-
ցին զԵզրա իւրեանց որպէս զօձի (Եվ քոյնք իժից ի ներքոյ շրթանց
նոցա): Պահեա զիս, տէր, ի ձեռաց մեղաւորի, (Եւ ի մարդոյ շարէ փրկեա
զիս): Խորհեցան խափանել զգնացս իմ, (բախցին ամբարտաւանք
որոգայք ինձ): Կարս ձգեցին որոգայք ոտից իմոց: (Շուրջ զշաւօք իմով
եղին ինձ զգայքակղութիւն): (Սաղմոս ԺԼԹ, 1-7): Չնայած կրկնակի
թարգմանության՝ հայերենը պահպանել է երբայական բանաստեղծու-
թյան էական հատկանիշները՝ կշռույթը և տողերի ձևական պեսպիսու-
թյունները, որոնք սոսկ զանազանաբառ կրկնություններ չեն միայն,
այլ նրբերանգ իմաստային հարստություններ: Այս վերջին հատկու-
թյունը լինելով երբայական չափածոյի բնութագրական գիծը՝ միաժա-
մանակ խորացնում ու ծավալում է գեղարվեստական այն խնդիրը, որ
գրված է բանաստեղծության հիմքում: Տվյալ դեպքում այդ կրկնու-
թյունները Սաղմոսների քնարական վիշտն ու թախծանքը դարձնում են
խորազդու և ցնցող, իսկ խոսքը ստանում է դեղեցիկ ու կատարյալ ձև,
մի ձև, որ օժտված է կշռույթով և զարդարուն պեսպիսությամբ, իմաս-
տային հարստությամբ: Որովհետև, եթե չկա մի համանիշ բառ, որ իր
համանիշից չզանազանվի իմաստային որևէ նրբությամբ և ոճաբանա-
կան յուրահատկությամբ, ապա համանիշային նախադասությունները
առանձին-առանձին դառնում են այդ նրբությունների և ոճական յուրա-
հատկությունների հանդիսարաններ:

Երբայական չափածոն հատկանշվում է նաև տողերի հակադրակա-
նությամբ: Առաջին տողում գծվում է որևէ գաղափար, երկրորդ տողը

նախորդին բոլորովին հակադիր մի այլ գաղափար է առաջադրում, և երկու հակադիր գաղափարները նպաստում են միմյանց ցայտուն դրսև-վորմանը, մեկը մյուսի միջոցով լուսավորվում ու պայծառանում է: Տվյալ դեպքում նպատակը առաջին տողի բացահայտումն է լեզվական որոշակի միջոցներով, բայց հաջորդ հակադիր տողը լեզվական նոր ու հակադիր միջոցներով և իր ծառայական դերով շի սահմանափակվում, այն ևս չորովի բացահայտվում է նախորդ տողի հակադրականության մեջ: Օրինակ՝ Ռոդի խորագետ հեագանդ հօր, Ռոդի անհեագանդ ի կորուստ եղիցի: Ի պտոյ արդարութեան կերիցէ առատ, Անծինք անօրինաց սատակեցիքն տաւածամ: Որ խնայէ ի բերան իւր, պահէ զանձն, իսկ որ յանդուգն է շրքամբք, խոռվէ զանձն իւր: Ի կարօտութեան է ամե-նայն վատ, Անք ժրաց ի դարմանս: Զբան անիրաւ ատեայ արդար, իսկ ամպարիշտն ամաչէ և ոչ գացէ համարձակութիւն: Արդարութիւն պահէ զանձնդս նանապարհաւ, Զամպարիշտս անգգամեցուցանեն մեղք: Են որ մեծացուցանեն զանձինս և ոչինչ ունին, Եւ են որ խոնարհեցուցա-նեն զանձինս և լի են մեծութեամբ բազմաւ: Փրկանք անձին մարդոյ մեծութիւն իւր, իսկ անանկն ոչ հանդարտէ պատուապի: Լոյս արդարոց յամենայն ժամ, Լոյս ամբարշտաց շիջցի: Անծինք անգաւորք մոլորեցիքն ի մեղս, Այլ արդարք գրասցին և ողորմեցիքն (Առակք ԺԳ, 1—10): Սողոմոնի ողջ առակները մշակված են այս ձևով և հեշտութեամբ տողատվում են իրենց հակադիր մասերով, պայծառորեն իմաստավորվելով և ոճաբանորեն հարստանալով:

Աստվածաշնչի բանաստեղծության բնորոշ հատկանիշներից մեկն էլ զուգահրոսությունն է: Խոսքը տողատվում է զուգահեռական ձևերով: Այս զուգահեռական տողերը ծավալվում են կամ իբրև իրար մոտիկ հաղորդումներ, կամ երկրորդը լրացնում, ընդարձակում, բացահայտում է առաջինը, և կամ շղթայակցվում են իբրև հարակցական կապակցու-թյուն. օրինակ՝ «Լու՛ր զլուր բարկութեան սրտմտութեան տեսուն, և խորհուրդ ի բերանոյ նորա ելցէ: Ի ներքոյ ամենայն երկնից իշխանու-թիւն նորա, Եվ լոյս նորա ի վերայ ծագաց երկրի: Զկնի նորա գոչեցցէ բարբառ: Որոտայցէ ձայնիւ բարձրութեան իւրոյ» (Յովք Լէ, 1—4):

Լուսւ Աստուած և արհամարհեաց զնոսա Եվ անարգեաց յոյժ զԽս-րայէլ: Մերժեաց յիւրմէ զխորան ի Սելով: Զխորանն, զոր բնակեցուցց ի մէջ մարդկան: Մատնեաց ի գերութիւն զգօրութիւն նոցա, Եւ զգեղ նոցա ի ձեռս թշնամեաց նոցա: Արգել ի սուր զժողովուրդ իւր Եւ զժառանգու-թիւն իւր անտես արար: Զերիտասարդս նոցա եկեր հուր, Եվ վասն կու-սանաց նոցա ոչ ոք սգացաւ: Քահանայք նոցա անկան ի սուր: Եւ զայ-

րիս նոցա ոչ ոք էր, որ լայր: Զարթեաւ որպէս ի քնոյ տէր, որպէս հօր, զի թափէ զգինի: Եհար յետս զթշնամիս իւր, նախատինս յախտե-նից արար զնոսա (Սաղմ. 2է, 59—66):

Աստվածաշունչը առաջին գիրքն էր, որ գեղարվեստական խոսքի ձևեր սովորեցրեց մեր հին գրողներին և լեզվական արվեստի ճաշակ զարգացրեց նրանց մեջ: Եթե մեր հին լեզուն կարողացավ թոթափել հունաբան հայերենի կապանքները և ազատվել նրա վտանգավոր գայ-թակղությունից, պետք է բացատրել միայն Աստվածաշնչի հզոր ներ-գործությունը: Նրա լեզվի պարզությունը, հայեցի մաքրությունը, լեզ-վառճական գեղեցիկ արվեստը, բառապաշարի ու դարձվածքների ծով հարստությունը և այս ամենի ու քրիստոնեական կրոնի ուսմունքի հի-մունքը լինելու շնորհիվ էր, որ Աստվածաշունչը տիրականորեն իշխում էր մեր լեզվի հետագա զարգացման ողջ ընթացքի վրա և պահպանում նրա հիմնական ուղղությունը՝ թույլ շտալով, որ գրական լեզուն իր կա-պը խզի V դարի լեզվական առողջ ու ազգային ավանդներից: Ընդհատ է, մեր հին գրական լեզուն զուգընթաց չզարգացավ համաժողովրդական խոսակցական լեզվի հետ, բայց այնուամենայնիվ V դարի և հատկա-պես Աստվածաշնչի լեզվի ազդեցության շնորհիվ երկար դարեր պահ-պանեց իր համաժողովրդական լեզվի հատկանիշները՝ ընդհանուր բա-ռապաշարն ու դարձվածքները, ձևաբանության հիմնական միջոցները, շարադասության ժողովրդական խոսքի ձևերը: Շեղումները չփոխեցին մեր լեզվի բունած ճիշտ ընթացքը. այդ շեղումները իբրև հունաբան հայերեն, իբրև արհեստական իրթնաբանություն, իբրև լատինաբան հայերեն իրենց այլևայլ նպատակներով ու տարազներով մնացին որպես այս կամ այն առանձին ժամանակաշրջանների արտահայտություն ու սուրբ: Դրանք, հատկապես հունաբան հայերենը, կարող էին ազգային հունից հանել մեր լեզուն, եթե սա հինգերորդ դարի գրականության և առանձնապես Աստվածաշնչի լեզվական բարձր ավանդներով շառաջ-նորդվեր:

Այդ ավանդներից էին առաջին հերթին Աստվածաշնչի լեզվի բյու-րեղային պարզությունը: Ինչպես՝ ժամանակ եղիր, և ոչ անցցէ: Ի բաց լեր ի նմանէ, զի դադարեցցէ և ամոքեցցէ զկեանս իբրև զվարձկան: Զի գոյ յոյս ծառոյ անդրէն. զի թէպէտ և կտրեցցի, միս անգամ ծաղկեցցի և շառափղ նորա մի պակասեցցէ: Եթէ ծերասցի յերկրի արմատ նորա, և ի բարի վախճանեցի բուն նորա, ի հոտոյ ջրոյ ծաղկեցցի և արասցէ հունձս իբրև զնորատունկ: Բայց այլ վախճանեալ զնաց, անկեալ մարդ և ոչ ևս իցէ: Զի ժամանակաւ անօսրի ծով, և գետք աւերեալ ցամաքե-

ցան: Եւ մարդ ննջեաց և ոչ յարիցէ, մինչև երկինք շիցեն, ոչ կարկատեսցին և ոչ զարթիցեն ի քնոյ իւրեանց... (Յովք ԺԳ 5—13):

Զի ահա ձմեռն անց, անձրեք անցին և գնացեալ մեկնեցան, Սաղիկք երևեցան երկրի մերում, ժամանակ եհաս յատանելոյ, ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում, թզենի արձակեաց զբողբոջս իւր, որթք մեր ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց: Արի եկ, մերձատր իմ, գեղեցիկ իմ, աղանի իմ (Երգ Բ 11—13):

Աստվածաշնչի խոսքը պարզութեան հետ պատկերավոր է ու նկարագեղ, որտեղ հրաշալի համեմատութիւնները իրենց բազմազան ձևերով այդ խոսքը դարձնում են գունագեղ, պայծառ, թարմ ու զրավիչ: Հայ մարդը տարվում էր ոչ միայն նրա թարմ բովանդակութեամբ, այլև լեզվական արվեստի շողշողուն ձևերով, որոնք նրա մեջ զարգացնում էին պատկերավոր նոր մտածողութիւն, ուսուցանում էին խոսելու, մանավանդ գրելու շնորհ ու արվեստ: Եւ եմոյժ զիս առաջի դրան տաճարին, և ահա ելանէր ջուր ի ներքոյ վարագուրաց տաճարին ընդ արեւելս, զի երեսք տաճարին հայէին ընդ արեւելս, և ջուրն հոսէր յաջմէ կողմանէ տաճարին հիւսիսոյ ի սեղանն կոյս: Եւ եհան զիս ընդ ճանապարհ գրանն հիւսիսոյ և շրջեցոյց զիս ընդ ճանապարհ գրանն արտաքնոյ առ գրամբն արտաքնով, որ հայէր ընդ արեւելս, և ահա ջուրն հոսէր յաջմէ կողմանէ: Եւ իբրև զելս առն դէմ յանդիման և շափն ի ձեռին իւրում. և շափեաց հազար շափովն և անց ընդ ջուրն ջուր յորդութեան, և շափեաց հազար շափովն և անց ընդ ջուրն, և հարկանէր ջուրն մինչև ցգօտին: Եվ շափեաց հազար շափովն զուղիսն և ոչ կարէր անցանել, զի յորդեաց ջուրն իբրև զյորձանս հեղեղաց, ընդ որ ոչ ոք անցանիցէ (Եզեկ. Խէ 1—6): Պատկերավոր մտածողութիւնը և ըստ այդմ լեզվական արտահայտչութիւնը Աստվածաշնչի համարյա բոլոր գրքերին հատուկ են, իսկ սրանք գրսնորվում են առանձնապես համեմատութիւններով: Հայերենի համեմատութեան բոլոր ձևերը իրենց պատկերավորութեամբ, հակիրճ ու ընդարձակ բանաձևումներով սփռված են այս գրքի մեջ և ամեն պարագայում մեր գրողները քաղել են այստեղից իրենց խոսքի բաղդատական բոլոր հնարները. Երգ երգոցի, Սաղմոսների, Առակաց գրքի և այլ գրքերի տարբեր ոճական մշակումները՝ մեկը իբրև քնարական բանաստեղծութիւն, մյուսը իբրև իմաստութեան խորհուրդների դասական բանաձևումներ, մի երրորդը իբրև խրատ ու պատգամ, իբրև բարոյախոսութիւն ու պատմութիւն, մեր նոր քայլ առնող գրական լեզուն մղեցին լայն զարգացման ճանապարհ: Մեր լեզուն ոչ միայն մշակվեց աստվածաշնչական լեզվի ոճական հնարները, նրա

ծով շրջաբանութիւնները, դարձվածաբանական ողջ համակարգը արտահայտելու գործընթացում, այլև դարձավ ուսուցման ուղեցույց և աղբյուր ամբողջ հազար հինգ հարյուր տարվա երկար ու խորխորատներով լեցուն մեր վտանգավոր ճանապարհին: Միայն փոքրիկ Երգ երգոցի մեջ մեր լեզուն համեմատութիւնների բազմազան այնպիսի ձևեր է հանդես բերել, որոնցից շատերը կենդանի ու գործուն են առ այսօր: Բաղդատութիւնը կատարվում է քան կապով. Զի բարի են (նախնական փոփոխակը՝ քաղցր են) ստինք քո քան զգլխի և հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս (Ա 1—2): Քանզի գեղեցկացան ստինք քո, քոյր իմ հարան, քանզի գեղեցկացան ստինք քո ի գինւոյ, և հոտ հանդերձից քոց քան զամենայն խունկս (Գ, 10):

Բաղդատութիւնը արտահայտվում է իբրև կապով. Ես ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց: Իբրև շուշան ի մէջ փշոց, այնպէս մերձատրոյ իմ ի մէջ դատերաց: Իբրև խնձորի ի փայտս անտառի, այնպէս եղբորորդին իմ ի մէջ ուստերաց (Բ 1—3): Մեղր և կաթն ի ներքոյ լեզուի քոյ և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի (Գ 11): Իբրև զթել կարմիր շրթունք քո և խօսք գեղեցիկք. իբրև զկեղև նռան այտք քո, բաց ի լուսեանէդ (Գ 6):

Բաղդատութիւնը արտահայտվում է ներդոյական հոլովով, «Տէր արար զքեզ, հաստատեաց զքեզ, պատրաստեաց զքեզ յարգանդէ, գեղեցիկդ ի կանայս (Ը, 6). Յո՞ գնաց եղբորորդին քո, գեղեցիկդ ի կանայս:

Բաղդատութիւնը արտահայտվում է ստորոգելիական վերագրի միջոցով, որը ստորոգելով հավասարեցվում է համեմատութեան մեջ գրվող առարկային. օրինակ՝ Եւ անուշ ճեղքեալ է անուն քո: Մարտ ստաշխին է Եղբորորդին իմ ինձ: Ողկոյզ նոնոյ է եղբորորդին իմ ինձ (ԱԶ 12):

Հաճախ այսպիսի ստորոգումը արտահայտվում է առանց ստորոգող հանգույցի. Աչք քո աղանիք: Ես ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց: Շրթունք նորա շուշանք բղխեն զմոտս լիութեան: Ձեռք նորա ոսկիք ճախարակեայք: Որովայնք նորա տախտակ փղոսկրեայ ականակապ յականց շափիղայ: Սրունք նորա սինք մարմարեայք հաստատեալք ի վերայ ոսկի խարսխաց (Գ 1, Ե 19—15): Բաղդատութիւնը իրացվում է նաև Որպէս կապով: Տեսի զամպարիշտն վերացեալ, բարձրացեալ որպէս զմայրս լիբանանու (Սաղմ. ԼԶ 35): Մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ քո, արարին զերուսաղէմ որպէս զհիւզս մրգավաճառաց (Սաղմ. Հը 1):

Բաղդատուիթյունը արտահայտվում է նման ածականով և նմանել բայով, օրինակ՝ նմանեցաւ մեծութիւն (մեծութիւն նշանակում է հասակ) քո արմաւենոյ, և ստինք քո որկուզաց. նման է եղբորորդին իմ այծնման կամ որբուց եղանց ի վերայ լերանց Բեթելայ (է 7, Բ 9): Համեմատությունների այս ձևերը միայն նրդ երգոցից քաղեցիրք, բայց որքան հետաքրքրական համեմատություններ կան Աստվածաշնչի մյուս գրքերում: Երբևմն համեմատությունը արտահայտվում է ծավալուն կերպով. մի նախադասության կամ խոսքային մի հատվածքի մեջ նկարագրվում է երևույթ կամ երևույթներ և ապա հաջորդ նախադասությունը կամ հատվածքը դառնում է համեմատության եզր նոյնպէս, այնպէս, որպէս, զորօրինակ բաղդատական դերանուններով. օրինակ՝ Որք սարսէին յինէն, արդ ահաւասիկ հասին ի վերայ իմ: Իբրև զձիւն կամ իբրև զսառն որոշեալ, որ հալիցի ի հասանելոյ շերմութեան և ոչ ճանաչիցի, թէ որպէս էր, նոյնպէս և ես լքայ յամենեցունց, կորեայ և տնանկացայ (Յովք 2 16—18): Մի՛ նախանձիր ընդ շարս, մի բնդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն: Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեցին, որպէս զդաւարի խոտոյ վաղվաղակի անցցեն (Սաղմ. 12 1—2): Որպէս փորձի ի բովս արծաթ և ոսկի, նոյնպէս ընտրէ զսիրտս Աստուած» (Առակք Ժէ 3—4): Թէպէտ և նախատի վատ, ոչ ամաչէ, նոյնպէս և որ առնու ցորեան փոխ ամարանի (Առակք Ի 4): Մի՛ ուտեր հաց ընդ առն շարակամի և մի ցանկանար կերակրոյ նորա. զոր օրինակ թէ մազ ոք կլանէ, այնպէս ուտէ և ըմպէ» (Առակք ԻԳ 6—8):

Մեր գրողները Աստվածաշնչից սովորեցին շրջաբանությունների կիրառության արվեստը, սրա բաշտը խոսքերը դարձան մեր խոսքի աղն ու համը, և իբրև բնաբան քարոզներ ու ճառեր ստեղծվեցին սրանց շուրջը: Աստվածաշնչում մաքղը կոչվում է որդի մաքոյ, նենդ մարդը՝ շրքուեմ և նեգաուբ, մեծախոսը՝ լեզու մեծաբան, աստուած՝ տէր երկնից, քազատր փառաց, տէր զօրութեանց, օտարը՝ որդի օտարաց, զառն՝ որդի խառոյ, լեզուն՝ խեղդ շրքանց, մայրս՝ յղացեալն զիս. յերկրի՛ ի ներեոյ արեգական. ես՝ անձն իմ. մահ՝ ֆուն յափտենից. լալ՝ իջուցանել արտասուս, ակն՝ նրագ մարմնոյ, արուեսակ՝ աստղ առաւօտու, և այլն: Իսկ սրանք իրենց բնագրում խոսքի գեղեցկության ընտիր միջոցներ են, որոնք այդ խոսքը դարձնում են կենդանի, վառ ու պատկերավոր: Ծրագ մարմնոյ ակն է, եթէ ակն քո առատ է (այստեղ էլ ակն = լույս), ամենայն մարմինդ լուսատր եղիցի (Մատթ. է 22): Իջոյց արտասուս մեծամեծս, և ոչ ոք էր, որ մխիթարէր զնա (Ողբք Երեմեայ Ա 9):

Ի շերմս խշտեաց իւրեանց տաց արհաւիրս և արբեցուցից զնոսա, զի թմբրեցին և ննջեցցեն քուն յափտենից (Երեմիա ՄԱ, 39): Տեսի ես զամենայն արարեալ, որ արարեալ են ի ներքոյ արեգական (Ժող. Ա 14): Առեալ ածից զքեզ ի տուն մօր իմոյ և ի սենեակ յղացելոյն զիս (Երզ Ը 2):

Իսկ Աստվածաշնչի թեալոր խոսքերը, իմաստուն ասացվածքները, առածներն ու առակները այնպես են տարածված մեր հին գրական խոսքի մեջ, որ դարձել են նրա հյուսվածքն ու հենքը և տվել են նրան յուրահատուկ բիրելական երանգ ու բնույթ: Աստվածաշնչից են անցել մեր հին գրական խոսքին ու ժողովրդին Ունայնութիւն ունայնութեանց, և ամենայն ինչ ընդունայն է (ժող. Ա 2): Վայ քեզ, քաղար, որոյ թագատր քո մանուկ է (նույն տեղում Ժ 16): Շուն, որ կենդանի է, լաւ է, քան զառիժ մեռեալ (նույն տեղում Թ 4): Որ փորէ խորխորատ, ի նոյն անկցի (նույն տեղում Ժ 8) (համեմատի՛ր, փոս փորողը ինքն է ընկնում փոսը): Պատուական է սակաւիկ ինչ յիմաստութենէ, քան զմեծ փառս անմատութեամբ (նույն տեղում Ժ 1): Ամենայն ծառ, որ ոչ առնիցէ զպրտուղ բարի, հատանի և ի հուր արկանի (Մատթ. Գ 10): Զայն բարբառոյ յանապատի (նույն տեղում Գ 3): Ոչ հացի միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանի (նույն տեղում Գ 3): Ակն ընդական և ատամն ընդ ատաման (նույն տեղում Ե 38): Մի՛ կալ հակառակ շարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո նմա և զմիսն (նույն տեղում 39): Մի գիտացցէ ձախ քո, զինչ գործէ աջ քո (նույն տեղում Զ 3): Ամենայն ծառ բարի՛ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ: Ոչ կարէ ծառ բարի՛ պտուղ չար առնել և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել (նույն տեղում է 18): Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս՝ հինս (նույն տեղում Թ 17): Զի ոչինչ է ծածուկ, որ ոչ յայտնեցի, և գաղտնի, որ ոչ ծանիցի (Ժ 26):

Այս թեալոր խոսքերը հայ մարդու ամենօրյա կիրառության նյութն էին և՛ բանավոր և՛ գրավոր խոսքի մեջ:

Հայ գրողը Աստվածաշնչից էր սովորում խոսքային յուրահատուկ ձևերի՝ փոխարեքությունների կիրառությունը, որոնք առաջին անգամ այնտեղ էին նրբորեն կիրառված և որոնք խոսքը առօրյա իր գործնական գործառությունից բարձրացնում և դարձնում են վերացական ու գեղեցիկ, անսովորական ու թարմ: Այստեղ է, որ առաջին անգամ սերը դառնում է սիրած, արգարութիւն-ը՝ արդար, երկամն-ը ու սիրտ-ը՝ ինքր անն իմաստութիւն-ը՝ իմաստուն, ձախ-ը՝ ձախ ձեռք, աջ-ը՝ աջ ձեռք, Կարմիր որդն-ը՝ որդան կարմիր, և սրանց հետ մեր հին խոսքի բազմաթիվ գեղեցիկ պեսպեսությունները սփռվում են հայերենում իբրև թանկագին

ակնազարդեր, որոնք փայլ ու իմաստային հարստություն են հաղորդում նրան: Լու՛ր, տէ՛ր, արգարութեան և նայեա՛ր ի խնդրուածս իմ (Սաղմ. ԺԶ 1): Նստաւ յաթոռ սրբութեան իրոյ (նույն տեղում ԽԶ 9): Փորձեա՛ր զիս, Տէ՛ր, և քննեա՛ր զիս. փորձեա՛ր զերկամունս իմ և զսիրտ իմ (նույն տեղում ԻԵ 2): Զի քեզ ասաց սիրտ իմ, և խնդրեցին: Միծաղելով զորժէ՛ անզգամ զչար, իսկ իմաստութիւն առն (փոխն. այլ իմաստուն) նիւթէ զհանճար (Առակք Ժ 23): Քանի գեղեցկացար և քանի քաղցրացար, սէ՛ր ի փափկութեան քում (Երգ Է 6): Զայս նորա ընդ զլսող իմով, և աջ նորա պատեցէ զինն (նույն տեղում 6): Կարգեցէք ի վերայ իմ զսէ՛ր (նույն տեղում 4):

Աստվածաշնչում են ձև ու կերպարանք և ոճական գեղեցկություններ դարձել մեր բաների համանիշային կիրառությունները, որոնք ոչ միայն իմաստային պետությունների թանկագին զարդեր են, այլև ունեն այն գործնական նշանակությունը, որ հաճախ բացատրում են իրենց անձանոթ զուգադիրների նշանակությունները: Համանիշ զուգադիրների այդ կիրառությունները մեր լեզվական արվեստի այն առանձնահատկություններից են, որ միշտ թարմ են ու կենդանի՝ և երբեք դրանցից նույնաբանության տպավորություն չենք ստանում: Ահա մի քանի օրինակ. նստէր և լայր և ողբայր Երեմեայ զողբս զայս ի վերայ Երուսաղեմի (Ողբ Երեմեայ Ա): Եւ քահանայք նորա հաշեն, հառաչեն և յոգոց հանեն (նույն տեղում 4), (Երբայական բնագիրը առաջին երկու համանիշը չունի): Եւ էր զարգարեալ բեհեզով և կերպասովք, զորս էր կարգեալ և կազմեալ կարովքն ծիրանօք և բեհեզովք (Եսթեր Ա 6): Եւ շորացոյց զիս յաւուր բարկութեան սրամտութեան իրոյ (Ողբ Երեմեայ Ա 12): Հուր պատեաց զՅակոբ, հաշեաց և մաշեաց զամենայն, որ շուրջ էր զնովաւ (նույն տեղում Բ 3): Լուարու՛ք, լուարու՛ք զայս, զի ես հեծեմ հառաչեմ, և ոչ որ է, որ մխիթարէ զիս (նույն տեղում Ա 21): Որոց քիւր իցեն հանապարհիք իրեանց և կամակօր շաւիղք նոցա (Առակք Բ 15): Մնունդք երկրի և ողիվ մարդկան, ի միասին մեծամեծք և տնանկր (Սաղմ, ԽԸ 3): Ամենայն նշանօք և արուեստիւք, զոր առաքեաց տէր առնել յերկրին Եզրիպտացոց ի փարաւոն ի ծառայս նորա և յամենայն երկիր նորա, զնշանս մեծամեծս, զձեռն հզօր և զբազուկ բարձր, զոր արար Մովսէս առաջի որդոցն Իսրայելի (2-րդ օրինաց ԼԴ 11—12):

Ասվեց արդեն, որ լեզվում չկա մի այնպիսի համանիշ, որ լրիվ ծածկի մյուսին թե՛ իմաստային նրբություններով և թե՛ ոճական հողի վրա: Դրանցից յուրաքանչյուրն իր դերն ու նշանակությունը ունի և օժտում է նախադասությունը որևէ շնորհով: Բացի այս՝ մեր լեզվի հա-

մանիշները նպաստում են հին և իմաստակորույս բաների իմաստները ճշտելուն և վերականգնելուն: Նույնիսկ կան բաներ, որոնք միայն իրենց համանիշի հետ են կիրառվում. օրինակ՝ հաշել բայը միշտ հառաչել բային կից է գործածվում: Համեմատիր. Ուտէին զիսրայէլ բերանալիր ամենայն բերանով (Ես. Թ 10): Եւ անկանուղիք (անկարուրդք) կօշկաց նոցա՝ և ողաքափիք իրեանց հնացեալք և կարկատեալք յոտս իրեանց (Յես. Թ 5): Զնշանս և զարուեստս, զոր արար ընդ իս բարձեալն, հաճոյ թուեցաւ առաջի իմ պատմել ձեզ (Դան. գ, 99): Արդ լու՛ր դու զաեսիլ երագոյն իմոյ, զոր տեսի (նույն տեղում Դ 6): Այլ եփրեմ այս շար, զհետ ևղև խորշակի. զօրհանապազ զանուրիքին և զանտիս յաճախեաց (Ովսէ ԺԲ 1): Զուեսցուք զնացուք և երթիցուք զուղղորդն (Մնունդք ԼԴ 12): Իրբև լուան, սուբաբան արքն և սրամտութիւն էր նոցա յոյժ (նույն տեղում ԼԴ 7): Յաճախեցէք յոյժ զվարձանս և զօթիսս, և տաց, որչափ և ասիցէք (նույն տեղում 12): Զի զարհուրեցուցեն և երկեցուցեն զիս (Նե. Զ 14): Զբաղամատուրն և զմալեալն և զփաճաւառան և զհատեալն մի՛ մատուցանիցես տեառն (Ղևտ. ԻԲ 24): Ուշադրություն դարձրեք վերջին համանիշների վրա: Մեր նոր լեզվում չեն մնացել բաղամատուր, մալեալ, փաճաւառոտ, հատեալ, որոնք բոլորն էլ նըշանակում են կուրտ, կրտված: Եթե սրանք իրար հետ իրբև համանիշներ չկիրառվեն, առնվազն բաղամատուր և փաճաւառոտ բաները կմտնեն այնպիսի բաների շարքը, որոնց իմաստները մոթ են մեզ համար առ այսօր:

Մեր թարգմանիչները հայ ժողովրդի լեզվի ընդերքից դարձվածքների ամբողջ գետեր են բխեցրել և դրանք ծովացել են Աստվածաշնչի մեջ իբրև հարստություն և իբրև խոսքի ոճավորման գեղեցիկ միջոցներ: Առաջինը Աստվածաշունչն է, որ պարզ բայեր կիրառելու փոխարեն առաջնությունը տվել է բաղադրյալ ձևերին. աղօթելու գերադասել է աղօթս առնել. Յաղօթս կալ՝ աղօթս մատուցանել, երկրպագելու՝ երկիր պագանել, պատասխանելու՝ պատասխանի տալ, պատասխանի առնել, հետևելու՝ զհետ երթալ, այցելելու՝ այցելութիւն առնել և այսպես կուտակվել են բաղադրյալ կամ հարադրական բայերի անթիվ շարքեր իրենց ժողովրդական գեղեցիկ արտահայտչական, իմաստային ընդարձակությամբ, ու նրբերանգներով, դրանց համանիշ ու զուգադիր ձևերի առատությամբ. այսպես՝ աւարել բայի դիմաց ունենք բաղադրյալ աւար հարկանել, աւար ածել, յաւարի ածել, աւար տանել, յաւարի առնուք: Այցելել բայի փոխարեն ունենք այց առնել, այց ելանել, յայց լինել, այցելու լինել, այցելութիւն առնել: Երկեցուցանել, զարհուրեցու-

ցանել բայերի հետ Աստվածաշնչում ունենք ան մատուցանել, երկիւղ մատուցանել, ան արկանել, ան տալ, երկիւղ տալ. իսկ զարհուրել, երկրնչել բայերի հետ ունենք ան անկանել, լի լինել անիւ, ան պատել, զանի հարկանել, ան ունել՝ կալնուլ, ան հասանել: Ամաշել բայի հետ իբրև զուգադիր համանիշներ են կիրառուում ամօր զգեճուլ, յամօր՝ յամօրի լինել, զամօրի՝ յամօրի հարկանել, ամօրով լինել, ամօրով կալ, ամօր կրել: Այսպիսով բայական զուգադիրների հետ Աստվածաշնչում կան հազարավոր միմյանց զուգադիր բայականացուցութուններ, որոնք քամված են համաժողովրդական հայերենի ընդերքից և որոնք համապատասխան դարաշրջանի լեզվաոճական զարգացման պահանջի, անընդհատ փոփոխվել և հարմարվել են տվյալ շրջանի լեզվաոճական վիճակին՝ մի կողմից զրական լեզվում, իսկ մյուս կողմից բարբառներում ու խոսվածքներում: Ահա մի քանի համանիշ օրինակներ ևս, պահ արկանել, պահ զնել, պահ կարգել, պահ մատուցանել (կալանավորել. կալանքի տակ պահել), առաջի առնել, առաջի արկանել, առաջի կացուցանել: Սուգ առնուլ, սուգ զգեճուլ, սուգ ունել, սուգ առնել, ի սուգ նստել: Սպաս առնել, ի սպասու կալ, սպաս ունել, սպաս տանել: Փորձ առնել, փորձ առնուլ, փորձ գտանել, փորձ խնդրել, փորձ տալ, փորձ տեսանել, փորձ փորձել, ի փորձ արկանել: Յանդիման առնել, յանդիման լինել, յանդիման կալ, յանդիման կացուցանել, յանդիման հարկանել, յանդիման հանել:

Աստվածաշնչի ծովածավալ դարձվածաբանութիւնը իր կազմութեան պես-պես ձևերով նման մի աշխատանքով չի սպառվի: Առանձին գրքի ու բառարանի գործ է, ուր պետք է ուսումնասիրվի և ներկայացվի ամբողջութեամբ բառարանային ձևով ու բացատրութիւններով:

Մեր լեզվի բառերի իմաստային հարստութիւնները նույնպես առաջին անգամ կիրառութեան ու ցուցադրման լայն ասպարեզ են իջել Աստվածաշնչում: Միևնույն բառի իմաստային տարբեր դաշտերը ոչ միայն նոր հասկացութիւններ են արտահայտում, այլև ոճաբանական բազմազան հարցեր են լուծում այն բառական միջավայրում, որտեղ դրանք հանգես են գալիս: Աստվածաշնչում արծարծվում են կրոնապաշտամունքային բազմազան հարցեր՝ պատմական միջավայր, կենցաղային, պետական կյանք, ազգական սխրագործութիւններ, իրավական, տրնտեսական ու առօրյա հարաբերութիւններ: Այստեղ լայն շարժումով բրնութիւնը օգտագործվում է իբրև նկարագրութեան նյութ և մանամանդ իբրև հենարան համեմատութեան, հակադրութեան, զուգադրութեան և խոսքի այլ ուղղակի և անուղղակի կազմավորման համար: Բովանդատ-

կութեան այս ծովածավալ հարստութեան համար առանձին-առանձին բառեր գտնել և գործադրել անհնար մի բան էր հայոց լեզվի համար, որ գրավոր խոսքի մեծ փորձ չունէր: Առհասարակ ոչ մի լեզու չի կարող այդքան բազմապիսի հասկացութիւնների համար առանձին բառեր տրամադրել: Այստեղ միշտ օգնութեան է գալիս բառի բազմիմաստութեանը, որ հայերենը Աստվածաշնչում լիովին մեջտեղ հանեց զարմանալի ճոխութեամբ ու նրբերանգներով: Ահա մի քանի օրինակներ միայն իբրև ցուցադրութիւն այդ ճոխութեան և իմաստային նրբերանգների:

Հարկանել բայի առաջին իմաստն է գանահարել, ծեծել, ինչպես՝ (Մովսէս) ետես այր մի եղիպտացի, զի հարկանէր զոմն երրայեցի (Ելք Բ 11): Այս հիմնական և ընդհանուր իմաստները Աստվածաշնչում փարթամ ծառի նման ճյուղավորվում են: Հարկանել բայը իր իմաստային գունագեղութեամբ ոչ միայն անկախ է հանդես գալիս, այլև դարձվածքների մեջ, որ նշան է, թե դա հայերենի ամենագործածական բայերից մեկն է: Գանահարել, ծեծել իմաստից առաջանում է հարուտալ: Իսկ եթե հարցէ ցուլ զայր կամ կին (Ելք, ԻԱ, 28): Սրանցից ծագում են կտորել, ջարդել: Եւ անցից ընդ ամենայն երկիրդ Եգիպտացոց ի գիշերի յայսմիկ և հարից զամենայն անդրանիկ երկրիդ եգիպտացոց ի մարդոյ մինչև յանասուն (Ելք ԺԲ 12): Սրան զուգահեռ, զուցե և նախորդ իմաստից առաջ է կազմվել հարկանել բայի սպանել նըշանակութիւնը. ինչպես՝ «Եւ ասէ ցնոսա Ռուբեն. Մի հարցուի զդա յոգի... դարձվածք է (մի հեղցուք արիւն) (Մնունդք Լէ 22): Սրանցից հետո զժվար է ասել, թե առաջնութիւնը որ իմաստին պետք է տալ: Բերում ենք օրինակները նաև դարձվածքներով առանց որևէ մեկին նախապատվութիւն տալու: «Եւ զարսն, որ առ դուրս տանն կային, հարին կուրարեամբ (կուրացրին) ի փոքուէ մինչև ցմեծն (Մնունդք ԺԹ 11): Խայրել, կծել. Եւ եղիցի դան օձ դարանակալ ի ճանապարհի հարկանել զգարշապար երիվարի (Մնունդք ԽԹ 17): Կառուցել, կանգնեցնել, Եւ Յակոբ եհար զխորան իւր ի լերինն (նույն տեղում ԼԱ 25): Լցնել, սրվանել. Ահա ես հարից զամենայն սահմանս քո դորտիւ (Ելք ԸԶ): Փշացնել, ոչնչացնել, տակով առնել: Եւ ամենայն բանջար, որ ի դաշտի էր, եհար կարկուտն (Ելք Թ 25): Նվազել, փչել: Եւ յատրս ուրախութեան ձերոյ և յամսագլուխս ձեր հարկանիցէք փռ (Թիւք Ժ 10): Մալի զձափի հարկանել. ծափահարել (Թիւք ԻԳ 10): Կուրատել, կուրել. Հրամայեաց զկառափն հարկանել (Բ Մակ., Գ, 30): Մի՛ հարկանիցես ծառատունկ նոցա (Բ Օրէնք Ի 19): Հիվանդացնել, վարակել. Հարցէ զքեզ տէր կեղով Եգիպտացոց և թանչիւք (Բ Օրէնք ԻԸ 27): Հարցէ զքեզ տէր յիմարութեամբ

և շլացութեամբ և ապշութեամբ մտաց (Մտրով կհիմարացնի, կշլացնի և կապշեցնի տերը. (Բ Օրէնք ԻԸ 28): Ուտել. Զարդիւնս երկրի քո հարցէ թըրթուր (Բ Օրէնք ԻԸ 42): Տանջել, տվայտանք պատճառել. Ընդե՞ր հարկանէ զքեզ սիրտ քո. ո՞չ լաւ եմ ես քեզ քան զտասն որդի (Ա թագ. Ա 8): Կրավել, առնել: (Դաւիթ) Եհար զՍիկերակ և այրեաց զնա հորով... և ոչ սպանին զայր և զկին (Ա թագ. Լ 1—2): Տապալել. ցած գցել. Ընդե՞ր ոչ հաւեր զնա ընդ զետին (Բ թագ ժԸ 11): Նետել. Եւ առ Յովար երիս նետս ի ձեռին իւրում և եհար զնոսս ի սրտի Արիսողոմայ (նույն տեղում 14): Ա՛ն դու քեզ նետս... ձգեա՛ր և հար զգետինդ (Գ թագ. ժԳ 18): Պատերազմ հարկանել (պատերազմել, Ա Մնաց. ժԲ 8): Հարին մարտ պատերազմի (Ա Մակ. ժ 75): Բու՛նն հար զխրատուէ իմմէ (պահիր իմ խրատը, հետևիր իմ խրատին. Առակք Գ 13): Բուոն հարեալ համբուրեաց զնա (բռնեց համբուրեց նրան: Առակք է 13): Որ ուն հարկանէ կորուսելոյն, ոչ արդարացի (արհամարհել. Առակք ժէ 5): Արք անօրէնք հուր հարին զքաղաքէ (հրդեհել, Առակք ԻԲ 8): Վարսել. հարկանիցէ ցից յորմս նորա (Սիրաք ժԴ 25): Սարսափեցնել, վախեցնել. Տեսլեամբ հարկանէ զիս (Յովք է 14): Հանդիմանել, նախատել. Հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ (Ես ժԱ 4): Հարի զձեզ տապով և արկի զձեզ դալուկն (տապահարել. Ամոփս Գ 9): Հարցէ զմեծ ապարանսն կործանմամբ (կործանել. Ամոփս Զ 12): Եւ ես հարի զքեզ ապականութեամբ (հիվանդացնել Միքէ Զ 13): Հարի զձեզ անպտղութեամբ (անբերի դարձնել. Անգէ. Բ 17): Հարից զամենայն երիվար տազնապաւ և զհեծեալ նորա յիմարութեամբ (տազնապահարել, հիմարացնել, Զար. ժԲ 4): Խցել: Եւ առ Դանիել եղ, ձիւթ և ճարպ և մագ և եփեաց ի միասին և արար զնդակս և եհար ի բերան վիշապին (Դան. ժԴ 26): Ամրացնել: Առ սպունգ լի քացախաւ, հաւեալ յեղեգան, ետ ըմպել նմա (Մատթ. ԻԶ 48): Հիշենք նաև զան հարկանել. Մշակքն զան հարին զնա (ղուկ. Ի 10): Հարկ հարկանել (հարկ վճարել, հարկվել. կացուցին զնա ի տեղի մի հարկ հարկանել (Ա Մակ. Ը 7): Սպասաւորութիւն հարկանել (ծառայել), Հարին սպասաւորութիւն անցուցանելոյ զարքայ (Բ թագ. ժԸ, 18): Յարտասուս հարկանել. ի գութ յարտասուս... հարկանէր (Գ Մակ. Զ, 16) և այլն: Իսկ եթէ սրանց վրա ավելացնենք նաև կրավորակերպի նշանակութիւնները, ապա պարզ կլինի, թե հենց առաջին իսկ գրական բնմեկին ինչպիսի իմաստային բեռնվածութիւններ էր փայլում մեր լեզուն, որ մեզ հասցրել է Աստվածաշունչը. Յոյժ հարեալ էր ի դատերն Յակոբայ (սիրահարված էր. Մնն. ԼԳ 19): Զագանութեան հարկանել (տրվել ազահութիւն). Որ ունին սիրտ

հարեալ զագանութեան (Բ Պետ. Բ 14): Զեոք տալ, դիպչել, վատուբյուն առնել. Ամենայն, որ հարկանիցի ընդ այդ ընդ այդ կամ ընդ կին դորա, մահու պարտական լիցի (Մնն. ԻԶ 11): Առնչակցվել, առնչվել, հարաբերակցվել, Ամենայն որ հարկանիցի ընդ նա (դաշտանով կնոջ), պիղծ լիցի (Ղևտ. ժԵ 19): Եւ կենդանիքն, որ ոչ էին մեռեալ, հարան յերաստանս իւրեանց (վարակվեցին թանչով. Ա թագ յ 12): Մոտեհալ, կրպչել, դիպչել. Քանզի անջրպետութիւն ետ տանն շուրջանակի արտաբուտ կողմանէ տանն, զի մի հարկանիցին ընդ որմս տանն (Գ թագ. Զ 6): Անել, բուսնել. հարան յիս փուշք (Մաղմ. ԼԱ 4): Քաղվել: Հարաւ որպէս խոտ, ցամաքեցաւ սիրտ իմ (Մաղմ. ՃԱ 5): Բոնվել, բնկնել, ցանցվել. Որպէս թռչունք որսացեալք ի ծուղակս, նոյնպէս հարկանին յորոգայթս որդիք մարդկան (Ժող. Թ 12): Հարան շլացութեամբ (կուրացան. Իմաստ. ժԹ 16): Ի վերայ գորութեան հարկանել (ունեցվածքը կորոպտեալ). Եւ մի՛ ի վերայ հարկանիցիս զօրութեան նոցա յաւար կորստեան նոցա (Արդիու 13):

Իմաստային հարստութիւններ և հետաքրքրական զանազանութիւններ են հանդես գալիս ածել և բերել բայերը: Ածել բայի հիմնական նշանակութիւնն է առաջնորդելով բերել, հետը փայլեցնելով բերել. օրինակ՝ Եւ կոչէին արտաքս զՂովտ և ասէին ցնա.— Ո՞ւր են արքն, որ մտին առ քեզ զիշերի, ւժ զնոսս առ մեզ (Մննդ. ժԹ 5): Մյուս կարևոր նշանակութիւնը, որ մտ է նախորդին և հավասար է նրան իր կիրառութիւն շահով, բշել բերել-ն է, առաջը գցելով վարել բերել-ն է. օրինակ՝ Եւ Մովսէս... ւժ զխաշինսն յանապատ (Ելք Գ 1): Առաջացնելով վրա բերել, առաջ բերել, գոյացնել: Ածից ես անձրև ի վերայ երկրի (Մնն. է 4): Ահա և ածից ջրհեղեղ ջրոյ (նույն տեղում, Զ 17): Ածել մեղս (մեղքի տակ գցել). Միթէ մեղա՞ք ինչ քեզ, զի ամեր ի վերայ իմ և ի վերայ թագաւորութեան իմոյ մեղս մեծամեծս (նույն տեղում Ի 9): Ածել անգիտութիւն (անգիտութիւն մեջ գցել). Սակաւիկ մեւս ես մտեալ էր ուրումն յազգէ իմմէ առ կին քո, և ածէիր ի վերայ մեր անգիտութիւն (նույն տեղում ԻԶ 10): Ածել անէծս (անեծք բերել). Եւ ածիցեմ ի վերայ իմ անէծս և ոչ օրհնութիւն (նույն տեղում Իէ 12): Հարուած ածել (հարված հասցնել). Այլ մեւս ես հարուածս ածից ի վերայ փարաւոնի և ի վերայ Եգիպտոսի (Ելք ժԱ 1): Լցնել. Զի մտին երիվարք փարաւոնի կառօք և հեծելովք նորա ի ծով, և ած ի վերայ նոցա զուրս ծովուն (Ելք ժԱ 1): Ախտ ածել (ցավ տարածել). Զամենայն զախտն, զոր ածի ի վերայ Եգիպտացոցն, ոչ ածից ի վերայ քո (Ելք ժԵ 26): Կապել, փաթաթել. Եւ ածցես նոցա կամարս Ահարոնի և որդոց նորա և ածցես նոցա ապարօշս (Ելք ԻԲ

9): Անօրէնութիւն անել (*անօրէնութեան մեջ գցել*) Ածել զանօրէնութիւնս հարց յորդիս և յորդոց յորդիս (*եւր ԼԳ 7*): Դողումն անել (*սարսափ գցել*): Ածից դողումն ի սիրտս նոցա (*Ղևտ. ԻԶ 36*): Աւարի անել (*ավարել*). Եւ եղև աւելորդ աւարին, զոր ամին յաւարի արքն պատերազմօղբ յուխարաց վից հարկեր հաղար... (*Թիւք ԼԱ 32*): Ի վերայ անել (*հանել, վերկացնել, դուրս բերել*). Ածցէ ի վերայ քո աղգ ի հեռաստանէ ի ծագաց երկրի (*Բ օրէնք ԻԸ 49*): Բան անել (*խոսել*). Նոյնպէս անցէ տէր ի վերայ ձեր զամենայն բանս շարս (*Յեսու ԻԳ 15*): Յաւս և աշխատութիւնս ի վերայ անել (*ցալ ու տառապանք թափել*). Եւ ցաւս և աշխատութիւնս անէ թերափոյ ի վերայ (*Ա թագ. ԺԵ 23*): Ստուերածս անել ի վերայ աշաց (*մթննցնել*). Ածիցէ ստուերածս ի վերայ աշաց մերոց (*Բ թագ. Ի 6*): Չարիս անել ի վերայ ուրումն (*մեկին շարիքներ հասցնել*). Ահա ևս ամից ի վերայ քո շարիս (*Գ թագ. ԻԱ 21*): Չար անել (*չբմուղով ջուր բերել*). Եւ ան ջուր ի քաղարն (*Գ թագ. Ի 20*): Ի կատարումն անել (*գլուխ բերել*): Ի կատարումն անել զպատրաստութիւն տան քո (*Ա Մնաց. ԻԹ 19*): Ածել ի հարկատու (*վերածել հարկատուի*). Ած զնոսա Սողոմոն ի հարկատու (*Բ Մնաց. Ը 8*): Զերգումն անել ի վերայ ուրումն (*մեկին երդվեցնել, մեկի վրա երդում դնել*). Ածի ի վերայ մեր գերգումն (*Յուդիթ Ը 28*): Բարկութիւն անել (*բարկանալ*): Աստուած... ոչ անէ գրարկութիւն իւր զօրհանապազ (*Սաղմ. Է 12*): Ի լոյս անել (*երևան բերել*). Ի լոյս անէր անարատ պահել (*Գ Մակ. Զ*): Լեզու անել (*խոսել*). Եղին յերկինս զբերանս իւրեանց և զլեզուս իւրեանց անէին զերկրաւ (*Սաղմ., 2Բ 9*): Զբօսանս անել ի վերայ ուրումն. Զամենայն զբօսանս քո անէր ի վերայ իմ (*Սաղմ. 24 8*): Ակն անել (*ակնածել*). (Որ ակն անէ զերեսս, ևս ամից զսպիսն ի բժշկութիւն (*Երեմ. ԼԳ 6*): Ածել զգլխով (*գլուխը խուզել*). Եւ դու որդի մարդոյ, առ քեզ սուսեր յեսանասուր, քան զսրբիշ վարսավիրայից. ստանայցես դայն քեզ և ամիցես դայն զգլխով քով և զմօրուօք (*Եզեկ. Ե 1*): Սուր անել ի վերայ. Ես անեմ ի վերայ ձեր սուր (*Եզեկ. 2 3*): Այսպէս նաև՝ ժամանակ անել, սով անել, շունչ անել, մարմին անել, ձեռն անել, ապակ անել, անձեռն անել, ցանգ անել, յապաշխարարիւն անել:

Իսկ բերել համանիշ բայի, որ կրկնակի անգամ քիչ է գործածված (458/214) անել բայից, առաջին նշանակությունն է վերցրած մտեցնել, բեռնած բերել, մարմնի վրա առած մտեցնել. Բե՛ր մատո՛ ինձ, զի կերայց (*Մենդ. Իէ 4*): Ռուբեն... եզիտ ինձոր... Եւ երբ զայն առ կիս մայր իւր (*Մենդ. Լ 14*): Բերին ջուր լուանալ զոտս նորա (*Մենդ. ԽԴ 24*): Զբայց բերել. Բերաք նմա զբայց ըստ մտաց նորա (*Յեսու ԺԳ 7*):

Բանս բերել. Եւ զբանս նորա էին, որ բերէին առ իս (*Նէեմի Զ 19*): Անտիս բերել, օրհնութիւն բերել, համարձակութիւն բերել. (*Սերմն*) բերէր ընդ միոյ երեսուն (*Մարկ. Գ 8*): Երկիր ինքնին բերէ զպտուղ (*Մարկ. Գ 28*): Օգուտ բերել, յառաջ բերել:

Ածել և բերել համանիշ բայերը որոշակի զանազանվում են թե՛ հիմնական և թե՛ փոխաբերական նշանակություններով (մանավանդ դարձվածաբանական կառույցներով): Բերել բայը, որ կրելով բերել է նշանակում, երբեմն կիրառվում է բառնալ բերել զուգադրութեամբ (բերէին անդամալոյծ մի բարձեալ (*Մարկ. Բ 3*): Իսկ անել բայը առանց որևէ շեղումի նշանակում է բշխով բերել, փայլեցնելով բերել, բայց ոչ մի անգամ չի նշանակում վերցրած բերել: Ավելի քան 450 գործածությունից միայն մի կասկածելի կիրառություն ունի. օրինակ՝ Եւ յաւուրն ութերորդ անցէ երկուս տատրակս կամ երկուս ձագս աղանեաց առ քահանայն ի դուռն խորանին վկայութեան (*Թիւք Զ 10*):

Ածել բայը անհամեմատ հարուստ է իր բազմազան կիրառություններով, իմաստային լայն դաշտերով և դարձվածաբանական կառույցներով:

Համանիշները ոչ միայն զանազանվում են իրենց նրբերանգներով, դրանք ունեն նաև մի հիմնական զանազանություն, որ դրանց յուրահատուկ անկախություն է շնորհում. այսպես՝ *houf* բառի բուն նշանակությունը՝ գործողություն արտահայտելն է. *houf* գործողության գոյական է. *Գադարեաց ինքն ի Խօսից իւրոց* (*Եւր ԼԱ 18*): Իբրև լեռաց ի Խօսիցն (*Ղուկ. Ե 4*): Իսկ բան բառը, որ *houf* է նշանակում, ունի անկախ գոյականական նշանակություն առանց գործողական իմաստի. օրինակ՝ Եւ մեկնեաց նմա Սողոմոն զամենայն բանս նորա (*Գ թագ. Ժ 3*): Այս հիմնական զանազանությունն է պատճառը, որ բան բառը կիրառված է մոտ 900 անգամ, իսկ *houf* միայն 36 անգամ:

Գիշեր և ցայգ բառերը համանիշ են, սակայն ցայգ ոչ մի գոյականային գործածություն չունի, միայն կիրառվում է մակբայաբար, իսկ գիշեր և գոյական է և մակբայ. նստիցիք զեօթն օր՝ զցայգ և զցերեկ (*Ղևտ. Ը 35*): Զխաւարն կոշեաց գիշեր (*Մենդ. Ա 5*): Կիրառության համախափանությունը երկու բառեր անհամեմատելի են. գիշեր կիրառված է ավելի քան 250, իսկ ցայգ՝ 35 անգամ: Այդպէս էլ կրակ և հուր բառերը. ինչպէս երևում է կրակ-ը ժողովրդախոսակցական է, իսկ հուր-ը գրական, սակայն որոշակի է նաև սրանց համանիշային զանազանությունը. կրակ ավելի նշանակում է առանց բոցի հուր, իսկ հուր-ը բոցով

կրակն է. օրինակ՝ Աոցես դու աճիւնախառն կրակ (Յովբ. 2 18): Եւ երեւեցաւ նման հրեշտակ տեառն բոցով հրոյ ի միջոյ մորենոյ. և տեսանէր զի մորենին վառեալ էր հրով, և ոչ այրէր մորենին (Ելբ 9 2): Եւ ընթանալոր հուր ընդ Երկիրն (Ելբ Թ 23): Սրանք ևս իրենց հաճախականությամբ անհամեմատելի են. մինչդեռ կրակ բառը 8 կիրառութիւն ունի, իսկ հուր-ը ավելի քան 450 հաճախականությամբ է հանդես գալիս:

Համանիշները հետաքրքրական լեզվական հատկանիշներ են հանդես բերում. այն համանիշները, որոնց հաճախականութիւնը սակավ է, դարձվածքային եզրերով քիչ են հանդես գալիս կամ բնավ չեն դառնում այդպիսի եզրեր. բառաբարդութիւն մեջ իբրև բաղադրիչներ նույնպիսի վիճակ ունեն, և ածանցումներն ու արմատական այլևայլ ձևերը նույնպես քիչ են.

Օրինակ՝ կրակ բառը մի անգամ ունի կրակաբեր, 4 անգամ կրակաբան և մեկ անգամ կրակատեղ և ոչ մի դարձվածքային ձև չունի: Հուր բառը կազմում է դարձվածքներ. հուր ելանել, հուր դնել, հուր անկանել, հրոյ տալ, հուր արկանել, ի հուր մատնել, հրով զատել, հուր ուտել, հուր զանձել, հուր հարկանել, ի հուր փորձեալ ոսկի, հրոյ նարակ տալ և այլն: Իսկ իբրև բարդութիւն բաղադրիչ հուր-ից ունենք հրաշեաց, հրաշէկ, հրաշունչ, հրատ, հրացան, հրդեհ, հրդեհել, հրկէզ հրկիզել, հրձիգ:

Հետաքրքրական դանազանութիւններ են դրսևորում կտրել և հատանել համանիշները: Կտրել բայը հաճախված է ընդամենը քսան անգամ. բուն նշանակութիւնն է խուզել ու նաև հատել (Ահա սկեսրայր քո ելանէ ի Թամնա կտրել զխաշինս (Մնն. 1Ը 13): Կտրեցին զձեռս և զտոս նոցա (Բ Թագ. Գ 12): Այս բայը ունի միայն մի արմատական կիրառութիւն ևս կտուրօ ձևով, որ նշանակում է ոչխարի խուզ: Մինչդեռ հատանել բայը հաճախված է ավելի քան 60 անգամ, ունի բազմազան նշանակութիւններ, դարձվածքային միավորներ և բառակազմական ճյուղավորված ցանց:

Հատանել բայի առաջին նշանակութիւնն է մի սուր բանով կտրել. Ես հատի զտոտն հանդերձի քոյ (Ա Թագ. ԻԳ 12): Զլեզուն հրամայեաց զանօրէն նիկանովրայ հատանել (Բ Մակ. ԺԾ 33):

2-րդ նշանակութիւնն է սպառել, վերջացնել. Զստուղ կալոյ քոյ և հնձանի մի հատանիցես (Ելբ ԻԲ 29): 3-րդ նշանակութիւնն է պակասեցնել, զեղչել: Եւ զսակ զաղիսարկին որպէս գործէին հանապազ, արկէք ի վերայ նոցա. մի՛ հատանիցէք ինչ անտի (Ելբ Ե 8): Հատանել

փոքր ինչ ի զնոյ անտի նորա (Ղևտ. ԻԷ 18): 4-րդ՝ կոտորած անել, ջարդ տալ: Հատին երեք զօրավարք զբանակն այլազգեաց (Բ Թագ. ԻԳ 16): 5-րդ՝ կրճատել. Մի հատանիցես ինչ ի բանիցդ (Եր. ԻԶ 2): 5-րդ ճեղքելով նաև ապարհ բանալ. Արքայն Մովաբայ... առ ընդ իր եւթն հարեր այր սուսերածիգս հատանել հրթալ առ արքայն Երզվայ և ոչ կարացին (Գ Թագ. Գ 26): 6-րդ՝ Դաղարեցնել. Եհաա Աստուած զամենայն արտօսր յաշաց նոցա (Յայտ. է 17): 7-րդ՝ Զրկել, շտալ. չուր ծարաւեաց ոչ արբուցեր, այլ և զհաց քաղցելոց հատեր (Յովբ. ԻԲ 7): Եւ հատցէ Աստուած զբաժին նորա ի ծառոյն կենաց և ի քաղաքէն սրբոյ (Յայտ. ԻԲ 19): 8-րդ՝ Քաղել. և անուանեցին զանուն տեղոյն Զոր ողկուզոյ, վասն ողկուզին, զոր հատին անտի որդիքն Իսրայելի (Թիւբ. ԺԳ 25): 9-րդ՝ դնել, զծել. Եւ հատանէ սահմանն ի թիկանց Ակկարոնի ընդ հիւսիսի (Յես. ԺԵ 10): 10-րդ՝ Կառուցել, կանգնեցնել. Եւ եկն յերուսաղէմ և Եհաա զպարիսպն Երուսաղէմի ի դրանէ Եփրեմի մինչև ցղուն Անկեանցն (Գ Թագ. ԺԳ 13): 11-րդ՝ Ավարտել. Եղև ողի իմ առ յինէն իբրև ոստայն սատարաց (կտավազործ) մերձ ի հատանել (Ես. 1Թ 12): Վէտս հատանել (ցտել): Եւ մարմինս իւրեանց վէտս մի՛ հատանիցեն (Ղևտ. ԻԱ 5): Գին հատանել. (զին կտրել, զին դնել). Հատցէ նմա քահանայն զին (Ղևտ. ԻԷ 8): Պղինձ հատանել (հանքից պղինձ հանել). Ի լերանց նորա հատանիցես պղինձ (Բ օրէնք Ը 9): Գլուխ հատանել (զլխատել). Եհաա զգլուխն Աղեքսանդր (Ա Մակ. ԺԱ 17): Քար հատանել. Հատանել քարինս կոփածոյս (Ա Մնաց. ԻԲ 2): Վէմ հատանել (քար կտրել). Իբրև զմուրճ, որ հատանէ զվէմ (Երեմ. ԻԳ 29): Բոց հատանել (բոց հանել). Զայն տեառն հատանէ զբոց ի հրոյ (Սաղմ. ԻԸ 7): Յոյս հատանել (հույսը կտրել). Եհաա իբրև զծառ զոյս իմ (Յովբ. ԺԹ 10):

Այսքան հարուստ առումների ու դարձվածքային միավորների հետ հատանել բայը ունի բառաբարդացման և այլ գործածութիւն ցանց. ինչպես՝ հատ (հատ ցորենոյ), հատավաճառ, հատուցանել, հատուցանող, հատուցիչ, հատուցումն, հատանել:

Քար բառը ընդհանուր է, իսկ վէմ-ը գրական. սրանց համանիշային զանազանութիւնը նույնպես իրական փաստ է: Մինչդեռ վէմ նշանակում է ծայր և քարի խոշոր կտոր, փոխարեքարքար ապավեն, հենարան: Ինչպես՝ Եւ զուր յարեալք ի վերայ տան հօր իմոյ այսօր և կոտորեցէք զորդիս նորա արս Եթանասուն ի վերայ վիմի մերոյ (Դատ. Թ 18): Բերին վէմ մի և եղին ի վերայ զբոյն (Դան. 2 17): Տէր վէմ իմ և ամբողջիս իմ (Բ Թագ. ԻԲ 2): Մի երկու անգամ կիրառված է նաև Ետաբար նշանակութիւնը. Քարկոծեսցեն զքեզ վիմօք (Եզեկ. ԺԶ 40):

Իսկ քար բառի առաջին նշանակությունը քարանյութ-ն է: Եւ ծառայեցես անդ աստուածոց օտարաց փայտից և քարաց (Բ օրէն. ԻԸ 64): 2-րդ նշանակությունն է նետաքար, որ ամենից շատ է կիրառւած. Քարկօծեսցեն զնոսա քարամբք (նույն տեղում ԻԲ 24): 3-րդ նշանակությունն է քարաքեկար. Քարինք որմոց նորա յատակին (Առակ. ԻԳ 31): 4-րդ իմաստն է քանկագին քար. Եւ էր ի նմա լուսաօրովիւն նմանեալ ականց պատուականաց քար յասպիս սառնատեսակ և կենդանի (Յաբտ. ԻԱ 11):

Բայց այս վերջինը իբրև բնդհանուր ժողովրդական բառ ունի բազմաթիւ ածանցումներ ու բարդումներ. օրինակ՝ քարածայո, քարալից, քարածեբլ, քարակոփ, քարանատ, քարածիգ, քարայտակ, քարանալ, քարանձաւ, քարեղէն, քարընդտեւել, քարընկեց, քարընկէցութիւն, քարկոծ, քարկոծել, քարկոտ, քարկոփ: Մինչդեռ վէմ բառը միայն բարդություն ունի՝ վիմարգել:

Քար բառը ունի նաև մի քանի դարձվածքային կապակցություններ. քարինք աղաղակեն. (Եթէ դոքա լոեսցեն, քարինքդ աղաղակեսցեն (Ղուկ. ԺԹ 41): Քարինք պատուականք (Պսակ ի քարէ պատուականէ (Սաղմ. Ի 4): Ոչ մնացէ քար ի քարի վերայ: Գնել քար ի քարի վերայ: Քար գայրակղութեան: Քար հատանել:

Վէմ բառով ունենք միայն վէմ գայրակղութեան: Մակայն այս երկու համանիշները հաճախականության կողմից իրար շին դիշում:

Վէմ-ը կիրառւած է 160 անգամ, քար-ը՝ 152:

Հետաքրքրական է տիւ և ցեբեկ բառերի համանիշությունը՝ ևս: Ամենից առաջ նշենք, որ ցեբեկ բառի հաճախականությունը սակաւ է՝ ընդամենը 20, մինչդեռ տիւ գործածւած է 110 անգամ: Յեբեկ բառը գոյականի կիրառություն բնաւ չունի, միայն մակբայաբար է գործածւում և այն էլ առանց որևէ հոլովման, միայն հայցականի ձևով առանց գ-ի կամ գ-ով. Օրինակ՝ Եւ Աստուած առաջնորդէր նոցա ցեբեկ սեամբ ամպոց (Ելք ԺԳ 21): Զցայգ և զցեբեկ ցանկացեալ եմ տեսանել զքեզ (Բ Տիմ. Ա 3): Տիւ բառը հանդես է գալիս և գոյականաբար և մակբայորեն. կոչեաց Աստուած զդոսն տիւ (Մնն. Ա 5): Եւ եղև յետ քառասուն տարեցեան և քառասուն զիշերոյ ետ ինձ տէր զերկուս տախտակսն (Բ օրէնք Թ 11): Եւ ես կացի ի լեբինն զքառասուն տիւ և զքառասուն զիշեր (Բ օրէնք Ժ 10): Պահէին զդրունս ի տուէ և ի զիշերի (Գործք Թ 24):

Տիւ բառը հոլովւած է հայցական, սեռական, տրական, բացառական հոլովներով. հին բացառականը՝ ի տուէ ներգոյականի արվելի ճիշտ մակբայի նշանակություն ունի: Խաւարեսցի յերկիր լոյս ի տուէ (Ամովս

Ը 9): Ի տուրնջենէ մինչև ի զիշեր մատնեցայ (Ես. ԼԸ 13): Անկեալ կան ի տօթի տուրնջեան (Բարուք Բ 25): Ի զիշերի իբրև ի տուրնջեան կայ (Սիրքաք ԼԸ 28): Երկու բառն էլ որևէ ճյուղավորում չեն տալիս, միայն տիւ բառը հին դարձվածքային մի զեղեցիկ միավոր ունի՝ ի տուէ և ի զիշերի (զիշեր-ցեբեկ). Խորհեսցի նա ի տուէ և ի զիշերի (Սաղմ. Ա 2):

Հարուստ համանիշային զանազանություններ, բառակազմական ու դարձվածքային միավորներ են կազմում նաև գործել, կատարել, շինել և առնել բայերը. Գործել բայի առաջին նշանակությունն է հյուսել: Գործանկրածոյ վակասի գործեցին զնա (Ելք ԼԹ 4): Կինն իմ մանէր և գործէր (Տովբիթ Բ 19): 2-րդ մշակել. Մարդ շէր, որ գործեր երկիր (Մնն. Բ 5): Այգիս տնկեսցես և գործեսցես: 3-րդ՝ Որևէ բան առնել. Եւ ասն ցԱբրահամ. Աստուած բնդ քեզ է յամենայնի, զինչ և գործես (նույն տեղում ԻԱ 22): 4-րդ նշանակությունն է իբևն բույլ տալ, սխալ գործել, շարքան առնել. Եւ ասէ Տէր Աստուած ցկինն, զի՞նչ գործեցեր զայդ (նույն տեղում Գ 13): Զի՞նչ գործեցեր զայդ ընդ իս, զի ոչ պատմեցեր, եթէ կին քո է (ԺԲ 18): 5-րդ նշանակությունն է շինել, պատրաստել. Եւ զաղ-իսն հրամայեն մեզ գործել (Ելք Ե 16): Զէնդ և զարդդ, զոր գործեցեր (Ա Մակ. ԺԵ 7): 6-րդ նշանակությունն է աշխատանք առնել, աշխատել, բանել. Զվեց օր գործեսցես և արասցես զամենայն զգործս քո. յաւորն եւթներորդի շաբաթ տեառն Աստուծոյ քոյ մի՛ գործեսցես (Ելք Ի 9—10): 7-րդ նշանակությունն է ստեղծել, գոյացնել: Յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս... նախքան զանդունդս գործել (Առակք Ը 24): 8-րդ՝ փորել. Դրով գործեաց և դրօշեաց զնա (Ես. ԽԳ 12): 9-րդ՝ ֆանդակել. Եւ ի վարձու ունիք զոսկերիչս գործել կուսս ձեռագործս (Ես. ԽԶ 6): 10-րդ՝ եփել պատրաստել. Այր ոմն գործեաց ընթրիս (Ղուկ. ԺԳ 16):

Գործել բայով կազմւած կան բազմաթիւ դարձվածքային կապակցություններ. ինչպես՝ գործ գործել, արգարութիւն գործել, պղծութիւն գործել, սպանումն գործել, շար գործել, իրաւուն գործել, մահ գործել, բարիս գործել, գործ սպասու գործել, գործ սպասուորութեան գործել, վնաս գործել, անօրէնութիւն գործել, գործ մշակութեան գործել, ամբարտաւանութիւն գործել, անօրէն գործել, խոտովութիւն գործել, անպատեհ գործել, մեղս գործել, ցանկութիւն գործել, զանումն մարմնոյ գործել, կատարումն գործել:

Գործել բայը բառակազմական մի շարք ճյուղավորումներ ունի. գործածած, գործակալ, գործակալութիւն, գործակից, գործակցութիւն, գործավար, գործատեաց, գործաւոր, գործաւորութիւն, գործելի, գործի, գործուած, գործօն:

Հաճախականությունն է 464:

Շինել բայի առաջին նշանակությունն է կառուցել. եկայք շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ (Մնն. ԺԱ 4): 2-րդ նշանակությունն է պատրաստել. Շինեցին ազգէ յազգ աթոռ քո (Սաղմ. 2Ը 5): 3-րդ նշանակությունն է դարձնել, հաստել, ստեղծել, վերածել: Շինեաց տէր Աստուած զկողն, զոր առ յԱղամայ, ի կին (Մնն. Բ 22): 4-րդ նշանակությունն է շեն մնալ (չեղորք). Աշխարհս ողորմութեամբ շինեսցի (Սաղմ. 2Ը 3): 5-րդ նշանակությունն է կատարելագործել, զարգացնել, մխիթարեցէ գովմեանս և շինեցէ՛ գիրեարս (Ա Թեսաղ. Ե 11):

Իմաստային առումներով շինել բայը ազբատ է գործել բայի համեմատությամբ. մանավանդ որ դարձվածքային բաղադրիչ չի դառնում: Սակայն բառակազմական լայն ցանցով է օժտված. շէն, շինել, շինած, շինուած, շինութիւն, շինօղ: Հաճախականությամբ համարյա չի գիջում գործել բային (416):

Կատարել բայի առաջին նշանակությունն է գլուխ բերել, ավարտել. Ե կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդի՛ զգործս իւր (Մնն. Բ 2): 2-րդ անել. Զինչ կատարելոց իցէ Աստուած (Թիւր. իգ 23): 3-րդ լրացնել. Կատարիցէ զաւուրս ուխտին (Թիւր 2 13): 4. Կարնել, վերացնել, խզել. Կատարեա զու զկեանս սոցա (Տովբ. Ը 19): 5. Ավանդել, փշել. Կատարեաց ս՛նոգին իւր ի վերայ մահճացն (Տովբ. ԺԳ 13): 6. Կատարեալ լինել. Ընդ առն կատարելոյ կատարեսցիս (Բ Թագ. ԻԲ 26):

Այս նշանակությունները նրբավորվում են բազմաթիվ դարձվածքային կապակցություններով. պատուէր, փորձութիւն, անիրատւութիւն, առակ. կամք, ցանկութիւն, տօն, անօրէնութիւն, ուխտ, բարկութիւն, պաշտօն, արմատութիւն, հրաման, աղօթք, բան, շարիք, օրէնք, խորհուրդ, գործ, պատգամ բառերով բազմաթիվ անգամ կիրառված են հարադրական բարդություններ: Օտար կազմություն պետք է համարել կատարել գծնոս ուրումն-ֆահանայագործել, ֆահանա օծել: Բառարարդման ճյուղավորումներով ազբատ է կատարել բայը. կատար, կատարած, կատարումն: Իսկ գործածության հաճախականությունն է 250:

Այս բայերին համանիշ է նաև առնել բայը. բայց դարձվածքային միավորներով, իմաստային հարստությամբ և հաճախականությամբ գերազանցում է բոլորին, որովհետև կրնա յայտարարել իր ստատուսը և անհատականությունն, առնելը համաժողովրդական է. չկա մի բարբառ կամ խոսվածք, որ չունենա առնել բայը: Գուցե այս պարագայում շինել բայը մրցության ելնի սրա հետ, իսկ գործել և կատարել բայերը սահմանափակ կիրառություն ունեն:

Առնել բայի առաջին և հիմնական նշանակությունն է ստեղծել, շեղածից գոյացնել: Արար Աստուած զերկին և զերկիր (Մնն. Ա 1): Երկրորդ նշանակությունն է մի գործողություն կատարել: Եւ ընկէց Ահարոն զգաւազանն առաջի փարաւոնի և եղև վիշապ... և արարին Գէտը Եգիպտացոց կախարդութեամբ նոյնպէս (Ելք է 10—11): 3. պատրաստել: Եւ կարեցին տերևս թղենոյ և արարին իւրեանց սփածանելիս (Գ 7): 4. Որևէ արարք բույլ տալ: Օձն խաբեաց զիս, և կերայ: Եւ ասէ Տէր Աստուած ցօձն. փոխանակ, զի արարեր դու զայն, անիծեա՛լ լիջիւր (Գ 14): 5. Շինել. Արդ արա դու քեզ տապան ի շորեքկուտի փայտից (2 14): 6. Կառուցել. Ես երբ առնիցեմ ինձ տուն (1 30): 7. Վարվել, վերաբերվել: Եւ սխափեցաւ նոյ ի գինոյ անտի իւրմէ և զիտաց զինչ արար ընդ նա որդի իւր կրասեր (Թ 24. որդին եղբայրներին հայտնել է, որ իրենց հայրը հարբել է և մերկ է): 8. Անվանել, կոչել, դնել: Եւ ասեն այր ցընկեր իւր... պրացուք մեզ անուն յառաջ քան զսփռել ի վերայ երեսաց ամենայն երկրի (Մնն. ԺԱ 4): Վերածել, դարձնել: Եւ արարից զքեզ յազգ մեծ (Մնն. ԺԲ 2): 10. Վնասել, շար բան անել. Մի՛ մխեր զձեռն քո ի պատանեակդ և մի ինչ առներ դմա (Մնն. ԻԲ 12): 11. Ելիւն-պատրաստել. Եւ որսա՛ ինձ որս. և արա՛ ինձ խորտիկս, որպէս ես սիրեմ (Մնն. Իէ 4): 12. Կարգել, նշանակել: Տէր արարի զնա քեզ և զամենայն եղբարս նորա արարի նմա ծառայս (Մնն. Իէ 37): 13. Ի կատար անել, կատարելով ավարտել. Զի ոչ թողից զքեզ մինչև արարից զամենայն ինչ, զոր խօսեաց ընդ քեզ (Մնն. ԻԸ 15): 14. Կարել, հյուսել. Եւ արար նման պատմուճան ծաղկեայ (Մնն. ԼԹ 3): 15. Պաղաքեւել, արտադրել, բերք տալ. Եւ արար երկիրն յեթն ամս լիութեանն արդինս (Մնն. ԽԱ 47): 16. Քանգակել, տաշել. մի՛ արացես դու քեզ կուսս ըստ ամենայն նրմանութեան (Ելք Ի 4): 17. Զոնել, մատաղել. Եւ զգուարակն զվասն մեղաց արացես յաւուրն սրբութեան (Ելք. ԻԹ 36): 18. Կոնել, կոփել. Արացես Վահանակս յոսկոյ սրբոյ (Ելք. ԻԸ 13): Արարին իւրեանց որթ ձուլածոյ (Ելք ԼԲ 8): 19. Նկարել. Եւ արդ արարէ՛ զպատկերս երաստանաց ձերոց (Ա Թագ. 25): 20. Խօսել, ասել. Ոչ առնէ՛ հայր իմ բան մի մեծ կամ փոքր, զոր ոչ յայտնէ յունկն իմ (Ա Թագ. Ի 2): 21. Փորել (փոսի մասին) Զի՞ արարէ՛ դուք զգուրն զայն (Բ Թագ. Բ 5): 22. Տեկարկել. Եւ հոսեաց զնոսս յայնկոյս գետոյն, փոխանակ զի արարին իւրեանց անտառս բարկացուցանել զտէր (Գ Թագ. ԺԳ 15): 23. Կառավարել, վարել. Արդ՝ այդպէս առնիցես զթագաւորութիւնդ ի վերայ Իսրայելի (Գ Թագ. ԻԱ 7): 24. Գտնել, ձեռք բերել. Արարին զովօղս և ընկերշակեցին (Դ. Թագ. Ժէ 10): 25. Պատրաստութուն տեսնել. Ոչ պաշար արա-

րին իրեանց ճանապարհին (Ելք ԺԲ 39): 26. Համարել, մեկի կամ մի քանի տեղ դնել. Միթէ դու մեծ ինչ ոք իցես, քան զհայր մեր Աբրահամ, որ մեռաւ... արդ դու զո՞ առնես զքեզ (Յովհ. Ը 53): 27. Շաղախել. Եթուք ի գետին և արար կաւ ի թրոյն և ծեփեաց զկան ի վերայ աշաց կուրին (Յովհ. Թ 6): 28. Հարություն տալ, կենդանացնել. Ոչ կարէր սա, որ եբաց զաշս կուրին, առնել (զմեռեալն յարուցանել. (Յովհ. ԺԱ 37, տե՛ս և 42, 45): 29. Բաժանել, կիսել. Առին զհանդերձս նորա և արարին շորս մասունս (ԺԹ 23): 30. Ստանալ, ունենալ. մո՛տ ա՛ռ աղջիկդ իմ, զի արարից ինձ որդի ի դմանէ (Մեն. ԺԶ 2): 31. Կինել մնալ (կրավորածն) մի՛ ի բացեայ առնիր յինէն (Սաղմ. ԻԱ 12): 32. Գասալորել. Եւ արար զերկուս աղախնայսն և զորդիս նոցա առաջի, և զկիս և զորդիս նոցա զկնի (Մեն. ԼԳ 2): 33.

Մի շարք բայերի տալիս է նաև պատճառականի նշանակութիւն. Արի՛, սրբեա զժողովուրդդ, և արացես սրբել առ վաղիւ (Յես. 13):

Իսկ կիրառութեան հաճախականութեամբ տասնյակ անգամ գերազանցում է իր համանիշներին՝ 1440 կիրառութիւն: Բառակազմութեան եղբրն են առնելի (արարող), արարող, արարիչ, արարած, արարչագործ, արարչապետ, արարչութիւն, արարի, արդիւնարար, խորակարար: Բառակազմական միավորները ըստ իր հաճախականութեան քիչ են, բայց զրա փոխարեն մի քանի տասնյակ դարձվածքային միավորներ է կազմում, որոնց մեջ հանդես է գալիս բաղմազան իմաստներով ու նրբութիւններով: Այդպիսի կազմութիւնների մեջ իր հարադրայի հետ հաճախ կազմում է մի բայ. օրինակ՝ այց առնել, ծաղր առնել, սուրբ առնել, պատերազմ առնել (այցելել, ծաղրել, սրբել, պատերազմել): Պետք է նկատի ունենալ, որ բաղադրյալ և պարզ ձևերի մեջ նուրբ իմաստավորումներ կան: Երբեմն բայը պահպանում է իր այս կամ այն իմաստը, երբեմն էլ բոլորովին նոր իմաստով է հանդես գալիս. օրինակ՝ պաշտօն առնել-պաշտամունք կատարել, կամ ծառայութիւն մատուցել: Չար առնել-չարիք գործել: Կոչուես առնել-կոչուեմի կանչել կամ՝ կոչուեմ կազմակերպել:

Հազար շորս հարյուր քառասուն կիրառութեան մեջ առնել բայը դարձվածքային միավորներ և կազմում արդարութիւն, առաջի, անարդի, անիրաւութիւն, անբակ, այպն, այց, այցելութիւն, յամօք, անպարտ, արուեստ, աղտեղի, անզգամութիւն, ի բացեայ, բան, բարի, գործ, գարշութիւն, գեշ, դադար, դատաստան, գորութիւն, զոն, զատիկ, զենի, ընդունելութիւն, ընծայ, բագաւոր, բողութիւն, բշնաման, իրաւունք, լսելի, խոնարհ, խելամուտ, խաբէութիւն, խաղաղութիւն, խոստովան, խախտու-

թիւն, խարդախութիւն, ծաղր, ծանօթ, կարբակոտոր, կոչուեմ, կամք, հանդէս, նրաման, հանոյք, հեռի, նշարտութիւն, մեծարանք, յուղարկութիւն, նախախնէմ, նկուն, նուէր, նշան, հաւակոտիք, ողջակէզ, որդի, ողորմութիւն, ուղիղ, ուրախ, ուղղութիւն, շար, պաշար, պատուիրան, պատասխանի, պղծութիւն, պաշտօն, պատերազմ, պատգամ, սուրբ, սրտակաթ, սմանչելիք, սուգ, սրբութիւն, վանառ, վրեժխնդրութիւն, տօն, փորձ, փառք, փրկութիւն, փաութիւն, օրհնութիւն:

Համանիշների այս զուգարութիւնը ցույց է տալիս, որ բառերի մի մասը եղել է ընդհանուր համաժողովրդական, իսկ մյուս մասը տեղական կամ ոճաբանական բնութագրով է հանդես եկել: Առավել ևս համանիշային զուգարի իմաստները զոնն հիմնական նշանակութիւնների մարզում իրար շին ծածկել, իսկ ճյուղավորումների մեջ դրանք ևս ինքնուրույնութիւն են հանդես բերել թե՛ հաճախականութեան և թե՛ բառակազմութեան ու դարձվածաբանական մարզերում: Մեր թարգմանիչները համանիշների այնպիսի նուրբ զանազանութիւններ են ցուցադրել, որ այսօրվա ընթերցողին և ուսումնասիրողին զարմանք են պատճառում: Առաջիկ և արձակել բայերը համանիշ են ընդհանուր ուղարկել նշանակութեամբ, սակայն առաջինը նպատակային ուղարկումն է արտահայտում. Եւ առաջեաց զմեզ տէր սատակել զսա (Մեն. ԺԹ 1): Իսկ արձակել բառի հիշյալ նշանակութիւնը սոսկ ուղարկելն է, և այն էլ երկրորդական նշանակութեամբ. Եւ յորժամ արձակեաց զնոսա Յեսու ի տունս իրեանց, և օրհնեաց զնոսա (Յես. ԻԲ 7): Յուղարկել բայը նշանակում է նախապահ դնել և հենց այստեղից էլ սկսում է ստանալ ժամանակակից նշանակութիւնը. Գան որդիքն քո, զորս յուղարկեցիր (Բար. Գ 11): Յուղարկեցին զնա ի նաւ անդր (Գործ. Ի 37):

Համանիշ բառերը բացահայտում են նաև ընդհանուր համազգային և բառապաշարի տեղական շերտերը, որոնք այս կամ այն թարգմանչի միջոցով մուտք են գործել Աստվածաշունչ: Այդպիսի տեղական բառերի միջոցով կարելի է մինչև իսկ ճշտել Աստվածաշունչի այս կամ այն գրքի թարգմանչի ծննդավայրի խնդիրը և այն, թե՛ որ գրքերն են միևնույն թարգմանչի գործը: Մանրակրկիտ համեմատական ուսումնասիրութիւնը կարող է ի հայտ բերել այս կամ այն թարգմանչին, եթե այդ թարգմանիչը ունի ինքնուրույն գրվածք: Այսպես՝ Դպիր բառը իբրև գրագիր, քարտուղար ընդհանուր է, իսկ առեւնադպիր բառը այդ նույն նշանակութեամբ գործածված է, միայն Բ օրինաց գրքում շորս անգամ: Սրանց համանիշ գրիչ բառը միևնույն նշանակութեամբ միայն Եզրի, Նեեմի գրքերում է հիշատակվում:

Հետագա դարերում շատ կիրառված յաղագս բառը միայն 4 անգամ կիրառված է Մնացորդաց գրքերում. հօսեցար յաղագս ծառայի քոյ (Ա Մբնաց. Ժէ 17): Եւ արդ, տէ՛ր, բանն, զոր խօսեցար ընդ ծառայի քում և յաղագս տան նորա, հաւատարիմ լիցի մինչև յափտեան (նույն տեղում 23): Ապա երկու օրինակ էլ ԻՅ՝ 30-ում և Բ Մնաց. ԺԸ 12-ում: Այդ նույն բառը մի անգամ էլ աղագս ձևով կիրառված է Ա Տիմ. Ե 14-ում: Կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, տնարարս լինել և մի ինչ պատճառս տալ հակառակորդին ի հայհոյութեան աղագս (պետք է լիներ յաղագս հայհոյութեան): Մի անգամ էլ գտնում ենք Մենդոց գրքում իբրև համանիշ վասն կապի. Զի բարի լիցի ինձ վասն քո և կեցցէ անձն իմ յաղագս քո (ԺԲ 13):

Հազվագյուտ այս բառի փոխարեն համատարած կիրառված է վասն կապը: V դարի առաջին կեսում յաղագս կապը Բուզանդը ունի. Ագաթանգեղոսը, Եղնիկը, Կորյունը չեն գործածել. միայն Ագաթանգեղոսը ունի գոյականի կիրառությունը. «Քերես երկպատիկ օգտութեան ելի աղագս գտանել կարասցեն», ուր աղագս նշանակում է միջոց, հնար, ճանապարհ:

Ագի բառը երկու անգամ միայն ունենք Յայտնություն գրքում, որ ուշ շրջանի թարգմանություն է համարվում, մինչդեռ տալտն և տաուն համանիշները ընդհանուր են և ազի և այլ նշանակություններով:

Ամբար կիրառված է միայն Ա Մնացորդաց ԻԸ 12-ում և այն էլ իբրև համանիշ շտեմարան ընդհանուր բառին:

Անիւն բառը գտնում ենք միայն Բ Մակաբայեցիների գրքում և Բ Պետրոս առաքյալի թղթում, իսկ դրանով կազմված անիւնախառն բարդ բառը միայն երկու անգամ կա Տովբիտ Զ 18-ում և Ը 2-ում: Իսկ համանիշ մոխիր-ը կա բազմաթիվ գրքերում ավելի քան 40 անգամ:

Նշկանել հազվագեպ բառը միայն Դ Թագաւորաց գրքում է գործածված և այն էլ 8 անգամ: Ստույգ նշանակությունը ճշտված չէ. բացատրվում է ապստամբել, ընդվզել, մերժել, արհամարհել, անգուսնել, լուծը թոթափել բառերով: Որոշ օրինակներ ունեն հայցականով խնդիր հետևյալ ձևով. նշկանեաց արքայն Մովսրու զարբայն Իսրայելի (Գ 5): Եւ արդ յո՞ յուսացեալ նշկահեցեր դիս (ԺԸ 20) և այլն: Այդպիսի խոնդրառությունը թեւադրում է բառը բացատրել արհամարհել, իբրև իշխող այլևս չնանաչել: Իսկ կան օրինակներ, որտեղ իմաստը ապստամբել,

ընդվզել է. օրինակ՝ Եւ յաւուրս նորա նշկահեաց Եղովմ ի ներքուստ ձեռին Յուդայ և թագաւորեցոյց ի վերայ իւր թագաւոր (Ը 21):

Այս բառը V դարում Բուզանդն ու հորենացիին են գործածել: Խորենացին 5 անգամ ունի այդ բայը և ապստամբել և արհամարհել նշանակություններով. Աղմուկ շփոթից իմն լեալ յարևմուտս՝ ընդ որ վստահացեալ Արտաշէս՝ նշկահեալ ընդդիմանայ Հոռմայեցոցն տէրութեանն՝ ոչ տալով հարկս (2-րդ ԾԳ): Այստեղ նշկահել, կնշանակի ապստամբել. իսկ հետևյալ օրինակում կիրառված է իբրև համանիշ արհամարհել բայի համար. Զայս լուեալ Պապայ արհամարհեալ նշկահեաց (3-րդ ԼԹ):

V դարում երեք անգամ ևս կիրառված է, մեկ անգամ ունի Բուզանդը և երկու անգամ Կիրեղ Երուսաղէմացու «Կոչումն ընծայութեան-ը»:

Մինչդեռ արհամարհել և ապստամբել բայերը կիրառված են բազմաթիվ անգամ և Աստվածաշնչի շատ գրքերում:

Ողջ Աստվածաշնչում առաջ բառը իր հարակիցներով՝ առգամն-ծար, առգամնի, առգոյք, առգութիւն, միայն գտնվում է Մակաբայեցոց գրքերում. առգ չորս անգամ, առգամնծար մեկ անգամ, առգամնի երեք անգամ, առգոյք մեկ և առգութիւն երեք անգամ: Միայն առգափող կա Եսայի Իէ 13-ում: Սա պատահականություն չէ, համանիշ անդրանիկ, եթէջ բառերը բազմաթիվ գրքերում և բազմաթիվ անգամ են կիրառված, մինչդեռ Մակաբայեցիների գրքում միայն մեկ անգամ կա անդրանիկ:

Մքա բառը գործածված է երկու անգամ Սաղմ. ԸԶ 37-ում և Եսայի Իէ 4-ում: Մրանից կազմված արտոքայն-ը մեկ-մեկ անգամ չորս Ավետարաններում, իսկ ընդհանուր անդ և անդաստան բառերը չունեն Սաղմոսները և Եսային, մինչդեռ առաջինը կիրառված է 75 անգամ, իսկ երկրորդը՝ 32:

Համանիշներով կարելի կլիներ որոշել Աստվածաշնչի առանձին գրքերի թարգմանիչներին, եթե այդ գիրքը ընդհանուր խմբագրման ենթակա չդառնար Սահակի և Մեսրոպի կողմից, որոնք լեզվական կենտրոնախույս ձևերը չեզոքացրել են հօգուտ ընդհանրականի:

Իհարկե, ամեն մի համանիշ բառ չի կարող այդ հարցը պարզել: Պետք է վերցնել միայն հազվագեպ կիրառված համանիշները: Խիքալ բայը, որ երկյուղել է նշանակում, գործածված է միայն Սիրաբի և Յովբի գրքերում: Այս բառին համանիշ զանգիտել բայը ընդհանուր է, բայց չունեն Սիրաբը և Յովբը: Ընդհանուր է նաև զանի հարկանել, բայց հիշյալները չունեն:

4 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909, էջ 4:

Մեր հին գրական լեզվի ամենակատարյալ բառարանը «նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակն է, որ իր բացատրություններով հենվել է Աստվածաշնչի վրա. առաջին օրինակները տրվում են Աստվածաշնչից, ապա հետո օրինակներ են բերվում մյուս գրքերից: Եթե ընթերցողը համեմատի ակն բառի ներքոբերյալ իմաստները, կտեսնի, թե այդ գրքում բառիմաստներն ինչպիսի հարստություն կա, որ հիշյալ բառարանը չի արտահայտել, իսկ մեր պատկերացումը մեր հին լեզվի ճոխության ու հարստության վերաբերյալ կազմվում է հիշյալ բառարանով: Իբրև օրինակ բերում ենք ակն բառի ժամանակակից բառարանական մշակումը: Հետաքրքրվողը թող համեմատի Հայկազյանի հետ և կտեսնի, թե մեր լեզվի իմաստային ինչպիսի թաքուն գանձեր են մընում դեռևս չբացարանված:

Ակն, ական, աչք, աչաց (բնիկ, հմժող.): 1. Տեսողության գործարան: Եթե հարցե՞ որ զակն ծառայի իւրոյ կամ զակն աղախնոյ իւրոյ և կուրացուցե՞, արձակեսցե՞ զնոսա աղատս փոխանակ ական նոցա (Ելք ԻԱ 24): Պահեա զիս որպէս բիր ական (Սաղմ. ԺԶ 8): Որ խոցե՞ զակն, իջուցե՞ արտասուս, և որ խոցե՞ զսիրտ, յայտնեսցե՞ զգալութիւն (Սիրար ԻԲ 24): Մորեսցին աչք նոցա ի կապճաց (Զար. ԺԳ 12):

2. Գիրք. Տեսողական գործարանի արտաքին մարմինների ամբողջությունը, կոպ, թարթիչ և այլն: (Յիսուս) եթուք ի գետին և արար կա: ի թրոյն և ծեփեաց զկան ի վերայ աչաց կուրին (Յովհ. Թ 6): Հասեալ ի դուռն փղապետին աչօ՞ ցուցանէր զպատրաստութիւն փղացն (Գ Մակ. Ե 14):

3. Գիրք. Գեմք, տեսք: Որ ամբարտաւան էր աչօ՞ և ազահ սրտի, ընդ նմա և հաց ոչ ուտէի (Սաղմ. Ը 5): Մարդ յականէ իսկ երեւի, և ի պատահել երեսաց ճանաչի իմաստութիւն (Սիր. ԺԹ 26):

4. Գիրք. Հայացք, նայվածք: Գործ ամենայն մտեղոյ առաջի նորա, և ոչ գոյ թարչել յաչաց նորա (Սիր. ԼԹ 24): Տիգօք աչաց խաղաց ի վերայ իմ (Յովք ԺԶ 10): Հաստատեցից ի վերայ նոցա զաչս (Ամովս Թ 4):

5. Գիրք. Արտաքին: Մի ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք (Յովհ. է 24):

6. Գիրք. Այնպիսի զգացողություն, որ առանց տեսողական գործարանի տեսնում է. զգացողական ներքնատեսություն: Աչք էին կուրաց և ոտք էին կաղաց (Յովք ԻԹ 5): Եւ տացէ ձեզ սիրտ յամենայնի պաշտել զնա... բանալ զաչս և ականչս սրտից ձերոյ (Բ Մակ. Ա 4): Եդ

զակն իւր ի սիրտ նոցա ցուցանել նոցա զմեծութիւն գործոց իւրոց (Սիր. Ժէ 7):

7. Գիրք. Ուշագրութիւն: Աչք տեսնոն Աստուծոյ քոյ ի վերայ նորս (Բ օրէնք ԺԱ 12): Աչք ամենայն Իսրայելի ի քեզ ևն (Գ Թագ. Ա 20):

8. Գիրք. Լույս: Ծրագ մարմնոյ ակն է, եթե ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի (Մատթ. է 22):

9. Գիրք. Միտք, խելք: Իմաստնոյն աչք իւր ի զուխ իրում, և որ անմիտն է, ընդ խաւար գնայ (Ժող. Բ 14):

10. Գիրք. Ոմն, մեկը, մի ոք: Ընդէ՞ր հաներ զիս յորովայնէ, և ոչ անդէն մեռայ, և ական չէր տեսեալ զիս (Յովք Ժ 8):

11. Գիրք. (հոգն. ներգ.) Կապային առումով նշանակում է պակեացման մեջ, մտնում, աչքում, կարծիքում, հայացքում: (Սարա) եմոտ առ Աղար և յղացաւ. իբրև ետես, թէ յղի է, արհամարհեցաւ տիկինն ի յաչս նորա (Մնունդք ԺԶ 4): Եւ այլն Մովսէս մեծարոյ եղև յոյժ առաջի եզիպտացոցն, և առաջի Փարաւոնի, և առաջի ամենայն ծառայից նորա, և յաչս ժողովրդեանն (Ելք ԺԱ 3): Էսք յաչս նոցա իբրև մարախ (Թիւք ԺԳ 34):

12. Գիրք. Կապային առումով նշանակում է կողմից. Ապա եթէ ամենայն ժողովուրդ որդոցն Իսրայելի անգիտանայցէ ակամայ, և մոռանայցի բանն յաչաց ժողովրդեանն... մատուցէ ժողովուրդն զուարակ յանդույ վասն մեղացն (Ղեւտ Դ 13):

13. Գիրք. Մեծ մասամբ ստացական դերանունով կամ հատկացուցիչով նշանակում է այդ դերանվան արտահայտած անունը կամ հատկացյալը: Մի ազահիցեն աչք ձեր (այսինքն՝ դուք) ի կահ ձեր (Մընունդք ԽԵ 20): Հաճոյ թուեսցի յաչս նոցա (Թիւք ԼԶ 6): Մի խնայեսցէ ակն քո ի նոսա (Բ օրէնք ԺԹ 13): Ակն, որ արհամարհէ զհայր և անարգէ զծերութիւն մօր, իւնեսցեն զնա ազուար ձորոյ (Առակք Լ 17):

□ Ակն ամել 1) ամաչել: Այլ անզգամ ի բարկանալ իրում ծաղր լինի և ակն ամէ (Առակք ԻԹ 9): 2) Պատկաւել: Ազգ լիրբ և այլալեզու, որ ոչ ակն ամէին ի ծերոյն և ոչ ողորմէին տղայոյն (Բարուք Դ 16): 3) Վախենալ, քաշվել: Եւ ետես Սաուղ, և ծանեալ եթէ տէր է ընդ նմա, և ամենայն Իսրայել սիրէր զնա, և յաւել ևս ակն ամել ի Դաւթէ (Ա Թագ. ԺԷ 28): Մի՛ խնդրեր լինել դատաւոր... գուցէ երբեք ակն ամիցես յերեսաց հօրի և զնիցես գայթակղութիւն յուղղութեանց քում (Սիր. է. 6): 3) Ուշագրութիւն դարձնել, խնամք տանել, լավ նայել, որպեսզի շար բան շպատահի: Առ զգա և ակն ամ ի վերայ դորա, և մի ինչ արացես դմ:

չար (Եր. 1Թ 12): Եթէ բարութե թուի առաջի քո գալ ընդ իս ի Բաբելոն, ե՛կ, եւ ամից ի վերայ քո ակն (Եր. Խ 4): 5)) Աշառու լինել, երեսպաշտութիւն անել: Որ ակն ամէ զերեսս անօրինաց, յանդիմանել չէ բարութե (Առակք ԻԹ 2): Ակն առնու. 1) Խորական լինել, աշառու լինել, խրտութիւն զնել: Մի առնուցու ակն ի դատաստանի, ըստ փոքուն եւ ըստ մեծին դատիցիս (Բ օրէնք Ա 17): Վարդապե՛տ, գիտեմք, եթէ ուղիղ խօսիս եւ ուսուցանես եւ ոչ առնու ակն, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես (Ղուկ. Ի 21): Անիրաւութիւն ի դատաստանի մի առնիցես, եւ ակն աղքատի մի առնուցու, եւ մի երեսաց աշառիցես հարստի (Ղեւտ ԺԹ 15): 2) Խղճալ, ողորմալ: Երեսք քահանայից ակն ոչ առին ձեռոց, ոչ ողորմեցան ի վերայ տղայոց նոցա (Ողբք Գ 17): 3) Ուշադրութիւն առնել. բարեհամբուլք լինել, սիրալիր լինել: Աղէ, մատո՛ զնա իշխանին քում, թէ ընդունիցի զքեզ, կամ թէ առնուցու քեզ ակն, ասէ Տէր ամենակալ (Մաղաք. Ա 8): 4) Բանի տեղ չզնել, զանց առնել, արհամարհել: Ոչ պահեցէք զճանապարհս իմ, այլ ակն առնուիք օրինօքն (Մաղաք Բ. 9): 5) Հարգանքով վերաբերվել, հարգել: Եւ առ Դաւիթ ի ձեռաց նորա զամենայն ինչ, զոր երբ նմա, եւ ասէ ցնա. ե՛լ ի տուն քո խաղաղութեամբ, տե՛ս, զի լուայ ձայնի քում եւ ակն առի երեսաց քոց (Ա թագ. ԻԵ 35): 6) Քաշվել, վախենալ, երկնուղել: Ակն առն երեսաց սմանց եւ բնակեցուցեր զնոսա յերկրի: Արձակեցեր դայրիս ունայնս եւ զորքս շարչարեցեր (Յովք ԻԲ 8): Հոբբ ճգօրագոյնս պահանջեսցին, զի ոչ առնու ակն ամենեցուն տէրն եւ ոչ խորշի ի մեծութենէ (Իմաստ. Զ 7): 7) Հաշվի առնել, նկատի ունենալ, խաթր անել: Եւ Յովք՝ ծառայ իմ արասցէ աղօթս վասն ձեր, զի եթէ ոչ նմա ակն առեալ էր եւ եթէ ոչ վասն նորա էր, կորուսեալ էր իմ արդեօք զձեզ (Յովք ԽԲ 8): 8) Առերես դուր գալ, երեսպաշտութիւն անել: Եւ եղիցես ամօթղած ճշմարտապէս եւ գտանիցես շնորհս առաջի ամենայն մարդկան. այլ մի վասն այսոցիկ ամաշխես, եւ մի առնուցու ակն մեղանչելոյ վասն օրինացն Աստուծոյ եւ ուխտի, վասն դատաստանի արդարացուցանել զամպարիշտս (Սիրաք ԽԲ 1): Ակն զնել. 1) Մի բան ձեռք բերելու համար աչք տնկել, աչք զնել: Ոչ ոք իցէ, որ ակն զնիցէ երկրին քում (Ելք ԼԳ 24): Եւ այսպէս յաշաց հանէր զնա, զի իւր ակն եղեալ էր տերութեան նորա (Ա Մակ. ԺԱ 11): 2) Մեկի նկատմամբ ցանկութիւն տածել, մեկին ցանկալ: Եւ ակն եղ նոցա հայեցուածքով աշաց իւրոց (Եզեկ. Իգ 16): Ակն ընդ ակն. Աչքը աչքի փոխարեն: Եթէ խեղեսցէ որ զընկերի իւր, որպէս արար, նոյնպէս արասցի նմա. բեկումն ընդ բեկման, ակն ընդ ակն, ատամն ընդ ատամն (Ղեւտ. ԻԳ 20):

Լուարո՛ք, զի ասացաւ՝ ակն ընդ ակն եւ ատամն ընդ ատամն (Մատթ. Ե 38): Ակն յանդիման-տե՛ս Ակնյանդիման: Ակն ունիմ, կալայ. 1) Սպասելիք ունենալ, սպասել, ակնկալել, ակնկալիք ունենալ: Մինչդեռ ակն ունէին լուսոյ, եղի նոցա խաւար. եւ մինչդեռ սպասէին նմա, ընդ մութ շրջեցան (Ես. ԾԹ 9): Ակն ունէի, թե ո տրտմեսցի ընդ իս, եւ ոչ որ էր (Մաղմ. ԿԸ 21): Եվ զամենայն, որ ինչ ակն ունիցիս յինէն, արարից քեզ (Բ թագ. ԺԹ 38): 2) Վախ ունենալ, երկնուղ տածել, երկնուղել: Փոխանակ դառն այնք օրհասին խնճոյս ուրախութեան կացուցեալ ի փրկութեան տեղուցն, ուր սատակման եւ վճին ակն ունէին (Գ Մակ. Զ 22): Եւ թագաւորք նոցա զարհուրելով զարհուրեսցին ի թռչել սրոյ իմոյ առաջի երեսաց նոցա ակն ունել կործանման իւրեանց յօրէ կործանման քոյ (Եզեկ. ԼԲ 10): 3) Սպասման վիճակում գտնվել, սպասել: Ինձ ակն ունին կղզիք եւ նաւք Թարսսի (Ես. Կ 9): Վասն այսորիկ եւ դուք եղերութե պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք, գայ որդի մարդոյ (Մատթ. ԻԳ 44): Եւ ժողովուրդն ակն ունէր Ջաբարիա եւ զարմանային ընդ յամելն նորա ի տաճարին (Ղուկ. Ա 21): 4) Յանկանալ, կամենալ: Այս շորեքտասաներորդ օր է, որում ակն ունիք նօթիս կամենալ: Այս շորեքտասաներորդ օր է, որում ակն ունիք (Գործք ԻԷ 33): 5) Մտադրութիւն ունենալ, միտք ունենալ, մտադրվել: Եւ անձուկ յոյժ ունիմ ի բազում ամաց գալ առ ձեզ, յորժամ անցանիցեմ ի Սպանիա, ակն ունիմ յանցանելն առ նոսա տեսանել զձեզ (Հռոմ. ԺԵ 24): Զի ոչ կամիմ զձեզ այժմ ի հարեանցի տեսանել, ակն ունիմ ժամանակ ինչ առնել առ ձեզ, եթէ Տէր հրամայեաց (Ա Կորն. ԺԶ 75): Արդ զսա ակն ունիմ արձակել (Փիլ... Բ 23): 6) Կարծել, մտածել: Այլ ակն ունիմ, թէ գիտիցէք, զի մեր ոչ եմք անպիտանք (Բ Կորն. ԺԳ 6): 7) Հույս ունենալ, հույս զնել, հուսալ: Զի մեր հոգւոյն ի հաւատոց յուսոյն արդարութեան ակն ունիմք (Գաղ. Ե 5): Աչաց բաց լինել. Ուշադիր լինել, ուշ դարձնել, անուշադրութիւն չմտնել: Եւ արդ հայեաց յաղօթս ծառայի քոյ եւ ի խնդրուածս իմ, տէր Աստուած Իսրայելի՛ լսել պաղատանաց աղօթից ծառայի քոյ, որ տայ առաջի քո առ քեզ, լինել բաց աչաց քոց զցայգ եւ զցերեկ ի տեղուցս (Գ թագ. Ը 29): Եւ եղիցին աչք քո եւ ականջք քոց բաց ի խնդրուածս ծառայի քոյ (նույն տեղում է): Աչաց ծանրանալ. Տեսողութիւնը թուլանալ, լավ չտեսնել: Եւ աչք Իսրայելի ծանրացեալ էին ի ձեռութենէ անտի (Մնն. ԽԸ 10): Աչք նորա սկսան ծանրանալ. եւ ոչ կարէր տեսանել (Ա թագ. Գ 2): Աչաց կալ. Տեսողութիւնը կորչել, կուրանալ: Եւ իբրեւ լուս, թէ Տուրիթայ կացին աչքն, ելաց (Տովբիթ է 8): Եւ էր ինքն ամաց յիսուն եւ ութ, յորժամ կացին աչք նորա (Տովբիթ ԺԳ 2):

Աչաց փուն տալ. Քուն մտնել, բնել: Եւ ուխտս եղ Աստուծոյ Յակոբայ, թէ ոչ մտից ի յարկս տան իմոյ, թէ ելից յանկողինս մահճաց իմոց, թէ տաց փուն աչաց իմոց կամ նինչ արտեանաց իմոց... մինչեւ գտից զտեղի յարկի տեառն Աստուծոյ (Սաղմ. ՃԼԱ 4): Մի՛ տար փուն աչաց եւ մի՛ նինչ արտեանաց քոց, զի ապրեսցիս որպէս զայծեամն ի հաղթից (Առակք Զ 4—5):

Աչք առ ուն (են). Հույսը մեկի վրա (դնել): Աչք իմ յամենայն ժամ առ տէր (Սաղմ. ԻԳ 15): Ա՛ն քեզ, տէ՛ր, տէ՛ր, ես աչք իմ (Սաղմ. ՃԽ 8): Աչք բանալ. 1) Իմացութիւն ձեռք բերել, գիտակցութեան գալ, աչքը բացվել, գիտակցել: Եւ ասէ՛ օձն ցկինն. ոչ եթէ մահու մեռանիցիք, զի գիտէր Աստուած, թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ, բանայցեն աչք ձեր, եւ լինիցիք իբրեւ զաստուած՝ ճանաչել զբարի եւ զչար (Մնն. Գ 5): Բացան աչք երկոցունց, եւ գիտացին, զի մերկ էին (նույն տեղում Գ 7): 2) Այնպես անել, որ տեսնի, տեսցնել, նկատել տալ: Եւ երաց Աստուած զաչս Բաաղամու, եւ ետես զհրեշտակն տեառն, ընկի՛ճեալ նմա ի ճանապարհին (Թիւք ԻԲ 31): Աչք զաչս տեսանել-երես առ երես հանդիպել: Եւ խօսեցի բերան ի բերան ընդ նմա, եւ աչք դորա զաչս նորա տեսցեն (Եր. ԼԲ 4):

Աչք ժամանել պահուց-Պահից շուտ զարթնել: Ժամանեցին պահուց աչք իմ, խոտվեցայ եւ ոչ խօսեցայ (Սաղմ. ԶԶ 5): Աչք ի ձեռս ուրումն-նայել մեկից մի բան ստանալու համար, աչքը մեկի ձեռքում լինել: Որպէս աչք ծառայից ի ձեռս տերանց իւրեանց, որպես աչք աղախնոյ ի ձեռս տիկնոջ իւրոյ, այնպէս ես աչք մեր առ քեզ (Սաղմ. ՃԻԲ 2): Աչք ի միում լինել (եմ)-Ուշք ու միտքը մեկի կողմը լինել, մեկից ինչ-որ սպասելիք ունենալ, սպասել, թե այդ մեկը ինչ կասի և ինչ կանի: Եւ տէր իմ արքայ, աչք ամենեցուն իսրայելի ի քեզ եմ՝ պատմել նոցա, թէ ոչ նոսրի յաթոռ տեառն իմոյ արքայի յետ նորա (Գ Քազ. Ա 20):

Աչք ի վերայ ուրումն-Մեկի նկատմամբ ուշադիր լինել, մեկին իր ուշադրութեան շրջանակում պահել: Հանապաղ աչք տեառն Աստուծոյ ի վերայ նորա (Բ օրէնք ԺԱ 2): Աչք տեառն ի վերայ երկիւղածաց իւրոց (Սաղմ. ԼԲ 18): Աչք կալեալ լինել (եմ)-Այնպես արված լինել, որ տեսնի, բայց չճանաչի, աչքերի առջև կապ լինել: Ինքն իսկ Յիսուս մերձեցաւ եւ երթայր ընդ նոսա, եւ նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա (Ղուկ. ԻԳ 16): Աչք կանխել առաւօտուց-Առաւօտվանից շուտ զարթնել: Կանխեցին աչք իմ առաւօտուց ի խօսել ինձ զբանս քո (Սաղմ. ՃԺԸ 148):

Աչք յուն-Մեկի նկատմամբ ուշադիր: Աչք իմ ի հաւատացեալս

երկրի, զի նստցին նորա ընդ իս (Սաղմ. Ճ 6): Աչք տեառն ի սիրելիս նորա (Սիր. ԼԱ 19): Աչք քո յիս, եւ ես ոչ ես իցեմ իբրեւ զամպ ջնջեալ յերկնից (Յուլի Է 8):

Աչք յուն հայել (իմ)-Մեկին հսկողութեան տակ պահել, հսկել: Աչք նորա ի հերթնոսս հայելն, ոչք դառնացուցին զնա, մի բարձրացին յանձինս իրեանց (Սաղմ. ԿԵ 7): Աչք արախ-Սիրտ: Եւ տացէ՛ ձեզ սիրտ յամենայնի պաշտել զնա եւ առնել զկամս նորա յանձինս մտադիւրս, եւ ի սիրտս կամակորս, բանալ զաչս եւ զականջս արախ ձերոց (Բ Մակ. Ա 4): Առ ականէ-երեսպաշտորեն, առերես կերպով, ոչ սրտանց: Մի առ ականէ ծառայել իբրեւ մարդահաճոյք, այլ իբրեւ ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ (Եփես. Զ 6): Առ աչսն-երեսանց, արտաբուստ: Պատճառ տամք ձեզ պարծանաց վասն մեր, զի ունիցիք առ այնոսիկ, որ առ աչսն պարծիցին եւ ոչ սրտիւք (Բ Կորն. Ե 12): Առ աչօք-Երևութեան, աչքի պատրանքով: Նորա իբրեւ տեսին, զի զնայր ի վերայ ծոփուն, համարեցան թէ առ աչօք ինչ լինիցի (Մարկ. Զ 49): Զակն դարձուցանել-Երես դարձնել, անտես թողնել, անտես թողնելով անցնել: Որ տայ աղքատաց, ոչ կարօտացի, իսկ որ դարձուցանէ զակն իւր ի նոցանէ, ի բազում կարօտութեան եղիցի (Առակք ԻԸ 27): Ի կարօտելոյն մի դարձուցանե՛ր զակն եւ մի տար տեղի մարդոյ անիծանել զքեզ (Սիր. Գ 5): Զակն արկանել-Զտեսնելու տալ, թաքնվել: Եթէ տեսանիցես զմերկն զգեցուցանիչի՛ր եւ լրնտանաց զասակի քոյ զակն մի արկանիցես (Ես. ՄԸ 7):

Զակն ի սիրտ դնել-Այնպես անել, որ զգա՛ իմանա: Եղ զակն ի սիրտ նոցա ցուցանել նոցա զմեծութիւն գործոց իւրոց (Սիր. ԺԷ 7):

(Զ)աչս արձակել-Աչք տնկել, ծակաչքաբար նայել: Մի՛ ինչ աչս արձակէ՛ր դուք յաւար ի կապուտ դիականցն անկելոց (Ա Մակ. Գ 17): Ի բաժակս արձակեցես զաչս քո (առակք ԻԳ 31): (Մարդն) զաչս իւր ի կուռս տանն իսրայելի ոչ արձակիցէ (Եզեկ. ԺԶ 6): Զաչս բանալ-1) Տեսողութիւն տալ, այնպես անել, որ կուրբ տեսնի: Տէր բանայ զաչս կուռաց (Սաղմ. ՃԽԵ 8): Ասէ՛ եղիսէ, բա՛ց, տէ՛ր, զաչս նոցա, եւ տեսցեն: Եւ երաց տէր զաչս նոցա, եւ տեսին (Գ Քազ. Զ 20): 2) Այնպես անել, որ նկատի, նկատել տալ: Եւ երաց Աստուած զաչս նորա, եւ ետես ջըր-հոր ջրոյ կենդանոյ եւ շոգաւ ելից զտիկն ջրով եւ արբոյց մանկանն (Մնն. ԻԱ 19): Երաց Աստուած զաչս Բաղաամու, եւ ետես զհրեշտակն Տեառն ընկի՛ճեալ նմա ի ճանապարհին (Թիւք ԻԲ 31): Զաչս ի վերայ իրի՛ք բանալ-Մտադրվել վնասել, վնասելու համար աչքի տակ առնել: Յաւուր յայնմիկ, ասէ՛ Տէր ամենակալ, հարից զամենայն երիվար տագ-

նապաւ եւ զհեծեալ նորա յիմարութեամբ, եւ ի վերայ տանդ Յուդայ քացից զաչս իմ (Ձաք. ԻԲ 4): Ձաչս ի վերայ հաստաւել-Ուշադրութեան տակ պահել, ուշադրութեանից բաց չմոռնել: Իմաստուն արարից զքեզ եւ խելամուտ ի ճանապարհ, յոր եւ գնացես, եւ հաստաւեցից ի վերայ քո զաչս իմ (Սաղմ. ԼԱ 8): Ձաչս ի վերայ ուրումն արկանել-Մեկի նկատմամբ տուհանք տածել, մեկին ունենալ ցանկանալ: Եւ արկ կին տեառն իւրոյ զաչս իւր ի վերայ Յովսեփայ (Մնն. ԼԹ 7): Ձաչս համբառնալ-Նայվածք զցել, նայել: Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն (Սաղմ. ՃԻ 1): Առ քեզ, տէ՛ր, համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ի յերկինս (Սաղմ. ՃԻԲ 1): Համբարձ շուրջ զքեւ զաչս քո եւ տե՛ս ժողովեալ առ քեզ դամենայն մանկունս քո (Ես. 44):

Ընդ ակամբ հայել(իմ)-Խոժոռ ու խեթ նայել, շարամտութեամբ նայել, աչքի տակով նայել: Եվ ընդ ակամբ հայէր Սաւուղ յօրէ յայնմանէ եւ առ յապա (Ա Թագ. ԺԸ 9): Եւ որ շուրջ զմեօք ընդ ակամբ հայէին ի մեզ (Բ Մակ. Թ 25): Ընդ այնոսիկ մի՛ խորհիր դու, որ ընդ ակամբ հայիցին ի քեզ (Սիր. Լէ 8 ըստ ՆՂԲ):

Ըստ աչս դատել-Արտաքինին նայելով դատ կտրել: Մի ըստ աչս դատիք (Յովհ. է 24):

Լոյս աչաց-Սիրելի: Սիրտ իմ խոռվեցաւ յիս, եւ եթող զիս զօրութիւն իմ, լոյս աչաց իմոց, եւ այս ոչ եղև ընդ իս (Սաղմ. Լէ 11): Յական քօրափել-Մի ակնթարթում, անմիջապես: Նորոգեսցուք յանկարծակի յական թօթափել: (Ա Կորն. ԺԵ 52): Յակն արկանել-1) Աչքի անցկացնել, կարդալ: Այլ ես աղաչեմ զամենեսեան, որ զգիրսդ յակն արկանիցէք, մի ինչ վասն ազգին խղճիցէք (Բ Մակ. Զ 12): 2) Ներկայացնել, դեմ հանդիման բերել: Իբրեւ ցուցին Դեմետրի գրանսն, հրաման ետ եւ ասէ. բնաւ զերեսս նոցա ինձ յակն մի արկանէք (Ա Մակ. է 3):

Յաչաց արեւ հատանել-Սպանել, մեռցնել: Եթէ ոչ վասն դայեկատոհմ միասնունդ սիրոյն էր, զբաղցր արեւդ յաչացդ հատանէի եւ զքեզ նենգաւոր շարագործ ի միջոյ պակաս առնէի (Գ Մակ. Ե 18): Յաչաց ելանել-Աչքից ընկնել, լավ վերաբերմունքից զրկվել: Իսկ որդիքն հեբբայեցուց զօրէնս միամտութեամբ ընդ արքային արդար պահէին եւ ի տէր Աստուած իրեանց հաստատուն կային, եւ զօրէնս տուեալս հաստատուն պահէին, մեկնութիւն առնէին յապատամբացն անօրէնութենէ, վասն այսորիկ շատից աչաց ելանէին (Գ Մակ. Գ 3): Որք եւ զտէր Յիսուս սպանին եւ զմարգարէսն եւ զմեզ հալածեցին եւ Աստուծոյ յաչաց ելին (ԹԵս. Բ 15):

Յաչաց հանել-1) Սկսել շտիրել, սիրաթափ լինել, աչքից զցել: Եւ պատ-

մէին առաջի արքային, որ զինչ միանգամ գործեաց Յովնաթան եւ յաչաց հանէր զնա (Ա Մակ. ԺԱ 5): 2) Այնպես անել, որ շտիրի, սիրաթափ անել տալ: Եւ այսպէս յաչաց հանէր զնա, զի իւր ակն եղեալ էր տերութեան նորա (Ա Մակ. ԺԱ 11): Յաչաց քուն հատանել (իմ)-Քուն ու դադար շունենալ, անընդհատ ոտքի վրա լինել՝ զբաղված լինել, աշխատել: Ձցերեկ այրեալ լինէի ի տօթոյ եւ զցայգ ի ցրտոյ, հատեալ էր քուն յաչաց իմոց (Մնունդք ԽԱ 40): Յաչս դնել-Յանկանալ վնասել, շար մտադրութեան ունենալ, աչք տնկել, հարձակվել ցանկանալ: Եւ նոքա, ասէ, ի զէնս յուսացեալ են եւ ի զօրութիւնս իւրեանց, մեք յամենակալն Աստուած, որ կարօղն է զայնոսիկ, որ զմեզ յաչսն դնեն, եւ զաշխարհս ամենայն ի մի շունչ ոգւոյ զօրութեան սատակել (Բ Մակ. Ը 18):

Բ Ա Ռ Ա Պ Ա Շ Ա Բ Ը

Ա. ԱՆԲԱՂԱԳԻՒՐ ԲԱՌԱՇԵՐՏԵՐԸ

ա) ՀԱՄԱԺՈՂՈՎՐԻԱԿԱՆ ԲԱՌՆԵՐ

Աստվածաշնչի բառերի մեջ առանձնապես աչքի են ընկնում արմատական այն բառերը, որոնք V դարից էլ առաջ համաժողովրդական լայն կիրառություն են ունեցել ողջ հայ ժողովրդի բոլոր շերտերի խոսքի մեջ: Սրանք լայն կիրառություն են ունեցել ոչ միայն մեր հին ու միջին գրական լեզվում, այլև կիրառվում են մեր նոր գրական լեզվի երկու ճյուղերում և մեծ մասամբ նաև բարբառներում:

Հիշյալ բառերը հասնում են ավելի քան 1200-ի, որոնցից 376-ը բնիկ հայերեն բառեր են, իսկ մնացածը մեծ մասամբ իրանական փոխառություն են կամ անհայտ ծագում ունեն. այլևայլ լեզուներից կատարված փոխառությունները սակավ են, մանավանդ որ այստեղ բացակայում են ասորական, հունական և երբայական փոխառությունները, որոնք Աստվածաշնչի առնչությամբ քննվում են առանձին:

Տվյալ շերտերի մեջ ոչ միայն հնացած բառեր չկան, այլև հնաբանական արտահայտություն ունեցող բառերն իսկ սակավ են:

Հետաքրքրականն այն է, որ բնիկ բառերի մեծ շերտը պատկանում է այս խմբին:

Այս խմբի բնիկ բառերն են՝ ազդր, ալի (ալիք), ալիւր, ականջ, ակն, ակօս, աղ, աղանձ, աղբիւր, աղի (աղիք), աղմուկ, աղուէս, աղտ, աղջատ, ամառն, ամիս, ամուսին, ամսլ, այգի, այդ, այլ, այժ (այժի), ամօթ, այն, այս, այր, անդ, անդ (հանդ), անդունդ, անձն, անձրեւ, անց, անուն, աջ, առ, առիւծ, առու, ասեղն, առաստաղ, աստիճան, աստ, ատամն, ատեան, արգանդ, արգել, արեւ, արին, արծաթ, արծուի, արմուկն, արջ, արտ, արտօսք, արօտ, արօր, աւազ, աւաղ, ափ, աքաղաղ, բան, բարակ (բորակ), բաց, բարձ, բարձր, բեռն, բեր, բերան,

բիր, բլուր, բուր, բոկ, բոյս, բով, բորենի, բոց, բուտ, բուրդ, գալլ, գան, գանն, գարի, գարուն, գաւթ, գեղ, գետ, գերան, գերդաստան, գերի, գէջ, գին, գինդ, գինի, գինձ, գիշեր, գիր, գիւտ, գոգ, գող, գոմ, գործ, գորտ, գօտի, դա, դադար, դարբին, դարձ, դեղ, դեռ, դէզ, դի, դու, դուռն, եզն, եզր, ել, եղբայր, եղն, եղունգն, եմ, ես, երբ, երգ, երեկ, երէկ, երես, երէց, երի, երկան, երկայն, եւ, եօթն, է, էգ, էջ, էր, էշ, ընդ, ընծայ, ըստ, թան, թանձր, թանչ, թառամ, թաւ, թէկն, թէ, թի, թոռն, թուր, թուփ, թուք, ի, իմ, ինն, ինքն, ինչ, ինչ, իսկ, իր, իւր, լայն, լաստ, լար, լաւ, լեարդ, լեզու, լերկ, լի, լիճ, լիրբ, լոյս, լու, լուծ, լուռ, լուր, խայթ, խայտ, խաչ, խէթ, խիթ, խուփն, խոտոր, ծաղիկ, ծաղր, ծանր, ծառ, ծեր, ծիծառն, ծին, ծնօտ, ծունր, ծունգ, կաթն, կաղին, կամուրջ, կայծ, կարկուտ, կաքաւ, կեղ, կին, կող, կողն, կով, կու, կրկին, կտաւ, հաս, հաստ, հարիւր, հարկ, հայր, հարսն, հատ, հարց, հաւ, հեռի, հետ, հերին, հերկ, հերու, հիմ, հիմն, հին, հինգ, հոգ, հոգի, հող, հովիւ, հոտ, հում, հուն, հուր, հօտ, ձագ, ձախ, ձեռն, ձեր, ձեւ, ձի, ձին, ձմեռն, ձող, ձուկն, մահ, մայր, մայր, մանուկ, մանր, մասն, մատաղ, մատն, մարդ, մարմին, մաքի, մեծ, մեղ, մեղմ, մեղու, մեղր, մեր, մերկ, մեք, մէգ, մէզ, մէջ, մի, մի, մինչ, միս, միտ, մղեղ, մուխ, մուկն, մուտ, մուր, մրուր, մրջիւն, մրրիկ, մօտ, յատակ, յարկ, յետ, յերկար, յիսուն, յղի, յօդ, յօտ(էտ), նա, նաւ, նեռն, նետ, նիստ, նիւթ, նոյն, նոր, շիլ, շեղ, շուն, ո՞, ո, ոգի, ոգնի, ոհ, ոլոռն, ողբ, ողն, ողջ, ոչ, ոսկր, ոսպն, ոստ, ո՞վ, ո՞վ, ոտն, որ, որս, որբ, որդն, որդան, որդի, որթ(հորթ); որթ, որձ, որս, ութ, ութսուն, ուլ, ուլն(վիղ), ուղի, ունկն, ուս, ոսկր, ոտք, ուր, շիր, շոր, պոյտն, պորտ, պինդ, ջան, ջիլ, ջինջ, ջուր, սա, սալ, սանդուղ, սառն, սաստ, սարդ, սար, սէր, սիրտ, սին, սխալ, սկեսուր, սուտ, սուր, սուրբ, վեց, տասն, տատակ, տարի, տե՛ս, տէր, տիզ, տիկ, տիկին, տուն, տունկ, տուտն, տուր, տօն, ցեղ, ցոյց, ցուլ, փուր, փոքր, քաղց, քան, քառասուն, քէ, քէն, քիմք, քիրտն, քոյր, քո, քոյ, քուն, քսան, օգուտ, օդ, օձ, օղ, օր:

Բնիկ բառերը, ինչպես երևում է ցանկից, պատկանում են մեր կյանքի գրեթե բոլոր բնագավառներին՝ բնության, կենդանական ու բուսական աշխարհ, ընտանիք ու տուն, առօրյա առարկաներ, մարմնի մասեր, աշխատանք ու գործունեություն և այլն:

Բնիկ բառերը ընդհանուր բառերի ավելի քան 40 տոկոսն են կազմում 494—692 հարաբերությամբ:

Մնացած բառերն են՝ Ազահ, ագոավ, աղատ, աղբն, աղգ, աթոռ, ախտ, ածուխ, ա՛,

ահա, աղաղակ, աղանի, աղբ, աղեղն, աղիւս, ամբար, ամբարտաւան, ամուր, ամուրի, անալուիթ, այ, այբ, այգ, այի(այո), այո, անանուխ, անապատ, անգամ, անդամ, անդրանիկ, աներ, անձրե, անոյշ, անութ, աշակերտ, աշխարհ, ապա, ապա, ապահով, ապառաժ, ապաւեն, ապուխտ, առապար, առատ, առաւօտ, ասորի, աստուած, արագ, արագիլ, արատ, արժան, արձակ, արձան, արմաւ, արուեստ, արջառ, արտեւան, աւազակ, աւագ, աւագան, աւագ, աներ, ամին, աքիս, բաղէ, բազուկ, բաժակ, բախտ, բակ, բաղարջ, բանակ, բանջար, բարդ, բարի, բեմ, բերդ, բեւեռ, բժիշկ, բիր, բլիթ, բոզ, բողոք, բոյթ, բոյն, բորակ, բու, բուն, բունն, բրուտ, գագաթն, գագան, գամ, գանձ, գանձանակ, գաւառ, գետին, գերանդի, գերեզման, գել (գիւղ), գէշ, գէր, գի(գիհի), գիրկ, գլուխ, գձուձ, գոմէշ, գոյն, գոնեայ, գոնէ, գութ, գուն, գունդ, գրապան, գրաւ, գագաղ, գահիճ, գայեակ, գաշտ, գաշտան, գանն, գաս, գատ, գատախաղ, գատարկ, գատաստան, գատաւոր, գար(բարձր տեղ), գարման, գաւաճան, դեւ, դէմ, դժուար, դիւան, դիւր, դմակ, դուր, դուր(գործիք), դրախտ, եղեամն, եղէզն, եղիճ (եղինջ), եղջիր, երագ, երագ, երախ, երաշտ, երախայ, երամ, երակ, երբ, երզ, երէ, երկկամն, երինջ, երիտասարդ, երկաթ, երկին, երկիր, գամբիղ, գանգակ, գատիկ, գաւակ, գէն, գմբուխտ, գոյգ*, գուարթ, գուտ, գուր, գոքանջ, գրոյց, գօր, էգ, բնկոյղ, թագ, թաթ, թամբ, թանաք, թարախ, թափ, թափոր, թեթեւ, թել, թեղ, թել, թեփ, թիւ, թող, թոյլ, թոնիր, թուղ, թութ, թուխ, թուլթ, թոք, ժամ, ժաման, ժամանակ, ժայռ, ժանգ, ժառանգ, ժիր, ժլատ, ժողով, իբր, իլ(իլիկ), իշխան, իրեար, իւղ, լեռն, լեղի, լկտի, լոկ, լորձն, խաբ, խաթար, խախուտ, խաղ, խաղ, խաղաղ, խաղող, խանն, խարազան, խաւար, խիղճ, խիճ, խիստ, խիտ, խիւս, խլուրդ, խժուժ, խնամ, խնդիր, խնձոր, խոզ, խոզան, խոժոռ, խողովակ, խոյ, խոնարհ, խոպան, խոտ, խոր, խորան, խորթ, խորիսխ, խոց, խով, խումբ, խունկ, խունն, խուրձն, խոփ, խոով, խրատ, ծախ, ծուխ, ծածուկ, ծակ, ծայր, ծանակ, ծանր, ծառայ, ծարաւ, ծերպ, ծեփ, ծկոյթ, ծղխնի, ծմակ, ծոյլ, ծոպ, ծով, ծոց, ծուխ, ծուծ, ծուղակ, ծուփ, կազմ, կաթ, կալ, կախարդ, կակուղ, կաղ, կամ(կամբ), կամ (շաղկապ), կամար(գոտի), կամար, կայ, կայմ, կանաչ, կանուխ, կաշառ, կաշի, կապ, կապերտ, կապիկ, կապոյտ, կասկարայ* կատար, կաս, կար, կարաս, կարգ, կարիճ, կարճ, կարմիր, կաւ, կեղտ, կղակ, կէս, կէտ, կիթ, կից, կծիկ, կճղակ, կնիք, կնճիռն, կշիռ, կոծ, կողոպուտ, կոճ, կոյս, կոյտ,

* Համարվում է ասորերենից փոխառված:

կոյր, կոշտ, կոր, կորդ, կորեակ, կուղ, կութ, կուծ, կունդ, կուշտ, կուպր, կուռ, կուռն, կուրծ, կուր (կուլան), կտակ, կտուր, կրակ, կտապ, կուր, կրայ, (կրիա), կրուկն (կրունկ), կրպակ, կրտսեր, կրօն, կրեկ, հազար, հակառակ, հաճար, համ, համար, համբար(ամբար), համբույր, հայ(հայկական), հայս, հանդարտ, հաշիւ, հաշտ, հապա(դե), հապա(հետո), հասարակ, հասկ, հարաղատ, հարաւ, հարիւր, հաց, հաւասար, հաւատ, հեծան, հերիք, հիմն, հիւանդ, հիւս, հիւսիսի, հիւր, հիւնն, հնազանդ, հնար, հնձան, հոռոմ, հոր, հունձ, հրաման, հրեշտակ, հրեայ, ձայն, ձիգ, ձիւթ, ձէթ (ժող. փոխառութիւն), ձոր, ձու, ճակատ, ճանճ, ճաշ, ճաշակ, ճառ, ճարտար, ճիշտ, ճիշ, ճճի, ճշմարիտ, ճրագ, մաղ, մակոյկ, մաղ, մաղձ, մաճ, մանաւանդ, մանգաղ, մասն, մատակ, մարախ, մարգ, մարգարէ, մարգարիտ, մարուր, միշտ, միրգ, մշակ, մոխիր, մողէղ, մոմ, մորթ, մութ, մուրճ, մուշ, մսուր, մտրակ, յաղթ, յատակ, յարդ, յաւանակ, յետ, չիմար, չիշատակ, յոյս, յոպոպ, յատակ, յտակ, յօժար, յօն, նախ, նախանձ, նահատակ, նամակ, նապաստակ, նարօտ, նաւթ, նեղ, նենգ, նեռն, նզով, նիգ, նիզակ, նինջ, նկար, նման, նըշան, նշխար, նուագ, նուաղ, նուէր, նուռն, նպաստ, նպատակ, շալակ, շահ, շաղ, շաղախ, շամփուր, շանթ, շապիկ, շառաւիղ, շատ, շար, շեղջ, շերտ, շէն, շիթ, շիղ(շիւղ), շիշ, շնորհ, շաղ, շող, շոյտ(շուտ), շունչ, շուշան, շուրթն, շուք, շփոթ, ոլոռն, ոխ, ոհ, ողկուլդ, ոյժ, ոշխար, ոսկի, ոսպն, որդն, որոգայթ, որոմն, ուլն(ուլունք), ուխտ, ուղեղ, ուղիղ, ուղտ, ունդ, ուշ, ուռ, ուրագ, ուրախ, շաման, շամիշ, շար, շափ, չիղջ շուան, պակաս, պահ, պաճառ, պայման, պանիր, պաշար, պաշտպան, պառաւ, պատառ, պատասխանի, պատարագ, պատերազմ, պատիժ, պատիճ, պատիւ, պատկեր, պատճառ, պատուհան, պատրաստ, պատրոյզ, պար, պարան, պարապ, պարզ, պարկ, պարս(պարսատիկ), պարս(պարսիկ), պարտ, պետ, պիծակ, պիղծ, պինդ, պղինձ, պճեղն, պղտոր, պոռտ, պսակ, պտոյտ, պտուղ, ջահ, ջորի, ռամիկ սակառ, սահման, սաղաւարտ, սան, սամիթ, սայլ, սան, սապատ, սարդ, (ծառ), սարկաւագ, սարսուռ, սափոր, սեամ, սեաւ, սեխ, սեղան, սեռն(սեռի), սերտ, սխալ, սկիհ, սոխ, սոխակ, սէղ, սով, սովոր, սուգ, սպան, սպիտակ, ստրուկ, սրահ, վագ(վագ տալ), վախճան, վակաս, վահ, վաղ, վայ, վայել, վայր, վաշ, վառ, վաստակ, վատ, վար (հերկ), վարագոյր, վարդ, վարդապետ, վարժ, վարձ, վեր, վերջ, վէգ, վիճակ, վիշապ, վիշտ, վճիռ, վկայ, վնաս, վստահ, վտանգ, վրեժ, տախտակ, տակ, տաղաւար, տաճար, տաշտ, տաճիկ, տապակ, տապան, տատրակ, տարագ, տարակոյս, տարի, տաւիղ, տեղեակ, տենդ, տերեւ, տղրուկ, տխուր, տղայ,

տունկ, տոհմ, տուն, տուփ, տօթ տրտում, ցած, ցամաք, ցան, ցաւ, ցեց, ցից, ցորեան, ցուրտ, ցօղ, ցօղուն, փակ, փայտ, փարթամ, փափագ, փափուկ, փեսայ, փոխ, փոխինդ, փոկ, փող, փողի, փոր, փորձ, փունջ, փուշ, փուտ, քաղ, քաղաք, քաղիթթ, քաղցր, քայլ, քաշ, քար, քարոզ, քացախ, բեռի, բէ, բիթ, բիմբ, բող (նաև՝ բօղ), բոս, բուշ, օժիտ, օղի, օրէն, օտար, օրինակ:

Այս ցանկի մեջ հազվադեպ բառեր կարող են լինել, որոնց համաժողովրդական բնույթը առարկելի դառնա, բայց պետք է նկատի առնել, թե որքան շքնաղ բառեր բանավոր խոսքից դուրս են մղվել արևելյան օտար ու խորթ բառերի ներթափանցումով: Մեր կարծիքով, ոչ թե վեճ պետք է գնա այն մասին, թե սրանցից որ մասը չի եղել բանավոր խոսքի մեջ, այլ վեճ պետք է վերցնեն հետո բերվող խմբի բառերը, թե արդյոք սրանցից շատերը չեն եղել բանավոր խոսքի մեջ, բառեր, որոնք համարվում են գրականության միջոցով համաժողովրդական բնույթ ստացած կամ ուղղակի գրականացած: Հենց այն փաստը, որ հայերեն արմատական բնիկ բառերի տոկոսը այդչափ մեծ է, ապացույց է, որ արդարև այդ բառերը համաժողովրդական լայն կիրառություն են ունեցել և կազմել ու կազմում են մեր լեզվի բառապաշարի շքնաղ կորիզը:

բ) ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶՈՅՈՎ ՀԱՄԱԺՈՂՈՎԳՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ ՍՏԱՅԱՄ ԿԱՄ ԵՈՐ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻՆ ԱՆՅԱՄ ԲԱՆԵՐ

Աստվածաշնչի մեջ կիրառված մի շարք արմատական բառեր համաժողովրդական կիրառություն չեն ունեցել, այլ ժողովրդականացել կամ նոր գրական լեզվի բառեր են դարձել գրականության ավանդույթով: Իրենց կիրառության բնագավառներով սրանք ավելի լայն ընդգրկում և ավելի վերացական ոլորտներ ունեն, քան նախորդ խմբի բառերը: Սրանց կիրառության բնագավառներն են կրոն, պատերազմ, պետական կառուցվածք, հոգեկան ու մտավոր կյանք, հավատալիք արվեստ և այլն: Հաճախ սրանք ընտիր համանիշեր են նախորդների, որոնք կիրառվել են պեսպեսության ու կրկնություններից խուսափելու համար: Այսօր դրանք մեծ մասամբ գրական բնույթ ստացած նրբաճաշակ բառեր են, և թվում է, թե նույնպիսի բնույթ են ունեցել նաև Աստվածաշնչի թարգմանության օրերին. համեմատենք արճալ-բագաւոբ, անուրջ-եղագ, անին-մոխիբ, գաւագան-բիբ, ստեղն-նիւղ, սաուար-հաստ, աս-բուրդ, ամ-տարի, արբանեակ-ծառայ: Ժողովրդական կիրառություն չստացած, բայց բնիկ են՝ աղարտ, աղտ, աճին, ամպ-

րոպ, այտ, այց, անձուկ, անուրջ, առ (նախորդ), առագաստ, առասպել, առաստաղ, աստ, ասր, ատեան, արբանեակ, արդ (ձև), արդ (այժմ), արեգ, բայ, զաղջ, զարշ, գեղ, գեղմ, գեղձ, գիւտ, գոյ, գուն (արևմտ.), դալուկն, դուլ, դոյն, դարձեալ, դուստր, դուրգն, եղեփն, եղուկ, եռանդն, երթ, երկ, երկն, երաստան, զգաստ, զգեստ, ըստ, թանձր, թիթեղն, իժ, իմն, ինձ, իր, լանջ, լիր, խեղ, խութ, կագ, կարթ, կեղ, կողի (արևմտ.), կոկորդ, կողր, կոխն, հանդերձ, հարկ, հաւ (պապ), հերին, հէն, հիթ, հեր, հիւղակ, հիւր, հողմ, հուպ (կից), հօրան, ձող, ձոյլ, մարի, մարտ, մեղկ, մեղմ, մերձ, մէգ, մէն, մկան, մոյթ, մրուր, յուլով, նշոյլ, նուրբ, ողորկ, ոմն, ոչ, որկոր, որովայն, որոր (ուրուր), ունայն, ուստր, ոչ, շիք, շու, պալար, ռունգն, սէգ, սին, սլար, սոյն, ստեղն, ստեւ, ստէպ, սփիւտ, տիւ, ց, ցին, փեղկ, փոյթ, քարք, քաւ:

Բնիկ հայերեն բառերի մեջ կան նաև բաղադրյալներ, բայց սրանք այնքան են նախնական, որ V դարում դժվար գիտակցված լինեն. այդպիսի բառեր են աճին (աճ-ին), անձուկ (անձու-կ), առագաստ, առասպել, առաստաղ, զաղջ, դալուկն և այլն:

Այս խմբի փոխառյալ բառերը ավելի մեծ թիվ են կազմում. այսպես, ունենք՝ ազարակ, ազոխ, ախաւեղաղէս (Ճարտարապետական բառ), ախոյեան, ակամայ, ակումբ, աճա, աճեակ, աղախին, աղանդ, աղերս, աղէտ, աղօտ, աճառ, ամբարիշտ, ամբարհաւաճ, ամբոխ, ամեհի, ամուլ, ամուրի, այրի, անագ, անագան, (արևմտ.) անագորոյն, անապակ, անապատ, անգղ, անդորր, անիւ, անձաւ, անուր, անջրպետ, անտառ, անօթ, աշխէտ, աշտանակ, աշտարակ, աշտեայ (աշտէ), աշտիճան, ապակի, ապահարզան, ապահոյ, ապաստան, ապարանջան, ապարօշ, ապիրատ, ապստամբ, ապտակ, առապար, առասան, առաքինի, ասպաստան, ասպատակ, ասպար, ասպարէզ, ասպնջական, ատոք, արատ, արաց, արդանակ, արկղ, արձաղանք, արձան, արմաւ, արշալոյս, արոյր, արուեստ, արուեսակ, արքայ, աւան, աւանդ, աւար, արիս, բազում, բաժ, բաճկոն, բայց, բանակ, բանտ, բարդաւաճ, բարունակ, բաւ, բաւանդակ, բղբշխ, բեճեղ, բեւեկն, բեւեռ, բիւր, բովանդակ, բուռն, գահ, գահատրակ, գաղջ, գառագիղ, գարշապար, գաւազան, գաւիթ, գեղարդն, գէս, գի, գիրգ, գոճազմ, գոյժ, գոռ, գուն, գորշ, գուր, գումարտակ, գուշակ, գուսան, գոհ, գրապան, գրապանակ, գրաստ, գրատ, դաժան, դահանակ (թանկագին քար), դահեկան, դահիճ, դահիճ, դայեակ, դանդ, դաշն, դաշխուրան, դաշոյն, դաստակ, դաստակերտ, դատախազ, դատաստան, դատտարակ, դար, դարան, դարաստան, դարավանդ, դաւ, դափր (արևմտ.), դէտ, դժնդակ, դժնիկ, դժպիրհ (դժպիհ),

դիպակ, դիւթ, դղեակ, դշխոյ, դոյզն, դոյլ, դուժ, դպիր, դատիկոն, դրամ, դրոշմ, դրուագ, դրօշ, դրօշակ, եղեամն, եղեոն, երաժիշտ, երախ, երանգ, երաշտ, երբուժ, երիվար, երիտասարդ, երկ, զագիր, զառնաուխտ, զանգապան, զեղխ, զիստ, զոճ, զուարակ, զրահ, թակարդ, թակոյկ, թաղանթ, թաշկինակ, թեզան, թեղօշ, թիւր, թմբուկ, թշուառ, թոթով, թոյն, թոշակ, ժանի, ժանտ, ժապաւէն, ժպիրճ, իղձ, իրան, իւրաքանչիւր, լուրջ, լօղիկ, խալամ, խաշն, խարիսխ, խարտեաշ, խեռ(արեւմտ.՝), խոզովակ, խոլ, խոյս, խոյր, խոնջ, խորգ, խորշ, խորտիկ, խուժ, խուն(արեւմտ.՝), խուն, խոնկ, խրամ, խրաց, ծագ, ծիածան, ծիր, ծծումբ, կահ, կաղամախ, կամայ, կայթ, կայլակ, կայծ, կայսր(հին փոխառ.), կայտառ, կապար, կապար(բույս), կապարձ, կապիճ, կապուտ, կառաշ, կասկարայ, կառափն, կարապ, կարապետ, կարաւան, կարկամ, կարկանդակ, կարկեճան, կերպաս, կզակ, կիճ, կիրթ, կիրճ, կզգի, կնիւն, կոզակ, կոզոն, կնդրուկ, կոթող, կողոպուտ, կոյս(կողմ), կոպիճ, կորիւն, կորով, կուճ, կուռ, կրտսեր, հաշարապետ, հակիրճ, համակ, համառոտ, համբարակ, համբարու, համբաւ, համեմատ, համետ, համր, հայկ(համաստեղութուն), հանապազ, հանգանակ, հանգոյն, հանդրուան, հանդէս, հանձար, հաշմ, հարթ, հարձ, հեզ, հեռ, հեր, հիր,հիրիկ, հոմանի, հովիտ, հուսկ, հպատակ, հոշակ, հրամանատար(նաև՝ հրամատար), հրապարակ, հրապոյր, հրովարտակ, հրեայ, ձեղուն, ձորձ, ձագար, ձաճանչ, ձաճանչաուխտ, ձամբար, ձայ, ձաշակ, ձարակ, ձարմանդ, ձարպ, ճիգն, ճիւղ, ճոխ, մագիլ, մախազ, մակոյկ, մահիկ, մահիճ, մանանիխ, մառախուղ, մատեան, մատուակ, մարախ, մեհեան, մեղեսիկ, մերթ, մէտ, մոգ, մուրճակ, մուրտ, մռայլ, մտրուկ, յաճախ, յամայր, յամո, յայտ, յանդիման, յանդուզն, յալրատ(արեւմտ.՝), յաւետ, յոյզ, յոյլ, յոսի, յովազ, յորդ, յուշկասլարիկ, յուրթի, նաժիշտ, նախարար, նահանգ, նահապետ, նանիր, նաշիճ, նաւազ, նրժար, նժղճ, նժույզ, նիզակ, նիրճ, նկան(արեւմտ.՝), նկուշ, նկուն, նշանակ, նշաւակ, նոխազ, նոճ, նուազ(բաժակ), նուազ(անգամ), նուարտան(ծածկոց), նուիրակ, նպար, նօթի, շաղիղ, շամանդաղ, շանթ, շարաւ, շիշ, շիրիմ, շոալլ, շտապ, շտեմարան, ողոր, ոճ, ոսին, ոսոխ, ոստիկան, որայ, որմ(ն), որոգայթ, որոմն, որջ, ուղխ, ունչ, ուռկան, ուրոյն, ուրուկ, շքնաղ, պախուրց, պահակ, պահանգ, պատանդ, պաշուսակ, պանդուխտ, պատատ(փաթեթ), պարսաւ, պատանդ, պաստառ, պատանի, պատգամ, պատգարակ, պատիր, պատճէն, պատմուճան, պատնէշ, պատշաճ, պատշգամբ, պատուանդան, պատուար, պատուէր, պատուիրակ, պատուիրան, պատուհաս, պատրուակ, պարանոց, պա-

րարտ, պարզեւ, պարեղօտ, պարթեւ, պարիսպ, պարկեշտ, պահակ, պարտէզ, պետ, պիսակ, պրտու, ջայլամն, ռետին, ռոճիկ, սաղմն, սայր, սան(կաթսա), սանդարամետ, սանձ, սատար, սեղեխ, սենեակ, սէզ, սիրամարգ, սկայ, սկաւառակ, սկուտղ, սմբակ, սնար, սնգոյր, սնդուս, սոխակ, սոսինձ, սոսկ, սոսորդ, սուին, սուսեր, սուտակ(ն), սուրճանդակ, սպայ(նաև՝ սպահ), սպանդ, սպառ, սպարապետ, սպի, ստահակ, ստամբակ ստաշխն, ստոյգ, ստոր, ստուար, ստուեր, սրիկայ, սրինգ, սրուակ, սօս, վակաս, վահան, վաղակաւոր(կարճ սուր), վայր(ժամանակ), վանդակ, վաշխ, վաշ, վասն, վատթար, վարձակ, վարմ, վարշամակ, վարս, վերտ, վէմ, վէս, վէտ(ալիք), վիճ, վիրապ, վիրգ, վհուկ, վճար, վճիռ, վուշ, վտակ, վտիտ, վրան, տաբատ, տազնապ, տաղաւար, տապ, տապաստ, տապար, տառատուկ, տար(հեռու), տարազ, տարափ, տարր, տաւիղ, տէգ, տխմար, տոյժ, տուփ, տրուպ(արեւմտ.՝), տրտունջ, տօսախ, ցանց, ցին, ցինգ, ցիռ, ցիրդ, ցուպ, ցոփ, ցուկ, ցփսի, փեգենայ, փքին, փիղ, փոր, փաղիրթ, փանդակ, փարբ, փաւ, փնար, քովթար(ձարտարապետ. բառ), քուեայ(նաև՝ քուէ), քուրձ, քսակ, քրքում, օժանդակ, օժիտ, օղի, օճառ, օն, օշ, օշարակ, օրան, օրիորդ:

Բնիկ բառերը ընդհանուր գրական բառերն են. սրանց մեջ շկան բառեր, որոնք գրքային բնույթ ունենան կամ կիրառվեն իրրև հնարանական բառ ոճավորման նկատառումներով, զույցե բացառութիւն են կաղմում տիւ, գնդմն, աւր, իսկ հնացած են զոյն, եղուկ, հեռ, քաւ, որ ժողովրդականացած է քաւ լիցի կապակցութեամբ: Մի քանի բառեր էլ արեւելահայերենում կիրառվում են ոճավորման նկատառումներով, իսկ արեւմտահայերենում սովորական գրական բառեր են. ինչպես, անդ(այնտեղ), մարի, ստեւ և այլն:

Իսկ ինչ վերաբերում է մյուս շերտերի բառերին, ապա սրանք բունույթով խիստ բազմազան են. մի քանի բառեր շատ սակավ են կիրառվում: գոթե գործածութիւնից դուրս են ելնում. ինչպես անեկան(ի), ամ, լօղիկ(վերարկու), կապուտ(կողոպուտ), կաւապետ, համբարակ(շտեմարան), մտուկ, նժղեհ, նպար, սան, վաղակաւոր, տար, օն(ղե):

Մի քանի բառեր ունեն գործածութեան նեղ շրջանակ, այսինքն վերաբերում են այս կամ այն անձուկ բնագավառի և թվում են արդեն հնացած, սակայն մասնագիտական գրականութեան մեջ կիրառվում են սովորական կերպով. ինչպես, օրինակ՝ ախաւեղազէս(ճրտապետ. սյան խոյակի վերևի մասը), արաց(հայոց 6-րդ ամիսը), բաժ(պատմ. տուրք-ի տեսակ), գոճաղմ(քար), գրատ(ղինձորական վերարկու. վերակենդանացել է ուշ), դահանակ(թանկ. քարի տեսակ), դահեկան

(պատմ. դրամական միավոր), կողակ (ճարտ. պատի պահանջ), համբարու, յուշկապարիկ (ոգիներ), վակաս (եկեղեց. շուրջառի օձիքը), քովթար (ճարտ. սյան վերնախարիսխ) :

Մի շարք բառեր ավելի հատուկ են արևմտահայ գրական լեզվին և, եթե արևելահայերենում կիրառվում են, միջնորդը արևմտահայ գրական լեզուն է և ոչ թե գրաբարը. ինչպես՝ ատոք, բարունակ, դժնիկ, դոյզն, զուարակ, թակոյկ, ժպիրճ, կնիւն, կոյս (կողմ), հանգոյն, լիբ, մուրտ, յոյլ, յուոթի, նօթի (անոթի), պախուրց, սեղեխ, տաբատ, ցփսի, փքին:

Մի քանի բառեր կիրառվում են միայն պատմահայտարանական անհրաժեշտ ոճավորման համար. օրինակ՝ ասպնջական (հյուրընկալ), բղեշխ, գոեճ, դատիկոն, խոյր, կապարճ, պարեգօտ, (կապա), սակուր, վաղակաւոր, վիրգ, տապար, երբ արևմտահայերենում ավելի սովորական են:

Ինչպես արդեն ասվեց քանակային առումով մեծ զանազանություն կա բնիկ հայերեն բառերի և փոխառյալների միջև՝ նախորդ խմբի բառերի հարաբերությունը 494/692 է: Այս խմբի երկու շերտերի բառերի քանակը 657 է, հարաբերությունն է 116/541:

Չմոռանանք ասելու, որ արևելյան լեզուների շատ փոխառություններ եկան ժողովրդի խոսքից զուրս մղելու բազմաթիվ բառեր, այնպես որ հնարավոր է՝ այդ ցանկի մեջ լինեն այդպիսի զուրս մղված բառեր, սակայն ընդհանուր առմամբ դրանք գրական բառեր են, և մենք նկատի ունենք մեր լեզվի ներկա վիճակը: Բնիկ բառերը կազմում են փոխառյալների մոտավորապես 17 տոկոսը:

գ) ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Մի խումբ արմատներ Աստվածաշնչում կիրառվում են իբրև բառական միավորներ, որոնք սակայն նոր գրական լեզվում բառական միավորներ չեն, այլ սոսկ արմատներ են, և սակայն այս արմատները կենդանի են համարյա ամբողջապես և ունեն համաժողովրդական նշանակություն: Մեկ-մեկ գրական լեզվի մեջ, հատկապես չափածո գործերում, դրանք հանդես են գալիս իբրև հակիրճ միավորներ տաղաչափական նկատառումներով, բայց և այնպես դրանք դեռևս բառական մակարդակի չեն բարձրացած:

Ի՞նչ խմբի մեջ պետք է մտցնել այսպիսի բառերը. դժվար է ասել. հնացած չեն, որովհետև կենդանի, գրեթե համաժողովրդական կիրառու-

թյուն ունեցող միավորներ են միայն բաղադրությունների մեջ: Այդպիսի բառեր են Աստվածաշնչում ալն (ազգ ու ազինք), ալի (սպիտակ մազ), ամբաստան, այլն (այլանի), այս (այսահար), անկ (անկ ու հարմար. Իսահակյան), ապառան (ապարանք), աշխար (ապաշխարել), ապաքէն (ապաքինվել. սա կա արևմտահայերենում), արած (վերք, կեղ. արածելուց), արդին, արմն (արմատ), արտեան, արտօս, բեկ (կոտրվածք), բնակ (բնակիչ), բուտ (բտել), գէտ (գէտք), գիլ (գիլ ու գլոր. Իսահակյան) դէպ, դուժ (խուժուղուժ), դուլ (արևմտհ. դուլ ու դադար), եկ (եկվոր), երաշխ, երեր, զիղջ (զղջալը), զնին, զօր, ընթաց, ժաման, ժանի, լամբ (օղակ), լու (լիս. աստվիս), խեղդ (պարան), խնայ, խտիր, խրախ (արևմտահայերենում կա), խոստովան, խրտուիլ (խրտվիլակ), ծախ, կահ (կահկարասի), կայ, կայթ, կար (ուժ), կաց, կարծ, կոտոր, կուր (կեր), հաճ, հաշմ, հաս (հաս-չհաս), հմայ, հոյր (ահ), ձանձիր, ճեմ, ճեպ, մած, մեղ, (մեղ դնել), մթեր, մխիթար, մոյր (մուրալը), մուրկ (մրկել), յագ, յեց, յօտ (ճյուղ), նախատ, նեխ, նզով, ողորմ, ողոք, ուլն (ուլունք) ուոն (ուոնակ-դոան մուրճ), պատիր, պարար, պարծ, պոյտն (պուտուկ), ջան (ջանք, ժողովրդական՝ ջան անել), ջեր, սակ (պայման, սակավ, սեռն (սոնի), ստին, սրուն, վաճառ, վան, վարան, վէր, վրէպ (արևմտհ.), քիրտն, օթ, օծ, օրէն:

Սրանցից բնիկ են առդին, արմն, արmour, բեկ, բուտ (բարբառներում մնացել է. մեզ մոտ բուդ), գէտ, գիլ, դուլ, եկ, երեր, ընթաց, լու (լսելը), կուր, հաս (գործածված է նաև տուրք), մած, մեղ (ժող. մեղ դնել), մխիթար, մուրկ, յագ, յեց, յօտ, ողորմ, ողոք, ջան, ջեր, ստին, սրուն, վէր, փրան, օթ, օծ:

Այս ամբողջ շարքը կազմում է 94 բառ, որոնցից բնիկ են 31-ը, այսինքն՝ ավելի քան 33 տոկոսը:

Այս 94 արմատից մթնած է միայն հոյ (հոյակապ), հնացած են սակ (սակաւ), յեց (հենված), արած (արածելը):

դ) ՄԹԱԿՆԱՅ ՉՆ ԲԱՂԱԳՐՅԱԿ ԲԱՌԵՐ

Համաժողովրդական բնույթ են ստացել նաև այնպիսի բառեր, որ Աստվածաշնչի գրության ժամանակ բաղադրյալ են եղել, այսինքն նրանց բաղադրության անդամները կենդանի կերպով հակադրվել են միմյանց իբրև առանձին բառական միավորներ, իսկ հետագայում այդ բառական միավորներից մեկը կամ մյուսը, երբեմն նաև երկուսն էլ մթնել են, վերացել է կենդանի հակադրությունը: Դրանց մի մասը գու-

ցն նաև Աստվածաշունչը թարգմանողների համար արմատական բնույթ է ունեցել:

Այս բառերը շատ հին կազմութիւններ են և գալիս են հնազոյն բարբառներից և կամ համընդհանուր հայերենից. այժմ շատ դժվար է դրանց ճիշտ աղբյուրը որոշել, որովհետև գրականութեան համահարթման հոգի վրա հասել են գրական բարձր մակարդակի և ստացել են միանման բնույթ:

Այսօր դրանք մեզ ներկայանում են երկտեսակ. կարող են արմատական համարվել և միաժամանակ ընդունվել իբրև բաղադրյալ. օրինակ սերմն բառը Մեսրոպի համար ածանցավոր բառ էր, որովհետև սեր իբրև անկախ բառ՝ ցնդ, տոնմ, սերունդ, ծնունդ իմաստով կենդանի էր, իսկ այժմ այդ բառը միայն արմատական բնույթ ունի, սակայն դրանից ունենք կազմված սերել, սերունդ, սերում, որոնք իրենց մասնիկներով հակադրվում են սեր արմատին: Այս շարքի բառերի մեջ չեն մտնում նախածանցավոր կազմութիւնները, որոնք կտրվեն առանձին: Չեն բերվում նաև գրական լեզվում չկիրառվող բաղադրութիւնները: Չեն տրվելու նաև այնպիսի բաղադրութիւնները, որոնց բաղադրութիւնը ծագումնային է կամ այնքան հին է, որի կենդանի կապերը արդեն մեռած էին V դարից էլ շատ առաջ. օրինակ՝ առաստաղ բառի մեջ առ-ը անխոս կենդանի նախդիր է, աստաղ ստաղ կապվում է հնդեվրոպական stel արմատի հետ՝ նաև հայերեն ստեղն-ի հետ, սակայն այդպիսի կապակցումները ծագումնաբանական են, և դրանց կենդանի կապերը վաղուց մեռած են: Մեր խոսքը վերաբերում է այնպիսի կազմութիւններին, որոնք ստեղծվել են V դարից առաջ և կամ V դարում, բայց այսօր ունեն արդեն մեռած կամ մթազնած հարաբերութիւններ. օրինակ՝ ազնիւ (ազն+իւ), աղջիկ (աղիջ+իկ), աման (ամ(ալ=լցնել)+ան), ամիկ (ամիկ. ամ+լ+իկ), անտի (անդ+ի), անրակ (անուր(=օղ)+ակ), առած (առ(նում)+ած), առակ (առ(նում)+ակ), արդի (արդ(=այժմ)+ի), արմատ (արմ+ատ), բարի (բար(ք)+ի), բնակ (բուն+ակ), բնաւ(բուն+աւ), գաղտ (գաղ(ել=թաքցնել)+տ), գոնեա(գոն+եա-եայ), գոնէ(գոն-է), գուցէ(գոյ-ց-է), դալար(դալ-ար), դաւաճան (դաւ-ճան. համեմատոր խրախճան), դիակն (դի-ակն), -դիր (դի-ր), դրանդի (դուր-անդ-ի), եռանդն (եռ-անդ-ն), երանի(եր-ան-ի), եր արմատը կա երջանիկ բառի մեջ. եր-ջ-ան-իկ), երկայն(երկ-այն), երկար(երկ-ար), երկու(երկ-ու), զի(զ-ի), -թանչ(թան-չ), թառամ(թառ-ամ), թաւարծի(թաւ-արծ-ի), իցէ(ի-ց-է), խարոյկ(խար-ոյկ), խմոր(խում-որ (կա անխում), խելօք(խել-աւ-ք), ծանօթ(ծան-օթ), ծնօտ(ծին-օտ), կաթոգի, կաթոգին

(կաթ-ոգի)ն), բարդ բառ, կալուած(կալ-ուած), կարօտ(կար(իք)-օտ), կափարիչ(կափ-գոցելը-ար-իչ), կրճատ (կրճ չկա), կրօն(կիր-օն), հագի(հագ-իւ, համեմատոր հագիւ հագ), հաղորդ(հագ-կից-որ-դ), հանի(հան-ի. բառ երևութիւն ի կոչականի մասնիկ է, համեմատոր տատի), հեռ. (հեռ-ի), -հորդան(հորդ-ան. (համեմատոր խորթել. ճամփա բանալ), ճահիճ(ճահ-իճ. համեմատոր ճախին), մոլի(մոլ-ի), ներքինի (ներք-ին-ի), շիք(շ-ի-ք), պարարտ(պարար-տ), պարս(պար-ս), պարսատիկ(պարսատ-ի), ջերմ(ջեր-մ), ջերմն(ջեր-մ-ն), սակայն(սակ(պայման)-այն), սակաւ, սակ(պայման)-աւ), սերմն(սեր-մն), սիրուն(սէր-ուն), ըսկիզբն(սկիզ-բն), վայրկեան(վայր-իկ-եան), տակաւ, տակաւին(տակ-աւին), տաղտուկ(տաղտ(ձանձրութիւն)-ուկ), տիղմ(տիղ-մ(համեմատոր տիլ), տուղան (տուղ. համեմատոր տոյժ-ան), փապար, փապ(անցք, ճեղք), փոթորիկ(փոթ. փոնթ-որ-իկ), քղանցք (քուղ-անց), քսու(քուս-ու (համեմատոր փասքու):

Չարմանալիորեն այս բառերից բնիկները շատ են. բնիկ չեն միայն աղնիւ, աղջիկ, անրակ, բարի, բնակ, բնաւ, գոնե, դաւաճան, երանի, երբեմն, խելօք, կարօտ, կափարիչ, հագիւ, հաղորդ, հորդան, ճահիճ, պարարտ, պարսատիկ, սակայն, սակաւ, սկիզբն, վայրկեան, տակաւ, տակաւին, տաղտուկ, տուգան, փապար, փոթորիկ, քղանց, քսու. բնիկ չեն 31-ը, բնիկ բառերը մոտավորապես 60% են կազմում:

Ե) ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Բարբառային բառերի որոշման հարցը Աստվածաշունչում դժվարին է: Այստեղ մենք հենարան ունենք մի քանի գործոններ, որոնք սակայն պայմանական են. առաջին գործոնը ժամանակակից բարբառներն են, որոնց տվյալների վրա կարող ենք հենվել Աստվածաշունչի բառերի բարբառային բնույթը որոշելու համար. այսպես՝ Բալար բառը, որ այսօր միայն մի քանի բարբառներում կա և ընդհանուր չէ հայերենի համար ու գրական լեզվի բառերի մակարդակին չի բարձրացել. այս նշանակում է, որ այն V դարում ևս բարբառային բնույթ է ունեցել: Կամ՝ դուրակ, որ նույնպես մնացել է մի քանի բարբառներում և գրական բառի արժեք չի ստացել ժամանակակից գրական լեզվում:

Կան այնպիսի բառեր, որոնք չեն մնացել կենդանի բարբառներում, սակայն վկայված են այնպիսի գրութիւններում, որոնք բարբառային ծագում ունեն. այսպես՝ շարխտ բառը, որ տոկոս վաշխ է նշանակում, միայն վիճակական արձանագրութիւնների մեջ է հիշատակված, իսկ վիճարութիւնները գերազանցապես բարբառներով են զրկված:

Երկրորդ գործոնը, որ լրիվ ու ստույգ ճշգրտություն չի խոստանում, բառի հազվագեղ կիրառությունն է. կան բառեր, որոնք Աստվածաշնչից դուրս չեն եկել և չեն ընդհանրացել. այս կետը պայմանական է այն առումով, որ կարող էր տվյալ բառը Աստվածաշնչում արձանագրվելու պահին հնացման, լեզվից դուրս գալու աստիճանում գտնված լինել, այսինքն՝ արդեն ընդհանրական արժեքով հանդես չգալ ոչ թե բարբառային ծագում ունենալու պատճառով, այլ հնացած, մթազնված լինելով: Այս պարագայում աչքի առաջ պետք է ունենաք բառի իմաստային ոլորտը. եթե բառը մեկ կամ երկու անգամ կիրառված է Աստվածաշնչում և լայն գրական ասպարեզ չի ելել ու ընդհանրացել, բայց ունի վերացական, գիտական, մտավորական ու ըստ այսմ ընդհանրական բնույթ, ապա անկարելի է պնդել նրա բարբառային բնույթի վրա, իսկ եթե տվյալ բառը կենցաղագրական, դյուրական, արհեստավորական, առտնին նեղ իմաստ ունեցող բառ է, ապա լեզվի պատմության առջև մեծ մեղանշում արած չենք լինի, եթե տվյալ բառը հանենք համաժողովրդական բնույթ ունեցող բառերի շարքից և դիտենք իբրև բարբառային բառ. այսպես օրինակ՝ զուրգն բառը, որ բրուտի անիվ է նշանակում, ծանոթ կլինի միայն այն վայրերում, որտեղ կավե անոթներ էին պատրաստում: Կա նաև մեկ այլ պարագա, որ կարող է թելադրել մեզ բարբառային բառի բնույթը ճանաչելու. այդ պարագան համանիշությունն է, որ խարսխվում է կիրառության հաճախականության և տարածվածության վրա: Եթե բառը չի երևում և լայն տարածում չունի հակառակ իր համանիշի, ապա այդպիսի բառը մի տեղական միջավայրից է գալիս. օրինակ բուծ և զառն բառերը. երկուսն էլ բնիկ են, սակայն բուծ ունի հազվագեղ կիրառություն և ոչ մի բարբառում չի մնացել, իսկ զառն բոլոր բարբառներում կա և ընդհանուր ժողովրդական բնույթ է կրում:

Վերջապես գոյություն ունի ոչ առարկայական՝ ենթակայական ընկալման պարագան, որ լիակատար ճշտության չի առաջնորդի, բայց այնուամենայնիվ որոշ նպաստ կբերի բառի ճանաչման և բնութագրության գործի մեջ:

Իսկ ինչ վերաբերում է «բարբառային» հորջորջումին, ապա այդ պետք է ընդունել զուտ պայմանական կերպով. սրա նշանակությունն է նեղ տեղական, խոսվածքային, ոչ համաժողովրդական ու համազգային:

Նենվելով վերևում թվարկված գործոնների վրա՝ այդպիսի տեղային բնույթ կրող բառերը, որ պայմանականորեն կոչում ենք բարբա-

ռային, քաժանում ենք երկու խմբի. մի խմբի մեջ ներառվում են այն բառերը, որոնք մինչև այսօր կենդանի են մեր բարբառներում, իսկ մյուս խմբի մեջ տեղադրվում են այն բառերը, որոնք չկան բարբառներում (հիմք ենք ընդունում «Արմատական բառարան»-ը):

Այս երկու խմբի բառերն էլ գրական լայն ասպարեզ չեն մտել, շատ հաճախ միայն Աստվածաշնչում են կիրառվել մեկ կամ երկու անգամ: Ոմանք փորձել են Աստվածաշնչական այդ բառերը վերանորոգել, դրանց գրական քաղաքացիություն տալ, սակայն մեծ մասամբ այդ փորձերը ձախողվել են, որովհետև հաճախ այդ փորձերի հեղինակների համար իսկ նման բառերի նշանակությունը մթազնված է եղել. հետագայում այդպիսի բառերը մեկնաբանվել են կամ երբայական բնագրի, կամ հունարեն, ասորերեն թարգմանությունների հիման վրա. այսպես՝ ալյաբում բառը, որ միայն Աստվածաշնչում է կիրառված, բացատրված է՝ վրանի ծայր, ծոպ, չվան, այսինքն՝ փաստորեն ստույգ բացատրություն չունի:

Աստվածաշնչում կան նաև այնպիսի բառեր, որոնք երկար դարեր գրական կիրառություն են ունեցել, սակայն քանի որ բարբառներում անընդմեջ կիրառվել են, ուստի առ այսօր պահպանում են իրենց բարբառային երանգը. օրինակ՝ շալակ, փուխ, փուխու և այլն:

Ինչպես ասվեց, այդ կարգի բառերը երկու խմբի են բաժանվում. առաջին խմբի մեջ ներառվում են այն բառերը, որոնք կենդանի են արդի բարբառներում. օրինակ՝ աղի, աղու(բուռ), ազբն(գործելիք կրտավի ծոպերը), ալոջ(էգ ուլ), ապուռ(կողոպուտ. Կոտայքի խոսվածքում մնացել է ափուռ-չփուռ), բոտոտ(ձճի), բուռ(կիր), գաղատոս(որմնաղիր. Թիֆլ. կալատողի), դամ(անգամ), գերմակ(շատ մանր սպիտակ ալյուր), դորակ(դավ), եռանդ(երեկ չէ մյուս օրը), բնջուղ(երինջ, մեծ հորթ), լուսն(աչքի փառ), խան(մատուցարան, ափսե), խարարուղ(ոսնգա), խօթ (հիվանդ), կողուն(ուղտի ձագ), կորդին(թամբ), կունդ(ձաղատ), կուր(տաշտակ), կրկուտ(խոփ), հան(տատ), հիմ(խի), ձեռ, ճիկ(ճիշ), ճիռ, մաճառակ(թարմ պանիր), մալուխ, ման(ծանրության շափ), մեց(ցեց), մծեխ(մոծակ), մուն(մանր մոծակ), մուրկ, նաքարակիտ(մանր դրամ), ներ(տագերակին), շարիատ(վաշխ, տոկոս), շօթ (հացի տեսակ), ոստին (անջրդի, շոր), ուլն(վիղ), ուղուկ(թիլ, բթամատի և ցուցամատի բացվածքը), ուն(մուրճ), շանչ, պախ(խաշած միս), պառակ(մակաղատեղ), սապատ(կողով), ցինդ(ինչ-որ ծաղիկ), ցի(տանիք), քաղ(արու այծ. մեր խոսվածքում (Կոտայք) քաղն ա-ցուլի է, քաղն ուտել-զու գավորվել), քիլ(ուղուկ), օթ(գիշերելը):

Բառեր, որոնք արդի բարբառներում չեն մնացել, չեն անցել մեր գրական լեզվի երկու ճյուղերին և հնում սակավ են կիրառվել. աղէ(գե, հապա), աճառ(օճառախոտ), անդեայ-անդի(նախիր), ապարում(պարան), ապաւանդակ(վրանի պարան), ապաւան(քակոր), ասպաստանիկ(ախոռում պահված ձի), արդն(նիզակ), բա մակ(ճրագ), բըլշակ(թի, ծածկույթ, խուփ, և այլն. իմաստը պարզ չէ), բուծ, բնիոն(մանր դրամ), գահակ(օղակ), գեր(ողբ), գեղձ(գալլուկ), գորշապահանգ(ականջի օղ), գըխ(չափ է), գրուան(աման-դրվւ-ից), գրուճ մանր մորեի, դուրգն, երախան(սեղան), երաշխէպ(հարվածից առ այսած կապույտը), եղէգ(ճարճատուկ), եղտիւր(չբարբի տեղ), երեխիլ(բույսի ժանգ), երբ(որդ, նեխվածք), գարտակ(գեղին), գմբաղ(հոգս), դրահան(կույտ, գեղ), թին(խաղողի կորիզ), լեփ(շեղ), խաղաւարտ(ուռուցք), խոտնիճ(մանր մորեիս), խարբուլ(իշալծյամ), խոռապետ(շխան), խուն(քիչ), կալթ(չափ է), կարաւանդ(սնակուշտ), կիւ(կախարդ), կըմախի(ողբ, կոծ), կշտապանակ(զարդ է), կորճ(գիշակեր մի թռչուն), համակ(գորշախայտ), համարակար(հաշվապահ), հաստեայ(խմորեղեն), հեծանոց(եղան), հոլ(երկիւղ), հօրան(ոչխարի հոտ), ձեա(պոչ), ճանբակ(խնկարեր բույս է), ճեղ(ճաղատ), ճեղանակ(զարդ է), մանգառ(խրմորեղենի անուն), մար(չափ է), մեհեւանդ(ապարանջան), մեղեխ(կացնի կոթ), մեղմեխ(նենգ), մշտիկ(փնջիկ), մորի(որջ), նու(հարս), նուագ(բաժակ), նուարտան(ծածկոց), նօթ(կարմիր ներկ), շահապ(զավառապետ), շաղամաթ(դերձան), շեր(ծառի տեսակ), շիգդ(կոճակ), որդոստայ(վաճառանոց), որթ(կողով), որի(ագուս), որոջ(գառ), ունգ(մղեղ), պահակեր(խնամող), պաշտատական(հարսի բերած օժիտը), պասկուճ(գիշատիչ թռչուն է), պատժանակ(զավաթ), պատրուճակ(ոչխար), պարզունակ(նիզ), պրշակ(առաստաղի տախտակների զարդ), ջորեակ(մորեիս), սանգաստական(նախատինք), սարթ(ծառի տեսակ), սարոյ(նոճի), սկնդիկ(ամուսնաթող կին), ստորի(ջուհակի գլան), որսկապան(հարսի սենյակ), վականակ(հասուն. օրանի մասին), վաղակաւոր(կարճ թուր), վարապան(սանձ), վարապանակ(զրահապատ թիկնոց), վէդ(վեճ), վսեստակ(վարձ), վրիրակ(ցոփ), վտաւակ(ներքնահագուստ է), վտաւան(ասպարեզ. տարածքի շափ), տաղախ(շաղախ), տապակ(զարդ), տեռ(շղարշ), տիտեռն(կոկորդիլոս), տոռն(չվան), ցըի(օղի), փողոշուկ(զխազարդ է), փոր(կարապ), փրանգ(փոռգիացի), փքին(նետ), քածաւարտ(կրտած), քուք(զավազան), քուք(ողբ), քօղէք(ապարանջան), օղի(ոչխար):

Այս երկու խմբի բառերը կազմում են 163 միավոր, սրանք նեղ կենցաղային, առօրյա, բայց տեղական նշանակութուն ունեցող բառեր են՝ զարդեղեններ, կենդանիներ, բույսեր, հագուստներ, մարմնի մասեր, գործիքներ, զենքեր և այլն, որոնց մի մասը ծագումով մինչև իսկ բնիկ, բայց գերազանցապես պարսկական փոխառութիւններ և անհայտ ծագման բառեր են:

Այս բոլոր բառերից բնիկ են՝ բուծ, գեղձ, դուրգն, լուսն, խուն, խօթ, հան, հիմ(խի), հօրան, ձեա, մուն, մորի, մուրկ, ներ, նու, ոստին, ուլն, ուղուկ, տեռ, ցիւ, քուք(ողբ), օղի(ոչխար), օթ(գիշերելը): Այստեղ բնիկ բառերի քանակը քիչ է: Սակայն հիշալ բարբառային համարված բառերը ղեռես ծագումնաբանորեն չեն ուսումնասիրված: Գրանց մեջ շատ բնիկ բառեր պետք է որ լինեն, որոնք բացահայտվելու կարիք ունեն:

Անբաղադիր բառերը կազմում են 2174 միավոր, որոնցից 739-ը բնիկ են. կազմում են 33 տոկոս:

Այս բոլոր բառերից մի քանի միավորներ միայն Աստվածաշնչում են կիրառված, օրինակ՝ ազուռ, ալոջ, բլշակ, բուծ, գարշապար, գեղձ, գրուճ, եղէգ, եմակ, երեխիլ, լեփ, խան, խարաբուղ, խոռապետ, կարաւանդ, կորճ, հաստեայ, հիւր, ճանբակ, ճեղ, ման, մանգաղ, նօթ, շարիատ, որի, ուղուկ, ունգ, պախ, պատժանակ, պարզունակ, ստորի, վականակ, տաղախ, տապակ, տիտեռն, փքին(նետ), փողոշուկ, քօղէք:

Բերված բառերի մեծ մասը գործածութիւնից դուրս է եկել: Բարբառներում և գրական լեզվում մանավանդ արեւմտահայերենում ոճաբանական, կենցաղագրական, պատմական և այլ նպատակներով կիրառվում կամ կիրառված են՝ աղի, ազուռ, բուռ, ազրն, ալոջ(ուլ), աճառ(օճառախոտ), ապուռ(ափուռ-չփուռ), բօթ, դամ(արեւմտահայերենում), գերմակ(մանր ալյուր), գրուան(աման), դորակ, դուրգն, թին, լեփ(շեղ), լուսն(աչքի փառ), խան(ափսե բրբռ.), կողն, կորդին(թամբ), կրկնտ(խոխվ. բրբռ.), հեծանոց(եղան), հիմ(խի), ձեա(բրբռ.), նուարտան, որոջ, ուն(վիզ), շեչ(խաղողի կնճիոր), պարզունակ, սապատ(բրբռ.) վաղակաւոր, տրուպ(արեւմտհ.), ցըի(օղի), քաղ(բրբռ.), քօղէք:

Բ. ԱՄԱՆՑԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐ

ա) ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐ

Նախածանցները բաժանվում են երեք խմբի՝ ա) ժխտական նախածանցներ. սրանք են՝ ամ, աճ, ապ, ապի, դժ, չ, տ, տը:

Ամ ածանցով կազմված կան՝ ամբարիշտ, ամբիծ, ամփոփ(ել), ամփոփ նշանակում է նաև զուրկ, անմասն):

Աճ ժխտական ածանցով կազմված են՝ անամօթ, անայր, անանուն անաշխարհիկ(օտարական), անաշառ, անառակ, անապականացու, անապականութիւն, անաստուած, անասուն, անարատ, անարգանք, անարգ, անարդար, անարժան, անարդութիւն, անարժանութիւն, անարժաթասէր, անաւագ, անբարբառ, անբարեսէր, անբարի, անբարհաւած, անբաց, անբաւ, անբժշկական, անբուն, անբժշկութիւն, անգեղ, անզէտ, անգիր, անգործ, անբնական, անգութ, անդադար, անդանդաղ, անդարձ, անեղծ, աներեւոյթ, աներկաթ, աներկեան, աներկիւղ, անզաւակ, անզաւակութիւն, անզգամ, անզգայ, անզեղչ, անզոհ, անզօր, անընդէլ, անթառամ, անթափ(խաւը չթափված), անթիւ, անթլպատ, անժոյժ, անժպիտ, անիմաստ, անիրաւ, անլուայ, անլոյծ, անխաբ, անխառն, անխարդախ, անխափան, անխիղճ, անխմոր, անխնամ, անխնայ, անխում, անխրտիր, անխրատ, անխօս, անխօսուն, անծանօթ, անծնունդ, անկապուտ, անկատար, անկար, անկարգ, անկարծ, անկեաց, անկեղծաւոր, անկերպարան, անկիւն, անկոխ, անկոտոր, անկոփ, անկոբւ, անհաղորդական, անհամար, անհայր, անհանգիստ, անհանդերձ, անհաս, անհարկ, անհաց, անհաւան, անհաւանութիւն, անհաւատ, անհետ, անհզօր, անհնազանդ, անհնազանդութիւն, անհնար, անհոգ, անհուն, անհուր, անհրաժեշտ, անձայն անձանձրոյթ, անձեռագործ, անձեռնհաս, անձանանչ, անձառ, անմահ, անմայր, անմասն, անմատոյց, անմարթ, անմաքուր, անմեծար, անմեղ, անմիաբան, անմիտ, անմոունչ, անյագ, անյայտ, անյարկ, անյիշատակութիւն, անյոյս, աննիազ, աննկար, աննման, աննշան, աննշոյլ, աննուէր, անշահ, անշարժ, անշէն, անշէջ, անշնորհ, անշնորհակալ, անշշունչ, անշունչ, անշուշտ, անոխակալ, անողորմ, անորդի, անուղղայ, անուսումն, անուրեք, անշարութիւն, անշտի, անպակաս, անպատեհ, անպատում, անպատասպարան, անպատրաստ, անպարիսպ, անպարկեշտ, անպարսաւ, անպարտ, անպէտ, անպիտան, անպտուղ, անջուր, անջրգի, անջրդին, անսերմն, անսիրտ, անսխալ, անսաստ, անսուզ, անսուտ, անսուրբ, անսպառ, անվախճան, անվարժ,

անվարձ, անվիշտ, անվկանդ, անվնաս, անվտիտ, անվրէպ, անտաշ, անտեղեակ, անտես, անտխեղծ, անտոհմ, անցաւ, անփախուտ, անփոյթ, անփորձ, անփուտ, անբակ, անբնական, անբնին, անբուն, անօդնական, անօդուտ, անօրէն:

Ապ, ապի, դժ, չ, տ, տը մասնիկներով ունենք՝ ապահարկ, ապաշնորհ, ապիկար, ապուշ, դժկամակ, դժպատեհ, շաղգ, շաստուած, չբարերարութիւն, չգոյ չեմ, չեւ, չիք, չժողովուրդ, չուտելի, չհամարեալ, չլանցուցեալ, չթահանայապետ, չքաւոր, տգեղ, տգեղծ(անվայելուշ), տկար, տհաս, տրմուղ(խամ. անասունի մասին):

բ) ՆԱԽԻՒՐ—ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐՈՎ ԲԱՌԵՐ

Նախդիր-նախածանցներ ենք համարում ամենից առաջ այն ածանցները, որոնք առաջացել են նախդիրների յայնպիսի փոփոխութեամբ, որ այլևս անձանաշելի են դարձել. օրինակ՝ ընտիր(ընդդիր): Նախդիր-նախածանցներ են նաև այն նախդիրները, որոնք անկախ կիրառութիւն չունեն և որևէ բառի հետ կցվելով կազմում են նոր բառ. օրինակ՝ զկնի(հետո. կին(ք) ոտքի ներբանը և հետքը): Նախդիր-նախածանցներ են գ, ըն, ժ, ի, յ, ս, (գ-ից), ստ(ըստ-ից), ց.

Նախդիր-նախածանցներով են կազմված դայգոյ(առավոտյան), դայսօր, զայս(զայս օրինակ), զանխով(ծածուկ), զառիթափ, զառաջաւոր, զառաջինն, զառիվայր, զառիվեր, զառիվերակ(փոքրիկ զառիվեր), զառաջեայք, զանց, զարդ, զարդիս, զարմ(արմ-արմատ), զգայուն, զգիշերն(զիշերը), զգոյշ, զերկեամ, զի, զինչ գիրովին, զկնի, զհետ զձանապարհայն(ձանապարհին), զմէ, զոր(զոր օրինակ), զտիւն(ցերեկը), զնոյն(զնոյն օրինակ), զցայգ(զիշերը) զցերեկ(ցերեկը), զօդ, զօրէն(պես), զօրհանապագ, զօրն(օրը), ընկեր, ընկիճեալ, ընտարոյս, ընտանի, ընտասուն, ընտել(ընդ-ել), ընտիր, ժոյժ, իսպառ, յակամայ, յականէ, յայնժամ, յայնմհետէ, յայնկոյս, յայսկոյս, յանգ, յանգէտս, յանզգայ, յանիրաւի, յանխնայ, յանծանօթս, յանկարծ, յանկարծակի, յանկարծօրէն, յանձանձիր, յանձն, յանձնապատաս, յանյոգս, յանուանէ, յանուն, յաշս(աշքում), յառաջ, յապահով, յառաջագոյն, յառաջադէմ, յառաջապահ, յառաջն, յարգ, յարկ, յարձակ, յաւատ(հաւատարմութեամբ), յափսիթերս, յերեկորեայ, յերկար, յիրաւի, յո, յոյժ, յով, յորժամ, յորձ(ուսու ոչխար), յորոց(որովհետև), յունկանէ(ականջին), յուշ,

ստանձնաւոր, ստանձնիր, ստղիւտ, սփիւռ, ցայգ, ցայժմ, ցայնժամ, ցայսվայր, ցայսօր, ցանկ, ցարդ, ցերբ, ցերեկ, ցորժամ, ցորբան:

Այս զ-ով բառերը զանազան խոսքի մասեր են. շպետք է շփոթել հայցականի զ-ի հետ. օրինակ՝ զառաջինն (առաջին անգամ, ամենից առաջ), զգիշերն (գիշերը, գիշերով), զօրէն (պես), զայս (զայս, օրինակ, ըստ այս օրինակի), զոր (զոր օրինակ-ինչպես) և այլն:

Այդպէս էլ յ-ով բառերը. յանիրաւի (անիրաւ կերպով), յանգէտս (անգիտաբար, չիմանալով), յունկանէ (ականջին), յանուանէ (անունով), յայնկոյս, յորոց (որովհետև):

Մյուս խմբի մեջ են մտնում ամենա, ան (վրա), ապա գեր, ե, կամա, և, ևամ, ևան, մ, ն, նի, ո, ս, տի, տաւ, փաս մասնիկները, որոնցից շատերը մթանգնված են և դադարել են արդյունավետ լինելուց. կենդանի են ամենա, գեր մասնիկները: Թվարկված մասնիկներով Աստվածաշնչում կազմված կան՝ ամենաբեր, ամենագէտ, ամենազօր, ամենաժուժկալ, ամենակալ, ամենակերակրիչ, ամենահայեաց, ամենաշիջուց, անկողին, անոտն, ապաժաման, գերարտօսրալիք, եթէ, ետղ, կամակոր (խիստ կոր), համագունդ, համակարգ, համակարիք, համամայր, համամիտ, համաշխարհի, համաշունչ, համարուեստ, համարձուժն, համբերութիւն, համբերող, համօրէն, հանդերձ, հանդէպ, հեռ (կռիվ, ոխ, հեռ), հզօր, հլու, հմուտ, հպարտ, հսկայ, մխիթար (մի-ից), նեցուկ (ն-ից, նիւթ (ն-հիւթ)), նշոյլ, նշող, ոչ, ոսին (ո-սին-դատարկ), սփիւռ(ս-զ-ից), տարածամ, տէր, տինգերբ, տիկին, փասքուս (քսու):

Այս խմբերից բնիկ են ամենաբեր, ամենաժուժկալ, ամենակալ, անամօթ, անայր, անանուն, անաշառ, անառակ, անասուն, անարար, անարդար, անդադար, անդարձ, անբարբառ, անբաց, անգէտ, անգիր, անգործ, աներեւոյթ, աներկիւղ, անզգամ, անզգայ, անընդել, անթառամ, անիմաստ, անիրաւ, անլուայ, անխօս, անծանօթ, անծնունդ, անկեաց, անկին, անկողին, անհայր, անհանդերձ, անհաս, անհարկ, անհող, անհուն, անհուր, անձայն, անձեռագործ, անձեռնհաս, անմահ, անմայր, անմասն, անմեղ, անմիաբան, անմիտ, անմոռնչ, անյագ, անշնորհակալ, անշըշունչ, անտխակալ, անոտն, անորդի, անուսումն, անուրեք, անջուր, անսերմն, անսիրտ, անսխալ, անսաստ, անսուտ, անսուրբ, անտեղեակ, անտես, անտխնդծ, անփոյթի, անբուն, անօգուտ, ապահարկ, գերարտօսրալիք, եթէ, զառիվերակ (վեր-ից), զարմ, զգալուն, զգիշերն, զի, զինչ, զհետ զտին, զցայգ, զցերեկ, զօրն, ընկեր, ընտանի, ընտել, ընտիր համամիտ, համարձակ, համամայր, համաշունչ, համբարձումն, հեռ, հլու, մխիթար, յայն, յայնմհետէ, յանզգայ, յանձն, յառաջ, յարձակ, յափսիթերս,

յերկար, յով, յորձ, նեցուկ, նիւթ. ոսին, ոչ, շոյ, շեւ, շուտելի, շքաւոր, ստանձնաւոր, ստանձնիր, ստղիւտ, սփիւռ, տգեղծ, տէր, տինգերբ, տրկին, տհաս, ցայգ, ցայսօր, ցանկ, ցարդ, ցերբ, ցերեկ, ցորբան:

Հնացած են՝ անարծաթասէր, անաւագ, աներկեան (աներկյուղ. արեւմտհ.), անխում(չխմորված), անկեաց, աննիալ(աննվաղ), անմարթ, (անկարելի), անուրեք, անվկանդ(հնաբանական), անտխնդ(անշուք), գերարտօսրալիք, զժկամակ, զժպատեհ (նոր բառարաններում բերված են), զանխուլ(զաղտնի), զառիվերակ, զզիշերն, զինչ, զկնի, զհետ, զտին, զցայգ, զօրէն, զօրհանապաղ, զօրն, հեռ, յակամայ, յայն, յայնկոյս, յայնմհետէ, յայնժամ, յայնկոյս, յայսկոյս, յանզգայ, յանձանձիք, յանխնայ, յարձակ, յաւատ(հավատարմությամբ), յառաջագէտ, յառաջապահ, յափսիթերս, յերկար, յով, յո, յորձ, շրարբարութիւն, շեւ ստղիւտ, ստանձնիր, տգեղծ, ցայնժամ, ցայսվայր, ցերբ, ցորժամ, ցորբան, փասքուս (քսու):

Նախածանցավոր 385 բառերից բնիկ են 132, հնացած՝ 55: Ըստ տոկոսային հարաբերության բնիկ բառերը կազմում են ավելի քան 30 տոկոս, իսկ հնացածները՝ 15 տոկոս:

գ) ՎԵՐՋԱՄԱՆՅԱՎՈՐ ԲԱՌԵՐ

Աստվածաշնչում կիրառված են այնպիսի վերջածանցներ, որոնք գերազանցապես կենդանի ու գործուն են արդի գրական լեզվում: Քիչ ածանցներ են այսօր հնացած, որոնց մեծ մասը հնացած էր V դարում. դրանք կամ այլևս չեն գիտակցվում, և կամ հնացումը արտահայտվում է անարդյունավետությամբ: Այսպես՝ գրաբարի Ե մասնիկը, որ ամենից առաջ դերանվանական հոլովման մեջ սեռականի մասնիկ է, կազմում է նաև մակբայներ. այսպէս՝ այն բառի սեռականն է այն (այնորիկ), սակայն այդ նույն Ե սեռականի մասնիկը կազմում է նաև մակբայներ՝ այս (այստեղ), այդ (այդտեղ), այն (այնտեղ). այս Ե մասնիկը գրաբարի համար կենդանի մասնիկ էր, սակայն արդեն ոչ արդյունավետ, մեր լեզվի այսօրվա անդամահատման տեսակետից մեծ մի մասնիկ է անդրադարձ բառի մեջ: Ար մասնիկը Աստվածաշնչի մեջ կենդանի մի մասնիկ է (մեծարել, յարգարել, զարգարել, աստվածարել և այլ), այսօր մեծարել բայի մեջ գիտակցվում է, սակայն արդար բառի մեջ այլևս գրեթե անձանաչելի է:

Աստվածաշնչի վերջածանցները և դրանցով կազմված բառերը մի մեծ քանակ են ներկայացնում, որոնք կցվում են հետևյալ ձևերին. ուղղական ձևի վրա (ականջատ), անորոշ գերբայի վրա (ածելի), եղա-

կի սեռական ձևի վրա (առնացի), արմատական ձևի վրա (ամարա-
յին), ածանցված ձևերի վրա (ամեն-եք-ին), բայական այլևայլ հիմ-
քերի վրա (աճեցուն, արբեցութիւն, գարշեցուցիչ), գործիական ձևի
վրա (արամբի, գլխովին, որտեղ ով արդեն ածանցական մասնիկ է
ովին ձևով):

Աստվածաշնչում կիրառված վերջածանցներն են արար, ագ, ագին
ախ, -ած, -ակ, -ակի, -ական, -աղակ, -աղան, -աղանջ, -ամբ, -այթ,
-ային, -այն, -ան, -անդ, -անի, -աստ, -անն, -անոց, -աստ, -աստ, -ար,
-արակ, -արան, -արիմ, -ածրի, -արծի, -աց, -ացի, -ացիկ, -ացու, -աւ,
-ուր, -ւլտ, -աք, -բ, -բն, -գոյն, -դ, -դակ, -ե, -եալ, -եակ, -եամբ,
-եամն, -եայ, -եան, -եար, -եաց, -եղ, -եղէն, -եմն, -ենի, -եստ, -երիբ,
-եց, -ել, -ելան, -եք, -եքեան, -եքին, -եօք, -զան, -էն, -ծէտ, -ի, -իլ,
-իկ, -իճ, -իմ, -ին, -ինդ, -իոն, -իցս, -իտն, -իբ, -իւղ, -իւ, -իւն,
-լուտ, -կ, -կան, -կէն, -կին, -կոց, -(իկոց), -դ, -մ, -ման, -մանի, -ն,
-նակ, -նի, -նչ, -նջ, -շի, -շիո, -ոգ, -ոգի, -ոգին, -ոդ, -ոյ, -ոյթ, -ոյկ,
-ոյն, -ոյց, -ով, -ոտ, -ոտի, -որ, -որի, -որայ, -որդ, -ոց, -ու, -ուկ,
-ուած, -ութիւն, -ումն, -ուն, -ունդ, -ունի, -ունչ, -ուչ, -ուտ, -ուտ, -ուր,
-ուրդ, -ուց, -որ, -չ, -պան, -պար, -ջ, -ս, -ստ, -ստան, -տ, -տի, -բ,
-ցու, -ք, -աւ, -թ, -ան, -աւչ, -աւտ, -աւք:

Ածանցների այս շարքը կազմում է հարյուր քառասունինը միավոր,
որոնցից մի մասը բաղադրյալ ածանցներ են, բայց մենք այստեղ զը-
րանց վերհիշեցինք իբրև մեկ միավոր: Բաղադրյալ են անի, անոց,
արիմ, արծի, ացի, ացու, աւոր, եղէն, եքեան, եքին, իցս, լուտ, կէն,
կին, նչ, նջ, ոգի, ոգին, ոյթ, ոյն, ոյց, ոտի, որի, ուկ, ուած, ութիւն,
մն, ումն, ունդ, ուն, ունի, ունչ և այլն. սակայն տվյալ դեպքում գրե-
թե քանակապես ածանցների թիվը չի ավելանա, որովհետև այն բոլոր
ածանցները, որոնք մտնում են բաղադրության մեջ, գրեթե հանդես
են գալիս նաև առանձին: Նկատի չենք առել ա հոդակապը, որ վերջված
է իբրև ածանցի մաս. ինչպես՝ ա-բար, ա-գին, ա-ցի, ա-ուր և այլն:

Աստվածաշնչում հիշյալ ածանցները ըստ իրենց բնույթի զանազան
խոսքի մասեր են կազմում և յուրահատուկ ձևով են կցվում նյութական
նշանակություն ունեցող բառերին:

(-Ա-բար (ապար) -բար (-պար)

Բուն ածանցն է բար, ա-ն հոդակապ է: Այս ածանցը, որ մեր գրա-
կան լեզվի մեջ շատ կենդանի մի ածանց է և մեծ թվով մակբայներ է
կազմում, Աստվածաշնչում այնքան հաճախ չի հանդիպում: Սրանով

կազմված կան ընդամենը 13 բառ. մեծ մասամբ կցվում է գոյական-
ներին և սրանցից կազմում է մակբայներ նման, պես բառերի նշանա-
կությամբ. այսպես գոյականներից ունենք՝ աղիծարար, աւարարար,
գազանարար, դայկարար, ընտանբար (ընտանիաբար-ընտանբար),
խուժարար, հեքանոսարար, հեւարար, տիրարար. ածականների հետ
ունենք՝ բուրարար, շարարար, մեծարար, օտարարար և մի բառ էլ վայ-
րապար, որ դարձյալ գոյականից է կազմված:

Տասներեք բառից բնիկ են միայն աղիծարար, ընտանիբար, տի-
րարար. արևելահայ գրական լեզվում հնացած է վայրապար:

-Ագ

-Ագ-ը հավանորեն գիտակցվում էր իբրև արմատ. ազանիմ բայի
արմատն է, մեզ համար այժմ ածանցական նշանակություն ունի, մանա-
վանդ որ ընդամենը մի բառ ունենք՝ վայրագ. ածանցը բնիկ է, բառը
նշանակում է վայրի տեղերում գիշերող, կատաղի:

-Ագին -Գին

Բնիկ հայերեն ածանց է, առաջացել է ուրի (հոգի) բառից: Ամենից
լավ երևում է կաթոգին բառի մեջ, որտեղ դեռևս գիտակցվում էր իբրև
անկախ բառ, բայց և ածանց ստանալով լրիվ կերպով վերածվել է
ածանցական մասնիկի: Ունենք՝ ահագին, դիւագին, գայրագին, կող-
կողագին, զուարթագին, մոլեգին, տրամագին, տօթագին, ցաւագին,
ցօղագին. չկա ոչ մի հնացած բառ: Բնիկ են՝ գայրագին, մոլեգին, տրա-
մագին:

-Ագոյն -գոյն

Գոյն բառն է, որ կարմրագոյնի մեջ բառ է, իսկ երբ կցվում է այն-
պիսի բառերի, որոնք արդեն գոյն նշանակությունը չեն արտահայտում,
դառնում է բաղադրական մասնիկ: Կցվում է միայն ածականներին, և
ա հոդակապի միջոցով բավականաչափ բառեր կան այս ածանցով կազ-
մված: Ինչպես՝ ազահագոյն, աղնուականագոյն, ամբարշտագոյն, անմը-
տագոյն, անարագոյն, առատագոյն, առաւելագոյն, արագագոյն, բարձ-
րագոյն, բացագոյն, բոնագոյն, գեղեցկագոյն, գիջագոյն, դառնագոյն,
դժուարագոյն, դիւրագոյն, երագագոյն, երիցագոյն, երկնագոյն, երկա-
րագոյն, գաղբագոյն, զգուշագոյն, զիջագոյն, զնստագոյն, զօրաւորա-
գոյն, զօրագոյն, թեթեւագոյն, իմաստնագոյն, լաւագոյն, խաղաղագոյն,

խժղժագոյն, խոնարհագոյն, խոտորնագոյն, խորագոյն, խորագիտագոյն, խստագոյն, ծանրագոյն, ծերագոյն, կրտսերագոյն, հարստագոյն, հաստատագոյն, հեռագոյն, հզօրագոյն, ճշմարտագոյն, ճոխագոյն, մարդասիրագոյն, մերկագոյն, մեծագոյն, մտադիրագոյն, մօտագոյն, յայրատագոյն, յանդգնագոյն, յառաջագոյն, յերկարագոյն, յոլովագոյն, յոռագոյն, յօժարագոյն, ներքսագոյն, նորագոյն, նուագագոյն, նստագոյն, շինականագոյն, շարագոյն, պատուականագոյն, պատրաստագոյն, պիտանագոյն, պնդագոյն, սաստկագոյն, ստուարագոյն, ստուղագոյն, վազագոյն, վատթարագոյն, վերագոյն, տկարագոյն, տրտմագոյն, փոքրագոյն, քաղցրագոյն:

-Ազոյն ածանցով կազմված բառերի թիվը 77 միավոր է, որից բնիկ են անմտագոյն, առանկագոյն, բարձրագոյն, բացագոյն, գեղեցկագոյն, գիշագոյն, երազագոյն, երկցագոյն, երկարագոյն, գիշագոյն, զնստագոյն, իմաստնագոյն, լաւագոյն, խորագիտագոյն, ծանրագոյն, ծերագոյն, կրտսերագոյն, հաստագոյն, հաստատագոյն, հեռագոյն, մարդասիրագոյն, մերկագոյն, մեծագոյն, մօտագոյն, յառաջագոյն, յերկարագոյն, յոլովագոյն, ներքսագոյն, նորագոյն, նստագոյն, պնդագոյն, սաստկագոյն, վերագոյն, տրտմագոյն, փոքրագոյն՝ ընդամենը 36 բառ կրիվ անգործածական են երագագոյն, գիշագոյն (հավանորեն էջ-ից) բացատրվում է իրրե ցած, խոնարհ. զնստագոյն, որ կազմված է զնիստ ածականից (զնիստ շատ ուշ գործածություն ունի և նշանակում է ցածր):

-Փէտ -ժուտ

-Փէտ համարվում է արմատ, սակայն V դարում այն արդեն ածանցական կիրառություն ունենք՝ զար մասնիկի նշանակությամբ. այդ ածանցով միայն մեկ բառ կա. ախտաժէտ, որ բնիկ է: Այդ նույն մասնիկը պետք է որ լինի -ժուտ, որից ունենք ժանտաժուտ:

-Աւ

Այս ածանցով երկու բառ է կազմված՝ շաղախ, տաղախ, որ իմաստով նույնն է նախորդի հետ, սակայն այս վերջինը համարվում է փոխառություն, իսկ նախորդը շաղ (ցող) բառով է կազմված:

-ԱՄ

-Աժ մասնիկը ածել բայի ած արմատն է, որով կազմվում են գոյականներ կամ ածականներ: Այս ածանցը Աստվածաշնչում բայարմատ-

ների վրա է դրված, սակայն գործողության իմաստի հետ արտահայտվում է նաև առարկայական և հատկանիշային իմաստ: Գործողության իմաստը թույլ է, բայց կա, զուցն այդ առավել ևս ցայտուն է բայարմատի շնորհիվ: Մեր լեզվի հետագա զարգացումը այդ զուտ բառակազմական մասնիկը վերածում է դերբայական մասնիկի, իսկ այժմ գոնե արևելահայ գրական լեզվում այն դարձյալ վերադառնում է իր նախնական վիճակին՝ կորցնելով դերբայ կազմելու իր հատկանիշը:

Աստվածաշնչում այս ածանցով կազմված են այրեցած, անկած, (ընկած), արարած, աւերած (ավեր), գթած (գթացող), զոգած (զոգավորություն. մեր խոսվածքում (կոտայք), ունենք գորչել), գործած (շինվածք), երկիրած (աստվածավախ), զածած (նվազ, խեղճ), ընդելուզած, խափանած (խափանություն), ծեծած (ծեծվածք), կազմած (սարք), կատարած (վերջ), կողոպտած (կողոպուտ), կոտորած (ջարդ), կոած (կովածը), հասարակած (կեսը), հարած, հոգած (հոգածու), ձուլած (ձուլ), շինած (շինուածք), ողորմած (ողորմացող), ստուերած, վիժած (թերածին), ցաւած (հիվանդոտ), փսխած (փսխուք):

Այս երեսունմեկ բառից հնացած են անկած (փոխված ընկած-ի), զածած (շնչին), տաղախ:

Բնիկ են այրեցած, անկած, արարած, զոգած, գործած, երկիրած, զածած, ընդելուզած, ծեծած, հարած, հոգած, ձուլած, ողորմած, որ կազմում է 13 բառ՝ 45 տոկոս:

-Ածոյ

Կազմված է երկու ածանցից՝ ած-ոյ. առաջինը նախորդ ածանցն է, իսկ երկրորդը սեռականի վերջավորությունն է, որ հաճախ հանդես է գալիս իբրև բառակազմական ածանց:

Այս բաղադրյալ ածանցով կազմված կա հինգ բառ, խափանածոյ, կոածոյ, հալածոյ, ձուլածոյ, քերածոյ (խափանում, ձուլվածք, քերվածք): Բնիկ չեն միայն կոածոյ, խափանածոյ, որ արդեն հնացած է:

-Ածուն, -Ածրի, -Ածրի

Այս մասնիկներով միայն երեք բառ ունենք՝ աղածրի կամ աղարծի (մատղաշ), թաւարծի կամ թաւածրի (թավոտ), փայլածուն. երեք բառն էլ բնիկ են և այժմ միայն գրական կիրառություն ունեն (մեկը աղ-ից է կազմված, մյուսը՝ թաւ-ից), իսկ փայլածունը մնացել է փայլածու ձևով:

Բավականաչափ գործածված ածանց է. ամենից առաջ առենք, որ գոյականներից կազմում է նվազական գոյականներ՝ այսինքն փոքրացուցիչ մասնիկ է. օրինակ՝ աղանենակ, բլթակ (ականջի բլթակ), զընդակ (դինդ-ից), եղբորորդեակ, լծակ, ծովակ, ձորակ, յակնթակ, նաւակ, ոչխարակ, ոսկեակ, որդեակ, պատանեակ, սարակ (փոքր սար), սիւնակ, սրահակ, վահանակ:

Նրբորեն փոխում է բառի նշանակությունը. օրինակ՝ անուշակ (փաղաքշական), աջողակ (անձի վերաբերող, մինչ աջող վերաբերում է գործողության), կապուտակ (փղջռ.), յաջողակ (աջողակ):

Արմատներից կամ բայարմատներից նոր բառեր է կազմում. օրինակ գիտակ, դիտակ, երկուորեակ, լուղակ, խնդրակ, կնդակ, հասակ, հրաւիրակ, պատուիրակ, պարարակ, վիժակ, տախտակ, տեսակ, նուիրակ, բանդակ:

Գոյականներից այլ գոյականներ է կազմում. օրինակ՝ աներակ, գիսակ (հյուս. մինչդեռ գէս-վարս), դասակ, խոյակ (խոյ-ից), հետեւ, հետքին բառերից կազմված են հետեւակ, ներքնակ (ներքնահագուստ), նուիրակ, նպարակ. ունենք նաև քաղմատեղեակ, սեւակ (թանաք), սրխալակ (գայթող), վրէպ-ից վրիպակ, տեղեակ (տեղի բառից):

Մի շարք բառերի հետ նույնաբանական նշանակություն է տալիս կամ անածանց ձևերը անսովոր են. բարձրաւանդակ, բոլորակ, գահակ, դիակ, երամակ, երասանակ, զանգակ (հնում զանգ շկա), խառնակ, խորշակ (խորշ անսովոր է), նաւալուղակ, նշանակ, նպատակ, եղանակ, վրիպակ, տապանակ:

Այս 64 բառից բնիկ են բարձրաւանդակ, զնդակ (գինդ-ից), լծակ, ձորակ, նաւակ, որդեակ, աջողակ, յաջողակ, գիտակ, լուղակ, հասակ, տեսակ, հետեւակ, սխալակ, դիակ: Հնացած են ոչխարակ, սխալակ, գահակ, կնդակ (ճաղատ):

-Ական

Այս ածանցով գոյականներից, ածականներից ու բայարմատներից կազմվում են ածականներ, որոնք կիրառվում են երբեմն նաև իբրև գոյականներ: Այժմ այս ածանցը շատ ավելի կենդանի է ու արգասաբեր, քան Աստվածաշնչում: Նկատվում է, որ բերված նախորդ բոլոր ածանցների համեմատությամբ այս ածանցով ավելի շատ բառեր կան կազմված. այսպես ունենք՝ աղզական, ամրական, անբժշկական, անա-

պատական, անրնական, անհաղորդական, աստուածական, արգելական, արուական, արուեստական, արքունական, արօտական, բազմական, բամբասական, բացական, բաւական, բնական, գաղթական, գաւառական, գիշերական, գնացական, գրաւական, դաշտական, դասական, դիւական, դիւթական, երաժշտական, երիտասարդական, զուգական, զօրական, թափառական, թշուառական, իգական, իշխանական, լալական, լեռնական, խաղաղական, խորհրդական, ծիրական, ծննդաբանական, ծննդական, կամայական, կենդանական, կորստական, հալածական, հանդիսական, հեթանոսական, հովուական, հրէական, դետական, մարգարէական, մեղանշական, մոլորական, մխիթարական, մշտնջենական, մոլեկան, յաղթական, յաղթողական, յափտենական, յուզական, յունական, նուիրական, շայեկան, որմզդական, շուառական, պատերազմական, պատուական, պատրաստական, պարտական, ջրական, սանդարամետական, սեպհական, սպանդարամետական, վաթսնական, վաճառական, տարեկան, տոհմական, տուարածական, փախստական, օգնական, օտարական, օրինական, օրհասական, քահանայական:

Այս 84 բառից բնիկ են արգելական, արուական, արօտական, բամբասական, բացական, գիշերական, լալական, լեռնական, ծննդական, հովուական, մեղանշական, մոլորական, մխիթարական, մոլեկան, ջրական, վաթսնական, տարեկան, տուարածական, օրինական, օրհասական (25 %):

Հնացած են ամրական, բացական, լալական, շուառական (արևմտհ. կենդանի է), տուարածական:

-Ակար

Այս ածանցով երկու բառ ունի Աստվածաշունչը՝ վնասակար, օգտակար:

-Ակի = ակ + ի:

Այս ածանցով կազմված են սակավաթիվ մակբայներ, ինչպես՝ կրկնակի, յանկարծակի, ուղղակի, վաղվաղակի, փութանակի: Այս 5 բառերից բնիկ է միայն կրկնակի, հնացած է վաղվաղակի, մասամբ՝ փութանակի:

-Աղակ, -Աղան, -Աղանջ, -Ամանի

Այս շորս ածանցներով կազմված է հինգ բառ՝ փակաղակ, կախա-

ղան, խառնաղանջ, խառնիճաղանջ, սառամանի, որոնցից բնիկ է միայն սառամանի:

-Ամբ

Երկու մասնիկից է կազմված՝ աճ (ամ) սեռականի մասնիկ, և Բ (գործիականի վերջավորություն): Կազմված են մակբայական նշանակույթի մեջ բառեր. իմաստութեամբ, անձամբ, անմտութեամբ, իրամբ, ողջամբ, ողջութեամբ, բոլորն էլ բնիկ են:

-Ամբի

Երկու մասնիկից է կազմված՝ ամբ և ի: Ունենք երկու բառ՝ արամբի, կանամբի. երկուսն էլ բնիկ են և ունեն ածականական նշանակություն (այլ ունեցող, կին ունեցող). հազվադեպ են գործածվում:

-Այ, -Այեցի, -Այք

Այս ածանցներով կազմված են հոովմայեցի, անուղղայ, բաղբայ (պատրվակ), սամետեայք, վերայ, վերջայք: Վերջին երեք բառը բնիկ են. արևելահայերենի համար հնացած են անուղղայ, բաղբայք, սամետեայք, իսկ հաջորդը սովորական է վրա ձևով, բոլորովին հնացած է վերջայք-ը:

-Այր

Գրաբարում ևս միջնածածկանց է. ունենք միայն մի բառ՝ ճառագայթ. ճառագեղ բայը հայտնի է բարբառներից: Ընդամենը 21 բառ:

-Ային

Այժմ շատ արգասավոր ու կենդանի ածանց է, բայց Աստվածաշնչում սահմանափակ թվով բառեր ունենք. իր համանիշ ակաճ ածանցի համեմատությամբ շատ սակավ է: 84 բառի դիմաց ային-ով կազմված է ընդամենը 15 բառ, որոնք են ազգային, ամարային, զարնանային, դաշտային, երկրային, իւրային, լեռնային, խաւարային, հարաւային, հիւսիսային, ձմերային, մեղացային, տոհմային, ցամաքային, քաղաքային:

Ինչպես նկատելի է, այս ածանցը միայն գոյականների ուղիղ ձևի հետ է կապվում. մի բառ ունենք դերանվան հետ (իւրային): Տարօրինակ կազմություն է մեղացային բառը. նախ ային ածանցը կցված է հոգնակի սեռական ձևին և կիրառված է գոյականաբար (այս օրէն իցէ վասն մեղացայնոյն (Ղեւտ, Զ 25), նշանակում է զոհ, ողջակեզ:

-Ային ածանցով կազմված բառերից բնիկ են ամարային, զարնանային, իւրային, լեռնային, ձմերային, մեղացային: Բոլորովին հնացած է միայն մեղացային, որ միայն մեկ անգամ է կիրառված:

-Այն, -Այնի, -Այնոյ

-Այն ածանցով կազմված են մակբայներ, ինչպես՝ առժամայն, զիշերայն զճանապարհայն, լեռնայն (զլեռն լեռնայն=լեռն լեռ), ձեռնունայն, ճանապարհայն, միայն, միանդամայն, յանկարծայն, նոյնժամայն, նոյնհետայն, վաղորդայն: Ածական են ընդունայն, ունայն, դերանուն է ամենայն և գոյական է ոստայն, շաղկապ է սակայն:

Այս 18 բառից բնիկ են ամենայն, զիշերային, լեռնային, ձեռնունայն, միայն, նոյնհետայն, ունայն, ընդունայն: Հնացած են ճանապարհայն, զիշերայն, զճանապարհայն, լեռնայն, յանկարծայն, որոնց մեջ միայն ածանցն է հնացած, բառի հիմքային մասը կենդանի է: Այն ածանցը մեր նոր լեզվի համար այլևս գործուն ածանց չի: Այդպիսի անարգասավոր ածանց է նաև այնի ածանցը, որը կազմված է այն և ի ածանցներից. ունենք վաղորդայնի, ամարայնի, զարնայնի, որոնք հնացած են և գործածված են իբրև գոյական և իբրև մակբայ:

-Այնոյ ածանցով ունենք ամարայնոյ (ային+ոյ), վաղորդայնոյ: Ընդամենը 23 բառ:

-Ան

Այժմ շատ կենդանի ածանց է, բայց Աստվածաշնչում սահմանափակ թվով բառեր է կազմում. հատկապես միանում է բայարմատների հետ և կազմում է գոյականներ ու ածականներ. ինչպես՝ արգելան (բանտ), արժան (զոյ. ած.), արշաւան, ընտրան, իշխան, խարան, խափան, խթան, դիպան, խտտան, կայան, կարան (կար), կոխան (տրորվածք) հանդերձան, հեծան, հրաւիրան (հրավեր), յորդան, նենգան, պատան, պատուիրան (պատգամ), պատսպարան, շրջան, ջնջան, փոխան:

Գոյականներից կազմում է նոր գոյականներ. ինչպես՝ ական (փոս), խափան (արգելք), խուժան (խաժամուժ ամբոխ), կայան (նույնն է ինչ որ կայ. ապրելու տեղ), կուսան (կույս), հանդերձան (հանդերձանք), մկան, մսան, որդան, (որդն-ից կարմիր ներկ), նակ՝ շրջան (շուրջ-ից):

Որքան էլ գոյականներից կազմված նոր բառը նույնական թվա, զանազանություն կա ածանցյալ ձևի և անաժանց բառի միջև: Ան-ը շատ բառերի հավաքական իմաստ է հաղորդում. օրինակ՝ խուժան (խա-

ժամուժ ամբոխ) կուսան (կուսանք), հանդերձան (հանդերձանք), մսան (մկանունք):

Այս 35 բառերից բնիկ են ական, արգելան, ընտրան, խարան, խըթան, հանդերձան, հեծան, մկան, ջնջան, մսան:

Հնացած են ընտրան, արշաւան, հանդերձան, հրաւիրան, դիպան, կուսան, մսան:

-Անակ

Այս ածանցով, (որ կազմված է ան+ակ ածանցներից) կան միայն՝ շրջանակ, փոխանակ, յաղբանակ:

Առաջինները գոյական են, երկրորդը՝ կապ: Պահպանել են հին նշանակությունները: Բնիկ բառ չկա:

-Անակի, -Անակա

Կազմված է նախորդ ածանցից ի-ի կցումով: Ունենք 2 բառ՝ շուրջանակի, փութանակի: Երկուսն էլ ունեն մակբայական նշանակություն (շրջանաձև, փութապես), շուրջանակաւ (շրջընթելով):

-Անդ, -Անի

-Անդ ածանցով ունենք դրանդ:

-Անի ածանցի հիմնական նշանակությունն է ունեցող այն գոյականի, որի հետ կցվում է. այսպես ունենք՝ ականի (աչք ունեցող), անուանի, բազմոտանի, երկոտանի, լեզուանի, միականի, միակողմանի, միաձեռանի, չորքոտանի: Երկու բառից կազմում է մակբայ՝ ամարանի, ձմերանի (ամուսնը, ձմուսնը), երկու բառ գոյական է՝ դողանի, հովանի. երկու բառ ածական՝ հոլանի, պիտանի. մի բառ էլ ունի հավաքական նշանակություն՝ աւագանի:

Այս 23 բառից բնիկ են ամարանի, (բազմ) ոտանի, լեզուանի, հոլանի, ձմերանի, մատանի, միականի, միակողմանի, միաձեռանի: Ոչ բնիկ են համարված աւագանի և պիտանի: Ինչպես երևում է այս մասնիկը հին է և փոխառյալ բառերի վրա չկա. այս չի՞ ապացուցում, որ աւագանի և պիտանի նույնպես բնիկ են:

-Անն, -Անորդ, -Անոց, -Անոցիկ, -Անց

Այս հինգ ածանցներից ամենից շատ բառեր կան անոց ածանցով, որ կազմված է ան, ոց ածանցներից. կազմում է տեղ ցույց տվող բառեր. ինչպես՝ բողանոց, դիտանոց, երիտասարդանոց, զոհանոց,

ժողովրդանոց, խնկանոց, կուսանոց, համբարանոց, հովանոց, մեղուանոց, նուիրանոց, պոռնկանոց, սպանդանոց, վաճառանոց, կողմանոց, որ նշանակում է թևաչենք, կարող է կազմված լինել կողման և ոց ածանցով, անթանոցիկ (մի անութ օրան), և շոնշանն (ժեռ ծաղկազարդին (ծառազարդար) եկեղեցում երեխաների ձեռքը տրվող ձայնահան սարք):

Այս տասնյոթ բառերից բնիկ են կողմանոց, հովանոց, մեղուանոց, նաև սպանդանոց: Չեն կիրառվում անթանոցիկ, համբարանոց, նուիրանոց, ժողովրդանոց:

Անորդ-ով կազմված կա երկու բառ՝ պահանորդ, փոխանորդ, իսկ անց-ով կա միայն՝ միմեանց (միմի-անց):

-Անֆ

-Անֆ մասնիկով բայարմատներից կազմվում են վերացական և այլ նշանակություն ունեցող գոյականներ, ըստ բառական մասի. ինչպես՝ աղաշանք, ամօթանք, անարգանք, աշատանք, ապրանք, առականք, արգելանք, արհամարհանք, արշաւանք, բամբասանք, բանդագուշանք, բաջաղանք, բասրանք, բժժանք, գարշանք, դեզերանք, զարդարանք, զարհուրանք, զբաղանք, զբօսանք, ընտրանք, լլկանք, խաբանք, խայտառականք, խոշտանգանք, խուսափանք, խտրանք, խրախճանք, ծանականք, ծփանք, կալանք, կախարդանք, կապանք, կասկածանք, կատականք, կարօտանք, կեղեւանք, կղկղանք, կշտամբանք, կորանք, կուփանք, հալածանք, հայհոյանք, հանդերձանք, հոսանք, հրապուրանք, ձաղանք, ձգանք, մարթանք (հնարագիտություն), մեծարանք, յորձանք, նախատանք, նշմարանք, ողորանք, ոտնկապանք, շարշարանք, պաղատանք, պաճուճանք, պաճուճպատանք, պատկառանք, պատճառանք, պատրանք, պարծանք, պարսուանք, ջախջախանք, սահանք, սխալանք, վարանք, վարձանք, տանջանք, տառապանք, տարակուսանք, տեղանք, փականք, փշրանք, փորձանք, փրկանք, քանցանք, քերանք, նաև՝ մարեմանք:

Այս 80 բառերից բնիկ են առականք, արգելանք, բամբասանք, գարշանք, զարդարանք, ընտրանք, լլկանք, խայտառականք, կալանք, կատականք, հանդերձանք, ձաղանք, մեծարանք, ողորանք, քերանք (17%):

Հնացած են բաջաղանք, խաբանք, կորանք (ամոթահար մնալը), մարթանք, քանցանք:

-Առակ

Այս ածանցով ունենք միայն մեկ բառ՝ հակառակ:

-Առօտ

Այս ածանցը Աճառյանը համարում է բառ, բայց կարծում ենք, որ կազմված է առ արմատից և օտ ածանցից. համեմատելով կարօտ: Առօտ ածանցով ունենք երկու բառ կարևոտօտ, համառօտ: Աճառյանի հիմնական փաստարկը այն է, որ համ-ը նախամասնիկ է և ոչ թե բառ, ուստի առօտ պետք է որ արմատական բառ լինի: Սակայն համ-ը ոչ միայն նախամասնիկ է, այլև դեռևս V դարում գիտակցվել է իբրև բառ, որ նշանակում է միասնական, համեմատելի միահամ:

-Ասին

Կազմված է միայն միասին բառը: Սին մասը սուս(անել), արմատի ձայնադարձային ձևն է, որ V դարում արդեն մթնած պետք է լիներ կամ բարբառային ձև էր, որ արդեն մասնիկի արժեք էր ստացել:

Աստան,-Ստան

Տեղ արտահայտող ածանց է, ինչպես այգեստան, անդաստան, բուրաստան, կուսաստան, հեռաստան, մուրտաստան: Ունենք նաև գերդաստան, որտեղ գերդ շատ հին արմատ է և արդեն V դարում մըթ-նած էր: Մի բառ էլ կա ստան-ով՝ արմատական: Այս 12 բառից բնիկ են այգեստան, անդաստան, գերդաստան, հեռաստան, միասին: Ոչ մի հնացած բառ չունենք:

-Ասուն տե՛ս-Սուն

-Աստ,-Ատ

Աստ ածանցով ունենք՝ զգաստ: Ատ ածանցը, որ հատ արմատից է առաջացել, այժմ կենդանի և արզասավոր մասնիկ է: Աստվածաշնչում ատ-ով սահմանափակ բառեր կան. ինչպես՝ ականջատ, արմատ, բացատ, լեզուատ, խորխորատ, խրամատ, կառափնատ, կրճատ, հաստատ, հեղեղատ, հրատ, պատատ, փայտատ:

Այս 13 բառից հատ արմատի իմաստը չեն պահպանում հաստատ և պատատ բառերի մասնիկները, իսկ հրատ, որ խարույկ է նշանակում, նույնպես ըմբռնելի է՝ այսինքն հրից կտրվածը:

Այս բառերից բնիկ են ականջատ, արմատ, բացատ, լեզուատ, հաստատ, հեղեղատ, հրատ: Չկա ոչ մի անդործածական բառ:

-Ատակն,-Ատանք,-Ատիկ,

Յուրաքանչյուրից ունենք միայն մեկական բառ՝ փայլատակն, պատատանք, պարսատիկ: Անկասկած առ-ը նախորդ ածանցն է, իսկ ակն, աչք բառն է, ինչպես որ կազմված է փայլակն, փայլատակունք: Պատատանք բառը կազմված է առ-ան-ք ածանցներից:

-Ար,-Արակ

Ար-ը առնեմ բայի արմատն է, որով կազմված են արդար, աւազամեծար, դալար, մոլար(խարող), մեծամեծար, նախամեծար, պատահար, փապար, փողար, տափարակ:

Այս 13 բառից բնիկ են աւազամեծար, դալար, մեծամեծար, մոլար, փայլատակն:

Ոչ մի հնացած բառ չկա:

-Արան

Այս կենդանի ածանցով նույնպես սահմանափակ բառեր կան Աստվածաշնչում. օրինակ՝ աւետարան, գանձարան, զոհարան, խառնարան, խնկարան, կերպարան, կտակարան, կրակարան, ճրագարան, յիշատակարան, նուագարան, սաղմոսարան:

12 բառից ոչ մեկը բնիկ չէ, սակայն և ոչ մի հնացած բառ չկա:

-Արէն -երէն

Ինչպես այժմ, այնպես էլ Աստվածաշնչում -արէն, -երէն ածանցները ազգի անուններից կազմում են տվյալ ազգի լեզվին վերաբերող մակբայներ. օրինակ՝ ասորերէն, դաղմատերէն, եբրայեցերէն, լիկայոնարէն, հայերէն, հրէաերէն, հունարէն: Ունենք նաև մի գոյական՝ փոխարէն:

8 բառից ոչ մեկը բնիկ չէ և ոչ մի հնացած բառ չկա:

-Արիմ,-Արիչ

Այս ածանցներով ունենք երկու բառ. հաւատարիմ, կափարիչ:

-Աց,-Ացք

-Աց ածանցը առաջացել է ա խոնարհման բայերի անցյալ կատարյալի հիմքից. խաղամ-խաղաց և արտահայտում է հիմնական նըշանակությունը ող ածանցի. ինչպես՝ երկայնակեաց, խառնագնաց, դիմակաց, կանխասաց, զաղտագնաց, խնկաղաց, կովաղիաց (կով

ծծող), գաղտնակեաց, ձիաստաց, սաղմոսասաց, սակաակեաց, ստըն-
դիաց(ծիծ ծծող), քաղցրահայաց: Երեք բառի մեջ ազ սեռականի վեր-
ջավորութիւնն է. գիշերաց(գիշերով), դիմաց(դիմը), հասարակաց(հա-
վասար, ընդհանուր), ընթաց(ք): Այս տասնութ բառերից բնիկ են եր-
կարակեաց, դաղտագնաց, քաղցրահայաց, կովադիաց, միաստաց,
ստնդիաց, գիշերաց, ընթաց(ք):

Հնացած են կովադիաց, ստնդիաց, գիշերաց (որ դարձել է գիշե-
րանց), հնարանական նշանակութիւն ունի խառնագնաց(գործածել են
Պատկանյան, Զոհրապ և այլք):

-Ացի,-ացիկ

Այս ածանցով կազմվում են հատուկ տեղանուններից մի տեղացի
ցույց տվող բառեր: Օրինակ՝ աղամացի, աղոնացի, աղրամինտացի,
աղովտացի, աթենացի, ակկարոնացի, աղեքսանդրացի, ամաթացի,
ամաղեկացի, ամանացի, ամոնացի, ամոմբհացի, ամուրհացի, անա-
թացի, անաթովթացի, անամիացի, ասիացի, ասիտացի, ասկաղոնա-
ցի, ասովթացի, ասթարովթացի, արարացի, արաբովթացի, արարացի,
արաբացի, արբելացի, արեմաթացի, արիսպագացի, արովրացի, արուա-
կացի, արսենացի, արուբացի, բաբելացի, բասանացի, բեթանացի, բե-
թելացի, բեթղահամացի, բեթսամիւսացի, բերիացի, բերովթացի, բեք-
րովթացի, բիբլացի, բիթանացի, բոսորացի, գարասացի, գաբաւոնացի,
գազարացի, գազացի, գալիլեացի, գաղատացի, գալացի, գեղեբացի,
գեթացի, գեսերացի, գերարացի, գեգեսացի, գոմորացի, գովթնացի, գա-
մասկացի, գեղանացի, դիդանացի, դիոսկուրացի, եբուսացի, եգիպտա-
ցի, եթովպացի, ելամացի, ելիմացի, եկբատանացի, եսերոնացի, երու-
սաղեմացի, երբացի, եփեսացի, եփրաթացի, զարուղոնացի, զարացի,
դիփացի, զմիւռնացի, թամանացի, թարսացի, Թեղրացի թեմնացի,
թեսաղոնիկեցի, իլամացի, իսմայելացի իսրայելացի, իտալացի, իտու-
րացի, լադոբարացի, լակոնացի(երեւելի լակոնացի-թափանցիկ կտոր),
լաւոդիկեցի, լիբեացի, լիդացի, լիկիացի, լիտրացի, լիւրիկացի, խեւա-
ցի, ծուրացի, կահաթացի, կարմելացի, կելովրացի, կենեղացի, կէիլա-
ցի, կինացի, կիպրացի, կիտացի, կիւրենացի, կորացի, կորխացի,
կորնթացի, կրետացի, հագարացի, հոաղուացի, հոաղացի, հոդացի,
դեւտացի, մաղդաղենացի, մաղիանացի, մաթանացի, մակեդոնացի,
մայելացի, մաովնացի, մատրանացի, մեփացի, միսաղացի, մովաբա-
ցի, մովլաթացի, յամինացի, յամնեացի, յեբուսացի, յեզրայելացի, յե-
թերացի, յեմինացի, յոպպէացի, նաբաբացի, նաբեղոնացի, նաբիմա-

ցի, նագեբացի, նաթանայացի, նաթանացի, նարանիմացի, նարեսացի,
նեստիաթացի, նեփթարիմացի, նեփլաթացի, նինուէացի, շամրտացի,
ոգոգոմացի, ողիմպիացի, ովնացի, ովսացի, ուրնթացի, պատրոսիմա-
ցի, պատրոսոնիմացի, պոնտացի, պտղոմէացի, ռափիմացի, ռոդացի,
ռովմացի, ռուդացի, սալարոնացի(սաղարոնացի), սամարացի, սարա-
թացի, սարափթացի, սարդիացի, սերոյիմացի, սելեսկացի, սելիիմացի,
սեփելացի, սիլոնացի, սիկեմացի, սկարիովտացի, սկիւթացի, սոդոմա-
ցի, սոմնացի, սովմացի, սովսացի, սպանիացի, սպարտացի(սպարտիա-
ցի), տարսացի, տարսոնացի, տիտանացի, տիրացի, տրաքոնացի,
տրոգլոդացի, փաղովնացի, փաղաթոնացի, փելլատացի, փելոնացի, փե-
րեղացի, փղշտացի, փտոզմեացի, քաղդեացի, քանանացի, քասղոնիմա-
ցի, քափթորիմացի, քեթացի, քիթիմացի, քլուացի, քոռացի, քուրա-
թացի*: Ընդամենը 200 բառ:

* -Ացի ածանցով մի բանի բառեր կազմված են հասարակ անուններից. ինչպե՛ս՝
առնացի, բլրացի, դրացի, իրաւացի, կանացի, մտացի, նշանացի, քաղաքացի: Այս 8
բառից բնիկ են առնացի, բլրացի, դրացի, իրաւացի, կանացի, մտացի:

Մի բառ էլ ունենք—ացիկ ածանցով, ինչպե՛ս՝ մուրացիկ:

-Ացու

Այս ածանցով ունենք հինգ բառ՝ ապականացու (փշացող), հեծա-
նացու (դերանացու), մահացու, մահկանացու, պիտանացու: Հինգ բա-
ռից բնիկ են միայն մահացու, մանկանացու, եթէ հեծան-ը հեծանիմ
րայից չէ:

-Աւ

-Աւ ածանցը եղակի գործիականի վերջավորութիւնն է, որ մի շարք
բառերի վերջում վերածվել է մակբայական մասնիկի. օրինակ՝ աղագաւ,
բարեաւ, բնաւ, դժուարաւ, դիւրաւ, ժամանակաւ, իրաւ, կամաւ, կան-
խաւ, կարգաւ, կենդանեաւ, հավաստեաւ, հարկաւ, հրապարակաւ, մե-
ծաւ, շուրջանակաւ, պատճառաւ, ստիպաւ, տաղնապաւ, տակաւ, փո-
խանակաւ: Այս 21 բառից բնիկ են իրաւ, կենդանեաւ, մեծաւ, ստի-
պաւ:

Այժմ նույնութիւն մը կիրառվում են բնաւ, դիւրաւ, իրաւ, կանխաւ,
հարկաւ, հրապարակաւ, փոփոխված են բարեաւ (բարև), դժուարաւ
(դժվարութիւն), ժամանակաւ (ժամանակով), կամաւ (կամքով), կար-
գաւ (կարգով), պատճառաւ (պատճառով), տաղնապաւ (տաղնապով):
Հնացել են աղագաւ (պատճառով), կենդանեաւ (կենդանի կեն-

զանի), շուրջանակաւ (շրջըջելով (սրի մասին), ստիպաւ (շտապան-
քով):

-Աւէա, -աւէր (ւէտ, ւէր)

Ընդամենը ունենք այգաւէտ, գինաւէտ, հացաւէտ, փեսաւէր (հար-
սանիքի քափորը կամ փեսային առաջնորդող անձը): Այս 4 բառից բնիկ
են՝ այգաւէտ, գինաւէտ:

-Աւի, -Աուխտ

-Աւի ածանցը կազմում է մակբայ. ունենք ընդամենը երկու բառ՝
յանիբաւի, իրաւի (հրկուսն էլ բնիկ): Իսկ աուխտ-ով ունենք մի բառ՝
ճաճանշաուխտ:

-Աւին

Կա միայն տակաւին: Ընդամենը 43 բառ:

-Աուր, -ուր

Այս արդասավոր և կենդանի ածանցով ունենք մեծ թվով բառեր.
նշանակութիւնները՝ ունեցող, բերող և զորձողութիւն կատարող: Այս-
պես՝ ունենք՝ ահար, աղեղնաւոր, ամասուր, անցաւոր, առաջաւոր,
ասպատակաւոր, ասպարաւոր, արատաւոր, արժանաւոր, արուեստաւոր,
աւետաւոր, բազմաւոր, բամբասաւոր, բարաւոր, բեռնաւոր, բիւրաւոր,
բնակաւոր, բռնաւոր, գանձաւոր, գեղմնաւոր, գիսաւոր, գլխաւոր, գոր-
ծաւոր, դաշնաւոր, դատաւոր, եղեռնաւոր, եղջերաւոր, երախտաւոր,
երաշխաւոր երեսնաւոր, երկնաւոր, երկրաւոր, զառաջաւոր, զգուշա-
ւոր, զրահաւոր, զոհաւոր, զօրաւոր, թագաւոր, թեւաւոր, թունաւոր,
ժառանգաւոր, իջաւոր, լամբաւոր, լուսաւոր, կալանաւոր, կանգնաւոր,
կարեւոր, կեղծաւոր, կնդակաւոր, կրօնաւոր, հազարաւոր, հարիւրաւոր,
հարկաւոր, հեռաւոր, հնարաւոր, հնձանաւոր, հոգեւոր, հովանաւոր,
ճամկաւոր, մարմնաւոր, մաքսաւոր, մերձաւոր, մեղաւոր, միաւոր,
մկնդաւոր, մտաւոր, մշտնջենաւոր, մօտաւոր, յանցաւոր, յերկարաւոր,
յուզարկաւոր, նախանձաւոր, նենգաւոր, նիզակաւոր, նշանաւոր, նպաս-
տաւոր, նպարակաւոր, շաքաթաւոր, շնչաւոր, շնորհաւոր, ոտանաւոր,
ուխտաւոր, ուղեւոր, ուղեկանաւոր, չքաւոր, պաշտօնաւոր, պատուաւոր,
պատուարաւոր, պարաւոր, պարսաւոր, պարսպաւոր, պճղնաւոր, պսա-
կաւոր, սակաւաւոր, սաղաւարտաւոր, սզաւոր, սեղանաւոր, սունաւոր,
սուսերաւոր, սպասաւոր, վաթնաւոր, վաճանաւոր, վաստակաւոր, վար-
ձաւոր, վարսաւոր, վերջաւոր, վիրաւոր, տաշտաւոր, տապարաւոր, տա-
րեւոր, տիգաւոր, փառաւոր, փորձանաւոր, օրինաւոր:

Այս 114 բառից բնիկ են ամասուր, առաջաւոր, բամբասաւոր, բեռ-
նաւոր, գեղմնաւոր, գործաւոր, երեսնաւոր, զառաջաւոր, լուսաւոր, կալա-
նաւոր, կրօնաւոր, հարիւրաւոր, հեռաւոր, հոգեւոր, հովանաւոր, մարմնա-
ւոր, մեղաւոր, միաւոր, մտաւոր, յերկարաւոր, յուզարկաւոր, շնչաւոր, ոտա-
նաւոր, ուղեւոր, չքաւոր, պարաւոր, վաթնաւոր, տարեւոր:

Հնացած են բնակաւոր, զոհաւոր (զոհելի), լամբաւոր, (օղակա-
վոր), ճամկաւոր (պճնաղարդ), նպարակաւոր (նպարեղենով բարձված),
շաքաթաւոր (շաքաթ օրվա պաշտամունք կատարող), պատուարաւոր
(տախտակամած ունեցող):

-Աւթ,-Աւիւն,-Աւս,-Աւուստ (կազմված են՝ աւ-ի, աւ-ին,
աւ-ս, աւ-ուստ առանձին մասնիկներից:

Ունենք արմատաբի, արտաբին, արտաքուստ, արտաքս: Բոլոր 4
բառերն էլ բնիկ են, իսկ մեկը հնացած (արտաքս):

-Բ

Բ-ով ունենք արդեամբ, միաբանութեամբ, մտադրութեամբ, մտա-
դիրութեամբ, յայտյանդիմանութեամբ, յօժարութեամբ, պատրաստու-
թեամբ, պարկեշտութեամբ, սրբութեամբ, փառաւորութեամբ, քաղց-
րութեամբ:

-Գ

Այս մասնիկով միայն մի բառ ունենք՝ սպանդ:

-Գեհ,-Գի,-Գին,-Եագ

Հրդեհ, անջրդի, անջրդին, բացօթեագ. չորս բառն էլ բնիկ են: Քսան
բառ:

-Եալ

Քրաբարի անցյալ դերբայի ածանցն է, բայց այս ածանցով շատ
բառեր են կազմված, որոնք երբեմն բայական ուրիշ ձև չունեն, կամ
գործածվում են իբրև գոյական, ածական և այլ խոսքի մաս. այսպիս
ունենք՝ արդեալ (տաշված), այրեցեալ(այրված), առաքեալ, առկայ-
ծեալ (մարելու՝ կուրանալու մոտ եղած), արհամարհեալ, բարձեալ,
(Աստծու անվանումներից մեկը), բարձրացեալ, բողացեալ, բերկրեալ,
բոտոտակերեալ, բորոտեալ, դարձեալ, դրօշեալ, երիթամածեալ (սեղմ-

ված պաշարված), ելեալ, զինեալ, դատուցեալ, զոհեալ (մատաղը), ընկեցեալ, ընկիճեալ (խոշընոտ), ընտրեալ (ընտիր), թերաքամեալ (կիսատ դուրս քաշված. թրի մասին), թանձրացեալ, թշուառացեալ, ժապաւինեալ, իգացեալ (իգացող), խաչելեալ (Քրիստոսը), խաչեցեալ, խմեալ (խմորված), խմորեալ, խոկեալ (հավաքված), ծիրեալ, ծնեալ, կանդաղեալ (հաստատված), կապեալ, կապտեալ, կարծեցեալ, կարծեալ, (անվանի), կատարեալ, կարթահարեալ, կարօտեալ, կթուցեալ, կոչեցեալ, կրճատեալ, հանգուցեալ, հանեալ, հանդերձեալ, հատեալ, հոտեալ (հոտած), հաւատացեալ, հեղձացեալ, հեծեալ, հիւսեալ, հիրացեալ (միայն այս ձևով և այստեղ), հոլանեալ, հրացեալ, մալեալ (կրտած), մահապարտեալ, մայրակոփեալ, մեղրեալ (մեղրով զանգված. միայն այս ձևով և այստեղ), մենազինեալ (միայնակ սպառազին. միայն այսպէս և այստեղ), մեռեալ (մեռել), մերժեալ, մրեալ, յապաւեալ, յորսայսեալ (Բիկնարկ), ննջեցեալ, նքթեալ (քաղցից նվաղած. մեր խոսվածքում նրխտը կրտորեկ), շքթեալ (լիտի), ջրգողեալ (ջրգողութեամբ հիւմանդ), սինլըքեալ, տառապեալ, ցեցակերեալ, փառաւորեալ, փորանկեալ, օրհնեալ, օծեալ:

Մրանց մեջ գուցե մի երկու-երեքը դեռևս բառական մակարդակի շնն բարձրացել, բայց մեծ մասամբ առանձին բառեր են, ինչպէս մեր գրական լեզվում-ած մասնիկով կազմված բառերը:

Այս 78 բառից բնիկ են՝ աղղեալ, այրեցեալ, անկայծեալ, բարձրեալ, բոկացեալ, դարձեալ, ելեալ, դատուցեալ, ընկեցեալ, ընտրեալ, թանձրացեալ, թերաքամեալ, իգացեալ, խաչեցեալ, խաչելեալ, ծնեալ, կարթահարեալ, կոչեցեալ, հանդերձեալ, հոտեալ, հեծեալ, հոլանեալ, հրացեալ, մահապարտեալ, մալեալ, մեղրեալ, մեռեալ, մրեալ, ջրգողեալ, օծեալ (մոտ 39%):

Այս ածանցով կազմված բառերը երկու տեսակ հնացում են տվել.-եալ մասնիկը իբրև զբարարին հատուկ մասնիկ մասամբ հնացած է, չնայած այդ մասնիկով բավականաչափ բառեր ենք վերջրեւ զբարարից: Մյուս կողմից հնացել են այն բառերը, որոնց արմատական մասը հնացել է, մինչև իսկ դրանք զբարարում էլ հազվադուրս կիրառություն ունեն:

Ամբողջ ցանկի գործածական բառերն են՝ այրեցեալ, առաքեալ, անկայծեալ, բարձրեալ, դարձեալ, ընտրեալ, կապեալ, կարծեցեալ, կատարեալ, կարօտեալ, կոչեցեալ, հանգուցեալ, հանդերձեալ, հաւատացեալ, հեծեալ, մեռեալ, ննջեցեալ, տառապեալ, օրհնեալ, օծեալ:

-եակ,-եամբ,-եամն

Եակ ածանցով սահմանափակ բառեր են կազմված. երկուորեակ, եօթնեակ, ինքնեակ (խրարու, ինքնարույս բերք), հինգամեակ, մաշկեակ (մուշտակ): Բնիկ չէ միայն մաշկեակը, որ և հնացած է:

Իսկ Եամբ-ով ունենք միայն արդեամբ, որտեղ Եամբ արդիւն բառի գործիականի մասնիկն է: Բառը բնիկ է և իբրև մակբայ նշանակում է իրօք, փաստորեն. այդտեղ մասնիկը միայն բ-ն է:

Հաջորդ մասնիկով կազմված է միայն այժեամն, որ բնիկ բառ է. իսկ Ե-ն առաջացել է այժի բառի վերջի ի-ից (7 բառ):

-եայ,-եայք

-Եայ ածանցով գոյականներից կազմվում են ածականներ, որոնք ցույց են տալիս տվյալ նյութից կազմված լինելու նշանակությունը. ինչպէս՝ աղամանդեայ, այծեայ, անագեայ, բեհեղեայ, գայլախաղեայ, եղենեայ, եղեգնեայ, եղենափայտեայ, եղջերեայ, երկայնօրեայ, ծաղկեայ, կապարեայ, կաւեայ, կեփաղեայ, կճեայ, համհօրեայ, մազաղթեայ, մաշկեայ, մարմարեայ, ոսպնեայ, շուանեայ, պրտուեայ, վանեայ (բյուրեղից), փայտեայ, փղոսկրեայ:

Այս ածանցը դյուրութեամբ կցվում է ժամանակ ցույց տվող բառերին և կազմում է ածականներ հատկացուցչային նշանակությամբ. օրինակ՝ ամենօրեայ, ամսօրեայ, առօրեայ, բազումժամանակեայ, բազմամեայ, բազմօրեայ, երեկօրեայ, երեքտասնամեայ, երեքօրեայ, երկօրեայ, երկտասնամեայ, եօթնտասնամեայ, եօթնօրեայ, իննամեայ, իննսնամեայ, հանապազօրեայ, հնգօրեայ, մետասնօրեայ, մէջօրեայ, միջօրեայ, ութօրեայ, չորեքօրեայ, սակաւժամանակեայ, տասնամեայ, ցերեկօրեայ, քառասնամեայ:

Հատկացուցիչի նշանակությամբ ածականներ է կազմում նաև տեղի բառերից. ծովափնեայ, ծովեզերեայ, արեւելեայ, արեւմտեայ:

Մի երկու գոյականի հետ բաղադրվելով՝ նշանակում է դրանից ունեցող, կրող, այսինքն ստանում է-աւտ ածանցի նշանակություն՝ օրինակ՝ զմբեթեայ, աշտարակեայ, անձնեայ:

Նաև արտահայտում է ածականի նշանակություն. ճախարակեայ (ճախարակված), շամշեայ (շամշեղեն), մայրակոփեայ (մայրի ծառից կտփված), համհօրեայ (միևնույն հոր), կապուտակեայ (կապույտ), տասնկանգնեայ, բացեայ (հեռու):

Մի քանի բառեր գործողի իմաստ են արտահայտում. օրինակ՝ գործունեայ, գործօնեայ, պաշտօնեայ (պաշտամունք կատարող), փա-

խըստեայ (փախչող), քրիստոնեայ (Քրիստոսի ուսմունքին հետևող), քաղղեայ (գուշակող):

Մի հրկու բառ էլ ունենք գոյականական նշանակությամբ. արուարձանեայ (արուարձան), անոտնեայ (պատվանդան), սկիսրեայ (կեսարայր):

Եվ վերջապես մի բառ էլ ունենք իբրև եղանակավորիչ՝ գոնեայ (գեթ), իսկ-եայլ-ով ունենք՝ առաջեայք, հրէաստանեայք, ոտնջեռեայք:

Այս 76 բառից բնիկ են՝ այծեայ, անձնեայ, ասուեայ, գայլախազեայ, եղենափայտեայ, (փղ)ոսկրեայ, ամենօրեայ, ամսօրեայ, անձնեայ, առօրեայ, բազմամեայ, բազմօրեայ, երեկորեայ, երեքտասնամեայ, երեքօրեայ, երկայնօրեայ, երկօրեայ, եօթնևտասնամեայ, երկոտասնամեայ, եօթնօրեայ, իննսնամեայ, համհօրեայ, հնգօրեայ, մետասնօրեայ, միջօրեայ, ոտնձեռեայք, ութօրեայ, չորեքօրեայ, տասնամեայ, Յերեկօրեայ, արեւելեայ, արեւմտեայ, մայրակոփեայ, բացեայ, տաւնկանգնեայ, գործունեայ, գործօնեայ, հաստեայ, առաջեայք (50%):

Անդործածական են՝ ոսպնեայ, շուանեայ, պրտուեայ, վանեայ, երեկորեայ, եօթնևտասնամեայ, արեւելեայ, արեւմտեայ, դմբեթեայ, աշտարակեայ, ճախարակեայ, շամշեայ, մայրակոփեայ, տասնկանգնեայ, բացեայ, գործօնեայ, փախստեայ, արուարձանեայ, հաստեայ, առաջեայք, ոտնջեռեայք:

-եայն

Այս ածանցով միայն մի բնիկ բառ ունենք՝ լուելեայն:

-եան (եանց, եանք)

Այս ածանցը, որ ներքին թերման բառերի սեռական ձևից է առաջացել, այժմ չափազանց կենդանի ածանց է աղգանդուն կազմելու համար, իսկ գրաբարում նկատվում է եայ ածանցին համանիշ ամ բառին կից. այսպես՝ Աստվածաշնչում ունենք՝ հարիւրամեան, յիսնամեան, ուլամեան (ութեմեան), հինգկանգնեան, հինգամեան, երեմեան, եօթնամեան, իննսնամեան, երկեմեան, վաթսնամեան, քառասնամեան, քսանամեան, երկոտասնամեան, քսանեւհինգամեան:

Ժամանակ արտահայտող բառերից ունենք նաև՝ յաւիտեան, վաղունան (վաղիւ-ից), հանապազորդեան:

Կցվում է անձնանունների և տեղանունների հետ-եան, -եանք ձևովերով. այսպես՝ ունենք Աբրահամեան, Ապօղոսեան, Աբիսողոմեան, Ազալեանց, Ազարեան, Ալփեան, Զարայեան, Եպիկուրեան, Զաքա-

րեանք, Դեոսամեանց, Իսրայելեան, Կենեղեան, Կեփայեան, Յակորեան, Մովսիսեան, Մուշեանց, Յեսովեան, Յովասափեանց, Յովսեղեկեան, Յուզայեան, Նետոփթեան, Ներոփաթեանց, Շիմոնեան, Շմաունեան, Պօղոսեան, Սաբանեան, Զառիկեանց, Սեբաստեանց, Սելուկեան, Սեպտովրեան, Սիկարեան, Սիմօնեան, Փարեսեան, Փենէսեանց, Փրուրեան, Քաշեանց, Քրիստոսեան:

Թվականների հետ ունենք երեքեան (սա պետք է լիներ երեքերեան), չորեքտասնեան, նաև՝ տասնիեղկեան (տասնիեղկանի), չորեքդարմեան (չորս դրամ ունեցող), երեքսրահեան, երկբերանեան, երեքբաղաբեան (երեք քաղաքից կազմված. տրիպոլի), հինգկանգնեան, երկդարմեան, չորեքկանգնեան, երեքկարգեան:

Վերջապես ունենք ուղկեան (ուղուկի չափով. ցուցամատի և բուլթի բացվածքը), սիկարեան (սրիկա-սիկարիուս լատին. բառից), նարդեան (նարդոսի):

Ունենք մի բառ ևս, որտեղ եան հոգնակիի մասնիկ է. խոզեան և մի բառ էլ գոյական՝ կազմված բայարմատից՝ պատեան:

Բոլոր թվականներով կազմված բառերը բնիկ են՝ բնիկ շեն յաւիտեան, վաղունան, հանապազորդեան, քաշեան, խոզեան, պատեան, և օտար անուններով կազմվածները, եպիկուրեան, ստոյիկեան, սերաստեան և այլն:

Ժամանակային բառերից այժմ գործածական է միայն յաւիտեան: Մնացածներից կենդանի են եպիկուրեան, ստոյիկեան, սերաստեան, պատեան, յակորեան, Պօղոսեան, Իսրայելեան:

Խորթ շեն հնչում երեքիեղկեան, երեքսրահեան: (72 բառ):

-եար, -եար

Այս մասնիկներով, որ ապագա եր, ներ հոգնակիի վերջավորություններն են, Աստվածաշնչում երկու բառ ունենք կազմված ճիշտ նման անի և եան մասնիկներին, որոնք հոգնակիության ու հավաքականության իմաստն են արտահայտում. այսպես՝ ունենք՝ բարձկնեար, որեար (բարձիկներ, մարդիկ, ժողովուրդ):

Երկու ամբողջական ձևերն էլ հնացած են և երկուսն էլ բնիկ չեն համարվում, շնայած բարձ-ը պետք է որ բնիկ լինի:

-եաց, -եացք

Ն խոնարհման ց-ոյական բայերի հիմքային մասն է (գրեմ-գրեցի, գր-եաց), որ սահմանափակ թվով բառեր է կազմում հիմնականում

գործող անվան նշանակութիամբ. այսպես՝ Աստվածաշնչում ունենք ամբարտաւանատեաց, ամենահայեաց (ամենատես), աստուածատեաց, գործատեաց, իւղեփեաց, խաղաղակեաց, համարձակահայեաց, հացեփեաց, հրայրեաց, շարատեաց, յոտնկելեաց, քաղցրահայեաց, աքեացք (ոտք):

Երկու բառ էլ ածականի նշանակութուն են ստանում. կիսեփեաց (կիսեփ), և հրայրեաց (հրով այրված), որ նաև գոյական է՝ հրդեհ նշանակութիամբ:

Այս 15 բառից բնիկ են (աստուած)ատեաց, (ամբարտաւան)ատեաց, (իւղ) եփեաց, (կիս) եփեաց, հրայրեաց:

Հնացած են իւղեփեաց (յուղագործ), կիսեփեաց (կիսեփ), հրայրեաց, աքեացք (ոտք):

-ելի,-ելին,-ել,-ելն

-ելի մասնիկով ունենք միայն սքանչելի, երդմնելի. -ելին մասնիկով ունենք ջնդամենը երեք բառ. եօթնեկին, եօթնասնեկին, հնգեկին: -ելին-ը երկու ածանցից է կազմված՝ եակ-ին, որ ունի պատիկ, անգամ բառերի նշանակութունը:

Երկու բառ ունենք -ելն մասնիկով՝ երբեմն, ուրեմն, առաջինը մակբայ է (կար ժամանակ, մի ժամանակ), իսկ երկրորդը շաղկապ է (ուստի):

Համեմատարար ավելի բառեր են կազմված-ել մասնիկով, որ ածականներ է կազմում, բացի մեկ բառից. այսպես՝ ունենք ահեղ, զօրեղ, հանճարեղ, հզօրեղ, շքեղ:

Մի բառ էլ գոյական է՝ տաշեղ:

Այս տասներեք բառից բնիկ են եօթնեկին, եօթնասնեկին, ուրեմն, իսկ հնացած են եօթնեկին, եօթնասնեկին, հզօրեղ, որի համանիշ զրօեղ-ը այն դուրս է մղել լեզվից:

-ելէն,-ելի

-ելէն մասնիկը այժմ կենդանի է և արդասավոր. Աստվածաշնչում կցվելով գոյականներին կազմում է ածականներ, որոնք արտահայտում են տվյալ նյութից կազմված լինելու նշանակութուն. օրինակ՝ ապակեղէն (ապակեայ, ապակուց), արծաթեղէն (արծաթից, արծաթեայ), աւաղեղէն, բանջարեղէն, բհհեղէն, բոցեղէն (բոց արձակող, բոց ունեցող, բոցեղեն սուր), գարեղէն (գարեղէն ալիւր), երկաթեղէն, խեցեղէն, կաւեղէն, կտաւեղէն, հողեղէն, ոսկեղէն, մազեղէն, մաշկեղէն,

ղէն, մարդկեղէն (մարդկային. մարդկեղէն մարմին), մարմնեղէն, շամշեղէն (շամշեղէն կտապ), փայտեղէն:

Մի բառ միայն գոյականաբար է գործածված. աղբեղէն (փառք նորա աղբեղէնք են. Ա Մակ. Բ 62): Մի բառի մեջ էլ-այլին ածանցի նշանակութիամբ է կիրառված՝ աստուածեղէն:

-ելի անշուշտ կազմված է եղ և ի ածանցներից. սրանով ունենք երկու բառ՝ աղտեղի, մսեղի:

Երկու բառն էլ բնիկ են, միայն մսեղի սովորական չէ:

Այս 23 բառից բնիկ են արծաթեղէն, աւաղեղէն, բոցեղէն, գարեղէն, հողեղէն, մարդկեղէն, մարմնեղէն:

Այս ածանցով և ոչ մեկ հատ հնացած բառ չկա:

-ենի,-եստ,-եր,-երէն

-ենի մասնիկը մեծ մասամբ կցվում է պտուղներ, ընդեղեններ, նյութեր նշանակող գոյականներին, որպեսզի արտահայտի այդ պտուղներ՝ նյութեր արտադրող բույսերի անունները. օրինակ՝ արմաւենի, զղմենի, զմռենի, թզենի, թթենի, ժանտաթզենի, խնկենի, ձիթենի, մուլաթզենի, մորենի, նոնենի, սեխենի, վարդենի:

Խոզենի նշանակում է խոզի միս, իսկ ուլենի՝ ուլի մորթի:

Հայրենի բառը ածական է՝ հայրական նշանակութիամբ, վայրենի ունի վայրենական բառի իմաստը, իսկ լրբենի ունի լիբբ նշանակութունը, երեմնի (եռամյա), քաղցրենի(քաղցր):

-եստ ածանցով ունենք 4 բառ՝ զովեստ, զգեստ, ուտեստ, պահեստ, իսկ-եր ածանցով ունենք միայն մի բառ՝ նեներ: -երէն տե՛ս-Ս.էն: Այս 26 բառերից բնիկ են զգեստ, մորենի, մտերիմ, ուլենի, հայրենի, լրբենի, ուտեստ, երեմնի, քաղցրենի:

Հնացած է երեմնի:

-երիմ-ով ունենք միայն մտերիմ (բնիկ է):

-երող

-երող մասնիկով քանակական թվականներից կազմվում են դասական թվականներ. օրինակ՝ երկուսասներող, երեսներող, եօթնասներող, երեքուսասներող, եօթներող, իններող, իննետասներող, իննուսասներող, հարիւրերող, հինգերող, հնգետասներող, մետասներող, յսներող, ութսներող, ութնուսասներող, շոբետասներող, շոբեհարիւրերող, վաթսներող, վեցերող, վեշտասներող, վեցհարիւրերող, տասներող, քառասներող, քսաներող, նաև՝ առաջներող:

Բոլոր 27 բառերն էլ բնիկ են, հնացած են միայն ընդգծված 12 բառերը:

-եցի,-եցիկ,-եցուած,-եցում

-եցի ածանցով բառերը -ացի-ի համեմատությամբ քիչ են՝ դրանք են թեսադոնիկեցի, արուկեցի, աբայեցի, բողկեցի, եղովմայեցի, լափողիկեցի, կիճեցի, կիլիկեցի, հոովմայեցի, հերբայեցի, հոփայեցի, մինեցի, նաղրովեցի, սաբայեցի, սաղուկեցի, տուրեցի, փարխեցի, փիլիպեցի, փիւնիկեցի, քոռեցի, նիկրդայեցի (Յայտ.):

-եցիկ ածանցով կազմված են՝ գեղեցիկ, դիեցիկ(ծծկեր), երգեցիկ(երգող), հայեցիկ(նայելու. արար տանն պատուհան հայեցիկս ծածուկս. (Գ թագ. 2):-եցում ածանցով կա աճեցում,-եցուած-ով՝ հայեցուած:

Բնիկ են գեղեցիկ, դիեցիկ, երգեցիկ, աճեցում, հայեցուած: (27 բառ):

-եւ,-եակ,-եւան,-եւին

-եւ ածանցը գործիականի ի-աւ մասն է (հետի-աւ > հետեաւ > հետեւ), որով կազմված են՝ այնուհետեւ, արդարեւ, որովհետեւ, իսկ-եւ-ակով ունենք հետեակ:

-եւան ածանցով միայն մեկ բառ կա կազմված՝ օթեւան. ենթադրվում է, որ սա բարդ բառ է օթի-ա-ւան օթեւան: Բայց օթի բառ չկա, կա միայն օթ(գիշերելը), ուստի բարդը պետք է լիներ օթավան, ինչպես այլ գրվածքներում կա օթանոց և բացի այդ օթեւան-ի գրությունը այլ տեղներում ընդունված է:

Իսկ-եւին-ով ունենք միայն մի բառ՝ ամենեւին:

Այս 6 բառերն էլ բնիկ են և ոչ մեկն էլ հնացած չէ:

-եֆ,-եֆեան,-եֆին,-եֆ

-եֆ ածանցը առանձին կա միայն երբեֆ, ուսեֆ և ուրեֆ բառերի մեջ. այդ ածանցը միասնաբար հանդես է գալիս-եան-ին մասնիկների հետ եֆեան, եֆին ձևերով, որոնք քանակական թվականների հետ բաղադրվելով կազմում են անձներական թվականներ. ինչպես՝ եօթանասներին, երեքտասներեան, եօթաներին, եօթներին, իններեան, երեքհարիւրերին, հնգերին, երկուրեան, երկոտասներեան, եօթաներեան, հնգետասներեան, չորերեան, չորերին, վեցերեան, վեցերին, տասներին, քսաներին, մետասներեան:

-եֆեան և -եֆին մասնիկները նաև ամենայն բառի հետ կազմում են ամենեֆեան, ամենեֆին բառերը ամենքն էլ նշանակությամբ:

-եֆ ածանցով կազմված է միայն մեկ բառ՝ արդեօք(իրոք):

Այս 24 բառերն էլ բնիկ են, սակայն բացի երկուսից (արդեօք, երբեք) այժմ ոչ մեկը չի գործածվում:

-Ձան,-է,-էած,-էն,-էց,-էֆ

-Ձան մասնիկով ունենք մի բառ՝ զարմանազան:

-է մասնիկը բացառականի վերջավորությունն է եղել հետևյալ բառերի վերջում, որոնք դադարել են այլևս բացառականի ձև հանդիսանալուց և դարձել են մակբայներ. ինչպես՝ յահեկէ, յայգուէ (առավորվանից), յայգուէ իսկ ելանէր ամբոխս. (Բ թագ. Բ 27), յանձնէ, յանուանէ(անվանապես), իմնէ(մի կերպ), բացէ, յունկանէ(ականջալուր). (Ի)հարկէ(բռնի), (Ի)հետէ (սկզբից մինչև հիմա), (Ի) սկզբանէ (սկզբից ի վեր), տուէ(ցերեկը), յառաջնմէ(առաջուց), հետե, գոնե, գուցե, իցէ:

-էած ածանցով մի բառ ունենք՝ ֆնէած:

-էն մասնիկը մի քանի բառերի հետ բաղադրվելով կազմում է մակբայներ կրկին, նորից նշանակությամբ. այդքէն, այսքէն, անդրէն. աստ, անդ բառերի հետ բաղադրվելով նշանակում է՝ աստէն (հենց այստեղ), անդէն (հենց այնտեղ), իսկ արդէն նշանակում է այժմվանից առաջ:

Ինձէն, ձեզէն, մեզէն, ֆեզէն բառերը նշանակում են՝ ես ինքս, դուք ինքներդ, մենք ինքներս, դու ինքդ (համարվում են մակբայներ):

Կազմում է ածականներ. ինչպես՝ կոճկէն (կոճակապատ), հիսկէն (հյուսված), նկարէն (գունազեղ):

Իսկ ապաֆէն, ծուէն բառերից առաջինը մակբայ է (անշուշտ, իհարկե), իսկ երկրորդը գոյական է:

-էց մասնիկը գտնում ենք միայն գէներկէց, արդնրնկէց, կարբրնկէց, տիրնկէց, ֆարնկէց բառերի հետ բաղադրված ող ածանցի նշանակությամբ. զինաթափվող, զեղարգ նետող, կարթ նետող, տեզ նետող:

-էֆ մասնիկով միայն մեկ բառ ունենք՝ մատնէֆ (մատնանախշ):

Այս 39 բառից բնիկ են՝ յայգուէ, յանուանէ, յունկանէ, հետէ, գոնէ, գուցէ, իցէ, տուէ, քնեած, այդքէն, այսքէն, անդրէն, աստէն, արդէն, անդէն, ինձէն, քեզէն, մեզէն, ձեզէն, կարթրնկէց, մատնէք:

Բառական այս միավորները մեծ մասամբ օժտված են զբարարյան բերականական ձևերով, ուստի և սրանց հնացումը մեծ տոկոս է կազմում: Գործածվում են ի հարկէ, հետէ (վաղուց հետե), սկզբանէ, գոնէ,

գուցէ, իցէ (հնարանորեն), քնէած (այժմ հազվադեպ. անցյալում (19-րդ դ.) շատ է գործածված), արդէն, հիւսկէն, ծուէն, կոճկէն (հզվդ). նկարէն (հզվդ):

-ի

Իր հաճախականությամբ երկրորդ տեղն է գրավում -ի-ն-ու-թիւն-ից հետո. անպայմանորեն սեռականի վերջավորությունն է՝ ածանցի վերածված:

Ամենից առաջ անորոշ դերբայի (մասամբ անցյալ դերբայի) վերջից բաղադրվելով կազմում է ապառնի դերբայներ, որոնք բոլորն էլ բառական մակարդակի են բարձրացած և ավելի շուտ բառեր են քան դերբայներ:

Այսպէս՝ ածելի (բերող), այգորելի (հրաման տալու), անձկալի, այրելի (վառելիք), անփոփոխելի, անիծանելի (անիծող), առնելի (շինող), ատելի (ատող), արկանելի (վերարկու), բանալի (բանալի), բառնալի (լծակ), բերելի, գարշելի (գարշ), գովելի, գործելի (եղան), ելանելի (սանդուղք), դանդաղելի, դժուարաբառնալի, եղկելի (ողորմելի), եղծանելի (մահկանացու), դժուարաբառնալի, երանելի (երանական, երջանիկ), երեւելի (անվանի, հռչակավոր), զարմանալի (սքանչելի), զենլի (մատաղ), ըմպելի (ըմպանակ), ընդունելի (ապավեն, օգնական), ընթերցանելի (ընթերցող), լուալի (բաղնիք), լսելի (լսող, ականջ), խափանելի (խափանիչ), խառնելի (խառնիչ), խօսելի (խոսող), ծածկելի (ծածկոց), ծամելի (ծնոտ), ծնանելի (ծնող), ծնելի (ծնող), կիզելի (կիզիչ), կսկծելի (մորմորիչ), կրելի (կրող), հայելի, հանելի (հանող, լծակ), հարկանելի (ղարկող), հեծեծելի (ողբալի), ճեմելի (ղրոսարան), մատուցանելի, մտանելի, նախանձելի (նախանձի արժանի), ներելի (արժանի ներման) շօշափելի (շոշափվող, նյութական), ողորմելի (տառապյալ, թշվառ), ունելի (բռնող), ուտելի (կերակուր), շարշարելի (ենթակա շարշարման), սերմանելի, սիրելի (սիրեցյալ), սոսկալի, տեսանելի (երևացող), սփածանելի (մեջքակապ), ցանկալի, փարելի (փարատիչ):

Մի քանի պտուղների, սերմերի անունների հետ բաղադրվելով՝ կազմում է բուսանուններ (ծառանուններ), ենի ածանցին համանիչ. օրինակ՝ բեւեկնի, ընկուզի, թեղի, խնձորի, ծիրանի, կաղամախի, կաղնի, հազնի, հերձի, մայրի, մորի, նշի, նոճի, ուռի, սղոցի, սօսի, տանձի, ցրդի:

Մի քանի բառերի հետ կազմում է մակբայներ. ինչպէս՝ բռնի, գաղտագողի, գիշերի, այտի, ամարանի, աստի, անագանի(ուշ), կարի, հեռի, հետի(ոտքով), մեծագնի, յանիրաւի, քանի, ուստի:

Մի քանի բառերի հետ բաղադրվելով արտահայտում է տվյալ նյու-

թից կազմված լինելը, ից մասնիկի նշանակությամբ՝ գոյական, ածական. օրինակ՝ արծաթի*, խեցի(գոյ.), ասուի, խշտի, կերպասի, կտաւի, պղնձի, վանի(բյուրեղ), երկաթի, չորեքանկիւնի:

Կազմում է բավական թվով ածականներ. ինչպէս՝ այլազգի, անմարդի, արդի, արժանի, անուանի, բազմագունի, բիրազգի, երկդիմի (երկտեսակ), երկսայրի, ծիրանի, մեծազգի, աղի, աւաղի(աւազուտ), աւելի, բազմագունի(գոյականաբար՝ սաթ), բարի, դժպէտի, մեկուսի, միակողմանի, միորձի, միաստնի, մոլի, յարդի, միասայրի, չորեքկուսի, պատրաստի, վայրի, վտարանդի, յղի, չորեկանկիւնի, կենդանի, կորովի, ծարաւի, ջրարբի, քառակուսի, (Յայտ.), օտարազգի:

Կազմում է դերանուններ. ինչպէս՝ այգպիսի, այնպիսի, այսպիսի, որպիսի, քանի:

Կազմում է մի քանի գոյականներ, կապեր, ձայնարկություններ և այլն. օրինակ՝ այտի(այդ-ից), առաջի(կապ), ասղանի(դերձան), դրանգի, արամբի, գործի, երանի, երեմենի, միաշաբաթի(կիրակի), մեկուսի, մոշավայրի, ներքինի, ձօնի(հեթանոսական նվեր), մատանի, երդմնի (երդում), երանի, մորի, գործի(գործիք), դալարի(կանաչ խոտ), տեղի (տեղ), խշտի, կենդանի, քանդակագործի(քանդակելու գործիք), ծարաւի, կարասի, զկնի(-հետո. կապ), երեւի(թվում է), յիրաւի, նորի(նոր բերք), եղջերի, եղջերեաւ ձևով. (Գ. Թագ. Ա. 34):

Այս 177 բառից բնիկ են ածելի, այգորելի, անիծանելի, անձկալի, անմարդի, առնելի, ասղանի, ատելի, արդի, աւաղի, բերելի, բանալի, բառնալի, գաղտագողի, գարշելի, գործելի, գործի, դրանդի, ելանելի, արամբի, եղկելի, երեմենի, երանի, երեւելի, դարմանալի, ընդունելի, ընթերցանելի, լսելի, խօսելի, ծամելի, ծնելի, ծնանելի, կսկծելի, հարկանելի, հետի, մատուցանելի, մեկուսի, մտանելի, յիրաւի, նորի, կենդանի, ողորմելի, ունելի, ուտելի, չորեքանկիւնի, սերմանելի, սիրելի, տեսանելի, փարելի, թեղի, կաղնի, մայրի, մոլի, գիշերի, այտի, ամարանի, աստի, գաղտագողի, անտի, հեռի, ձրի, մեծագնի, քանի, արծաթի, ասուի, կտաւի, անուանի, աղի, այտի, աւելի, յղի, միորձի, վտարանդի, չորեքանկիւնի, կենդանի, ջրարբի, առաջի, ներքինի, ձօնի, մատանի, երդմնի, նորի, յղի, ասղանի, գործի, դալարի, տեղի, զկնի, երեւի (50%):

Հնացած են այգորելի, անմարդի, առնելի, արկանելի, աւաղի, հլանելի, եղջերի, զկնի, ծնանելի, հարկանելի, գիշերի, այտի, ամարանի, աստի, անագանի, դժպէտի:

* Արծաթի՝ նշանակում է նաև դրամ:

—Իլ, —Իլֆ

Այս ածանցով երկու բառ ունենք՝ կաթիլ, տեսիլ. այս վերջինը բնիկ է։ Վերջինը արևելահայերենում այժմ տեսիլք ձևով է գործածվում, իսկ մի 50 տարի առաջ սովորական բառ էր (տեսարան իմաստով. պիեսի պատկեր)։ արևմտահայերենում սովորական բառ է։

—Իկ, —Իկֆ

—Իկ բավականաչափ գործածական ածանց է. ամենից առաջ կազմում է նվազական ու փաղաքշական բառեր. օրինակ՝ այժմիկ, այժեմնիկ, լուիկ, խաղալիկ, հայրիկ, ճանճիկ, մանկիկ, պաղատտիկ, սակապիկ, վայրիկ, փոքրիկ, վանիկ(որից վանկունք), քաջիկ։

Համապատասխան հիմնական մասին կազմում է անձ ցույց տվող բառեր (գոյական, ածական), ինչպես՝ անաշխարհիկ, բարեկեցիկ, բռնամարտիկ, գոեհիկ, դաշտանիկ(դաշտանավոր), դիապատիկ, հընդիկ, ընկեցիկ, մարդիկ, մարտիկ, պարանցիկ, պարսիկ, վաղամեռիկ, վերամարտիկ(օգնական), յառաջամարտիկ(առջևում կովոր)։

Կազմում է ցուցական դերանուններ՝ աւազիկ(այդ-ից), աւանիկ, աւասիկ(այն-ից այս-ից)։

Պատ (պատեկ) արմատի հետ կազմում է մի քանի բառեր անգամ նշանակութամբ. բազմապատիկ, բիրապատիկ, երկպատիկ, եօթնպատիկ, հազարապատիկ, հարիրապատիկ, տասնպատիկ, քանիպատիկ, պիապատիկ։

Մի երկու բառի հետ բաղադրվելով այլիմաստ բառեր է կազմում. եղջերիկ(պնդերես), երիվարիկ(հեծնելու համար. փղի մասին), բռնամարտիկ(կովամարտ), մրրիկ(մրուր-ից), փոթորիկ։

Կազմում է նաև ածականներ. երկրացիկ, սաստիկ, պողովատիկ, (պողպատե)։

Մի բառ էլ ունենք, որի մեջ հավաքական նշանակություն է արտահայտում. մարդիկ։ —Իկֆ-ով միայն մի բառ կա՝ պարանցիկ(պար)։

Այս 51 բառերից բնիկ են՝ այժեմնիկ, դիապատիկ, լուիկ, հայրիկ, մանրիկ, մանկիկ, յառաջամարտիկ, տասնապատիկ, փոքրիկ, ընկեցիկ, մարտիկ, պարանցիկ, վաղամեռիկ, բռնամարտիկ, մրրիկ, սաստիկ, մարդիկ, աւազիկ, աւանիկ, աւասիկ, պարանցիկք, դիապատիկ, յառաջամարտիկ, տասնապատիկ (47 %)։

Հնացած են՝ այժմիկ, քաջիկ, դիապատիկ, եղջերիկ, երիվարիկ, բռնամարտիկ, պաղատտիկ, պողովատիկ, վերամարտիկ, պարանցիկք։

—Իկան

Այս մասնիկով ունենք միայն մի բառ՝ շղջիկան(շղջիկ), որ հնացած է։

—Ին, —Իմ, —Ին, —Ինդ, —Ինն, —Ինչ, —Ինֆ

—Ին մասնիկը կենդանի է ուտիճ բառի մեջ(արդյո՞ք խառնիճ-ի մեջ էլ նույն մասնիկը չէ), ճահիճ։

—Իմ մասնիկով մի բառ ունենք, ինչպես՝ ուշիմ։ Մյուսների համար տե՛ս արիմ, երիմ։

—Ին ածանցով բավականաչափ բառեր կան կազմված. գոյականներից կազմում է ածականներ. ինչպես՝ աղջամղջին, առաւօտին(առավոտյան), միջին, աղտաղտին(աղային), խաւարին, մթին, շնչին, վերջին, քոյին։

Ածականներից նույնիմաստ ածականներ է կազմում ավելի սաստկական նշանակութամբ. ինչպես՝ դժուարին, դիրին, խորին, մթին, ստորին, վերին, օտարին, նաև՝ առաջին, անհնարին, յետին, շնչին։

Կազմում է մակբայներ՝ առանձին, առտնին, ինքնին, կրկին, ծմակին, անդստին, աքօրին, նոյնօրին, սոյնօրին, վերստին, տակալին։

Կազմում է գոյականներ՝ անկողին, բազին, բաժին(բաժին), լուսին։

—Ինդ ածանցով ունենք շոինդ.-ինչ-ով-շնչան (շըռ-ինչ-ից). ինն-ունենք առանձինն, զառաջինն։

—Ինֆ ածանցով կան միայն նախատիւք, ստորինք(սանդարամետ)։

Այս 45 բառից բնիկ են ուտիճ, միջին, աղտաղտին, շնչին, դիրին, վերին, առաջին, առանձին, առտնին, ինքնին, կրկին, անդստին, աքօրին, անկողին, լուսին, պարանցիկք, սոյնօրին, վերստին։

Հնացած են առաւօտին, ծմակին, անդստին, պարանցիկ (40 %)։

Իչ

Գործող ածանց է, նաև բառին տալիս է ենթակայական դերբայի նշանակություն ուղ ածանցին համանիշ. ընդ որում թե անձի և թե իրի ածանց է։ Ունենք՝ Ամենափրկիչ, անիծիչ, ապականիչ, ապրեցուցիչ, առաքիչ, արարիչ, ակետարանիչ, բարձրացուցիչ, բնակիչ, զարբեցուցիչ, գերիչ, գովիչ, զտիչ, գրիչ, դառնացուցիչ, դիրիչ, դսրովիչ, երգիչ, երգմենցուցիչ, զայրացուցիչ, զարգարիչ, զարհուրեցուցիչ, զրկիչ, զօրացուցիչ, թշնամանիչ, թափիչ, թշուառացուցիչ, թովիչ, ժառանգիչ, լուսավորիչ, խափանիչ, խանգարիչ, խոտորեցուցիչ, խոցոտիչ, խոտվիչ, խրատիչ,

ծախիչ, ծածկիչ, ծառայեցուցիչ, ծնուցիչ, կարգիչ, կատարիչ, կաջարիչ, կերակրիչ, կերիչ, կշտամբիչ, կողոպտիչ, կոտորիչ, կորացուցիչ, կտրիչ, հալածիչ, հայհոյիչ, հաստատիչ, հաստիչ, հատուցիչ, հղօրիչ, հոսիչ, ձուլիչ, մատնիչ, մարդիչ, մերձավորիչ, մխիթարիչ, մկրտիչ, մոլորեցուցիչ, յանդիմանիչ, յանձանձիչ, յարդարիչ, յարուցիչ, նախատիչ, նեղիչ, նկարիչ, շիջուցիչ, ողորբիչ, ոսկերիչ, ուղղիչ, ուսուցիչ, պատմիչ, ջնոուցիչ, սատակիչ, ստացիչ, ստեղծիչ, սրբիչ, սփռիչ, վարիչ, վրանաբնակիչ, տանջիչ, տաղիչ, տուիչ, փառատրիչ, փորձիչ, փշկիչ, քարոզիչ, քալիչ, քննիչ, օտարացուցիչ, օրհնիչ:

97 բառից բնիկ են անիծիչ, ապրեցուցիչ, արարիչ, բարձրացուցիչ, գարշեցուցիչ, գերիչ, գտիչ, դառնացուցիչ, երգիչ, երդմնեցուցիչ, զայրացուցիչ, զարդարիչ, զարհուրեցուցիչ, թովիչ, լուսավորիչ, ծնուցիչ, կերակրիչ, կերիչ, հաստատիչ, հատուցիչ, հաստիչ, ձուլիչ, մատնիչ, մերձատրիչ, մխիթարիչ, մոլորեցուցիչ, յանձանձիչ(խնամող), յարդարիչ, յարուցիչ, նեղիչ, ողորբիչ, ուսուցիչ, ջնոուցիչ, ստացիչ, ստեղծիչ, սրբիչ, սփռիչ, տուիչ, փառատրիչ, քալիչ (40%):

Հնացած են՝ դիւրիչ, ծախիչ(փշացնող), կոտորիչ, յանձանձիչ, սատակիչ, օտարացուցիչ:

-Իռն, -Իսա, -Իր, -Ից, -Իցի, -Իցս, -Իւն,

Սրանցով ունենք ճանճիռն(ճանճիւռն), (ճանճեր), հանգիստ, երիր, չորիր, լաւիտենից, եղիցի(ամեն), քանիցս, վաղիւն:

Բնիկ են միայն՝ երիւ(երրորդ), չորիւ(չորրորդ):

Գործածական է միայն հանգիստ: 8 բառ:

-Իւ, -Իւղ, -Իւն

-Իւ ածանցով կազմված կան մի քանի մակբայներ՝ լրիւ, խստիւ, հազիւ, ճշգիւ, ճշմարտիւ, սերտիւ, վաղիւ, նաև՝ աղնիւ:

-Իւղ-ով ունենք միայն մի բառ՝ երկիւղ:

-Իւն-ով կազմված են ձայն՝ աղմուկ արտահայտող բառեր՝ բումբիւն, գոշիւն, գրնդիւն, թնդիւն, լալիւն, խխնջիւն(խրխիւնջ), հնչիւն, մոնչիւն, շահատակիւն բացատրված է հարձակում. ճիշտ չէ. նշանակում է գոռոց, գոշիւն, համեմատի՛ր. Չայն հարուածոց, ձայն շարժմանց անւոյ, շաչիւն կառաց, շահատակիւն հեծելոց. (Նաւ. Գ 2), շաչիւն, շառաչիւն, շկահիւն, շշնջիւն, շշիւն, սօսափիւն, վրնջիւն, տրտնջիւն, քրթմնջիւն:

Երեք բառ են բացառութիւն կազմում. անկիւն, արդիւն, փայլիւն (փայլ):

Այս 31 բառից բնիկ են արդիւն, եղիցի, լրիւ, երկիւղ, լալիւն, փայլիւն: Հնացած են վաղիւ, շատահակիւն, եղիցի:

-Իֆ(Ի-Ք)

-Իֆ ածանցով կազմված են միայն գոյականներ. ինչպես՝ արմտիք, անտիք, անդրավարտիք, բառնալիք, երախայրիք, երկուտրիք, զարմանալիք, բարիք, երախտիք, ընթրիք, ընտանիք, լալիք(ողբ), լուալիք (բաղնիք), լսելիք(ականջ), խաղալիք, խառնելիք(աման), ծամելիք (ծնոտ), կատարելիք(փակման հանդես), կարիք, կարծիք, համակարիք, հարկիք(եղնեթի զուգ լուծ), հոտոտելիք(ոունգ), ճաշակելիք(ճաշակելու զգայարան), մատուցանելիք, ոտնկելիք, շարիք, պատարագիք(այն, ինչ նվիրվում է), պարտիք(պարտք), սպառնալիք, վարտիք, տանիք, տոկոսիք, օձիք(տանջելու գործիք):

34 բառերից բնիկ են՝ արմտիք, բառնալիք, երախայրիք, երկուտրիք, ընտանիք, լալիք, լուալիք, լսելիք, ծամելիք, հարկիք, հոտոտելիք, ոտնկելիք, սպառնալիք, տանիք, օձիք(44 %):

Հնացած են լալիք, պատարագիք, պարտիք:

-Լուտ, -Խուղ, -Կ, -Կան, -Կէն, -Կեր, -Կիւն, -Հուտ, -Հուտ(ն)

-Լուտ ածանցով ունենք միայն մոտալուտ.

-Խուղ ածանցով ունենք՝ մառախուղ:

-Կ ածանցով՝ միայն մեկ բառ՝ հարկ:

-Կան ածանցով (պետք է լիներ ական), ունենք՝ բժկան (արատավոր), գուժկան, դատկան (ժրաշան), վարձկան: -Կէն ածանցով ունենք հիսկէն:

-Կեր (կեար=արող) հայերենում ածանց է), խոհակեր (խոհարար):

-Կիւն (անզամ) երեքկիւն, չորեքկիւն:

-Կուտ, որով կազմված են նախանձկուտ, ցասկուտ, վաղվաղկուտ (շտապող):

-Հուտ—ոսկեհուտ, ոսկեհուտն:

15 բառից բնիկ են հարկ, երեքկիւն, չորեքկիւն, մոտալուտ, ցասկուտ: Հնացած են բժկան, դատկան, խոհակեր:

-Ճան

Այս ածանցով ունենք 1 բառ՝ խրախճան:

Ղ, Մ, Ման, Մաց, Մեստ, Մն, Ն*, Նագոյն, Նակ, Նական, Նակի, Նեար, Նի, Նիֆ, Նջուց, Շի, Շիո

* Ն-ով՝ հանգող ամառն, ձմեռն, բան, կեանք և այլ բառերը դնում ենք պարզ բառերի շարքում:

Հաղվադեպ կիրառվող ածանցական մասնիկներ են. ըստ կարգի ունենք՝ կոճղ, տիղմ, արձակման (ապահարզանի թուղթ), ծովամաց (ծովաթափ), գաղտամեստ (խարդախ), օծեալն, ջերմն, սերմն, կողմն, այգն (ցերեկը), զօրն, հերուն, առաւօտն (առաւօտեան), լուան (լուսից-աչքի փառ), առանձինն, դառաջինն, կոչնական, խոտորնագոյն, խոտորնակ, բարձկնեար, գաղտնի, յայտնի, նախնի, գաղտնիք, նախնիք, վաղընջուց, բոլորչի, արբշիւ, աւուրն:

Այս 32 բառերից բնիկ են՝ առանձինն, բարձկնեար, տիղմ, սերմ, ծովամաց, ջերմն, սերմն, հերուն, լուան, գաղտնի, արբշիւ, գաղտնիք:

Հնացած են արձակման, ծովամաց, այգն, հերուն, առաւօտն, դառաջինն, աւուրն, կոչնական, օծեալն:

-Ոգ, -Ող (օղ), -Ողիք, -Ոյ

-Ոգ ածանցով կազմված է միայն մեկ բառ՝ նորոգ:

-Ող ներկա դերբայի ածանցն է, բայց գերազանցապես բայահիմքերից կազմում է ածականներ ու գոյականներ, ինչպես՝ ազդող, առգրնող, (առուծախ անող), ապաշխարող, ապստամբող, արարող, արբեցող, արհամարհող, բամբասող, բարկացող, գոհացող, դառնացող, դիպող, ելող (ելնող), երգեցող, գայրացող զովող (օգնական), զրկող, ընթացող, թուող, ժամանող, ժողովող, լացող, լսող, խախտող, խանձող, խնդացող, խնդրող, խոյող, խօսող, ծնող, ծեփող, կամեցող, կարծող, կարօղ, կերօղ, կոխող, կոտող, կտրող, համբերող, հանգանակող, հատուցանող, հարկանող, հերձուածող, հնձող, մուրող, յաղթող, յափշտակող, նետող, նմանող, շինող, շնացող, շրջող, որոճող, որսող, պահանջող, պահօղ, պաշարող, պատերազմող, պատճառող, պատշաճող, պատրող, սաղմոսերգող, սաղմոսող, սերմանող, սիրող, սպանող, սփռող, տաղանպող, տեսանող, տրտնջող, ցանկացող, փորոտող, քննող և մի բառ էլ՝ աջող, ականողիք (աչք):

Այս 75 բառից բնիկ են՝ նորոգ, առգնող, արարող, արբեցող, արհամարհող, բամբասող, դառնացող, ելնող, երգեցող, գայրացող, ընթացող, լացող, լսող, խանձող, խնդացող, խօսող, ծնող, կերօղ, հարկանող, նետող, շնացող, որոճող, որսող, (սաղմոս)-երգող, սերմանող, սիրող, սրփռող, տեսանող, աջող, ականողիք: Եթե ընդունենք, որ գրաբարում ենթակալական դերբայն այնքան էլ հաճախական չէ, ապա Աստվածաշնչում դրանց թվի համեմատությամբ բնիկ բառերը զգալի թիվ են կազմում (40 %):

-Ոյ ածանցը անշուշտ սեռականի վերջավորութունն է, որ հետևյալ բառերի մեջ մեծ մասամբ դարձել է ածականակերտ ածանց. օրինակ՝ աջոյ (աջ), անկուածոյ (հյուսված), առաջոյ (առջևի), արգոյ (լի արգոյ օր-գործի օր), արտաբոյ (նխդր. դուրս), բարեբարոյ, երեկոյ (գ. մ.), եփոյ (սպաս, ապուր), զայգոյ, խառնուածոյ կարճոյ (կարճ), կոփածոյ (կոփված), կուածոյ (կոված), հալածոյ (հալված), հաճոյ (հաճելի), ձախոյ (ձախ), մանուածոյ, մարդահաճոյ, (շողոքորթ), մեծարոյ, մօտոյ (մ. մոտիկից), յարգոյ, յետոյ, շնաբարոյ, շարաբարոյ, պիտոյ, վերոյ:

Այս 26 բառերից բնիկ են՝ աջոյ, անկուածոյ, առաջոյ, արգոյ, արտաբոյ, երեկոյ, հալածոյ, ձախոյ, պիտոյ, վերոյ:

-Ոյգ,-Ոյք,-Ոյի,-Ոյին,-Ոյկ,-Ոյն,-Ոյս,-Ոյց,-Ոյցք

Այս ածանցներով կազմված են՝ մարդելոյ (մարդագող), աւագոյթ, երեւոյթ, ծածկոյթ, ծերոյթ, ձանձրոյթ, երեկոյի, երեկոյին, լուսանցոյց, խարոյկ, ողջոյն, ուրոյն, գիշերոյն, իսկոյն, կենդանոյն, խորհրդակորոյս, աստուածուսոյց, անասնասնոյց, ամենաշիջոյց, անմատոյց, դժուարամատոյց, մատոյց, մոխրահեղձոյց, ագոյցք:

Այս 24 բառից բնիկ են՝ մարդելոյ, աւագոյթ, երեւոյթ, ծերոյթ, երեկոյի, երեկոյին, լուսանցոյց, խարոյկ, ողջոյն, ուրոյն, գիշերոյն, իսկոյն, կենդանոյն, (աստուած)ուսոյց, (դժուար)ամատոյց, անասնասնոյց, անմատոյց, մատոյց, ագոյցք, վաղայարոյց:

Հնացած են՝ աւագոյթ(ավագություն), ծերոյթ (ծերություն), գիշերոյն, աստուածուսոյց, ամենաշիջոյց (ամեն ինչ մարող. լավ բառ է):

-Ոյք

-Ոյք ածանցով ունենք բաշխոյք (պարգև), բարոյք (բարք), գահոյք, գործոյք (գործի համար պիտանի բան), գրկոյք (գրքույկ), խընջոյք, հաճոյք, յետոյք, պիտոյք:

Այս 9 բառից բնիկ են՝ գործոյք, յետոյք, գրկոյք: Հնացած են՝ բաշխոյք, բարոյք, գործոյք, գրկոյք(դարձել է գրքույկ գրիկից):

-Ով,-Ովի,-Ովին,-Որովին,-Ովաւն,-Ոտ(գնտ),-Ոտի,-Ոտուն

Այս ածանցներով կազմված են լիով, խնամով, կիսով, ճշգրով, մեղմով, շափով, պարապով, տեսանելով(տեսքով), փութով. ապա՝ իւրովի, բոլորովին, գլխովին, երամովին, իւրովին, ճարպովին, իմովսանն, արհամարհոտ, բորոտ, գագաշոտ, երկշոտ, ժանգոտ, լուսնոտ, խնամոտ,

խոցոտ, ծակոտ, կասկածոտ, կթոտ, հիւանդոտ, մարմառոտ, նախանձոտ, որքինոտ, վեհերոտ, ցաւագնոտ, քոսոտ, զազրոտի, կալոտի, մեռելոտի, սնոտի, փորոտի, օտարոտի, պատառոտուն:

Այս 41 բառից բնիկ են՝ մեղմով, տեսանելով, փութով, իւրովի, լիով, բոլորովին, իւրովին, իւրովսանն(իմո-ս-անն-ձեռքից եկածի շափ), երկչոտ, մեռելոտի, սնոտի, լուսնոտ:

Հնացած են՝ պարապով (հարմար ժամի), իմովսանն (մի 50 տարի առաջ սովորական էր), գագաշոտ(ցնդած), կալոտի(կալ արող. եղան մասին):

-ՈՐ,-ՈՐԱյ,-ՈՐդ,-ՈՐեայ,-ՈՐի,-ՈՐին,-ՈՐշի

Այս ածանցներով ունենք բեկոր, հատոր, պղտոր, թաւալզոր, սինլքոր, քակոր, արտորայ(արտեր), կալորեայ(կալեր), առաջնորդ, արտասուակցորդ, աւելորդ, բաժանորդ, երկրորդ, երրորդ, խաղախորդ, հանապազորդ, հասարակորդ, ճանապարհորդ, միջնորդ, մնացորդ, յետնորդ, նախանձորդ, նախատորդ, նաւորդ, որսորդ, ուղղորդ, շորորդ, պարապորդ, տասանորդ, յանցորդ, փոխանորդ, երեկորեայ, յերեկորեայ, շորեհճարիւրորդ, երկուորի, երեկորին, բոլորշի, գոլորշի:

Այս 38 բառից բնիկ են աւելորդ, քակոր, արտորայ, առաջնորդ, աւելորդ, երկրորդ, երրորդ, հաջորդ, միջնորդ, մնացորդ, նաւորդ, յետնորդ, որսորդ, շորեհճարիւրերորդ, շորորդ, երկորի, երկուորի, երեկորին, բոլորշի, գոլորշի, երեկորեայ, յերեկորեայ (58 %):

Հնացած են արտորայ, կալորայ, հանապազորդ, հասարակորդ(վիճակակից, հավասարորդ), պարապորդ(դատարկ), երեկորի(երեկո), երեկորին(երեկոյան):

-Ոց

-Ոց կենդանի ածանց է և բավականաչափ արդյունավետ: Ամենից առաջ սրանով կազմվում են տեղ արտահայտող բառեր. ինչպես՝ բողանոց, երիտասարդանող, թրծոց, խոհակերոց(ճաշասննյակ կամ խոհանոց), հալոց(հալելու աման կամ քուրա), ծաղկոց(ծաղկանոց), հնոց, հովոց(ղովանալու տեղ), մարտկոց(կովելու տեղ. ամբուլյուն), մոխրոց(մոխրանոց), պոռնկոց, հացարարոց(հաց թխելու տեղ), օթոց(ննշարան), փողոց:

Մի քանի բառերի հետ բաղադրվելով արտահայտում է միջոց, որով մի բան է արվում. օրինակ՝ կտրոց, խայթոց, մխոց(աման է), ջնջոց, փակոց:

Երկու բառ ունենք թիկնոց նշանակութամբ՝ կրկնոց, մեկնոց: Ունենք նաև՝ ամբոց, խախացոց, խտրոց(խտրականութուն), փողոց, միջոց(մեջտեղը):

Այս 27 բառից բնիկ են հալոց, հովոց, մարտկոց, հացարարոց, օթոց, խայթոց, ջնջոց, կրկնոց, մխոց, ամբոց, միջոց (40 %):

Հնացած են խոհակերոց, հացարարոց, խտրոց:

-Ոց-ով կազմվում են նաև ապառնի դերբայներ՝ լինելոց:

-Ու

-Ու ածանցը կենդանի, արգասավոր ածանց է: Բայարմատներից և բայերից կազմում է գործողի անուններ՝ անձ կամ իր. ինչպես՝ ակնառու (աշառու), ահարկու, անարգու, այցելու, առարկու, աւարառու, անշնորհակալու, բանասրկու, գինարբու, գօթիածու, երկրպագու, խուզարկու, խնկարկու, քնարերգու, կաշառառու, հասու, հատու, ձայնարկու, ձեռնկալու, նուագածու, սաղմոսերգու, վերակացու, փոխառու, փոխատու, քսու:

Կազմում է մակբայներ, ածականներ՝ այժմու (այժմ), ժամու, յարելու, (արևով), առաջու (նախապես) առաւօտու (առավոտյան) աջու, արու, ձախու, տարածամու (ուշ), վաղու (վաղուց), կոփածու, զաշացու (կույր), նաև՝ երկու:

Կազմում է մի քանի գոյականներ՝ ածու, եղջերու, քաղցու, մեղու, վերարկու, միեղջերու:

Այս 45 բառից բնիկ են՝ ակնառու, այցելու, արու, բանասրկու, գինարբու, գօթիածու, կաշառառու, հասու, ձախու, նուագածու, (սաղմոս) երգու, փոխառու, այժմու, յարելու, առաջու, աջու, զաշացու, երկու, ածու, քաղցու, մեղու (46 %):

Հնացած են՝ գօթիածու, այժմու, յարելու, առաջու, առաւօտու, աջու(խոսվածքներում կա՝ աջու-ձախու), տարածամու, վաղու, զաշացու:

-Ուած,-Ուածք,-Ուրեամբ

-Ուած ածանցը բայահիմքերից կազմում է բայանուններ և ինչպես երևում է, 5-րդ դարում բավականաչափ արգասավոր ու կենդանի է եղել. սրանով ունենք կազմված՝ անկուած, առեղծուած, գործուած, դարձուած, դիպուած, դրօշուած (քանդակ, փորվածք), զանգուած, ընդելուզուած, ընթերցուած, խայծուած, (հասունանալ սկսվելը), խառնուած (զօղվածք), խնդրուած(աղաչանք), կաթուած(կաթիլ), կալուած, կիտուած (կետերով

հորինվածք), կցուած, հայցուած, հատուած, հարուած, հարցուած, հերձուած, մանուած, մանրուած, մնացուած, յանցուած, յանելուած, յօշուած, յօրինուած, պատուած, սպառուած, ստացուած, ստեղծուած, փոքուած, քերուած, հայցուածք, ատուածք, անիրաւութեամբ, զօրութեամբ, խաղաղութեամբ, հաստատութեամբ, ճշմարտութեամբ:

Այս 43 բառից բնիկ են անկուած, գործուած, դարձուած, ընդելուած, ընթերցուած, խայծուած, անիրաւութեամբ, կալուած, հայցուածք, հայցուած, հաստատութեամբ, հարուած, հարցուած, մանրուած, մնացուած, հատուած, յանելուած, ստացուած, ստեղծուած, փոքուած, քերուած (50 %):

Հնացած է յանցուած:

Ուրեանցն-ունենք զփրկութեանցն (մատաղ):

-Ութին

Ամենից շատ գործածական ածանց է Աստվածաշնչում. հիմնականում ածականներից կազմում է վերացական գոյականներ. օրինակ՝ ազահուութիւն, ազատութիւն, ազգականութիւն, աշնուականութիւն, աթոռակցութիւն, ակնածութիւն, ակնկալութիւն, ակնառութիւն, աղեղնաւորութիւն, աղիսարկութիւն, աղտեղութիւն, աղբատութիւն, ամբաստանութիւն, անբարհաւանութիւն, անբարշտութիւն, ամբարտաւանութիւն, ամբուութիւն, ալքութիւն, այցելութիւն, անարգասաւորութիւն, անարգութիւն, անառակութիւն, անարատութիւն, անարժանութիւն, անարժանաւորութիւն, անբծութիւն, անգիտութիւն, անդորրութիւն, անդրանկածնութիւն, անդրանկութիւն, անեղծութիւն, աներկիւղութիւն, աներկիւղածութիւն անզաւակութիւն, անզգամութիւն, անզգայութիւն, անզգաստութիւն, անթշպատութիւն, անիրաւութիւն, անխարդախութիւն, անխայտութիւն, անխառնութիւն, անխրատութիւն, անձկութիւն, անվայելչութիւն, անկարգութիւն, անհաւանութիւն, անհոգութիւն, անձկութիւն, անմահութիւն, անմեղութիւն, անմըտութիւն, անյիշատակութիւն, անշահութիւն, անշնորհակալութիւն, անյիշուութիւն, անոխակալութիւն, անուշահոտութիւն, անուշութիւն, անշարուութիւն, անպակասութիւն, անպտղութիւն, անսրբութիւն, անօրէնութիւն, աշարձակութիւն, ապաւինութիւն, ապիկարութիւն, ապիրատութիւն, ապշութիւն, ապստամբութիւն, առաջաւորութիւն, առաջնորդութիւն, առատութիւն, առանկութիւն, առաքինութիւն, առտգութիւն, առողջութիւն, ասեղնագործութիւն, աստուածագիտութիւն, աստուածագիտութիւն, աստուածպաշտութիւն, աստուածութիւն, ատելութիւն, արագութիւն, արարչութիւն, արգասաւորութիւն, արգարութիւն, արծաթսիրութիւն, արհամարհութիւն,

արձանութիւն, արութիւն, արուեստգիտութիւն, աւագութիւն, աւանդութիւն, աւարատութիւն, բազմութիւն, բանսարկութիւն, բարեգործութիւն, բարեխօսութիւն, բարեկամութիւն, բարեկենդանութիւն, բարեկեցութիւն, բարերարութիւն, բարկութիւն, բարձրութիւն, բարութիւն, բաւականութիւն, բընակութիւն, բնութիւն, բովանդակութիւն, բօրոտութիւն, բռնաւորութիւն, բռնութիւն, գաղտնութիւն, գարշելիութիւն, գարշութիւն, գեղեցկութիւն, գինեհարութիւն, գիշութիւն, գլխաւորութիւն, գոհացողութիւն, գոհութիւն, գողութիւն, գործաւորութիւն, գոյաւորութիւն, գոռուութիւն, գոռութիւն, գործակալութիւն, գործակցութիւն, գուշակութիւն, գրգուութիւն, դածանութիւն, դաւարութիւն, դառնութիւն, դատապարտութիւն, դատարկութիւն, դատաւորութիւն, դարանակալութիւն, դաւաճանութիւն, դաւանութիւն գեղատուութիւն, դժնդակութիւն, դիմադարձութիւն, դիտաւորութիւն, դիւրութիւն, զոգութիւն, եղբայրսիրութիւն, երգմնաստութիւն, երգմնութիւն, երախայտութիւն, երաշտութիւն (երաշտ ածական է), երիտասարդութիւն, երիցութիւն, երկայնութիւն, երկայնմտութիւն, երկիւղածութիւն, երկմտութիւն, երկայնութիւն, երկրագործութիւն, երկրպագութիւն, զաղրութիւն, զանազանութիւն, զառաջաւորութիւն, զգուշութիւն, զգօնութիւն, զեխութիւն, զինաւորութիւն, զոլոզութիւն, զուարթութիւն, զուարճութիւն, զօշաբաղութիւն, զօրավարութիւն, ընդարձակութիւն, ընդերկարութիւն, ընդունելութիւն, ընկերութիւն, ընչաւտութիւն, ընտանութիւն, ընտրութիւն, թանձրութիւն, թեթեւութիւն, թերահաւատութիւն, թիւրութիւն, թմբուութիւն, թշնամութիւն, թշուառութիւն, թովչութիւն, թուլութիւն, ժամադրութիւն, ժանտութիւն, ժառանգութիւն, ժուժկալութիւն, ժպրհութիւն, ժտութիւն, իգութիւն, իրաւագիտութիւն, լայնութիւն, լաւութիւն, լիութիւն, լկտութիւն, լուսաւորութիւն, լուրութիւն, լրբութիւն, լրջմտութիւն, խակութիւն, խաղաղութիւն, խարդախութիւն, խայտառակութիւն, խառնակութիւն, խնդկատակութիւն, խելամտութիւն, խեղութիւն, խեռութիւն, խնամութիւն, խոնարհութիւն, խոնաւութիւն, խոտորութիւն, խօրագիտութիւն, խօրամանկութիւն, խորհրդակցութիւն, խորշակահարութիւն, խորութիւն, խոռովութիւն, խստասրտութիւն, խստութիւն, խտութիւն, ծանրութիւն, ծերութիւն, ծուրութիւն, կազմութիւն, կախարդութիւն, կամակարութիւն, կամակորութիւն, կանխագիտութիւն, կախարդութիւն, կամակարութիւն, կամարութիւն, կարողութիւն, կարօտութիւն, կեղծաւորութիւն, կենդանութիւն, կնդութիւն, կուրութիւն, կռապաշտութիւն, կրթութիւն, կրճատութիւն, կրտսերութիւն, կրօնաւորութիւն, կցորդութիւն, հակառակութիւն, համառօտութիւն, համարձակութիւն, հանդարտութիւն, հանդերձաւորութիւն, հաստութիւն, հաստատութիւն, հարազատութիւն, հարթութիւն, հարստութիւն, հաւաղիտութիւն, հաւանու-

թին, հաւասարութիւն, հաւասարմութիւն, հեղուքիւն, հեծանաձգութիւն, հեծելութիւն, հեղգութիւն, հեշտութիւն, հետտութիւն, հիւանդութիւն, հիրաւաիրութիւն, հնազանդութիւն, հնարագիտութիւն, հնութիւն, հողագործութիւն; հպատակութիւն, հպարտութիւն, հրաժարութիւն, ձեռնադրութիւն, ճանապարհորդութիւն, ճարտարամտութիւն, ճարտարութիւն, ճըշգուցութիւն, ճշմարտութիւն, ճշգրտութիւն, ճոխութիւն, մահապարտութիւն, մարդասիրութիւն, մարդասպանութիւն, մարքութիւն, մեծաբանութիւն, մեծանձնութիւն, մեծավայելչութիւն, մեծութիւն, մեղադրութիւն, մեղկութիւն, մեծատրութիւն, մեռելութիւն, միաբանութիւն, միամտութիւն, մըթութիւն, միամօրութիւն, մշտնջենատրութիւն, մոլութիւն, մորսութիւն, մուրդութիւն, մտադիրութիւն, մտադրութիւն, մտախոհութիւն, մտահաճութիւն, մտերմութիւն, յաղթութիւն, յաճախութիւն, յամառութիւն, յայտնութիւն, յանդգնութիւն, յանդիմանութիւն յանցատրութիւն, յանցութիւն, յաջողութիւն, յափշտակութիւն, յառաջադիմութիւն, յառաջադրութիւն, յիմարութիւն, յլութիւն, յղփութիւն, յուրվութիւն, յոռութիւն, յորդութիւն, յուլութիւն, յուղարկատրութիւն, յստակութիւն, նահատակութիւն, նանրութիւն, նաւարկութիւն, նեղութիւն, նեղարտութիւն, նենգութիւն, նկարագրութիւն, նմանութիւն, նորակրօնութիւն, նորոգութիւն, նուազութիւն, նպաստատրութիւն, շահատակութիւն, շաղփաղփութիւն, շատախօսութիւն, շատահմտութիւն, շնութիւն, շուայտութիւն, շուխափութիւն, ռխակալութիւն, ռղորմածութիւն, ռղջամտութիւն, ռղջութիւն, ռստայնանկութիւն, ռտնահարութիւն, ռտնառութիւն, ռրբութիւն, ռրգեզրութիւն, ռրգեծնութիւն, ռրկորստութիւն, ռիժնութիւն, ռլխտադրութիւն, ռլխտազանցութիւն, ռլղամտութիւն, ռնայնութիւն, շարախօսութիւն, շարակամութիւն, շարակնութիւն, շորորդապետութիւն, շուառութիւն, պակասութիւն, պահպանութիւն, պանդխտութիւն, պանդոյրութիւն, պաշտպանութիւն, պատանդութիւն, պատասխանատվութիւն, պատասխանատրութիւն, պատգամավորութիւն, պատշաճողութիւն, պատուականութիւն, պատրաստութիւն, պարապութիւն, պարարտութիւն, պարկեշտութիւն, պերճութիւն, պիտանութիւն, պղծութիւն, պնդութիւն, պոռնկութիւն, ջերմութիւն, ռժողութիւն, սահմանադրութիւն, սասանութիւն, սաստկութիւն, սնապարծութիւն, սովորութիւն, ստահակութիւն, ստուգութիւն, ստութիւն, ստրկութիւն, սրբութիւն, սրտացաւութիւն, վայելչութիւն, վատթարութիւն, վատութիւն, վկայութիւն, վհատութիւն, վստահութիւն, վտարանդութիւն, վրէժխնդրութիւն, վրիժալիւն, տակառապետութիւն, տաղտկութիւն, տատամսութիւն, տարբերութիւն, տարագրութիւն, տգիտու-

թիւն, տեռատեսութիւն, տեսչութիւն, տխրութիւն, տկարութիւն, տնակցութիւն, տնանկութիւն, տնտեսութիւն, տրտմութիւն, ցածութիւն, ցամաքութիւն, ցանկութիւն, ցաւազնութիւն, ցոփութիւն, ցրտութիւն, փառատրութիւն, փափկութիւն, փորձութիւն, փորրկութիւն, քաղցրաբանութիւն, քաղցրութիւն, քաջարտութիւն, քաջութիւն, քննութիւն, քսութիւն, օգնականութիւն, օտարասիրութիւն, օտարատեսչութիւն, օտարութիւն, օրէնսդրութիւն, օրինադրութիւն:

—Արթին ածանցը գոյականներից, բայարմատներից կամ հիմքերից, արմատներից կազմում է դարձյալ վերացական գոյականներ, որոնցից ոմանք ունեն նաև հավաքական նշանակություն: Գոյականներից կազմը ված մի շարք բառեր նույնաբանական արժեք ունեն և մեծ մասամբ հընացած են. (այդպիսի բառերը ընդգծված են). այսպես՝ ունենք աղղեցութիւն, այպանութիւն, աղմկութիւն (աղմուկ), ամուսնութիւն, աներբութիւն, անխայտութիւն, անհողութիւն, անջրպետութիւն, ապականութիւն, ապաշխարութիւն, աստուածութիւն, արբեցութիւն, արհամարհութիւն, արձանութիւն, արքայութիւն, աւանդութիւն, բժշկութիւն, գազանութիւն, գայթակղութիւն, գերութիւն (նաև՝ գերիներ), գթութիւն, գժտութիւն, գիլեննարութիւն, գիտութիւն, գումարութիւն, զրգոութիւն, դաւանութիւն, դիւթութիւն, դոզութիւն, դպրութիւն, եղբայրութիւն, եպիսկոպոսութիւն, երանութիւն, գայրացութիւն, գառաշաւարութիւն, գինտորութիւն, դգաստութիւն, զրպարտութիւն, զօրութիւն, էութիւն, ըղձութիւն (սուտ գուշակութիւն), ընծայութիւն, թագատրութիւն, թախծութիւն, թարգմանութիւն, թլպատութիւն, իմաստութիւն, իմացութիւն, իշխանութիւն, լալութիւն, լլկութիւն, լրութիւն, լրջմտութիւն, խաբէութիւն, խեղկատակութիւն, խնայութիւն, խոստովանութիւն, խրախճանութիւն, խրախոսութիւն, խրամատութիւն, ծածկութիւն, կառակութիւն, կնութիւն, կշռութիւն, կշտամբութիւն, կոռովութիւն, կուսակալութիւն, կուսութիւն, հաղարապետութիւն, հաճութիւն, համբերութիւն, համեմատութիւն, հայհոյութիւն, հարսնութիւն, հեթանոսութիւն, հեծութիւն, հետազօտութիւն, հիւսնութիւն, հովուութիւն, հրեշտակութիւն, հրէութիւն, ձանձրութիւն, ձեռնարկութիւն, ճարտարապետութիւն, ճգնութիւն, ճեղութիւն, ճաքաղութիւն, մատնութիւն, մարդկութիւն, մարգարէութիւն, մխիթարութիւն, մկրտութիւն, մօգութիւն, մոռացութիւն, մտածութիւն, յանցութիւն, յարութիւն, յափշտակութիւն, յաղթութիւն, յղփութիւն, յուղարկատրութիւն, յօժարութիւն, նախանձատրութիւն, նախարարութիւն, նահապետութիւն, նեխութիւն, նեղսըրտութիւն, նուաճութիւն, շլացութիւն, շինութիւն, շնորհակալութիւն, ռիսութիւն, ռստիկանութիւն, ռրկորստութիւն, ռրացութիւն, պատասխա-

նութիւն, պարտութիւն, պետութիւն, սուտերդմնութիւն, սպանութիւն, սրածութիւն, սրտացաւութիւն, սրտամտութիւն, սփոփութիւն, վարդապետութիւն, վրէժխնդրութիւն, տաղտկութիւն, տարտամութիւն, տարակուսութիւն, տեսութիւն, տէրութիւն, տիկնութիւն, տղայութիւն, տքնութիւն, ցայզութիւն, ցնծութիւն, փեսայութիւն, փրկութիւն, քահանայութիւն, քաջալերութիւն, քարոզութիւն, քաւորութիւն, քննութիւն, օգտութիւն, օծութիւն, օրհնութիւն:

Այս 606 բառերից բնիկ են ակնածութիւն, ակնառութիւն, ազտեղութիւն, աղքատութիւն, ամբութիւն, այցելութիւն, անառակութիւն, անգիտութիւն, (անդրանկա) ծնութիւն, աներբութիւն, աներկիւղութիւն, աներկիւղածութիւն, անզգամութիւն անզգայութիւն, անզգաստութիւն, անիրաւութիւն, անհոգութիւն, անձկութիւն, անմահութիւն, անմեղութիւն, անմտութիւն, (անշնորհ)ակալութիւն, անպակասութիւն, աշարձակութիւն, առաջնորդութիւն, առանելութիւն, առողջութիւն, առողջութիւն, ասղնագործութիւն, (աստուածա) գիտութիւն, (անաստուածա) գիտութիւն, ատելութիւն, արագութիւն, արարչութիւն, արբեցութիւն, արդարութիւն, արծախսիրութիւն, արութիւն, արուեստագիտութիւն, (աւար) առութիւն, բանսարկութիւն, բարեգործութիւն, բարեխօսութիւն, բարեկենդանութիւն, բարերարութիւն, բարձրութիւն, գաղտնութիւն, գարշութիւն, գեղեցկութիւն, գերութիւն, գինեհարութիւն, գիշութիւն, գիտութիւն, գողութիւն, գործատրութիւն, գոյատրութիւն, գործակալութիւն, գործակցութիւն, դալարութիւն, (դարանա)կալութիւն, դեղատուութիւն, դիմադարձութիւն, եղբայրսիրութիւն, եղբայրութիւն, երգմնաստութիւն, երիցութիւն, երկայնութիւն, երկայնմտութիւն, երկիւղածութիւն, երկմտութիւն, (երկբա)գործութիւն, զառաջատրութիւն, զոսնութիւն, էութիւն, ընդարձակութիւն, ընդերկարութիւն, ընդունայնութիւն, ընդունելութիւն, ընծայութիւն, ընկերութիւն, ընչանտութիւն, ընտանութիւն, ընտրութիւն, թանձրութիւն, թմբրութիւն, թովչութիւն, իգութիւն, իմաստութիւն, իմացութիւն, իրաւագիտութիւն, լալութիւն, լայնութիւն, լաւութիւն, լիութիւն, լկութիւն, լուսատրութիւն, լուսութիւն, լրբութիւն, լրութիւն, լրջմտութիւն, խեղութիւն, խնդութիւն, խորագիտութիւն, (խըստա)սրտութիւն, ծանրութիւն, ծերութիւն, ծոսութիւն, (կանխա)գիտութիւն, (կարճ)մտութիւն, կենդանութիւն, կնութիւն, համարձակութիւն, հանդերձատրութիւն, հաստատութիւն, հարսնութիւն, հաւագիտութիւն, հեծելութիւն, հեղգութիւն, հետազօտութիւն, հնութիւն, հողագործութիւն, հովութիւն, ձեռնադրութիւն, ձեռնարկութիւն, (ճարտարա)մտութիւն, մատնութիւն, մարդասիրութիւն, մեծարանութիւն, մենանձնութիւն, մեծութիւն, մեղադրութիւն, մերկութիւն, մերձատրութիւն, մեռելութիւն,

միաբանութիւն, միամտութիւն, միամօրութիւն, միտիթարութիւն, մոլորութիւն, մոլութիւն, մոռացութիւն, մտադրութիւն, մտերմութիւն, յարութիւն, յաջողութիւն, յղութիւն, յուլութիւն, յուղարկատրութիւն, յուղարկութիւն, նաւարկութիւն, նորոգութիւն, շատախօսութիւն, շատահմտութիւն, շինութիւն, շլացութիւն, շնութիւն, ողորմածութիւն, ողջամտութիւն, ողջութիւն, ոստայնանկութիւն, ոտնահարութիւն, ոտնառութիւն, որբութիւն, որդեգրութիւն, որդեծնութիւն, որկորստութիւն, ուղղամտութիւն, ունայնութիւն, ունկնդրութիւն, ուրացութիւն, շարագործութիւն, շարախօսութիւն, շարակնութիւն, պնդութիւն, ջերմութիւն, սաստկութիւն, ստուգութիւն, սրածութիւն, ստութիւն, սրբութիւն, տարաբերութիւն, տարագրութիւն, տարամտութիւն, տգիտութիւն, տեղատեսութիւն, տեսչութիւն, տէրութիւն, տիկնութիւն, տնանկութիւն, տնտեսութիւն, տրամտութիւն, տքնութիւն, ցայզութիւն, փոքրկութիւն, քաղցրաբանութիւն, քաղցրութիւն, քաջալերութիւն, քաջասրտութիւն, քարքնկեցութիւն, օգնականութիւն, օգնութիւն, օգտութիւն, օծութիւն, (մտա 34 %):

Հնացած են անխայտութիւն (խնայտութիւն), աշարձակութիւն (ցանկասիրութիւն), առաջատրութիւն (առաջարկված նվեր), առողջութիւն (առույգութիւն), արձանութիւն (կանգունութիւն), գինեհարութիւն (գինովութիւն), երաշտութիւն (երաշտ), ըղձութիւն, զովողութիւն (օգնականութիւն), գօշաքաղութիւն (19-րդ դարում շատ գործածական էր), ժտութիւն, լալութիւն, խրախութիւն (արևմտահայերենում), ծածկութիւն, կամակարութիւն, կատակութիւն (խայտառակութիւն), կնդութիւն (ճաղատութիւն), կշռութիւն, կորովութիւն (կորով), հաւագիտութիւն (թուռնների թռիչքով գուշակութիւն), հեծանածգութիւն (գերանների թռչումների թռիչքով), հիւրութիւն (հիւրընկալութիւն), հիւրընկալութիւն, հրեշտակութիւն (վաղաշտութիւն), տեղատեսութիւն (դաշտանատրութիւն), ցայգութիւն (գիշեր լինելը), օծութիւն:

—Ուծ,—Ուկ,—Ուկն,—Ուկֆ,—Ունի,—Ում

Այս ածանցներով ունենք խծուծ աղտաղտուկ, գաղտուկ, թեփուկ (խիծոյ), հարցուկ (կախարհ), ձեռնուկ, մանուկ, մժղուկ, յեղիեղուկ, նեցուկ, շշուկ, պուտուկ (պոյտն-ից), վաղահասուկ, վաղվաղուկ, տողուկ

(լործունք) դալուկն, նախանձուկք (նախանձ), շնորհուկք (շնորհ), թագուհի, յառաջնում (առաջ):

20 բառից բնիկ են աղտաղտուկ, գաղտուկ, դալուկն, հարցուկ, մանուկ, յառաջնում, յեղյեղուկ, վաղահասուկ, տողուկ: Բնաձայնական բաներ են՝ ճնճղուկ, շշուկ (45 %):

Հնացած են տողուկ, նախանձուկք, շնորհուկք յառաջնում, հարցուկ:

-Ումն

Այս ածանցով բայարմատներից կազմվում են բայանուններ. բավականաչափ կենդանի ու արգասավոր ածանց է. Աստվածաշնչում սրանով ունենք՝ աճումն, այտումն, այրումն, անկումն, անջատումն, աշխարումն, առակումն, առաքումն, արձակումն, աւերումն, բաժանումն, բեկումն, բոլորումն, գերծումն, գլորումն, գոշումն, գուժումն, գուշակումն, դողումն, հրգիծումն, եղծումն, երդումն, երկրորդումն, զայրացումն, զատուցումն, զարմացումն, զբաղումն, զգածումն, զեղումն, զենումն, զըջումն, զըրկումն, ընդարմացումն, թաղումն, թօթափումն, լալումն, լուծումն, լրումն, լցումն, խզումն, խմորումն, խորտակումն, խոստումն, խոտորումն, խոցոտումն, խուսափումն, ծանրացումն, ծագումն, ծորումն, կանգնումն, կատարումն, կիզումն, կոփումն, կոծումն, կոխումն, կոշումն, կոտորումն, կործանումն, հալածումն, համարձակումն, հաշումն, հաստումն, հատումն, հատուցումն, հարցումն, հեղումն, հիացումն, հիւսումն, հսկումն, ձգտումն, մաշումն, մատնումն, մերժումն, մոռացումն, յածումն, յանցումն, յապաղումն, յաջողումն, յարձակումն, յարմարումն, յորդումն, յեղակարծումն, նահատակումն, նիրհումն, ննջումն, նորոգումն, շաբաթումն, շառաշումն, շարժումն, շինումն, շշումն, ողբումն, ողորդումն, որոշումն, որոտումն, ուռուցումն, ուսումն, պահանջումն, պաշարումն, պաշտպանումն, պատահումն, պատառումն, ջնջումն, սատակումն, սգումն, սիրումն, սոսկումն, սպանումն, սրսկումն, վարժումն, վարատումն, տարածումն, տրտնջումն, ցասումն, ցրումն, փայլատակումն, փոփոխումն, քակումն, օծումն:

Այս 120 բառերից բնիկ են աճումն, այտումն, այրումն, անկումն, առակումն, արձակումն, բեկումն, բոլորումն, գլորումն, հրգիծումն, երդումն, երկրորդումն, զայրացումն, զարմացումն, զեղումն, լալումն, լուծումն, լքումն, լրումն, լցումն, համարձակումն, հաստումն, հարցումն, հեղումն, մաշումն, մատնումն, մոռացումն, յածումն, յարձակումն, յաջողումն, նորոգումն, ողբումն, ողորդումն, ուսումն, ջնջումն, սիրումն, տրտնջումն, ցրումն, փայլատակումն, օծումն (33 %):

Հնացած են (կթն չհաշվենք ն-ի անկումը) գերծումն, լալումն, շաբաթումն (հանգստացում):

Բնաձայնական են՝ կոշումն, շշումն, գոշումն, շառաշումն:

-Ուն, -Ունակ, -Ունդ, -Ունի, -Ունիք, -Ունչ, -Ունջ

Այս ածանցներից, ամենաարգասավորը ուն-ն է, որը ամենից առաջ բայարմատներից կերտում է ածականներ. ինչպես՝ անջատուն, ազաղուն (ճաղած), աճեցուն (աճող), անասուն (չխոսող), արթուն, գիտուն, զնդուն, զաղփաղփուն (խախտտ), զարթուն (արթուն), թաթաղուն, թաթաթուն, խարշափուն, խօսուն, խարխափուն, խմորուն (խմորված), կարկատուն (կարկատված), կանգուն, հասուն, հաստատուն, շարժուն, շմարթուն (անճարակ), պատառտուն, պատառուն, սիրուն, վարուն, ցածուն, փայլածուն (փայլուն), փայլուն:

-Ուն ածանցը կազմում է մի քանի մակբայներ և գոյականներ. օրինակ՝ այգուն, առաւօտուն, երկիւն, զեռուն, թռչուն, իմաստուն, սողուն, ցօղուն:

-Ունակ ածանցով ունենք միայն պարզունակ, ապա՝ -Ունդ-ով բազմածնունդ, ծնունդ. միասնունդ, սնունդ. -Ունի-ով՝ արթունի, գողունի ձերունի, արքունիք. -Ունչ-ով՝ անտէրունչ, -Ունջ-ով՝ տրտունջ, շշունջ:

48 բառերից բնիկ են՝ ազաղուն, աճեցուն, անասուն, արքուն, գիտուն, զեղուն, քաբաբուն, խօսուն, հասուն, հաստատուն, փայլածուն, փայլուն, այգուն, երկիւն, զեռուն, թռչուն, իմաստուն, բազմածնունդ, ծնունդ, միասնունդ, սիրուն, սնունդ, գողունի, ձերունի, անտէրունչ (ավելի քան 50 %):

Հնացած են զաղփաղփուն (տկար, խախտտ), թաթաղուն (լիքը լըցված), փայլածուն, շմարթուն:

-Ունք ածանցով կան կազմված՝ բարձունք, դահամունք (նվեր), իրաւունք, խրախունք, կոշունք, հարաւունք (ցանք), մկանունք, մասնունք, պաղպաղունք (զահավորակ), վանկունք (ծածկ իբրև օթեան), ցցունք (մաղբրի փունջ զլիսի վրա ցցված), փայլատակունք (փայլակ): Բընիկ են՝ բարձունք, իրաւունք, մկանունք, մասնունք, փայլատակունք: Հնացած են՝ դահամունք, խրախունք, հարաւունք, (բարբառային հարվունք), պաղպաղունք, վանկունք, (12 բառ):

-Ուտ, -Ուչ, -Ուտտ, -Ուտ

Համապատասխանաբար ունենք հետևյալ բառերը՝ զինուոր, ջրուոր, վարձուոր, վայելուչ, տեսուչ, օտարատեսուչ, այլուտտ, այսուտտ, ան-

դուստ, արքունուստ, դալուստ, թաքուստ, կորուստ, հաստահարուստ, հարուստ, հեռուստ, յարքունուստ, յետուստ, յանկարծուստ, ներքուստ, վերուստ, փախուստ, աւազուստ, խաւարուստ, ծարաւուստ, յորձանուստ, պարզուստ, օգուստ:

28 բառերից բնիկ են՝ ջրուտր, տեսուչ, ալլուստ, այսուստ, անդուստ, գալուստ, թաքուստ, հաստահարուստ, հարուստ, հեռուստ, յետուստ, վերուստ, աւազուստ, ծարաւուստ, օգուստ, օտարատեսուչ (ավելի քան 57%):
Հնացած են այսուստ, անդուստ, հաստահարուստ (շատ վտրեղ), պարզուստ (ձագար), յանկարծուստ, յարքունուստ:

-Ուր, -Ուրդ, -Ուց, -Ուցիկ, -Ուցիչ

Համապատասխանաբար ունենք թափուր, մրուր, արձակուրդ, զրախորհուրդ, ժողովուրդ, խորհուրդ, միախորհուրդ, յագուրդ, վատախորհուրդ, այգուց, առաւօտուց, խայտուց (նշան, խայտ), մերկուց, վաղուց, տարապարտուց, ուռուցիկ, ուսուցիչ:

17 բառից բնիկ են մրուր, արձակուրդ, յագուրդ, խայտուց, մերկուց (40%):

Հնացած են՝ այգուց, առաւօտուց, մերկուց (մերկ լինելով):

-Ուֆ, -Ուֆ, -Չ, -Չեայ, -Չտին, -Չոտ, -Չոտ

Համապատասխանաբար ունենք բարիոք, բարութք, գինարբութք, գիներութք (կերութիւն), սակաւութք, թանչ, առհաւատչեայ, աւետչեայ, խաւարչտին, խաւարչուտ, երկչոտ:

11 բառից հնացած են միայն աւետչեայ, բարիոք, սակաւութք:

Բնիկ են թանչ, գինարբութք (գիներութք), երկչոտ:

Պատիկ տե՛ս Իկ:

-Պան, -պէս, -չ

-Պան-դանգապան, բարապան, պարեկապան, պարսկապան, պարտապան, վանապան, պարտիզպան, փղապան: Պէս-ով կաղմված կան՝ առատապէս, արժանապէս, առնապէս, առաւելապէս, դաղանապէս, դառնապէս, հոգեպէս, ճշմարտապէս, մարմնապէս, մեծապէս, յայտնապէս, նորոգապէս, պնդապէս, սքանչելապէս, փութապէս, շուրջ: Սրանցից բնիկ են՝ առաւելապէս, առնապէս, հոգեպէս, մեծապէս, նորոգապէս, պնդապէս, փութապէս, մարմնապէս, շուրջ: (38%): 23 բառ:

-Ս, -Ասուն, -Սն, -Սուն, -Ստան, -Ստին

-Ս ածանցով մեծ մասամբ կազմվում են մակբայներ. ինչպէս՝

առաւօտս, անհնարինս, անշափս, աւուրս (օր առ օր), բաղումս (շատ անգամ), դուրս, երագս (արագ-արագ), երեկս (իրիկվա դեմ), յերեսս (առջևը), երկիցս, երիցս, եւս, զարդիս (ալծմ), ժամանակս, թերեւս, խոտորնակս, կամակորս (թշուր կերպով), հետիոտս (ոտքով), կանս (որ կանս՝ եղող), հնգիցս, հպարտագոյնս (հպարտաբար), մեծամեծս, մեծաբանս, միւս, յանգէտս, յանդգնագոյնս, յաներեւոյթս (աներևույթ կերպով), յանձանօթս (անձանոթ կերպով), յապայան, յախտեանս, յափսիթերս (թաւալզոր), յետս (դեպի ետ), նախանձուկս, ներքսագոյնս, ներքս (ներս), շինակագոյնս (գոնհիկ կերպով), սակաւս (քիչ մ.), ստահակս (ստահակութեամբ), սփիւռս, վեցիցս, քանիցս:

Կազմում է մի քանի կապեր. օրինակ՝ աղագս, յաղագս, պատճառս, սակս:

-Սան, Սուն մասնիկներով ունենք եօթանասուն, քառասուն, երեսուն, հինսուն, յիսուն, ութսուն, վաթսուն:

-Ստան տես Աստան: Ստին մասնիկով (<ուստին), ունենք՝ վերջստին:

Այս 53 բառերից բնիկ են՝ աւուրս, դուրս, երեկս, երկիցս, երիցս, եւս, զարդիս, թերեւս, հնգիցս, մեծամեծս, մեծաբանս, միւս, յանգէտս, յաներեւոյթս, յաներկիւղս, յանձանօթս, յափսիթերս, յետս, ներքս, ներքսագոյնս, ստահակս, սփիւռս, վեցիցս, քանիցս (մոտ 46%):

Այս բառերից հնացած են՝ անշափս, անհնարինս, առաւօտս, երագս, երեկս, զարդիս, ժամանակս, խոտորնակս, կամակորս, հպարտագոյնս, յաներեւոյթս, յանձանօթս, յանհոգս, յետս, ներքս, շինականագոյնս, սակաւս, վեցիցս, յաղագս, պատճառս, սակս:

-Տ, -Տի, -Տֆ, -Ր, -Րի, -Ց, -Ցէ, -Ցի, -Ցիկ, -Ցու, -ւանդ

Համապատասխանաբար ունենք՝ պարարտ, մանկտի, ոլորտք, պարարտք, այդր, այսր (այստեղ), յամր (դանդաղ), դիր, լիր, լուր, ասր, բերրի, դազանակեաց, դիմակաց, բանագնաց, առընթերակաց, գաղտագնաց, ընդդիմակաց, ոտնկաց, աւուրց (ամեն օր), իցէ, բոնցի, սակաւակեաց, երկայնակեաց, ինքնակաց, խառնակեաց, ծովամաց, հարեւանցի, բարեկեցիկ, հարեւանցիկ, վերակացու, բարձրաւանդ, գահաւանդ:

Այս 33 բառից բնիկ են՝ մանկտի, այդր, անդր, այսր, աւուրց, բերրի, դիր, լիր, ասր, իցէ, բարձրաւանդ (30%):

Հնացած են՝ մանկտի, այդր, այսր, աւուրց, հարեւանցիկ:

Մեր պատկերացումը զբաբարի է մասնիկի մասին եղել է այն, որ ամենահիմնական հոգնակի կազմող մասնիկն է զբաբարում. սրա բառակազմական դերի մասին մեր պատկերացումը խիստ աղտո է եղել: Կարծվել է, թե այսօրվա նրա բառակազմական հատկանիշը նոր երևույթ է և առաջացել է հոգնակի միջանկյալ հետեանքով: Մինչդեռ այդ մասնիկի հոգնակի կազմելու քերականական հատկանիշը իրոք միջանկյալ է բաղմամբի բառերի առնչությամբ, իսկ բառակազմական հատկանիշը կենդանի է մնացել, որ հնուց կենդանի ու գործուն է եղել մեր լեզվի պատմության վաղագույն ժամանակներից սկսած:

Ք-ն իր բառակազմական դերով հանդես է գալիս առանձին և իբրև վերջամասնիկ ուղղակի կցվում է բառարմատին առանց միջնորդավորման: Այս պարագայում է մասնիկի հիմնական դերն այն է, որ բառական մակարդակի շարժարացած արմատներից բառ է կազմում համապատասխան արմատի նշանակության և կամ նոր բառ է կազմում եզակի ձևից: Այսպես ունենք՝ աթոռ(երկն. քահանայապետությունների մի դասը), ալիք, աղոթք, անդրավարտիք, անցք, առանցք, անդունդք, արդասիք, արեւելք, արեւմուտք, անէծք, աչք, բազմաստեղք, արք, բարձերէցք, բաղաբակերք(տոն), բարձրագահք, բերք, բովք(հանք), գահք, բնադիրք(բանակատեղ), բնակք(շիրիմ), գիրք, դարարք, դիրք, դիրք, երանք, երաստանք, երեք, զարմանք, թորառաջք, թշնամանք, թոխք, խանք, խելք, խրախճանք, խօսք, կայք, ծխահանք, կապէնք, կամք, կինք, դժոխք, միկերք, կառք, կեանք, կէսք(ոմանք), կինք(ներբան), կուռք, կորէք(դժվար անցանելի տեղ), կուրծք, կտուրք, հաղբք, հանգամանք, հմայք, հողմք(աշխարհի շորս կողմը), հրապուրք, միտք, միջագետք, մօրմոք, մեծամեծք(ավագանի), պատուականք(ազնվականություն), ոք, շորք, պահք, պաճուճպատանք, պատիրք, պէտք, սանգաստականք, սանդուղք, սրունք, վազք, վաղք, տէրութիւնք փառք, վանք, վարք, վերջք, տիեզերք, տուգանք, տուրք, ցնորք, փուրք(փուրս), փառք, փրկութիւնք(մատաղ), քիմք, քղանցք, տոկոսիք:

Այս 86 միավորից բնիկ են՝ անէծք, անցք, արեւելք, արեւմուտք, աչք, բերք, բնադիրք, բարձերէցք, գիրք, դիրք, դիրք, երաստանք, երեք, զարմանք, թոխք, խօսք, կեանք, կառք, կէսք, մեծամեծք, մեղք, միտք, միջագետք, մորմոք, շորք, սանդուղք, սրունք, տիեզերք, տուրք, փուրք, քիմք (35%):

Հնացած են՝ կէսք, կինք, շորք, տոկոսիք(Շիրվ. գործածել է), փուրք, սանգաստականք(թշնամանք):

երկոքեան, ներքին, ներքնակ, երկոքին, ներքոյ, ներքուստ, ծանօթ, ամօթ, գողօն, կրօն, միակրօն, կտրօն, ներքս, պաշտօն, քանիօն, գաղտագողօնք, լալօնք, մոռացօնք, բարեպաշտօնք:

Այս 20 բառից բնիկ են՝ ամօթ, երկոքեան, ներքին, ներքնակ, ներքոյ, երկոքին, ներքուստ, գողօն, ծանօթ, գաղտագողօնք, գործօն, քանիօն, լալօնք, մոռացօնք, ներքս (75%):

Հնացած են՝ երկոքեան, երկոքին, քանիօն, գաղտագողօնք:

-Օղ, -օրէն, -օք

Համապատասխանաբար ունենք՝ թեղօղ, ազատօրէն, մարդկօրէն, յանկարծօրէն, մտօք(սրտի մտօք), իրօք, աչօք(առ աչօք), խելօք, փառօք, օրինօք:

Այս 8 բառից բնիկ են՝ մտօք, իրօք, մարդկօրէն:

Համաժողովրդական բառերը կազմում են 1199 միավոր, որից բնիկ են 497. զրական ճանապարհով մուտք են գործել մեր լեզուն 674 բառեր, որոնցից բնիկ են 118-ը: Արմատական բառերի քանակն է 91, որոնցից բնիկ են 28-ը: Հին բաղադրյալ բառերը կազմում են 73 միավոր, որոնցից բնիկ են 42-ը: Բարբառային բառերի քանակն է 165, բնիկ՝ 23: Նախածանցավոր բառերը կազմում են 478 միավոր, որից բնիկ են 132-ը: Վերջածանցավոր բառերի քանակն է մոտ 3406 միավոր, որից բնիկ՝ 960: Ընդամենը 6086 բառ:

Գ. ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

ա) ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աստվածաշնչում կրկնավոր բարդությունների բոլոր ձևերն էլ գործածված են, իսկ այսպիսի կազմությունները հատուկ են ամեն ժողովրդական խոսքի: Կրկնավոր բարդության ամենահին ձևը հարադրական կրկնավորներն են, որոնք իրարից անջատ կրկնվում են. այսպես ունենք ազգ ազգ, ամի ամի, այր այր(իրարու), ամսոյ ամսոյ, այր այր(վայ վայ), ազգի ազգի(տեսակ տեսակ), այգուն այգուն (ամեն առավոտ), գէշ գէշ (բզիկ-բզիկ), գունակ գունակ(պես-պես, զանազան), գունդ գունդ, եղիցի եղիցի (ամեն ամեն), երամ երամ(խումբ-խումբ), երփն երփն (գունդգունդ), երագ երագ, ընտիր ընտիր, ինչ

ինչ(տեսակ-տեսակ), լուռ լուռն(լուրկ-մնչիկ), ծանր ծանր, մի մի (մեկ-մեկ), յիսուն յիսուն, ոլոռն ոլոռն (կաթիլ-կաթիլ), յետս յետս, յոյժ յոյժ, մանր մանր, փոքր փոքր, ստէպ ստէպ(շուտ-շուտ), ժամանակս ժամանակս, յայսկոյս յայնկոյս, յարձակ յարձակ, նոր նոր, ո ո, ոճ ոճ, սակաւ սակաւ, վաշ վաշ, տեղիս տեղիս, տեղեաց տեղեաց:

Կրկնավոր բարդութեան երկրորդ աստիճանում հանդես են գալիս կապեր, շաղկապներ, հորովված ձևեր, որոնք անջատ-անջատ հարադրում են կրկնավոր բաղադրիչները: Այս աստիճանում նկատվում է եզրերից մեկի կամ երկուսի ձևափոխություն. այսպես՝ ամ ամէ, ամ ըստ ամէ, ամիս յամսոյ, այր առ այր(մեկմեկու), ի ժամանակաց ժամանակս, աւուր աւուր, այր ըստ առնէ(իրարու), այր զարամբ(իրարու), անձամբ անձին(ինքնին), բացէ ի բաց, գամ քան զգամ (աստիճանաբար), ժամէ ի ժամ, ժամ ի ժամ, օր ըստ օրէ, գայթի ի գայթի(անհաստատ), եւ եւս, եւս քան զեւս, զինչ ինչ, իսկ եւ իսկ, լու ի լու(լսելով), խիտ առ խիտ, կարճ ի կարճոյ, հազիւ հազ, հետ ընդ հետ(արագ հետևից), հուպ ընդ հուպ(իրար հետևից արագ), ճակատ առ ճակատ, մերձ ընդ մերձ(մոտերս), մի առ մի, մի ըստ միոջէ (մի առ մի, հաջորդաբար), առ սակաւ սակաւ(քիչ-քիչ), վեր ի վերոյ(երեսանց), շաբաթ ի շաբաթէ:

Հաջորդ աստիճանը բաղադրիչների պարզ կցումն է առանց որևէ փոփոխության. այս դեպքում զանազանություն չկա, արմատների անմիջնորդական կցում է, թե կցում է նախդիրների ու շաղկապների միջնորդութեամբ. օրինակ՝ արար(բերք, շինվածք), բարբառ, գոյնզգոյն, դէմընդդէմ, ելեւել(ելեւելս առնել (իրար գերազանցել ջանալ), երեր, երփներփն, ծործոր, հայհոյանք, կարկառ, հեղհետէ, պէսպէս, ջախջախ, վաղվաղ (շտապ), մեղմեխ(նենգ):

Այս զարգացումը տանում է դեպի հողակապով կրկնությունը, որը նույնպես արձանագրել է Աստվածաշունչը, օրինակ՝ բարբարոյ, գէշագէշ, գոյնագոյն, գունդագունդ, դասադաս(դաս-դաս), դարձադարձ, ժիրաժիր, կորակոր, մեծամեծ, նորանոր, շեղջաշեղջ, շարաշար, ջերմաշերմ:

Հետագա ընթացքը տանում է կրկնության եզրերի փոփոխության: Ամենից առաջ կրկնությունը բառ է դառնում մի վերջամասնիկի հավելումով, օրինակ՝ ազազուն, աղտաղտուկ(խիստ աղի), աղաղակ, բաղրաղալք, զանազանություն(Աստվածաշունչը զանազան ձևը չունի), թաթթաբուն, խորխորատ, կոկորդ(կորկոր-ից-կեր), թաթթաբուր(ծածուկ), յեղյեղուկ:

Ավելի հին ձևերն են կրկնության երկու եզրերի յուրահատուկ փոփոխությունները, որոնք կարող են արդյունք լինել նոր կաղապարների: Այսպես երկրորդ եզրի բաղադրիչը ժողովրդական կրկնության օրինաչափությամբ մ կամ մեկ այլ բաղաձայն է դառնում. օրինակ՝ աղխամաղխ (ընչեղեն), արհամարհ, շոգմոգ, խաժամուժ, խուժաղուժ, խնդրունդ (խոչ):

Երկրորդ եզրը կրում է մի շարք փոփոխություններ. վերջին բաղաձայնը փոխվում է. օրինակ՝ բողբոջ(փոխն. բողբող), պաղպաղ, (փոխն. պաղպաղ), խաժամուժ(փոխն. խուժախուժ): Վերջին եզրը առաջին բաղաձայնը գցում է՝ հեղեղ, մրուր, յողղողղ, հոտոտ(ելիք), յուպուպ: Վերջին բաղաձայնը գցում է. օրինակ՝ տրտունջ (փոխն. տրտունջ): Վերջին եզրը ձայնավորը փոփոխության է ենթարկվում. օրինակ՝ բարձրարբրձ, խառնիխուռն, ժանտաժուտ, սպառսպուռ, սարսուռ(փոխն. սառսառ), կերակուր, միմեանց:

Առաջին բաղադրիչը կրում է նույնպես մի շարք փոփոխություններ. վերջին բաղաձայնը ընկնում է. օրինակ՝ բաբախեմ(բախբախեմ), դադար (դարեմ-կանգ առնել), թոթով(թովթով-ից), կական, փոփոխ: Առաջին բաղադրիչի վերջին բաղաձայնը փոխվում է. օրինակ՝ բարբառ, գրգիռ, դանդաղ(դաղդաղ), կարկառ(կառկառ), կասկած(կածկած), մարմառոտ(մառմառ-ից):

Առաջին եզրի ձայնավորը սղվում է. օրինակ՝ թրթուր, տրիտուր: Ավելի բարդ փոփոխություններ են կրել մի քանի հին կաղմություններ. օրինակ՝ արհալիր(արհարհ-ից), դարհուրանք, ժանտաժուտ, գաղփաղփուն (աղիփ-ից. տկար), փասքուս(քուսքուս. համեմատիր քուս):

Կրկնավորներից բնիկ են աղտաղտուկ, ամիս յամսոյ, ամսոյ ամսոյ, ամ ամէ, ամ ըստ ամէ, ամի ամի, այր առ այր, այր ըստ առնէ, այր յարամբ, բարձրարբրձ, ինչ ինչ, թաթթաբուր, թոթով, լուռ լուռ, մի մի, յեղյեղուկ, ստէպ ստէպ, անձամբ անձին, բացէ ի բաց, եւ եւս, եւս քան զեւս, զինչ ինչ, իսկ եւ իսկ, լու ի լու, հետ ընդ հետ, հուպ ընդ հուպ, մերձ ընդ մերձ, մրուր, տրտունջ, կերակուր, միմեանց, մի առ մի, մի ըստ միոջէ, նոր նոր, վեր ի վերոյ, արար, բարբառ, դէմ ընդդէմ, ելեւել, երեր, հեղեղ, հետհետէ, դարձադարձ, մեծամեծ, նորանոր, տեղիս տեղիս, տեղեաց տեղեաց, աւուր աւուր, դարձադարձ, ջերմաջերմ (35%): Հարյուր քառասունյոթ կրկնավոր բարդություններից հիսուներկուսը բնիկ են:

Մեր հին լեզվի պատմությունն ուսումնասիրողները անհողակապ բարդությունները համարել են բուն ժողովրդական կազմություններ և այդպիսիք հակադրել են հողակապով բարդություններին, որոնք համարվել են զուտ գրական, ոչ ժողովրդական կազմություններ: Այսպիսի մեկնաբանությունը որոշ վերապահությամբ պետք է ընդունել: Հաշերենի այն կցական բարդությունները, որոնք մինչև Աստվածաշնչի թարգմանությունը գոյություն են ունեցել և կիրառվել են այստեղ, համահայկական կազմություններ են և այդպիսիք հակադրել հողակապով կազմություններին ճիշտ չի լինի: Գուցե կարելի է պնդել, որ մեր թարգմանիչները նման բառեր չեն կազմել թարգմանության գործընթացում, այլ կիրառել են արդեն կազմվածները: Այս պնդումն էլ թերևս ճիշտ չլինի, որովհետև վերջիվերջո կենդանի մայր լեզուն նրանց կարող էր թելադրել դիմելու նաև այդպիսի կազմություններին, թեկուզ բնագրի կաղապարով. օրինակ մէջֆաղափ ակնհայտ թարգմանական ընդօրինակում է, որ նշանակում է հրապարակ: Գուցե այս կարգի բառերի համանիշներով կարելի կլինի գրական և ժողովրդական կազմությունները դանազանել, սակայն պատմականորեն ճիշտ չի լինի, որովհետև բառալին համանիշությունը ամեն մի լեզվի էական հատկանիշներից մեկն է:

Այսպիսի կազմությունների գոյության հիմքը վերջիվերջո լեզվի ներքին օրինաչափությունների վրա է խարսխվում: Ամենից առաջ նշենք, որ երկարաշունչ բառերը հակվում են անհողակապ բարդությունների կողմը. այդ կարգի բառերից են զօրհանապաղ, սուտքրիստոս, (տն՛ս ուրիւն ածանցով կազմությունները), աստուածաշաշտու-թին, երկայնամտութին:

Մի շարք բառեր ունեն ա-ից տարբեր հողակապեր և կապակցող կապեր ու շաղկապներ. օրինակ՝ այրևձի, այրուձի, ափիբերան, երկուտասան, բարձրիզուխ, էլեմուտ, երթեւեկ, եօթնուտասան, եօթնետասան, իննուտասան, խառնիճաղանջ, գլխիվայր, իննետասան, խարբայ (խար-ե-բայ-ասում է), կալտի (կալ-ո-տի- կալ ծեծող), հարցուփորձ, հընգետասան, ութնետասան, ութուտասան, պատուհան, տարուբեր, տանուտեր, իննուտասաներորդ, միկնոյն, տրիտուր, ընտոծին:

Մի շարք բառեր դառնալով բարդության առաջին եզր՝ հողակապ չեն առնում: Սրանք մեծ մասամբ նախդիրներ, գերանուններ, շաղկապներ, խոսքի մասնիկներ, կապեր են. ինչպես, օրինակ՝ այդչափ,

այդպէս, այժմ (այս ժամ), այլուր, այնչափ, այսպէս, այսքան, առկաժ, առընթեր, առհասարակ, առտնին, գրեթե, դէպուղիղ, դոյնչափ, ընդդէմ, ընդհատ, ընդմիջաշախիղ, ընդմտատար, ընդվայրասուն, ըստգիւտ, թէպէտ, միթէ, մինչդեռ, մէջքաղաք, մինչև, միխթար (մի՛ խիթար), նամանաւանդ, նոյնգունակ, նոյնչափ, նոյնպէս, ոչինչ, որովհետև, որչափ, որպէս, որքան, սոյնչափ, սոյնպէս, վասնզի, քանզի: Թվականները գերազանցապես կցվում են հաջորդ բառին անմիջ-նորդաբար և բաղադրվում են անհողակապ. ինչպես՝ երկբան, երկխօս, երկծով, երկձի, երկճիւղ, երկմիտ, երեքասասան, երեքժանի, երեքհարիւր (նաև՝ երեքարիւր), իննհարիւր, հինգհարիւր, հինգքաղաք, միթէ, չորեքշաբաթ, չորեքտասան, չորսկոյս, վեցհազար, վեշտասան, չորեքհարիւր:

Ն-ով հանգող բառերը (անձն, ձեռն, ոտն և այլն) առաջին եզրում գտնվելով հակվում են դեպի անհողակապ բարդությունը, օրինակ՝ ակնհար, անձնդիր, արջնդեղ, խաշնտես, կաթնկեր, ճակնդեղ, ձեռնբեկ, ձեռնհաս, ձեռնտու, մատնտու, մատնցոյց, ոտնբեկ, ոտնկայ, ոտընկապ, ոտնհար, կաթնկեր, ունկնդիր:

Սրանց է նմանվում ստնտու, որ անհողակապ է, սակայն իսկական բարդություն է:

Մի քանի միավանկ բառեր հակվում են դեպի անհողակապ բարդությունը, բայց ոչ առանց հնչյունափոխության. օրինակ՝ ժոյժկալ (նաև՝ ժուժկալ), բանգէտ, նախծին, ջրբեր, փողհար, քաղցկեղ, քարկոթող, քարկոծ, քարկուռ, քարկուփ, օրհասարակ, հացքուլեփ (անկուշտ), օրհաս, դիթաւալ, դիտապաստ, բուրվառ, վերստորի (ջուլհակի գլան), տիկին, սուտքրիստոս:

Մի քանի բառեր հանդես են գալիս հոլովված ձևով. ինչպես՝ շանսխուր, օրէնսդիր, սանդիտոռն (կա նաև սանդատոռն), այնուհետև, այսուհետև, որովհետև:

Այս բոլորից զատ մնում են այժքաղ, աշխարհամար, ապաժաման, արեգալ արեմուտք, բերանբաց, զղեակբերդ, երկրպագու, պարտիզպան, խրատտու, վրէժխնդիր. իսկական բարդություն են պարտիզպան, գլխիվայր, հնդետասան, առտնին, ջրհեղեղ, լրտես, ջրկիր, հրկէջ, հրդեհ, հրձիգ, բուրվառ, ջրհոր, ջրհեղեղ, ջրմուղ, ջրշեղջ, տնտես, երկըրպագու, իսկ մնացածը արդյունք են կցական բարդություն:

Հնագույն կցական բարդություններ են տասնավորական թվականները երեսուն, յիսուն, վաթսուն, ութսուն, ինսսուն, որտեղ սուն, որ

տասն է նշանակում, արդեն վերածված է եղել մասնիկի դեռևս V դարից առաջ:

Քանի որ այս կազմութունների համար հիմնական թելադրիչը համարեցինք բարդության առաջին բաղադրիչները, այժմ տեսնենք դրանցից բնիկները որոնք են:

Հետաքրքրականն այն է, որ այս բառերը ճնշող գերազանցությամբ բնիկ են: Այս երևույթը բացահայտ ապացույց է այն բանի, որ կցական բարդությունը մեր լեզվի հին ու բնիկ հատկանիշներից է, գուցե իսկ բարդության սկզբնական միջոցներից մեկը, եթե ոչ ամենասկզբնականը:

Այս 143 բառերից բնիկ են՝ այրեծի, այրուծի, ափրբերան, երկուտասան, երթեակ, եօթնուտասան, եօթնետասան, իննուտասան, ընտոծին, իննետասան, (խարհ)բայ, կալոտի, հնգետասան, ութետասան, ութուտասան, տարուբեր, տանուտեր, իննուտասաներորդ, եօթնուտասաներորդ, ութուտասաներորդ, միեւնոյն, առկայծ, առտնին, գրեթէ, ընդդէմ, ընդվայրասուն, ըստգիւտ, միւնդեռ, միւնչեռ, միւնչեռ, որքան, վասնդի, քանդի, որովհետեւ, տրիտուր, միսիթար, ոչինչ, երկիսու, երկծի, երեքտասան, երեքհարիւր, իննհարիւր, միթէ, չորեքտասան, վեշտասան, ակնհար, արջնդեղ, խաշնտես, ձեռնհաս, մատնտու, ջրբեր, ջրհեղեղ, կաթնկեր, ձեռնբեկ, երկմիտ, հինգհարիւր, ոչինչ, ոտնհար, ձեռնտու, ունկնդիր, ստնտու, ժոյժկալ, լրտես, ջրհեղեղ, տնտես, քաղցկեղ, քարկոթող, օրհաս, աիկին, շանսխուր, օրէնսդիր, սանդիտուն, այնուհետեւ, այսուհետեւ, որովհետեւ, արեւգալ, բերանբաց, խրատտու: Բնիկ բառերը կազմում են 79 միավոր (մոտ 55 %):

Հնացած են՝ երկուտասան, բարձրիզլոխ, եօթնուտասան, եօթնետասան, իննուտասան, իննետասան, կալոտի, հնգետասան, ութետասան, ութուտասան, իննուտասաներորդ, եօթնուտասաներորդ, հնգետասան, ընդմիջչափդ, դոյնչափ ընդմտատար, ընդվայրասուն, ըստգիւտ, միւնչեռ, մէջքաղաք, նոյնգունակ, սոյնպէս, երկծով, երեքտասան, հինգքաղաք, չորեքշաբաթ, չորեքտասան, ակնհար, անձնդիր, արջնդեղ, խաշնտես, օրհասարակ, հացքուլեփ, վերստորի:

Հնացած բառերը կազմում են 23 տոկոս:

գ) ՎԵՐՋԻՆ ԲԱՂԱԳՐԻՉԸ ՁԱՅՆԱՎՈՐՈՎ ՍԿՍՎՈՂ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Այս բառերը երկու խումբ են կազմում՝ կցական բարդություններ և իսկական բարդություններ: Ամենից առաջ իբրև կանոն նշենք, որ

Աստվածաշնչում երկրորդ բաղադրիչը ձայնավորով սկսվող բարդ բառերը ոչ մի հոգակապ չեն ընդունում. այս գնալով ոչ մի բացառություն չկա: Ուրեմն մտում է, որ այդ կարգի բառերը խմբավորենք իբրև կցական և իբրև իսկական բարդություններ:

Ստույգ կցական բարդություններ են այն բառերը, որոնց առաջին բաղադրիչը հնչյունափոխվող միավոր է, սակայն բարդության մեջ մընացել է անհնչյունափոխ. օրինակ՝ բազումողորմ, գօտիածու, դէպուդիդ, դէտակն, դէնընկեց, խունկեղէզն, հետիոտն, մէջօրեայ, յուրութուտնք, տէգրնկէց, օրէնստսոյց:

Կցական բարդություններ են նաև հատկացուցիչի և հատկացյալի, որոշիչի և որոշյալի միացությունները. օրինակ՝ աղբերակն, անուանարկ, հօրեղբայր, մօրեղբայր, սարդիոստայն, քեռորդի, եղբորորդեակ, մեծանուն, միօրինակ, յաղթանգամ, ստորոտ:

Ստույգ կցական բարդություններ են շաղկապներով, կապերով բաղադրությունները. ինչպես՝ այլեւ, առաթուր, առանց, առաջ, առաւել, առէջ, առընթեր, առողջ, եւեթ, զիարդ, ընդարձակ, ընդերկար, ընդել (միասին ելած), ընդէր, ընդմտատար, ընդունայն, թէպէտեւ, թերեւս, իբրեւ, միւնչեռ, նախանձընդդէմ (օտարական կողմ, ուրիշների դեմ նախանձ ունեցող), նաեւ:

Կցական բարդություններ են նաև դերանուններով՝ մասամբ թվականներով բաղադրությունները. ինչպես՝ այլուստ, այլուր, այսինքն, զիարդ, ինքնեկ, խոչընդակն, միանգամ, միւսանգամ, ոչինչ, սոյնօրինակ:

Կցական բարդություններ կարող են լինել այն բառերը, որոնք կազմված են խնդրի ու խնդրատուի հարաբերությամբ, շնայած, որ այստեղ բավականաչափ շեղումներ կան: Օրինակ՝ աղիւսարկ, արդիւնարար, արդընկէց, իրաւարար, խաղաղարար, խոզարած, խաշնարած, հացարար, կամարար, կենդանարար, հատրս, մատակարար, մարդելույզ, մերձաւորարար, նաև՝ յորմէհետէ(սա անխոս կցական է), նաւուդիդ, նուագածու, ոստայնանկ, սաղմոսերգ, տէգրնկէց, քարընկէց, քընարերգ, մատակարար (մատակ անձանոթ բառ է): Բայց իսկական բարդություն է՝ բարերար:

Մի շարք բառեր կարող են կազմված լինել և իբրև իսկական բարդություն և իբրև կցական. օրինակ՝ անձնիշխան, արագտն, արքայորդի, արեգակն, բանտարգել, բարձրնտիր, բարձերէց, գահերէց, գետարծուի, բանակետղ, գետափն, գետեղը, գետնաուիծ, դժուարիմաց, երազընթաց, երկեամ, դուարթառատ, զօրընտիր, թագաւորազն, թա-

փանցանց, ժողովետղ, լալետղ, խայտառակ, ծովեզր, կայծակն, կարճունչ, կրակետղ, հանապազօր, հաստարմատ, հացերէց, հեռարձակ, հրապարականէծ, հերարձակ, ձեռներէց, ձեռնունայն, ձողամբարձ, մահարձան, մեծանդամ, մեծանուն, մերկանդամ, միանգամ, մոլորանուն, միորձի, միօրինակ, յաղթանդամ, նախաթոռ, նախողջոյն, շատերդումն, ողջանդամ, ողջընծայ(համեմատիր ողջակէզ), որմարգել, ուղտերամակ, շարակն, շարարուեստ, սապատողն, ստորոտ, վատայր, վերամբարձ, տաննաղի, վիմարգել, տարապարտարօտ, փայլակն, փոքրօգի, քաղաքորմ, քարանձաւ, օտարագգի:

Հենց այն պատճառով, որ ա խոնարհման ածանցավոր բայեր միշտ էլ կազմվել են, սրանց բնիկ կորիզը համեմատաբար քիչ է, որովհետև փոխառյալ բառերից նույնպես բայեր են կազմվել. բնիկ բայերն են՝ աղտեղանամ, աղքատանամ, ամբառնամ, ամուսնանամ, անզիտանամ, անձկանամ, անմտանամ, առիծանամ, առողջանամ, արբենամ, արգարանամ, արմատանամ, բանամ, բառնամ, բարձրանամ, բոկանամ, գարշանամ, գեղեցկանամ, դողանամ, դալարանամ, դառնամ, դիզանամ, երեկանամ, երեկոյանամ, երկուանամ, զայրանամ, զարմանամ, զգաստանամ, զոլանամ, ընդամանամ, ընդունայնանամ, ընթանամ, ընտանենամ, թանամ, թանձրանամ, իզանամ, իմանամ, իմաստնանամ, լայնանամ, լուանամ, լուսանալ, լսնանամ, խօթանամ, ծանրանամ, ծառանամ, ծերանամ, կործրանամ, կենդանանամ, համբառնամ, հեռանամ, հրանամ, հնանամ, հովանոցանամ, ձիւնանամ, մեծանամ, մեղկանամ, մեղմանամ, մենանամ, մերկանամ, մերձենամ, միայնանամ, միանամ, մոռանամ, յագենամ, յառաջանամ, յերկուանամ, յղանամ, նսեմանամ, շլանամ, ողջանամ, ուժանամ, ունայնանամ, ուրանամ, շորանամ, ջերմանամ, սալանամ, սաստկանամ, սերմանանամ, սլանամ, սնանամ, ստանամ, ստերջանամ, սրանամ, սրբանամ, վերանամ, տամկանամ, տապանամ, տգիտանամ, տեղեկանամ, տիրանամ, տնանկանամ, տօթանամ, փոքրկանամ, փքանամ, քաղցենամ, քաղցրանամ, քարանամ, օթագայանամ (օթագայանամ):

Ոչ բնիկ բայերն են՝ աղատանամ, ազոխանամ, ախտանամ, ակամայանամ, անպիտանանամ, անտառանամ, անօսրանամ, առատանամ, առաքինանամ, արձանանամ, բաղմանամ, բարկանամ, բնականանամ, բռնանամ, բրտանամ, գաղանանամ, գիրանամ, դոհանամ, զօսանամ, դաշտանամ, դառնանամ, դիրանամ, եկեղեցանամ, երիտասարդանամ, երջանկանամ, զարգանամ, զգուշանամ, զլանամ, զղջանամ, զուարթանամ, զուարճանամ, զօրանամ, ըղձանամ, ըմբոստանամ, ընդդիմանամ, թալսանամ, թալկանամ, թեթևանամ, թխանամ, թշուառանամ, թողանալ, թուլանամ, ժանտանամ, ժրանամ, լեռնանամ, խաղաղանամ, խարտեշանամ, խլանամ, խլրտանամ, խոյանամ, խոպանանամ, խոստանամ, խստանամ, ժուլանամ, կակղանամ, կանաչանամ, կարմրանամ, կարօտանամ, կենդանամ, կնճանամ, կորանամ, կուրանամ, համրանամ, հանդարտանամ, հաւատարմանամ, հզօրանամ, հիանամ, հիանդանամ, հիւրանամ, հպարտանամ,

նամ, ձանձրանամ, ճոխանամ, մարգարէանամ, մթանամ, մուրանամ, յամենամ, յափրանամ, յերազանամ, յիմարանամ, յղփանամ, յոռանամ, յուլանամ, յօրանամ, նանրանամ, շարաթանամ, շատանամ, ռխանամ, ուրախանամ, շարանամ, շուառանամ, պայծառանամ, պանդխտանամ, պանծանամ, պարարտանամ, պարծենամ, պերճանամ, սեւանամ, սըխրանամ, սպիտականամ, ստերջանամ, ստուարանամ, ստրկանամ, ստրջանամ, սքանչանամ, վատանամ, վերանամ, վշտանամ, տաղտկանամ, տապանամ, տկարանամ, տղայանամ, ցանկանամ, փափկանամ, փեսայանամ, փտանամ, քահանայանամ, քաջանամ, օտարանամ:

Բնիկ բայերի քանակն է 100, փոխառյալ բայերինը՝ 119, ընդամենը՝ 219 բայ: Բնիկ բայերը կազմում են 45 տոկոս, իսկ փոխառյալները՝ 55 տոկոս:

Սրանցից հնացած են ակամայանամ (ակամայից սխալվել), եկեղեցանամ (համաքվել), երեկանալ (իջևանել), ընտանենամ (մասնակից դառնալ. ընտելանալ), թալանամ (նվազել), թողանալ (թուլատրվի), լսնանամ (սպիտակել), խօթանամ (հիվանդանալ), կնդանամ (ճաղատանալ), կնճանամ (հպարտանալ), հիւրանամ, յօրանամ, (ուճանալ), հովանոցանամ, յամենամ, շարաթանամ (շարաթ օրը հանգստանալ՝ շաշխատել), սերմանանամ (սերմավորվել), սխրանամ (սքանչանալ, հիանալ), օթագայանամ (իջևանել), թվով 18 բայ, որ կազմում են ա խոնարհման ողջ ածանցավոր բայերի 8 տոկոսը:

Նոր գրականում փոփոխություններ են կրել հետևյալ մի քանի բայերը՝ զղջանամ-զղջալ, ըղձանամ-ըղձալ, քանամ-թացացնել, թացել, խարտեշանամ-խարտիշանալ, կանաչանամ(ճիշտը՝ կանաչել), կարօտանամ-կարոտել, հանդարտանամ (ճիշտը՝ հանդարտել), մթանալ-մթնել, մուրանամ-մուրալ, յերազանամ (երազվել), պանծանամ-պանծալ փրտանամ-փտել, փխանալ-փքվել, քաղցենամ-քաղցածանալ — քաղցել:

Ածանցավոր այս բայերը գերազանցապես շեղոք բայեր են շնորհիվ ան ածանցի, որը գոյականին ու ածականին կամ մի այլ խոսքի մասի վերածվելու գործողություն մեջ է դնում՝ դառնալ, վերածվել բայերի նշանակութամբ: Ինչպես՝ հնանամ, հրանամ, զգաստանամ (հին՝ հուր զգաստ դառնալ): Քիչ բայեր կան, որոնք չեն պահպանել այս թանձր նյութական նշանակությունը՝ կամ շնորհիվ իրենց արմատական իմաստի աղոտացման, կամ ամբողջ բայի վերացարկման՝ նյութական իրացի դառնալ՝ վերածվել նշանակություն փոփոխման. օրինակ՝ ամբառնամ (բարձրացնել), անձկանամ (կարոտել), արբենամ (հարբել), արմատանամ (արմատ բռնել), բարկանամ և այլն:

Սրանց մեջ ներգործական բայեր են հետևյալները՝ ամբառնամ, բառնամ, բոկանամ, գողանամ, ըղձանամ(մասամբ), թանամ, իմանամ, լուանամ, խոստանամ, համբառնամ, մերկանամ, մոռանամ, ուրանամ, ստանամ, զլանամ, անգիտանամ, մուրանամ:

Բոլոր շեղոք բայերը խոնարհվում են հիանամ-հիացայ կաղապարով: Աստվածաշնչում նկատվում են որոշ բայերի համար հրամայականի շեղումներ. մի բանի բայերի եզակի հրամայականը կանոնավոր ձևի հետ ունի նաև անկանոն ձև. այսպես՝ դառնամ շեղոք բայը ունի նաև դա՛րձ ձևը. յիս դա՛րձ, տէր, (Մնն. ԻԳ 14): Ի բարձունս դա՛րձ, տէր (Սաղմ. է 8): Մակայն կանոնավոր դարձի՛ր հրամայական ձևի հաճախականություն համեմատ դարձ շատ սակավ է:

Հոգնակի հրամայականը կամ դարձարո՛ւմ է և կամ դարձչի՛ք, իսկ դարձա՛յք չկա:

Ընթանամ բայը անկանոն կերպով միայն ունի ընթա՛ հրամայականի ձևը, կանոնավոր ընթացի՛ր ձևը չունի. ընթա՛, գիտ, զփքինս (Ա թագ. Ի 36): Ընթա՛ ընդ առաջ նորա (Դ թագ. Դ 26): Ընթա՛ և խօսեաց ընդ երիտասարդին (Չաք. Բ 4): Ընթա՛ ի տուն քո (Սիր. Լե 15):

Մեծենամ, յամենամ, քաղցենամ բայերը անցյալ կատարյալից կազմվող ժամանակները չունեն քաղցենամ միայն կա մեկ անգամ կիրառված (ամենեւին խելամուտ եմ յագել և քաղցենալ. (Փիլ. Դ 12): Վերջինը միայն այս մեկ անգամն է գործածված, նշանակում է քաղցեմամ. 5-րդ դարում արդեն մեռած էր:

Ներգործական բայերից ստանամ-ստացայ— ճիշտ այնպես է խոնարհվում, ինչպես շեղոք հիանամ-հիացայ. եզակի հրամայականը ստացի՛ր, հոգնակին՝ ստացարո՛ւմ, կա նաև ստացչի՛ք, իսկ ստացայք իբրև հրամայականի ձև չկա: Արգելականը՝ մի՛ ստանա, մի՛ ստանայք:

Այդ նույն ձևով է խոնարհվում գողանամ բայը առանց որևէ շեղումի: Իմանամ բայի համար բառարանները սալիս են իբրև եզակի հրամայական իմա՛, իմա՛ց, իմացի՛ր. Չալրխյանը միայն նշում է իմա՛ ձևը: Ինչպես երևում է, զրանք բոլորը ետին ձևեր են. Աստվածաշունչը ունի միայն իմասչի՛ր (Յորժամ նստիցիս լրնթրիս, իմանալով իմասչիր, որ ինչ առաջի դնիցի. Առ. ԻԳ, 2): Հոգնակին՝ իմացարո՛ւմ. (իմացարո՛ւք զխրատ. Առ. Ա Թ.): Արգելականի եզակին չի հիշատակված, իսկ հոգնակին միայն՝ մի՛ իմասչիք (լսելով լուիչիք և մի՛ իմասչիք. Ես. 2 9): նույն նախադասությունը նաև՝ Մատթ. ԺԳ 14), կարող է սա նաև ապանի մտածվել):

Ուրանամ բայը շեղում չունի. ուրացայ, ուրացայց, եզակի հրամայականը չի նշված, իսկ հոգնակին ուրացարո՛ւմ է: Արգելականը չկա:

Մոռանամ բայը շեղում է միայն հրամայական եղակիում. փոխանակ՝ մոռացի՛ր ունի մոռա՛. արգելականը կանոնավոր է՝ մի՛ մոռանա, մի՛ մոռանայք: Միայն ունի նաև արգելականի հետևյալ ձևերը. յիշեա՛, մի՛ մոռանայցե՛ս, որչափ բարկացուցեր զտէր Աստուած քո (Բ Օրէն Թ 7): Մի՛ մոռանալ զօրենս ի սրտից (Բ Մակ. Բ 3): Մի՛ մոռացիս, զի ոչ գոչ դարձ (Սիր, ԼԸ 22): Միայն սրանք պետք է մանրակրկիտ ստուգվեն ըստ ձեռագրերի:

Ձլանամ— կատարյալի ձևերը չունի. սակայն արգելականի անկանոնիկ մի ձև ունի. մի՛ զլացիս զվարձս տնանկին (Օրէն ԻԴ 14): Գուցե այս դեպքում մի՛-ն պետք է շ-ով արտահայտենք. չլլանա:

Բոկանամ— միան երկու ձև ունի՝ բոկանայի, բոկացա:

Խոստանամ— հրամայականի ձևեր չունի, մյուս ձևերը շեղումներ չեն տալիս: Նույնն է նաև մուրանամ:

Լուանամ բայը անկանոն է. ըստ ա խոնարհման ածանցավոր բայերի այս բայի անցյալ կատարյալը պետք է լինեն լուացայ, բայց լուացի է: Չարմանալիորեն կա նաև՝ այսպիսի օրինակ և այն էլ Առակաց զրոքում: Ձեւս անձին իւրոյ ոչ լուացաւ (փոխն. լուաց. Առ Լ 12): Լուացայց (այս նշանակում է, որ կատարյալը լուացայ է) սրբությամբ զձեռս իմ (Սաղմ. ԻԵ 2Բ 13): Եզակի հրամայականը լուա՛ է, հոգնակին՝ լուացչի՛ք, մյուս ձևերը չկան: մերկանամ բայը Չալրխյանի քերականության մեջ բերվում է իբրև ներգործական բայ՝ մերկանամ-մերկացի կաղապարով: Մինչդեռ բոլոր անցյալ կատարյալները մերկացայ, մերկացա, մերկացան ձևերով է և ոչ մի անգամ՝ մերկացի: Միայն երկրորդ ապանու երկու ձև կա՝ ներգործակերպ: Մերկացես զաղտեղութիւն և ոչ երկիցես (Յովբ. ԺԱ, 15): Եւ ես մերկացից դյետուստ քո (Եր ԺԳ 26): Մնացած հինգ ձև՝ մերկացիս, մերկացի, մերկացիս, ներգործական նշանակությամբ են. եզակի հրամայականը մերկեա՛ է՝ մերկեմ բայից, իսկ հոգնակին՝ մերկացարո՛ւմ է. այլ ձև չկա:

Բանամ բայը լրիվ ներգործական և ներգործակերպ խոնարհվող բայ է առանց որևէ շեղումի՝ բանամ— բացի, բա՛ց, բացէ՛ք:

«Թանամ բայը ներգործական բայ է թացի, թաց, թացէք կանոնավոր կաղապարով:

Բառնամ նույնպես կանոնավոր ներգործակերպ խոնարհվող ներգործական բայ է՝ բառնամ-բարձի, բա՛րձ-բարձէ՛ք կաղապարով:

Ա) ՊԱՐՉ ԲԱՅԵՐԸ

Ե խոնարհման պարզ բայերը քանակով շատ մեծ են. Աստվածաշընչում դրանց քանակը հասնում է մոտ 1100-ի՝ այսինքն ա խոնարհման բոլոր բայերի 4 անգամից ավելին: Եթե ա խոնարհման բայերը գերազանցապես չեզոք բայեր են, ապա Ե խոնարհման բայերը գերազանցապես ներգործական բայեր են: Ե խոնարհման պարզ բայերից բնիկ են՝ ածեմ, ակնարկեմ, ակնկորեմ, աղաղակեմ, աղաչեմ, աղարտեմ, աղմկեմ, աղտեղեմ, աճեմ, ամաչեմ, ալլալեմ, ալլա(կերպեմ), ալլա(փոխեմ), այրեմ, անուանեմ, անսաստեմ, աշատեմ, աջողեմ, առադաստեմ, առականեմ, առակեմ, առաջնորդեմ, առաքեմ, առխօթեմ, առնեմ, ասեմ, ատեմ արածեմ, արբանակեմ, արծարծեմ, արտասուեմ, բամբասեմ, (բարե)բանեմ, բարբառեմ, (բարե)խօսեմ, բեկտեմ, բերեմ, բթեմ, բոլորեմ, բորբոքեմ, (բռն)ահարեմ, բրեմ, գալարեմ, գարշեմ, գեբեմ, գիտեմ, գլեմ, գլխատեմ, գլխարկեալ, գնեմ, գոշեմ, գործեմ, գրեմ, դադարեմ, դեղեմ, դիեմ, դոփեմ, եմ, երգեմ, երեքնեմ, երկայնամտեմ, երկայնեմ, երկնեմ, եփեմ, եօթներորդեմ, զականեմ, զանգեմ, զանդիտեմ, զարդարեմ, զգեանեմ, զեատեղեմ, (զր)աբանեմ, զօղեալ, ըմբերանեմ, ընդ(արծակ)եմ, ընդմիջել, ընծայեմ, ընդ(գրկ)եմ, ընկերել, ընկերշակեմ, ընկղմեմ, ընչա(թափեմ), ընտրեմ, թաթաւեմ, (թեւ)արկեմ, թեքեմ, թովել, (ժոյժ)կալեմ, լալնեմ, լարեմ, լափեմ, լիղեմ, լլկեմ, լծեմ, լուսաորեմ, լոնեմ, լսեմ, լրտեսեմ, խածատեմ, խաչթեմ, խայտառակեմ, խանձատեմ, խանչեմ, խաչեմ, խարեալ խարշեմ, խեթկեմ, խեղեմ, խթեմ, խանջեմ (խրխջալ), (խնամ)արկեմ, խոհ(արկեմ), խորովեալ, ծաղրեմ, ծամեմ, ծանրեմ, ծանրանաւեալ, ծեծեմ, ծիծաղեմ, ծոնեմ, կականեմ, կատակեմ, կարթեմ, կարթահարել, կեղեմ, կեղեքեմ, կերակրեմ, կոշեմ, կոնչեմ, (կոփ)ահարեմ, կրծեմ, կրկնեմ, կրճեմ(կրճտել), կրճտեմ, հալեմ, հայհոյեմ, հայցեմ, հանդերձեմ, հաչեմ, հառաչեմ, հաստատեմ, հաստեմ, հարկեմ, հարստահարեմ, հեղեղատեմ, հեղեղեմ, հետադօտեմ, հերկեմ, հինգերորդեմ, հծծեմ, հեղեղեալ, հնչեմ, հողեմ, հովուեմ, հոտեալ, հոտոտեմ, հրդեհեալ, հրկիզեմ, ձաղեմ, ձաղկեմ, ձեռնարկեմ, ձեւեմ, ձմբրեմ, ձեռնադրեմ, ձուլեմ, ղօղանջեմ, ճանաչեմ, ճղեմ, մալեմ, մահա(պարտ)եմ, մաղթեմ, մանրեմ, մատնեմ, միծաբանեմ, մեծամտեմ, մեծարեմ, մեկնեմ, մեղադրեմ, մեղրեալ, մեղանչեմ, մեկնեմ, մերկեմ, միաբանեմ, միզեմ, մխեմ, մխիթարեմ, մնչեմ, մոլախոտեմ, մոլեզնեմ, մոնչեմ, մտաբերեմ, մրեալ, մրմնջեմ, մրրկեալ, յականեմ, յանկեմ, (յաղթ)ահարեմ,

յանդգայեալ, յանձանձեմ, յաջաղեմ, յաջողեմ, յառաջեմ, յատակեմ, յարեմ, յարդարեմ, յարկեմ, յետնեմ, յերկարեմ, յերբեմ, յղեմ, յոլովեմ, յուղարկեմ, յօղեմ, նաւա(պետ)եմ, նաւարկեմ, նաւեմ, նիւթեմ, նորոգեմ, շաղեմ, շառաչեմ, շնչեմ, շշնջեմ, շշեմ, ոգե(խառն)եմ, ողողեմ, ողորկեմ, ողորեմ, ոռոգեմ, որոճեմ, ուղարկեմ, ուտեմ, (շար)ախօսեմ, շար(ակն)եմ, շուեմ, (պարս)աքարեմ, պեղեմ, պնդեմ, ջնջեմ, ջրգողեմ, (սանձ)ահարեմ, սաստեմ, սերմանեմ, սիրեմ, սխալեմ, սորեմ (ծակերը մտնել), սորեմ (աչքի լույսը պակասել), սորսորեմ, ստեմ, ստերիւրեմ, ստիչեմ, ստուգեմ, սրբեմ, սրեմ, սրտպնդեմ, ստունգանեմ, սփռեմ, վնչեմ, վրնջեմ, տասանորդեմ, տատանեմ, տարաբերեմ, տեւեմ, տիրեմ, սրտնջեմ, տօնեմ, ցանկորդեմ, ցտեմ, ցրեմ, ցրուեմ, փայլեմ, փայտակեմ, փողփողեմ, (փայլփլել), փոքրեմ, փոնչեմ, փշեմ, փրփրեմ, քաղեմ, քամեմ, (քաջ)ալիբեմ, քարեմ, քարընդոտեմ, քար(կոծ)եմ, քաւեմ, քերեմ, քնեմ, քշեմ, քրթմնջեմ, օգնեմ, օգտեմ (240 բայ):

Բ) Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐՉ ՆԵՐԿՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ

Աղատեմ, ածեմ, աղաչեմ, աղարտեմ, աղխաղխեմ, աղխեմ, աղմրկեմ, աղտեղեմ, ամոքեմ, ամփոփեմ, ալլալեմ, ալլակերպեմ, ալլափոխեմ, ալպանեմ, անգոսնեմ, անարգեմ, այրեմ, անզաւակեմ, անժառանգեմ, անկուշեմ, անուանեմ, անջատեմ, անջրպետեմ, անպատուեմ, անօրինեմ, աշխատեմ, խարհադիտեմ, ապախորեմ, ապականեմ, ապրխտեմ, ապտակեմ, աջողեմ, առակեմ, առականեմ, առաքեմ, առխօթեմ, ասեմ, ատեմ, արածեմ, արհամարհեմ, արժեմ, արծարծեմ, արձակեմ, աւանդեմ, աւարեմ, աւաքեմ, աւետարանեմ, բաղկեմ, բոժանեմ, բամբասեմ, բախեմ, բարախեմ, բաշխեմ, բարեբանեմ, բեկտեմ, բերեմ, բեւեռեմ, բժշկեմ, բթեմ, բոլորեմ, բովանդակեմ, բորբոքեմ, բռնեմ, բռնաբարեմ, բռնադատեմ, բռնազբօսեմ, բռնահարեմ, բռնեմ, բրղեմ, բրեմ, գալարեմ, գանձեմ, գգուեմ, գեղցեմ (խոնարհեցնել), գերեմ, գլեմ, գիտեմ, գըլխատեմ, գձձեմ, (թեքել), գնեմ, գոփեմ, գործեմ, գումարեմ, գրաւեմ, գրեմ, գրգռեմ, դատապարտեմ, դատեմ, դարմանեմ, դաւաճանեմ, դաւանեմ, դեղեւեմ, դիեմ, դիտեմ, դղրղեմ, դսրովեմ, դրուագեմ, դրոշմեմ, դրօշեմ, երգեմ, երեքնեմ, երկայնեմ, եփեմ, եօթներորդեմ, զականեմ, զարդարեմ, զգեանեմ, զեղծեմ, զեատեղեմ, զգուեմ, զննեմ, զոհեմ, զուգեմ, զսպեմ, զրկեմ, զրպարտեմ, զօղեմ, ըմբերանեմ, ըմբռնեմ, ըմպեմ, ընդարձակեմ, ընդգրկեմ, ընթրեմ, ընծայեմ, ընկճեմ, ընկրկել, ընկղմեմ, ընչաթափեմ, ընտրեմ, թաթաւեմ, թախանձեմ, թաղեմ, թարգմանեմ, թափեմ, թե-

քեմ, թխրեմ, թլպատեմ, թշնամանեմ, թուեմ, թրեմ, թրծեմ, թրմեմ, թօթափեմ, ժանգօտեմ, ժամանակեմ, ժառանգեմ, ժողովեմ, լայնեմ, լարեմ, լիզեմ, լլկեմ, լծեմ, լմլմեմ, լուսատրեմ, լսեմ, լրտեսեմ, խարեմ, խաթարեմ, խախտեմ, խածատեմ, խայթեմ, խայտառակեմ, խանգարեմ, խաչեմ, խառնեմ, խառնակեմ, խարբալեմ, խարխափեմ, խարշեմ, խաղտեմ, խափանեմ, խեթկեմ, խեղեմ, խեղղեմ, խզեմ, խըլեմ, խլլեմ, խթեմ, խղխայթեմ (զրգոել), խմբեմ, խմորեմ, խընդրեմ, խնկեմ, խողխողեմ, խոշտանգեմ, խոտեմ, խոտորեմ, խորամանկեմ (նենգովթյամբ վնասել), խորեմ, խորովեմ, խորտակեմ, խոցեմ, խոցոտեմ, խուեմ, (նեղել), խուզեմ, խուճապեմ, խոռվեմ, խտղտեմ, խարեմ, խրամատեմ, ծալեմ, ծախեմ, ծածկեմ, ծամեմ, ծակեմ, ծանծաքեմ (ծամել), ծարրեմ, ծեծեմ, ծեփեմ, ծխեմ, ծծեմ, ծոեմ, ծրարեմ, ծփեմ, կազմեմ, կախեմ, կախարղեմ, կակղեմ, կամակորեմ, կանգնեմ, կապեմ, կառափեմ, կառափնատեմ, կատարեմ, կարգեմ, կարեմ, կարծեմ, կարկառեմ, կարկատեմ, կարկեմ, կարճեմ, կեղեմ (կեղէին ձեռվ), կեղեւեմ, կերակրեմ, կերպարանեմ, կթեմ, կծկեմ, կնքեմ, կշեմ, կշտամբեմ, կոթողեմ, կոխեմ, կոծեմ, կոծկեմ (ըստ ՀՀԲ), կողոպտեմ, կոշեմ, կոտորեմ, կոտորուեմ, կորզեմ, կործանեմ, կուտեմ, կոփեմ, կտրեմ, կրծեմ, կրեմ, կրկնեմ, կրճատեմ, կրճտեմ, կոփեմ, կտտեմ, կրթեմ, կցեմ, հալածեմ, հալեմ, հակեմ, հաճեմ, համառօտեմ, համարեմ, համբաւեմ, համբուրեմ, համբարեմ, համեմատեմ, համեռեմ, հայհոյեմ, հայցեմ, հանդերձեմ, հանեմ, հաշեմ, հասարակեմ, հաստատեմ, հաստեմ, հարթեմ, հարստահարեմ, հաւաքեմ, հեզնեմ, հեղեղատեմ, հետազօտեմ, հերկեմ, հինգերորդեմ, հնազանդեմ, հոսեմ, հովուեմ, հոտոտեմ, հորղեմ, հրամայեմ, հրապուրեմ, հրղեհեմ, հրաւիրեմ, հրկիզեմ, ձաղեմ, ձայնեմ, ձզեմ, ձեւեմ, ձեռնաղբեմ, ձուկեմ, դօղեմ, ճաշակեմ, ճառեմ, ճարակեմ, ճարտարապետեմ, ճզնեմ, ճեղղեմ, ճենճերեմ, ճեպեմ, ճմլեմ, ճնշեմ, ճշգրտեմ, ճշղեմ, ճշմարտեմ, ճօճեմ, մալեմ, մաղեմ, մաղկատեմ (խայթել), մանեմ, մանրեմ, մատնեմ, մատակարարեմ, մաքրեմ, մեծարեմ, մեկնեմ, մեղադրեմ, մեքենայեմ, մերժեմ, մերձատրեմ, մերկեմ, մկրտեմ, մզեմ, մղեմ, մոգեմ, մորթեմ, մօտեմ, յազեմ, յականեմ, յաջորդեմ, յամեմ, յայտնեմ, յաղթայարեմ, յանդիմանեմ, յանձանձեմ, յաջողեմ, յառեմ, յապաւեմ, յատակեմ, յարագեմ, յարգեմ, յատեմ, յարեմ (կցել), յարղարեմ, յարկեմ, յափշտակեմ, յերկարեմ, յիշատակեմ, յիշեմ, յլեմ, յորդորեմ, յուկեմ, յուղարկեմ, յօշեմ, յօրինեմ, նախատեմ, նեղեմ, ներեմ, ներկեմ, նղովեմ, նիւթեմ, նկարեմ, նկատեմ, նշանակեմ, նշկահեմ, նշմարեմ, նորոգեմ, նուաճեմ, նուիրեմ, շաղախեմ, շարժեմ,

շարժեմ, շեղջակուտեմ, շինեմ, շնորհեմ, շրջեմ, շրջրջեմ, շփեմ, շփոթեմ, շօշափեմ, ողողեմ, ողորկեմ, ողորքեմ, ուխտեմ, որոնեմ, որոշեմ, ուղերձեմ, ուղղեմ, ուտեմ, շարժեմ, շարշարեմ, շափեմ, պախարակեմ, պահանջեմ, պահեմ, պաճուճեմ, պաշարեմ, պաշտեմ, պատառեմ, պատժեմ, պատճառեմ, պատմեմ, պատուաստեմ, պատուեմ, պատուիրեմ, պատուհասեմ, պատուպարեմ, պատրաստեմ, պատրեմ, պատրուակեմ, պարարեմ, պարգեւեմ, պարղեմ, պարապեմ, պարսպեմ, պարուրեմ, պարտեմ, պարսաքարեմ, պարտատրեմ, պղծեմ, պղտորեմ, պնդեմ, պսակեմ, պրկեմ, ջախջախեմ, ջամբեմ, ջարղեմ, ջնջեմ, սահմանեմ, սայթաքեմ, սանձահարեմ, սասանեմ, սատակեմ, սեղմեմ, սերմանեմ, սթափեմ (թափել), սիրեմ, սղոցեմ, սպառեմ, սպրղեմ, ստուգեմ, սրբեմ, սրեմ, սրսկեմ, սփոռեմ, սփոփեմ, վախճանեմ, վաճառեմ, վանեմ, վառեմ, վատթարեմ, վատնեմ, վարանեմ, վարեմ, վարժեմ, վարձեմ, վարսեմ, վիճեմ, վիրատրեմ, վճարեմ, վնասեմ, վտանգեմ, վտարանդեմ, վտտեմ, տազնապեմ, տախտապարեմ (տարածել), տազնապեմ, տանջեմ, տաշեմ, տասպալեմ, տասպակեմ, տասանորդեմ, տատանեմ, տարածեմ, տնկեմ, տուժեմ, տօնեմ, տպատրեմ, ցանեմ, ցաւեմ, ցաւէ, ցրեմ, ցրուեմ, ցցեմ, ցօղեմ, փակեմ, փայլափալեմ, փառատրեմ, փարատեմ, փետեմ, փշրեմ, փոխանակեմ, փոխեմ, փողեմ, փողոտեմ, փորեմ, փորձեմ, փոփոխեմ, փոքրեմ, փշեմ, փորձեմ, փտեմ, փրկեմ, փրփրեմ, քակեմ, քակտեմ, քաղեմ, քամեմ, քամահեմ, քայքայեմ, քանդակեմ, քանդեմ, քաջալերեմ, քարընդոտնեմ, քարկոծեմ, քարշեմ, քարողեմ, քաւեմ, քերեմ, քերքեմ, քերցեմ, քննեմ, քշտեմ, օրհնեմ. 535 բայ:

զ) Ե ԽՈՆԱՐՉՄԱՆ ՊԱՐՁ ԵՐԿՍԵՆ ԲԱՅԵՐԸ

Աղահեմ, ազղեմ, ախորժեմ, աղերսեմ, անխայեմ, ապաշխարեմ, ապաքինեմ, բխեմ, բուրեմ, գուշակեմ, դիւրեմ, երանեմ, երկնեմ, ծագեմ, կանխեմ, կատակեմ, հաւասարեմ, հնշեմ, համարձակեմ, հարկեմ, յաճախեմ, յապաղեմ, յորղեմ, նենգեմ, նուագեմ, շնշեմ, շշնջեմ, որոճեմ, ուխտեմ, պաշտպանեմ, ստուճգանեմ, վաստակեմ, վկայեմ, փայլատակեմ, քարողեմ. 35 բայ:

ը) Ե ԽՈՆԱՐՉՄԱՆ ՊԱՐՁ ՉԵՂՈՔ ԲԱՅԵՐԸ

Ակնկորեմ (պատկառել), աղաղակեմ, աճապարեմ, աճեմ, ամաշեմ, ամբաստանեմ, ամբարհաւաճեմ, ամբարշտեմ, ամբարտաւանեմ, անսաստեմ, անցանեմ, աշառեմ, ապաշաւեմ, ապստամբեմ, ապրեմ,

առաւօտեմ, ասպատակեմ, արագեմ, արբանեկեմ, արգահատեմ, արշաւեմ, արտասուեմ, աւազակեմ, աքացեմ, բարեխօսեմ, բաւեմ, բողոքեմ, բունեմ, գարշեմ, գթեմ, գոշեմ, գուժեմ, դաղարեմ, դաւեմ, դիմեմ, դիւրեմ, դոփեմ, եմ, երագեմ, երկայնամտեմ, երկմտեմ, զանգիտեմ, զրբանեմ, զօրեմ, ընկերեմ, ընկերշակեմ, թագաւորեմ, թերահաւատեմ, թեւարկեմ, ժամանակեմ, ժամանեմ, ժխտեմ, ժուժկալեմ, ժուժեմ, ժտեմ, իշխեմ, լոնեմ, խախտեմ, խանչեմ, խարդախեմ, խարխափեմ, խրխնջեմ, խղճեմ, խնամարկեմ, խնայեմ, խոհակերեմ, խուսափեմ, խուսեմ, խրախուսեմ, ծաղկեմ, ծանրեմ, ծառայեմ, ծորեմ, կաթեմ, կայթեմ, կայտոնեմ, կասեմ, կասկածեմ, կարթեմ, (հեռանալ), կարեմ(կարողանալ), կարճատեմ(կարճանալ), կարօտեմ, կաքաւեմ, կրճեմ, կօշեմ(մոնչալ), հաղորդեմ, համբերեմ, հանդարտեմ, հաշեմ, հառաշեմ, հեծեմ, հեծեծեմ, հեստեմ, հմայեմ, հծծեմ, հսկեմ, հրաժարեմ, ձեռնարկեմ, ձմերեմ, զօղանջեմ, ճախրեմ, ճայթեմ, ճաշեմ, ճարտարեմ, ճողոպրեմ, ճշեմ, մաղթեմ, մարթեմ, մաքառեմ, մեծաբանեմ, միաբանեմ, մնչեմ, մուլխոտեմ, մոնչեմ, մտաբերեմ(ձգտել), մրմնջեմ, յաղթեմ, յամեմ, յաղաշեմ, յանկեմ, յառաջեմ, յողովեմ, նաւեմ, նենգաւորեմ, նմանեմ, ննջեմ, նիրհեմ, նշխարեմ, նուաղեմ, նքթեմ, շճեմ (քամվել), շութափեմ, շարախօսեմ, շարակնեմ, շուեմ, պակասեմ, պայթեմ, պատահեմ, պատասխանեմ, (ուժ գտնել), պատկառեմ, պարապեմ, պտկեմ, պոռնկեմ, պտղաբերեմ, սաղմոսեմ, սաստեմ, սարսեմ, սխալեմ, սկեմ, սորեմ (աչքի լույսը պակասել), սորեմ (ծակերը մտնել), սունայնեմ, (հառաշել), սպասաւորեմ, սպասեմ, սպրդեմ, ստահակեմ, ստիպեմ, ստնանեմ, (վնաս տալ), վագեմ, վաղվաղեմ, վաղվաղեմ, վայելեմ, վայեմ, վատասրտեմ, վատեմ (տկարանալ), վտարանջեմ(ապստամբվել), վրիպեմ, վրիբակեմ(ցոփանալ), վրնջեմ, տիրեմ, տեւեմ, տղտնջեմ, ցաւէ, ցաւեն(միագիմի), փապարեմ, փափագեմ, փողփողեմ, փոնչեմ, փսխեմ, փրփրեմ, քայլեմ, քնեմ, քստմնեմ, քրթմնջեմ, օգնեմ, օգտեմ. 185 բայ:

Ե) ԱՅՆՊՈՒՄԻ ԲԱՅԵՐ, ՈՐՈՆՅ ԽՈՆԱՐՉՈՒՄԸ ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՆՆԵՐԻ
ԱՆՈՐՈՇ Է Ե ԵՎ Ի ԽՈՆԱՐՉՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Որոշ բայեր միայն մեկ կամ մի երկու(երբեմն շատ) անգամ են կիրառված Աստվածաշնչում, բայի այնպիսի ձևով, որ խոնարհման տեսակը չի որոշվում՝ այսինքն՝ հասարակ ձև է Ե Ե Լ Ի խոնարհումների համար, բայերը տալիս ենք այն ձևերով, ինչպես որ կիրառված են. այսպես՝ ունենք՝ աղճատեալ(կ), առագաստեալ(կ) բարբարէի(չ) (ժամանակ շու-

նենալ), բաւականեալ, զլխարկեալ(չ), գաղթել(չ), գահակեալ(չ), գոգեալ (ն), գունել (ն), գրթցէիք (ն), դատափետեալ (կ), դրոշմեալ (կ), դրօշեալ (15 անգամ իբրև գոյական), զանգեալ (կ), զեղչել (ն), զինեալ (չ), զօհեալ (կ), զրպարտեալ (կ), զօղեալ (կ), ընդմիջել, ընթրելոց (պատրաստեալ դինչ ընթրելոց իցեմ. Ղուկ. ԺԵ 8), ընկերել (չ), թեւակոխէին (ն), թովել (ն), թրմեալ (ն), ժապաւինեալ (կ), խախալելոյ (կ), խարեալք(կ), խեռեալ (չ), խորովեալ (կ), խուժելոյ (չ), խոնել (ն), խրեալ (չ), ծալեալ (կ), ծակոտեալ(չ), ծանրանաւեալ (չ), ծպնեալ (չ), ծրտէին (չ), ծրդեալ (չ), կազդուրել (ն), կականէին (չ), կամակարեալ (չ), կաշկանդեալք (կ), կապուտակեալ (կ), կապտեսջիբ (ն), կարթահարելոյ (կ), կկոցեալ (չ), կշտամբեալ (կ), կուտակեալ (չ), կոփեալք (կ), կտեալ (կ), կրճատեալ (կ), կրթեցելոց (կ), համողէր (չ), հանապազորդէին (չ), հեղեղեալ (չ), հոտեալ (չ), հոգեհեալ (կ), ձրգծեալ (կ), ճանապարհորդելեալ (չ), ճառագայթեալ (չ), մահապարտեալ (կ), մանեալ (կ), մարմաջելոյ (չ), մեղրեալ (կ), մենագինեալ (չ), մշտնջենաւորել (չ), մոգէր (ն), մոխրել (չ), մրրկեալ (չ), մրեալ (չ), յաղելոյ (ն), յանզգայնալ, յամառեալ, յարմարեալ (չ), յողողողեալ (չ), յօղեալ (կ), նաւապետեալ (չ), նաւարկեալ (չ), նզովեալ (կ), նշաւակեալ (նկ), շահատակէին (չ), շահեա (ն. շահեմ չկա), մի՛ շաղփաղփիր—մի՛ շաղփաղփեր (չ. երկուսն էլ նույն տեղում. Սիր. է, 15, 16, 13), շաշել (չ), շառաշել (չ), շեղջակուտեալ (չ), շպարէին (անդրդրճ), շրջշրջել (ն), շփէին (ն), ոստոստել (չ), ուղերձեալ, ուղերձէիք (ն), շքաւորէր (չ), պախեալ (չ), պահպանեալ (կ), պաճուճել (չ), պառակտեալ (չ), պատուիրեալ (կ), պարգեւեալ (կ), պարպատէին (չ), պնդասրտեալ (չ), պողէր (ն), ջախջախեալ (կ), ջրգողեալ (չ), սահմանեալ (կ), սաղաւարտեալ (չ), սայթաքել (չ), սարսոացեալ (չ), սաւառնէին (չ), սերեկեալ (չ), սովամահէին, սորսորել (չ), սրտապնդեալ (ն), վազվաղէր (չ), վանդակեալ (կ), վատթարեալ (կ), վարատել (ն), վերաբերել (չ), վտարանգել (կ), վրնջէին (չ), տարաբերեալ (չ), տարածամէր (չ) տարակուսեալ (չ), տնկեալ (կ), տուայտել (չ), ցաւագնեալ, ցցեալ (կ), քանդեալ (կ), քանքարտելով (չ), քանցեալ (ն), քարշեալ (կ), քշել (ն). 133 բայ:

Ե խոնարհման պարզ բայերից հնացել են՝ աղխաղեմ (հավաքել, խմբել), աղխեմ (փակել, կողպել), ամբարշտեմ, անգոսնեմ (անարգել), անխայեմ, (արհամարհեմ), անկուշեմ (աքացել), անսաստեմ (ըմբոստանալ), անօրինեմ (անօրեն դործ անել), աշառեմ (անաշառ շլինել), ապախուրեմ (խուլրը հանել), առականեմ (անցըր՝ ճանապարհը փակել),

արագիմ (շտապել), բազկիմ (համառոտել), բարբաբեմ (ժամանակ զբռնել), բունեմ (բնավորվել), բոնեմ (կրապատել), գահակեմ (լարել, ձգել), գեղցեմ (խոնարհեցնել), գթեմ (սայթաքել), գլխարկեմ (գլուխը վայր գցել), գնկեմ, գունեմ (գունավորել), գրթցեմ (հրել), դիեմ (ծիծ ծծել), դրօշեմ (քանդակել), երագեմ (շայրտել), ցականեմ (նկատել), ընդմտանեմ (մտնել), ընկերշակեմ (ընկերակցել), ընշարպիեմ (ինչքից զրկել), բազգաանեմ (հանդիմանել), ժամանակեմ (ժամանակ դնել), լուղեմ (լողալ), խղայթեմ (հրահրել), խոհակերեմ (խոհարարություն անել), խունեմ (շարղարել), խուսեմ (խուսափել), ծանծաֆեմ (ծամել), կառափնատեմ (զլխատել), կոշեմ (գոշել, մոնչալ), հասարակեմ (կիսել), հեղեղատեմ, դօղեմ (թաքցնել), ճարտարեմ (ճարտարաբանել), մալեմ (մանրել), մարթեմ (կարողանալ), յագեմ (զոհեմ), յականեմ (նկատել), յանձանձեմ (խնամել), յաշողեմ (շար աշք գցել), յարագեմ (արևի տակ փոել), յուղարկեմ, նթեմ (սովածությունից նվաղել), շարժեմ (ցնցել), շճեմ (շիճուկ կտրել), շութափեմ (շտապել), շամբեմ (կերակրել), քանցել շաղփաղփել, սորեմ (ծակեղը մտնել, թաքցնել), սորեմ (աշքից ջուր վազել), ստնանեմ (վնասել), վախճանեմ (վերջացնել), վաղվաղեմ (շտապել), վտարանդեմ (ապստամբել), վրիթակեմ (ցոփանալ), տախտապարեմ (շաղ տալ), ցանկորդեմ (միշտ պահել), փապարեմ (ուռել, ծակոտվել), փորոտեմ (գոռալ, մոնչալ), քարընդոտեմ (ոտքի առաջ քար դնելով դայթեցնել), քեցեմ (անջատել):

Փոփոխություններ են կրել՝ առնեմ— անել, անցանեմ— անցնել, աւաբեմ— հավաքել, դիրեմ— դյուրացնել, լայնեմ— լայնացնել, խխընչեմ— խրխնջալ, խղճեմ— խղճալ, ծանրեմ— ծանրանալ (Աստվշնչկա նաև ծանրանալ), կասեմ— կասեցնել, կարեմ— կարենալ, հաւասարեմ— հավասարվել, ճչեմ— ճչալ, մերկեմ— մերկացնել, մրմնչեմ— մրմնջալ, յառաջեմ— հառաջանալ, սատակեմ— սատկեցնել, սխալեմ— սխալվել, սկեմ— հսկել (կա նաև հսկեմ), տրտնչեմ— տրտնջալ, փոնչեմ— փոնչալ, փոքրեմ— փոքրացնել, քանքատեմ— դանգատվել, քրթմնչեմ— քրթմնջալ. ընդամենը 1128 բայ:

Հնացած բայերից ազատորեն կարող են կիրառվել՝ ակնկորեմ (աչքերը վար կախել), արբանակեմ (իբրև արբանյակ գործել), գլխարկեմ (գլուխը վար կախել), ընկերեմ, նաւապետեմ:

Ե խոնարհման բայերը խոնարհվում են գործեմ-գործեցի —գործեա՛—գործեցե՛ք կաղապարով: Այս ընդհանուր կաղապարից շեղվում են ասեմ— ասացի— ասա՛— ասացե՛ք, գիտեմ— գիտացի— գիտեա՛— գիտացե՛ք: Հրամայական երկու ձևերն էլ շատ սակավ են. դրանց փոխա-

րեն գործածվում են գիտացիք, գիտացի՛ք իսկ արգելական հրամայականը, որ պետք է լիներ մի՛ գիտեք, մի՛ գիտե՛ք, լինում է մի գիտացիք, մի գիտացի՛ք: Երթ եւ ասացողովորդն ցայն. լսելով լուիջիք և մի՛ իմացիք, տեսանելով տեսչիք և մի՛ գիտացիք (Ծս. 2 9):

Կարեմ— կարացի. հրամայական ձևերը չունի: Մերկեմ— մերկացի, մերկեա՛:

Անկանոն են նաև՝ ածեմ— ածի— ա՛ծ— ածե՛ք, բերեմ— բերի— բե՛ր— բերե՛ք, հանեմ— հանի— հա՛ն— հանե՛ք և համբերեմ— համբերեցի— համբերի— համբերեա՛, համբե՛ր— համբերեցե՛ք:

Ըմպեմ ունի միայն ներկայի հիմքի ժամանակները. մյուս ժամանակները կազմում է արբի ձևից. միայն արգելական հրամայականի ձևը կազմում է առաջին ապառնիում երկրորդ զեմքից. մի՛ կերիջիք և մի՛ ըմպիջիք (Ծսթ. Գ 16): Մի՛ ըմպիցես գինի և օղի (դատ. ԺԳ 7): Հանրահայտ ձևերը՝ մի՛ ըմպեք, մի՛ ըմպե՛ք չկան: Արբի ձևը նույնպես կանոնավոր է, բայց հրամայական ա՛րբ, արբե՛ք ձևերի հետ ունի նաև արբե՛ր, արբի՛ք:

Ուտեմ ներկայի հիմքի ժամանակները լրիվ կան, բացի մի՛ ուտեք, մի՛ ուտե՛ք արգելական ձևերից, որոնք շատ սակավ են, սրանց փոխարեն ստորադասական (1-ին) ապառնու 2-րդ զեմքերն են կիրառվում. մի՛ ուտիցես հաց և մի՛ ըմպիցես ջուր (Գ Թագ. ԺԳ 9): Զամենայն արիւն մի՛ ուտիցե՛ք (Ղևտ. Գ 17):

Կերայ բայը ունի հրամայական կե՛ր, կերա՛յք, բայց շատ ավելի տարածված է կերիջի՛ք: Առից հաց և կերիջի՛ք (Մնն. ԺԸ 5): Եղակին հաղվաղեալ է (Մեղր, յորժամ գտանիցես, որդեակ, շափով կերիջի՛ր (Առ. Ին 16):

Լսեմ բայը խոնարհվում է լսեմ— լուայ— լուարո՛ւք կաղապարով. արգելականը մի՛ լսեք, մի՛ լսե՛ք, եթե չհաշվենք Աստվածաշնչի համար սովորական ձև դարձած մի՛ լսիցես— մի՛ լսիցե՛ք. կա նաև մի՛ լուիցես. մի՛ հաւանիցիս նմա և մի՛ լուիցես նմա և մի՛ խնայիցես ակն քո ի նա (Իատ. ԺԳ 8): Հրամայականի համար սովորական ձև է նաև լուիջի՛ր, լուիջի՛ք: Կա նաև մի սովորական ձև՝ լուիցե՛ք, (Լսելով լուիցե՛ք ձայնի տեսն (Օր ԻԸ 1), որ ըստ եբրայական բնագրի պետք է լինի լուիցես:

Միայն Յաւէր, ցաւեաց, ցաւիցե՛ք ձևերը կան (Զիք որ ի ձեռք, որում ցաւէր վասն իմ. Ա Թագ. ԻԲ 8; Զի ցաւեաց ձեզ վասն իմ (նույն տեղում, ԻԳ 21: նմա ոչ ցաւիցե՛ք. Սիր. ԺԳ 6):

Իտեմ բայը պակասավոր է. ունի երկրորդ ապառնու երկրորդ, երրորդ զեմքերը, եղակի հրամայականը, անցյալ կատարյալի եղակի եր-

բորդ դեմքը մնացած բոլոր ձևերը վերցվում են դատիմ կանոնավոր բայից, որը և՛ կրավորական է, և՛ ներգործական:

զ) Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱԾԱՆԳԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ

Ե խոնարհման ածանցավոր բայերը խիստ սահմանափակ քանակ ունեն. այս նշանակում է, որ այս բայերը կազմվել են լեզվի շատ վաղընջական շրջաններում, երբ հիշյալ ածանցները քերականակարգային կենդանի նշանակություն են ունեցել: Դրանից հետո այլևս այդ կարգի բայեր չեն կազմվել, մանավանդ եթե նկատի առնենք, որ բայական հիշյալ ածանցները միջամասնիկներ են եղել:

Ե խոնարհման ածանցավոր բայերը 60-ից չեն անցնում, երբ սրանց պարզերի քանակը 1100-ից ավել է: Ածանցավոր բայեր են՝ անիծանեմ, անկանեմ, առանցանեմ, առեղծանեմ, առնեմ, արծարծանեմ, արկանեմ, բեկանեմ, բուծանեմ, գերծանեմ, գտանեմ, դիզանեմ, դնեմ, ելանեմ, եղծանեմ, բուծանեմ, գերծանեմ, գտանեմ, դիզանեմ, դնեմ, ելանեմ, եղծանեմ, քերծանեմ, զանցանեմ, զատածանեմ, զառանցանեմ, զատանեմ, զեղծանեմ, զերծանեմ, ընդհարկանեմ, ընդմտանեմ, ընթերցանեմ, ըստգտանեմ, թքանեմ, իջանեմ, լիզանեմ, լուծանեմ, լուցանեմ, լքանեմ, խածանեմ, խփանեմ, կլանեմ, կծանեմ, հասանեմ, հատանեմ, հարկանեմ, հարցանեմ, ճանաչեմ, մածանեմ, մեղանչեմ, մուծանեմ, մտանեմ, յանցանեմ, յառնեմ, յատանեմ, յարկանեմ, ներկանեմ, ողողանեմ, ոռոգանեմ, պագանեմ, ուսուցանեմ, սպանանեմ, ստեղծանեմ, ստգտանեմ, սփածանեմ, տարածանեմ, տեսանեմ, ցուցանեմ, օծանեմ. ընդամենը 63 բայ:

Սրանցից ներգործական են՝ անիծանեմ, անկանեմ (հշուսել), առեղծանեմ, առնեմ, արծարծանեմ, արկանեմ, բեկանեմ, բուծանեմ, գերծանեմ, գտանեմ, դիզանեմ, դնեմ, եղծանեմ, զատանեմ, վերծանեմ, ընդհարկանեմ, ընթերցանեմ (հզվդ.), ըստգտանեմ (ստգտանեմ), լիզանեմ, լուծանեմ, լուցանեմ, լքանեմ, խածանեմ, խփանեմ, կլանեմ, կծանեմ, հատանեմ, հարկանեմ, հարցանեմ, հերձանեմ, ճանաչեմ, մուծանեմ, յատանեմ, յարկանեմ, ներկանեմ, ողողանեմ (1 անգամ ողողեմ), ոռոգանեմ, պագանեմ, սուզանեմ, սպանանեմ, ստեղծանեմ, տարածանեմ, տեսանեմ, ցուցանեմ, օծանեմ:

Երկսեռ են՝ թքանեմ, հարցանեմ, մեղանչեմ, յանցանեմ: Զեղոք են՝ անցանեմ, ելանեմ, զանցանեմ, ընդմտանեմ, իջանեմ, հասանեմ, մտանեմ, յառնեմ:

Զևով անորոշ են՝ առանցաք (չ), զառածանէր—զառածեալ. բոլորը բնիկ են:

Սրանց բնիկության հարցը դնելով՝ մենք քննում ենք միաժամանակ Ե, ի, ու խոնարհման բոլոր ածանցավոր բայերի ծագման խնդիրը:

Գրաբարի Ե, ի, ու խոնարհման բայերի ածանցները ունեցել են սեռազատիչ ու կերպազատիչ դեր, բայց 5-րդ դարում սրանց այդ դերը մթազնվել էր. դրանք միայն հիմքազատիչ պաշտոն ունեին, որ զուտ ձևական երևույթ էր. ներկայի հիմքում առկա ածանցները պարտադրաբար անցյալ կատարյալի հիմքում վերանում էին՝ առաջ բերելով երկու տեսակ հիմքեր. բեկանեմ (հիմք բեկան), բեկի (հիմք բեկ). մաաչիմ (հիմք մատչ), մատեայ (հիմք մատի), առնում (հիմք առն), առի (հիմք առ): Ածանցավորները ներկայի հիմքն են, իսկ պարզերը՝ անցյալ կատարյալի:

Այս ածանցների մասին համեմատական քերականության կարծիքը այն է, որ դրանք նախապես եղել են միջամասնիկներ: Աճառյանը գրում է. «Այն բայերը, որ պատկանում են այս տիպին (այսինքն ածանցավոր են), մեծ մասամբ համապատասխանում են հնիս. ընդհանուր միջամասնիկավոր ձևերին: Միջամասնիկաձև ընդհանուր արմատից դուրս է առնված և կցված է իբրև հետամասնիկ»¹:

Աճառյանը ընդհանուր միջամասնիկ ասելով հասկանում է մեր ան. ն ածանցների ն—ն (բեկանեմ առնեմ):

Հայերենի այս բայաածանցների միջամասնիկ լինելը ապացուցվում է ցեղակից լեզուների նույն արմատների միջամասնիկությունով. օրինակ՝ հնիս. linq հայ. լիքան, փոխն. լինք*, bheng հայերեն բեկան, փոխն. բենկ*, bhung հայերեն բուծան, փոխն. բունծ, vind հայերեն գիտան փոխն. գինտ (գտանեմ), և այլն:

Այս փաստերը այնքան ակնառու են, որ սրանց դեմ առարկել անկարելի է: Սակայն միջամասնիկի վերջամասնիկ դառնալը հայերենում այնքան կատարյալ մի գործընթաց է եղել, որ միջամասնիկի ոչ մի օրինակ, ցավոք, չի մնացել: Ամենայն հավանականությամբ դա կատարվել է դրափոխական մի խիստ ուժեղ օրինաչափությամբ, որտեղ ն—ն մյուս բաղաձայններից ետ է թռել և իբրև վերջամասնիկ ձևավորվել է նաև անկապակցությունը. միջամասնիկ եղած ժամանակ ա չի եղել:

Բոլոր Ե, ի խոնարհման բայերը չեն, որ ա հավելվածը ունեն. օրինակ՝ առնեմ, յառնեմ, դնեմ, լինիմ, տանիմ բայերը զուրկ են ա հավելվածից, ունեն միայն ն ընդհանուր մասնիկը (ն—ն ձայնավորից ու ձայնորդից հետո ա չի ընդունում): Միայն ն ընդհանուր ունեն նաև ու խոնարհ-

¹ Հր. Աճառյան, կրկատար քերականություն հայոց լեզվի, հ IV, Ա, էջ 347:

ման բայերը: Այս ընդային և և չ, նշ ածանցները վերջամասնիկի վերած-
վելու շրջանից էլ առաջ դարձել են սոսկածանցներ, իսկ սոսկածանցի
իմաստադրկութունը անկարելի է դարձնում նրա հետագա կիրառութունը
և այն էլ օտար փոխառութունների մեջ, ընդհակառակն՝ այդպիսի
ածանցները աստիճանաբար ձուլվում են արմատի հետ և վերածվում մի
ամբողջության և կամ դուրս են ընկնում: Առաջին դեպքի համար արդեն
գրաբարում ունենք անգոսնել (արմատը անգոս), կանգնեմ, շիկնեմ,
սերմանեմ, որոնց անցյալ կատարյալները լինում են անգոսնեցի, կանգ-
նեցի, շիկնեցի, սերմանեցի, փոխն. անգոսի, շիկի, սերմի, կանգի: Իսկ
ածանցների կորուստ են հանդես բերում այն բայերը, որոնք արդեն եր-
կու ձևով են հանդես գալիս. օրինակ՝ տարածանեմ — տարածեմ, լիզա-
նեմ — լիզեմ, գեղծանեմ — գեղծեմ, ներկանեմ — ներկեմ, ողողանեմ —
ողողեմ, արծարծանեմ — արծարծեմ և այլն:

Այս մասինկները կազմել են ներկայի բունը, ունեցել են կերպային
սկսողական, տևական կամ մի այլ նշանակություն, որոնք սակայն դա-
սական շրջանում մթագնվել էին: Դասական շրջանում հիշյալ մասնիկ-
ները ունեին միայն մի ձևական նշանակություն՝ արտահայտում էին որոշ
բայերի ներկայի բունը. իսկ չեղորոթյան և մյուս իմաստները մեռել
էին: Չեղորոթյան իմաստը որ ունեցել են մեր ածանցավոր բայերը,
ամենից ցայտուն ապացուցում են ու խոնարհման բայերը: Ու խոնարհ-
ման բոլոր պարզ բայերը ներգործական բայեր են, իսկ ածանցավորնե-
րը չեղոք են: Ածանցավորներից ներգործական են՝ առնում, ընկենում,
լնում, խնում, ընթեռնում, զգենում, մնացածը չեղոք են. այս ապացուց-
վում է նաև չ, նշ ածանց ունեցող բայերով, որոնք նույնպես մի բացա-
ռությամբ (ճանաչեմ), չեղոք են: Ուրեմն գրաբարի բայերի ներկայի բնի
ածանցները չեղոք սեռի ածանցներ են եղել, որոնց հնութունը գալիս է
հնդեվրոպական նախալեզվի շրջանից: Այն ժամանակ, երբ միջամաս-
նիկ այդ ածանցները դարձան վերջամասնիկ, սրանց իմաստային կենդա-
նի արտահայտությունը աստիճանաբար մթագնվեց և դասական շրջա-
նից դեռևս շատ ու շատ դարեր առաջ այդ մասնիկները այլևս չեղորո-
թյան իմաստը չէին պահպանում, դարձել էին սոսկածանցներ, ինչպես
այժմ բնակվել, վերաբերվել, համաձայնվել և մի քանի այլ բայերի մեջ
վ ածանցը կրավորականի իմաստ չի արտահայտում:

Լեզվի մեջ այն ածանցները, որոնք մնացել են իբրև անցյալի մնա-
ցուկ՝ այսինքն իմաստադրկվել են, այլևս ուրիշ որևէ բառի վրա դրվել
չեն կարող: Անիմաստ լինելով՝ անիմաստ է ուրիշ որևէ բառի կցել դրանք:
Ա խոնարհման բայերի ան ածանցը կենդանի ածանց է դառնալ, վերած-

վել նշանակություններով, ուստի վագր փոխառյալ բառից կարող ենք
կաշմել վագրանալ, բոսոր-ից՝ բոսորանալ, ստուարից՝ ստուարանալ,
բայց հարկ իրանյան աղմատի վրա չէինք կարող ան ածանցը դնել և
ստանալ առկանել բայը, ինչպես որ բացատրում է Աճառյանը, կամ կորի
անձանոթ արմատին ավելացնենք նշ ածանցը կորնչիմ ստանալու հա-
մար:

Իրանական, ասորական, հունական, եբրայական և հայտնի բոլոր
փոխառություններից առաջ այդ ածանցները մթագնվել էին, ուստի և
օտար փոխառություններին կցվել այդ ածանցները չէին կարող, մանա-
վանդ դրանք նախապես միջածանց են եղել, իսկ միջածանց եղած ժամանակ
էլ թեկուզև կենդանի լինեին, նոր բայ չէին կազմի: Եվ իրոք, հայտնի
բոլոր փոխառյալ բայերը պարզ են: Իրանական փոխառություններ են
համարվում ազատեմ, ազդեմ, ախորժեմ, ամբարեմ, ապախուրեմ, ժա-
մանակեմ, բաժանեմ, բաշխեմ, թշնամանեմ, պատասխանեմ և բազմա-
թիվ ուրիշներ, որոնք բացարձակորեն անածանց են և ածանց չէին կարող
ունենալ, որովհետև այդ բայածանցները միայն հայերեն բնիկ բայերին
էին պատկանում և սկզբնապես միջամասնիկ են եղել, ապա վերածվելով
վերջամասնիկների՝ իմաստային մթաղնման են ենթարկվել. դժվար է
ասել, թե այդ մթագնումը եղբ է տեղի ունեցել. գուցե դեռևս միջամաս-
նիկ եղած ժամանակ դրանք արդեն զուտ հիմքատարբերակիչ տարրեր
էին, և մեր լեզվի պատմությունը ցույց է տալիս, որ փոխառյալ բառերը
բայ դառնալով հիշյալ մասնիկավորմամբ շեն զինվել: Ածանցավոր բայ
չկա նաև հունա— ասորական ակնհայտ փոխառությունների մեջ. ինչպես՝
բասրեմ, թարգմանեմ, խմորեմ, ծարրեմ, կեղևեմ, մեքենայեմ և այլն:
Սրա ապացույցները բազմաթիվ ու բազմազան են: Ամենից առաջ դիմենք
հաշվարկման: Գրաբարի ածանցավոր բայերից ըստ «Արմատական բա-
ռարանի» բնիկ են անիծանեմ, անկանեմ (հյուսել), առնեմ, առողանեմ,
արածանեմ, արծարծանեմ, ազանիմ (հազնել), ազանիմ (գիշերել),
ազազանիմ, ածանիմ, անկանիմ, առածանիմ, առընդունիմ, արթիմ,
արթնում, այտնում, առնում, առչում, բեկանեմ, բուծանեմ, բուսանիմ,
գտանեմ, զիղանեմ, դնեմ, ելանեմ, եղանիմ, երկնչիմ, երգիծանեմ, դա-
ռածանիմ, զատանիմ, զանգանեմ, զարկանեմ, զերծանեմ, զարթնում,
զգենում, զընկենում, ընկնում, ընդելնում, ընթեռնում, ընթեռցանեմ,
ընկլնում, ըստգտանեմ, թաքնում, թույլիմ, թքանեմ, իջանեմ, լիզանեմ, լու-
ծանեմ, լուցանեմ, լքանեմ, լնում, խածանեմ, կլանեմ, կծանեմ, հարթնում,
հարկանեմ, հարցանեմ, հասանեմ, հեծանիմ, հատանեմ, ճանաչեմ մաժա-
նիմ (մաժնում), մեղանչեմ, մուծանեմ, մտանեմ, մատչիմ, մարտնչիմ

մեռանիմ, յագչիմ, յատանեմ, յառնեմ, յանգչիմ, յարկանիմ, յարնչիմ, ցուցանեմ, շիշանիմ, ոռոգանեմ, ունիմ, պակչիմ(պակնում), ուսանիմ, սկսանիմ, սպանանեմ, ստեղծանեմ, սփածանիմ, տեսանեմ, փլանիմ, փլչիմ, փրծանիմ, քաղցնում, օծանեմ:

Անծանոթ են համարվում անցանեմ, անջատանեմ, արկանեմ, դբաղ-նում, զբօսանիմ, զգածնում, եղծանեմ, խրտչիմ, (խրտնուլ), խափնում, խնում, խփանեմ, կառչիմ, կորնչիմ; հանգչիմ, հերծանեմ, հեղձնում, հիծանիմ, յանում, շրտնում, ոստչիմ, ուռնում, պակչիմ, պշնում, պրծանիմ, սուղանեմ, սարտչիմ, տանիմ, ցածնում, փախչիմ, ցասնում, փլչիմ (փլանիմ):

Քնիկ և անծանոթ համարված ածանցավոր բայերի հարաբերու-թյունը համապատասխանաբար երկուս ու կես և մեկի հաշիվ է արտա-հայտում, այսինքն բնիկները երկուս ու կես անգամ ավելի են անծանոթ-ներից: Մինչդեռ պարզ բայերի հարաբերությունը այդպես չէ, երեք օ-տարի դիմաց ունենք մեկ բնիկ բայ: Այսպիսի հարաբերությունը պա-տահական չէ: Մեր բնիկ և փոխառյալ արմատները մեկը տասի հարաբե-րությամբ են հանդես գալիս. մի բնիկ բառի դիմաց ունենք 10 օտար բառ Եթե «Արմատական բառարանի» 11 հազար արմատից հանենք անվավեր բառերը, արարական, լատինական, նոր պարսկական, հունալատին, թուրք-թաթարական, նոր եվրոպական և այլ փոխառություններ՝ թվով մոտ 5000, ապա դարձյալ բնիկ և փոխառյալ արմատները մեկ առ 6 հարաբերությամբ են հանդես գալիս: Այս թվական հարաբերությունները խոսում են այն մասին, որ այստեղ մի գաղտնի երևույթ կա: Ածանցա-վոր բնիկ բայերը երկուսուկես անգամ ավելի են ոչ բնիկներից, պարզ բայերի ոչ բնիկները երեք-չորս անգամ ավելի են բնիկներից, իսկ ընդ-հանուր փոխառությունները 6 անգամ զերազանցում են բնիկներին: Մեր խորին համոզմամբ ոչ մի ածանցավոր բայ (խոսքը չի վերաբերում ա խոնարհմանը) փոխառություն չէ: Մեր բայերի ածանցները հատուկ են միայն բնիկ բայերին: Այդ ածանցները չէին կարող կալչել փոխառյալ բառերին: Արկանել բայը Աճառյանը համարում է առաջացած իրանա-կան harəḱ ձևից, որ պարսկերենում չի պահված, կա միայն ղենդերե-նում: Ինչպե՞ս կարող էին հայերը harəḱ ձևը վեցնել և դարձնել արկա-նել. այդպիսի ոչ մի դեպք չկա ողջ փոխառյալ բայերի համակարգում. harəḱ նշանակում է մի կողմ նետել, դեն գցել. ընդունենք որ իսկապես արկանել-ը harəḱ-ից է առաջացել, բայց այս դեպքում բայը շատ-շատ կլիներ արկել և ոչ թե արկանել: Արդեն Տերվիշյանը, Մեյլեն, Շեֆտելովի-չը այս բայը ճիշտ կերպով բնիկ են համարել՝ կապելով հնդկ. sark

արմատի հետ, որի սանսկրիտը sarj է: Աճառյանը այս համեմատու-թյունը մերժում է՝ ասելով, թե այդ դեպքում կունենայինք ավանել և ոչ թե արկանել: Մենք հնչյունական օրենքները ճիշտ ենք համարում, իսկ բօսանդրությունը մերժում: Հնչյունական օրենքները այնքան բացառու-թյուններ ու շեղումներ են տալիս՝ անցնելով մի քանի հազար տարվա ժամանակաշրջան, դառնալով նյութը առանձին հնչյունական յուրահատ-կություններ ունեցող բարբառների ու խոսվածքների: Հենց ինքը Աճառ-յանը բազում բառի համար ասում է, որ ծագում է, հնդկ. bhṛghu ձևից, բայց սպասվում էր հայերեն բանում: Գեղգեղ բնիկ բառի մասին «Արմատականում» ասվում է՝ ց¹h հայերենում դառնում է ձ, ց²h-ն դառ-նում է գ, բայց e-ի մոտ վերածվում է ջ-ի, ուստի այստեղ գեղգեղ-ի դեպ-քում գործ ունենք երրորդ տեսակ ցh-ի հետ և կամ ներկա ենք մի առանձին ձայնախոսական պարագայի, որի պայմանները մեզ հայտնի չեն: Այսպիսի օրինակներ շատ կգտնենք «Արմատականում», որտեղ բնիկ հայերեն բառը հաստատորեն ընդունվում է, սակայն հնչյունական ըն-դունված համապատասխանությունը խախտված է: Հայերենը, հնդկվոր-պական նախալեզուն և մյուս ցեղակից լեզուները բազմաթիվ դարերի ընթացքին ներքին և արտաքին հնչյունական բազմազան գործոնների շնորհիվ կարող էին այնպիսի շեղումներ ունենալ, որ հակասին Հյուսիս-մասին և այլոց ահամանումներին: Պետք է ընդունել, որ արկանել բայը նույն հարկանել, զարկանել բայերի մեկ փոփոխակն է, կամ ավելի ճիշտ այս վերջիններն են նախորդի փոփոխակները:

Յենում բայը համարված է անծանոթ փոխառություն կամ ծագումը անհայտ: Օտար արմատը պետք է լիներ յեն, որովհետև յեն արմատի վրա և ածանցը չէինք կառող դնել, իսկ եթե արմատը յեն է, ապա անցյալ կատարյալում օտար արմատը չէինք կարողանա քանդել և դարձնել յեց, հետո էլ այդ յեցի վրա և դնեինք ու դարձնեինք նեցուկ*. օտար բառերի հետ այդպիսի խաղեր ոչ մի ժամանակ չեն խաղացվում. միայն բնիկ այլ արմատը (որ մնացել է Մշո բարբառում) կարող է դառնալ հայել, նայել և յենում-ը՝ յեցայ— նեցուկ, հիւր-ը— նիւր: Այդպես էլ օտար խնում-ը չի դառնա խցի, զգածնում-ը՝ զգածայ, կառչիմ-ը՝ կառեայ, կորնչիմ-ը՝ կորեայ, հանգչիմ-ը՝ հանգեայ, պակչիմ-ը՝ պակեայ, պըշ-նում-ը՝ պշեայ, տանիմ-ը՝ տարայ և այլն: Հայերենի փոխառյալ բայերը այսպիսի օրինակներ չեն տալիս, և չենք կարծում, որ մի այլ լեզվի հա-

* նեցուկ բառը Զահուկյանը կապում է հնդկ. nik, հնդկ. nica (ցած, դեպի ցած) արմատի հետ:

տուկ լինի լեզվական այսպիսի մի երևույթ, որ օտար արմատը մի քանի արմատական փոփոխությունների ենթարկվի, ներկայում այլ հիմքով հանդես գա, անցյալ կատարյալում մի այլ հիմքով: Այս երևույթները հատուկ են միայն բնիկ բառերին:

Ստուգարանները ներքնատեսությամբ մեր ածանցավոր, բայց օտար համարված բայերից մի քանիսը արդեն ստուգարանել են: Աճառյանը իջանել բայի էջ արմատը հետագայում համարում է բնիկ հայերեն՝ կապելով ուս. ugu ձևի հետ: Անցանեմ անծանոթ համարված բայի մասին ասված է, որ կապվում է սանսկրիտի anč, զենդ ač, հնդկվր. ag-s, լատ axis, լիթվ. aszis, հին սլավ. ось, հուն. ἄξον, հին բարձր գերմաներեն ahsa, գերմ. Achse: Այս բայը Ջահուկյանը նույնպես բնիկ համարելով առնչում է հունարեն ει (զնալ) բային և խեթ. iia (զնալ) բային (տե՛ս «Հայերենը և հնդկավրոպական հին լեզուները» էջ 113, 114):

Նորագույն քննությունները անց արմատը ևս բնիկ են համարում: Պրոֆ. էդ. Աղայանը անց արմատը ծագած է համարում հնլս. sent (զիմել, զնալ, ընթանալ, անցք, ճանապարհ), որի ցեղակիցներն են ավեստ haht, հին իռլ. sēt, կիմեր. hint և այլն¹:

Տվյալ պարագայում չենք կարող ասել հին և նոր ստուգարանություններից որն է ճիշտ, սակայն փաստը այն է, որ անցանեմ ածանցավոր բայը բնիկ հայերեն է:

Հատանեմ բայը համարված է անծանոթ, բայց բազմաթիվ ստուգարաններ այդ բայը համարել են բնիկ՝ կապելով ցեղակից լեզուների մի շարք արմատների հետ: էդ. Աղայանի նոր մեկնությամբ հատ արմատը կապվում է լատ. panio հին բարձր գերմ. urfur, անգլոսաքս. a-furca և այլ լեզուների համապատասխան արմատների հետ²: Ստուգարանական այս քննությունից բացի հատ արմատը այնպիսի ձևափոխություններ է տալիս, որոնք հատուկ չեն փոխառալ բայերին, հատ-ից ունենք առ ածանցը, գատ, հոտ, յոտ, յատ, նհատ (պակաս, թերի):

Անծանոթ է համարված նաև զգածնում բայը, որը պրոֆ. Ղափանցյանը մի կես դար առաջ կապում էր զօտի բառի հետ՝ բերելով գատգած, ամալթ-ամալ, ծանալթ-ծանալ, մատ-մատ զուգահեռ ձևերը իբրև հայերենին հատուկ ձայնադարձային և հնչյունաբանական երևույթներ,

որոնք փոխառյալ բառերի մեջ երբեք տեղի չեն ունենում: Ընդունելով պրոֆ. Ղափանցյանի այս խորամիտ բացատրությունը՝ պրոֆ. էդ. Աղայանը հաստատում է, որ գած (զօտի) արմատը բնիկ հայերեն է և առընչվում է հնլս. veg (հյուսել, հանգուցել, հյուսվածք, գործվածք) արմատի հետ, որի ցեղակիցներն են լատ. velum, գերմ. Wickeln, անգլոսաքս. wokig և այլն: Մեյերի այս կարծիքը Աղայանը հաստատում է նոր քննությամբ:

Ցածնում բայի ցած արմատը ղեռես Շեֆտելովիչը համեմատել է լատ. codo, սանսկր. Gad, զենդ. Sad արմատների հետ, որոնք նշանակում են ընկնել, իսկ Վալդեն և Պոկորնին ընդունել են այդ բացատրությունը: Աճառյանը ցած բայը բնիկ չի համարել, որովհետև ըստ նրա այս պարագային պետք էր սպասել սատ կամ սած: Մեծ հայազետը մոռացել է, որ հայկական հողի վրա են առաջացել ցասում-սասում, սեպ-չեպ, սասանել-տատանել-ծածանել և նման բազմաթիվ հնչյունափոխական երևույթներ: Ծատ ուրախալի է, որ ժամանակակից ստուգարանները արդեն այդպիսի բայերից մի քանիսը համարում են հնդկավրոպական և կապում են ցեղակից լեզուների հետ, օրինակ՝ Գ. Ջահուկյանը խրտնում, խրտչիմ բայը առընչում է հունարեն, σαρτάω բառին, խիանեմ-ը խեթերեն hup, huapp-ին, հանգչիմ-ը խեթերեն hink, փախչիմ խեթ. porh³: Այս համեմատությունները ճիշտ են թե սխալ, այդ ապագան կպարզի, բայց հավաստին այն է, որ հիշյալ ածանցավոր բայերը բնիկ հայերեն են:

Եզրակացություն. Հայերենի ե, ի, ու խոնարհման ածանցավոր բայերը բոլորը բնիկ հայերեն բառեր են, որովհետև ա) դրանք երկու հիմքերով են հանդես գալիս խոնարհման մեջ և հաճախ այդ հիմքերը միմյանցից հնչյունաբանորեն բավականաչափ տարբեր են. օրինակ՝ սանիմ—տարայ, յենում—յեցայ, խնում—խցի, կորնչիմ—կորեսայ օտար ոչ մի բառ չի կարող այսպիսի փոփոխություն կրել. այսպիսի երկվույթ բացատրված է օտար արմատների նկատմամբ. դա հատուկ է միայն հայերեն բառերին:

բ) Հայերենի անծանոթ համարված հիշյալ ածանցավոր բայերի արմատները հաճախ ունեն ձայնադարձային այնպիսի երևույթներ, որոնք միայն հատուկ են հայերենին և կապված են նրա բնիկ արմատների հետ և խորթ ու օտար են փոխառությունների համար, օրինակ՝զգածնում—գած—գատ, հատանեմ—հատ, յոտ, յատ, առ, նհատ, յենում—յեց—ենցուկ և այլն:

¹ Տե՛ս է. Բ. Աղայան, Բառարձանական և ստուգարանական հետազոտություններ, Երևան, 1974 թ., էջ 19:

² Նույն տեղում, էջ 49:

³ Գ. Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդկվ. հին լեզուները, Երևան, 1970, էջ 22, 93:

գ) Ե, Ի, ու խոնարհման ածանցները եղել են միջածանցներ և բոլոր փոխառություններից առաջ դրանց քերականական իմաստները մթնել են, ուստի դրանք չէին կարող կցվել փոխառյալ բառերին, որոնցից բայեր են կազմվել առանց այդ ածանցների: Այդ են ցույց տալիս իրանական, ասորական, եբրայական, հունական և այլ հայտնի լեզուներից կատարված փոխառությունները, որոնցից կազմված ոչ մի բայ չունի հիշյալ ածանցները և չէր կարող ունենալ:

դ) Հիշյալ ածանցավոր բայերը մեծ տարածում ունեն հայերենում. ոչ միայն գրական են, այլև հանդես են գալիս բարբառներում բազմաթիվ ձևափոխություններով, աճումներով ու ածանցումներով. յանցանք (անցանեմ), ղանցանք, զանց առնել, անցուցք, առանց, զառանցել, անցվոր և այլն:

ե) Ածանցավոր բայերից բնիկները անծանոթ համարված նույնպիսի բայերից երկուս և կես անգամ ավել են. այդպիսի հարաբերություն մեր ոչ մի բառախմբի մեջ չենք գտնի:

զ) Անծանոթ համարված ածանցավոր բայերի իմաստային դաշտերը չափազանց ընդարձակ են. այդպիսի ընդարձակություն փոխառությունները սակավ են հանդես բերում. օրինակ՝ առկանել բայը, որ համարվում է անծանոթ, ավելի քան երկու տասնյակ իմաստ ունի և այդ իմաստները այնպես են ճառագայթաձև հեռացած միմյանցից, որ համարյա դարձել են նույնանուն բայեր. արկանել— նետել և արկանել— հագնել. արկանել— զրկել (յարևէ արկանել) և արկանել կառուցել (պատնէշ արկանել):

է) Կազմում են բազմաթիվ ու բազմազան դարձվածքային ճոխ միավորներ, որոնք լեզվի կենդանի ոգին և բառային առնչությունների լայնածավալ ընդարձակությունն են արտահայտում:

* * *

Ե խոնարհման ածանցավոր բայերից հնացած են՝ անկանեմ (հյուսել), առանցանեմ (զառանցել), արկանեմ, գերծանեմ (խուզել), զանցանել (անցնել, գերազանցել), զառածանեմ (շեղվել), ընդհարկանեմ (ընդհարել), ընդմտնանեմ, ըստգտանեմ-ստգտանեմ (դատապարտել, մեղադրել), ժամանակեմ, հարկանեմ (ծեծել), յարկանեմ (հարկ կառուցել), սփածանեմ (մեջքը կապել):

Փոփոխված են՝ անիծանեմ— անիծել, անցանեմ— անցնել, առեղծանեմ— առեղծել, առնեմ— անել, արծարծանեմ— արծարծել, բեկանեմ— բեկանել, բեկել, բուծանեմ— բուծել, գտանեմ— գտնել, դիզա-

նեմ— դիզել, ելանեմ— ելնել, եղծանեմ— եղծել, երկիրպազանեմ— երկիրպազել, զառանցանեմ— զառանցել, զատանեմ— զատել, զեղծանեմ— զեղծել, ընթերցանեմ— ընթերցել, թքանեմ— թքել, իջանեմ— իջնել, լիզանեմ— լիզել, լուծանեմ— լուծել, լքանեմ— լքել, խածանեմ— խածել, խփանեմ— խփել, կծանեմ— կծել, հասանեմ— հասնել, հատանեմ— հատել, հարցանեմ— հարցնել, մուծանեմ— մուծել, մտանեմ— մտնել, յատանեմ— էտել, ներկանեմ— ներկել, ողողանեմ— ողողել, ոռոգանեմ— ոռոգել, պագանեմ— պագել, սուղանեմ— սուղել, սպանանեմ— սպանել, ստեղծանեմ— ստեղծել, տարածանեմ— տարածել, տեսանեմ— տեսնել, ցուցանեմ— ցուցնել (արևատհ.), օծանեմ— օծել: Փաստորեն անվթար են մնացել՝ բեկանեմ (դարձել է նաև բեկել), դնեմ, կլանեմ, ճանաչեմ, մեղանչեմ, յառնեմ:

Ե խոնարհման ածանցավոր բայերի խոնարհման կանոնավոր կազապարն է՝ լֆանեմ— լֆի—լիֆ—լֆեֆ, արգելականը՝ մի՛ լֆանեմ, մի՛ լֆանէֆ: Սակայն կան բայեր, որոնք կամ լրիվ անկանոն են և կամ մասնակի շեղումներ են տալիս. այսպես ղնեմ բայը անկանոն է. կազապարն է ղնեմ— եղի, ղի՛ր, ղի՛ֆ. արգելականն է մի՛ ղնեմ, մի՛ ղնէֆ, հրամայականը լինում է նաև՝ ղիջի՛ր, ղիջի՛ֆ, իսկ արգելականը նաև՝ մի՛ ղնիցես, մի՛ ղնիցիֆ, որ իբրև արգելական հրամայական ավելի է հաճախված:

Ճանաչեմ— ծանեայ— ծանի՛ր— ծանեբու՛ֆ. արգելականը՝ մի՛ նանաչեմ, մի՛ նանաչէֆ:

Առնեմ— առարի, առա՛— առարէ՛ֆ: Արգելականը՝ մի՛ առնեմ, մի՛ առնէֆ: Կա նաև ապառնու արգելականը՝ մի՛ առնիցես (մի՛ առնիցես դու դրօշկալ. Օրէն Ե 8: Մի՛ առնիցեք անիրաւութիւն. Ղևտ. ԺԹ 35): Մինչև իսկ կա երկրորդ ապառնու արգելականը (մի՛ արասցես դու բեզ կուտս. Ելք Ի 4):

Յառնեմ— յարեայ— արի՛, արի՛ֆ. քերականությունների տված յարեբու՛ֆ, յառնիջի՛ր, յարիջի՛ր հրամայական ձևերը չկան Աստվածաշնչում:

է) Ի ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅԵՐԸ

Գրաբարում Ե խոնարհումը ներգործական բայերի խոնարհումն է, որին հակառակ չեզոքները խոնարհվել են ի-ով և ա-ով: Աստվածաշնչի և Ի խոնարհումների զուգադրման պատկերը հետևյալն է ըստ թվական տվյալների. Ե խոնարհման 535 ներգործական բայի դիմաց ունենք նույն խոնարհման 185 չեզոք բայ: Երկսեռ բայերի քանակն է 35: Այս

զուգադրութիւնը ցուց է տալիս, որ երկու հակադիր խոնարհումների փոխադարձ ներթափանցումներ են կատարվել: Ամենից առաջ նշենք, որ է խոնարհման ուժեղ ներգործականութեան կարգը սկսել է թուլանալ. անզաւակեմ, ազատեմ, աշխատեմ, բարբոքեմ, զետեղեմ ընդարձակեմ. քախանձեմ, խտորեմ, խոսվեմ, ընծայեմ, մերկեմ, սասանեմ, վրիպեմ, վախճանեմ, տագնապեմ, և այս կարգի այլ բայերի ներգործականութիւնը այնքան է թուլացել, որ առաջացել են սրանց պատճառական ձև-վերը զուտ ներգործական նշանակութեամբ. օրինակ՝ բորբոքեմ— բորբոքեցուցանեմ, անզաւակեմ— անղաւակեցուցանեմ, ազատեմ— ազատեցուցանեմ և այլն:

Մի կողմից է խոնարհման շեղբացումը առաջ է բերում պատճառական բայեր, մյուս կողմից առաջանում են տարբեր խոնարհումների համանիշ բայեր. ամբարշտեմ— ամբարշտիմ, գարշեմ— գարշիմ, ժուժկալեմ— ժուժկալիմ, ժտեմ— ժտիմ, ծաղկեմ— ծաղկիմ, ծորեմ— ծորիմ, կասեմ— կասիմ, նմանեմ— նմանիմ, նուագեմ— նուագիմ, պակասեմ— պակասիմ, հաղորդեմ— հաղորդիմ, միաբանեմ— միաբանիմ, պատահեմ— պատահիմ, պարապեմ— պարապիմ, վրիպեմ— վրիպիմ:

Մի երրորդ կողմից ավելանում է երկսեռ բայերի քանակը՝ թե իբրև ներգործական— շեղբ և թե իբրև կրավորական— շեղբոք:

Ե խոնարհումը կրավորական բայեր չունի, սրա կրավորականութիւնը արտահայտվում է ի խոնարհումով: Աստվածաշնչում կրավորական շատ բայեր չկան. զուտ կրավորական բայեր են՝ աղճատիմ, ամբաստանիմ, անուանիմ, արձակիմ, աւանդիմ, աւետարանիմ, բեւեռիմ, բերիմ, բռնագատիմ, բրիմ, գնիմ, գործիմ, գովիմ, գրիմ, դատապարտիմ, դարովիմ, դնիմ, երախտատրեալ, զմոսեալ, ընբռնիմ, ընդելուզեալ, ընկճիմ, ընտրիմ, թացիմ, թարգամանիմ, թերաքամեալ, թլպատիմ, թուիմ, ժառանգիմ, լսիմ, խարիմ, խաշիմ, խլիմ, խնդրիմ, խոշտանգիմ, խոտիմ, խոցոփիմ, խոկեալ, խրամատիմ, ծծիմ, կախիմ, կարծեալ, կարկատիմ, կթիմ, կնքիմ, կշոբիմ, կոխիմ, կողոպտիմ, կոճոպիմ, կոշկոճիմ, կոշիմ, կոտորիմ, կոփիմ, կրիմ, հալածիմ, համառոտիմ, համեմիմ, հայհոյիմ, հանդերձիմ, հաստիմ, հաւաքիմ, հողմակոծեալ, հովուիմ, հրամայիմ հրաւիրիմ, ձաղկիմ, ձեռնադրեալ, ճեղքիմ, մատնիմ, մեծարիմ, մերծիմ, մղիմ, մկրտիմ, յաղթիմ, յաղիմ, յարգիմ, յարգարեալ, յիշատակիմ, նախատիմ նկարիմ, նուաճիմ, շինիմ, շնորհիմ, ուխտեալ, շարագանիմ, չափիմ, պաշաղիմ, պաշտիմ, պատարագիմ, պատժիմ, պատմիմ, պատուիմ, պատրիմ, պարտիմ, (պարտվել), սիրիմ, սղոցիմ, ստիպիմ, սրիմ, սրակիմ, վանիմ, վարձիմ, վիրատրիմ, վճարիմ, ցտիմ, փակիմ, փողիմ,

փորիմ, փործիմ, փշիմ, փոխիմ, քանդակիմ, քաջալերիմ, քարկոծիմ, քարողիմ, օրինադրիմ:

Այսպիսով է և ի խոնարհումների ներգործական և շեղբական որոշակի հակադրականութիւնը թուլանում է, ձեռք են բերում նոր հարաբերակցութիւն: Ե խոնարհման ներգործականութիւնը աստիճանաբար շեղբանում է:

Ի խոնարհման պարզ շեղբ բայերն են՝ ալելուրիմ, ամբարշտիմ, ամբրոխիմ, այլակերպիմ, այլափոխիմ, այսահարիմ (մոլեգնել), անամօթիմ անզգամիմ, անզգայիմ, անհամիմ, անհնազանդիմ, անօսրիմ, անօրինիմ, աշակերտիմ, աշխատիմ, ապաստանիմ, ապաւինիմ, ապշիմ, ապրիմ, աշողիմ, առաւելիմ, արածիմ, արատիմ, արծարծիմ, բազմիմ, բախիմ, բանակիմ, բանդագուշիմ, բաւականեալ, բերկրիմ, բեկտիմ, բնակիմ, բողբոջիմ, բորբոքիմ, բունիմ, բրդիմ, բոնաւորիմ, գալարիմ, գայթաղիմ, գայթիմ, գարշիմ, գժղմնիմ, գինեհարիմ, գլորիմ, գծձեալ, գուպարիմ, գումարիմ, գրգռիմ, գօտեւորեալ, դանդաղիմ, դեղեւիմ, դարանիմ, դեզեբիմ, դժգմիմ, դժուարիմ, դիպիմ, դիւահարիմ, դղրդիմ, դրդուիմ, երազիմ, երբրիմ, երեւիմ, երեքօրիմ, երկգնդիմ, եփիմ, գայրագնիմ, գարհուրիմ, զգետնիմ, զեղիսիմ, զետեղիմ, զինուորիմ, զկծիմ, զմայլիմ, զուգիմ, զշարիմ, զտիմ, ընդարձակիմ, ընդխառնակիմ, ընդմիջիմ, ընդվզիմ, ընկղմիմ, ընկրկիմ, թաթալիմ, թախծեալ, թառամեալ, թարախիմ, ընկղմիմ, (թափառել), թարշամիմ, թաւալիմ, թափառիմ, թաթալիմ, թեւակցէլին, թիւրիմ, թմբրիմ, թշնամանիմ, թուի, թօշնել, ժանգոտիմ, ժլատիմ, ժուժկալիմ, ժպրհիմ, ժպտիմ, ժտիմ, լայնիմ, լաստիմ, լկնիմ, լուղիմ, լուսնոտիմ, խաթարիմ, խախտիմ, խաղաղիմ, խայծիմ, խայտառակեալ, խանդաղատիմ, խանձատիմ, խառնակիմ, խարշիմ, խաւարիմ, խեղդիմ, խլրտիմ, խղայթիմ, խմբիմ, խմորիմ, խոժոռիմ, խոնարհիմ, խոնջիմ, խոստովանիմ, խոտորիմ, խորշիմ, խորշումիմ, խուճապիմ, խոնիմ, խոսվիմ, ծախիմ, ծաղկիմ, ծարաիմ, ծաւալիմ, ծիծաղիմ, ծիւրիմ, ծխիմ, ծորիմ, ծպտիմ, ծփիմ, կազգիմ, կամակորիմ, կասիմ, կարկառիմ, կարկիմ, կարօտիմ, կեղեւիմ, կեղծատրիմ, կերպարանիմ, կերակրիմ, կծկիմ, կղկղիմ, կողկողիմ, կողմանիմ, կորուսեալ, կուտիմ, հակառակիմ, հակիմ, հաղորդիմ, հաճիմ, համարձակիմ, համբուրիմ, համբիմ, հայիմ, հանգանակիմ, հանդիպիմ, հաշիմ, հաշմիմ, հաշտիմ, հարկիմ, հաւանիմ, հնազանդիմ, հոլանիմ, հոլովիմ, հոտիմ, հպիմ, հըրկիցեալ, ձգտիմ, ձործիմ, ձուլիմ, ղօղիմ, ճակատիմ, ճգնիմ, ճեմիմ, ճենձերիմ, ճեպիմ, ճմլիմ, մակաղիմ, մանրիմ, մաշտիմ, (ճաղատանալ), մատղիմ(կպշել), մարթի, մաքառեալ, մեծամտիմ, մեկնիմ, մենամար-

Հնացած բառերը 36 միավոր են. հարաբերությունն է 36—436, այսինքն հնացած բառերը 7 տոկոս են կազմում:

Ի խոնարհման պարզ բայերի կաղապարն է բազմիմ— բազմեցայ— բազմեա՛ց (բազմիջի՛ր), բազմեցա՛րու՛ք: Մի՛ բազմի՛ր, մի բազմի՛ք: Այս օրինակից շեղվում են՝ նստիմ— նստայ, նի՛ստ, (նստիջի՛ր), նստա՛րու՛ք: Ունիմ, միայն կան ներկայի հիմքի ժամանակները. ունիմ—ունէի, ունիցիմ. ըստ ավանդական բերականության մի՛ ունիր, մի՛ ունիք, իրականում՝ մի՛ ունիցիք. մի՛ երկուս հանդերձս ունիցիք (Ղուկ. Թ 3): Եզակին չի կիրառված:

Անցյալի հիմքի ժամանակները լրացվում են պահասավոր բայից, որ ունի անցյալ կատարյալ կալայ... կալայց, ...կա՛լ, կալչի՛ր, կալարու՛ք:

Ըստ Աճառյանի կալույ բայ գոյություն ունի, բայց կասկածելի է: Այդպիսի բայ հանվում է ըստ Յուզիթ Դ 4-ի՝ կալէք զանցս լեռնային կողմանն, որ թվում է սխալ գրություն: Այդպես է նաև Յովհաննու ԻԱ 18-ի Յործամ ծերասցիս, ձեռս ի վեր կալցես (փոխն. կալցիս): Այդպես է նաև նէեմի է 3-ի եւ մինչդեռ ամեննքեան արթունք իցենն կալցենն զդրոմնայ:

Դատիմ բայը խառնվել է դատեմ ներգործական բայի հետ: Գործածվում է իբրև կրավորական ի ձէնց դատեցայց (Ա Կորն. Դ 3): Եթե դատիմք ի տեանն է խրատիմք (Ա Կորն. ԺԱ 32): Բայց և նույն ձևը կիրառվում է նաև իբրև ներգործական. օրինակ՝ մի դատիք, զի մի դատիցիք (Մատթ. է 1):

Բայց կա նաև դատեմ բայը, որ ըստ երևույթին հետագա ներմուծում է:

Ողորմիմ բայը կանոնավոր է, սակայն եզակի հրամայականը լինում է հաճախ ողորմեա՛ փոխանակ կանոնավոր ողորմեա՛ց-ի:

բ) Ի ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱԾԱՆԳԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ

Ի խոնարհման ածանցավոր բայերը երկու խմբի են բաժանվում՝ ն, աև, ածանց ունեցող բայեր և չ, նչ ածանց ունեցողներ:

Ան ածանց ունեցող բայերն են՝ ազանիմ, (հազնվել), ազանիմ (զիշերել), ածանիմ (մեջքը կապել), անկանիմ, արկանիմ (հազնվել), բեկանիմ, բուսանիմ, գտանիմ, դիզանիմ, դնիմ, էլանիմ, եղծանիմ, դատանիմ, դարկանիմ, զբուսանիմ, զեղանիմ, զեղծանիմ, զերծանիմ, զիջանիմ, ընդելանէր, ընդմտանել, ընդհարկանիմ, ընդունիմ, թոսանիմ, լինիմ, լուծանիմ, լուցանիմ, լբանիմ, խցանիմ, ծնանիմ, հատանիմ, հարկանի, հարկանիմ, հարցանիմ, հեծանիմ, հերձանիմ, մածանիմ,

մեռանիմ, մուծանիմ, յատանիմ, յարկանիմ, ներկեալ, շիջանիմ, ոռոգանէին, ուսանիմ, պրծանիմ, ջերանիմ, սերմանիմ, սկսանիմ, սնանիմ, սպանանիմ, ստեղծանիմ, սփածանիմ, տանիմ, տարածանիմ, ցուցանիմ, փլանիմ, փրծանիմ, օծանիմ. ընդամենը 59 բայ:

Երկրորդ խմբի բայերն են՝ երկնչիմ, թռչիմ, կորնչիմ, հանգչիմ, ճանաչիմ, մատչիմ, մարտնչիմ, յանգչիմ, պակչիմ, սարտչիմ, փախչիմ:

Այս բայերը մեծ մասամբ կրել են փոփոխություններ ոչ միայն խոնարհման տեսակետով, այլև բառական կազմի գծով: Օրինակ՝ ածանցները բոլորովին զցել են՝ բեկանիմ—բեկվել (կա նաև բեկանվել), դիզանիմ—դիզվել, դնիմ—դրվել, եղծանիմ—եղծվել, գատանիմ—գատվել, զարկանիմ—զարկվել, զեղանիմ—զեղվել, զեղծանիմ—զեղծվել, զերծանիմ—զերծվել, զիջանիմ—զիջվել, լուծանիմ—լուծվել, լբանիմ—լբվել, խցանիմ—խցվել, ծնանիմ—ծնվել, հատանիմ—հատվել, հարկանիմ—վել, խցանիմ—խցվել, ծնանիմ—ծնվել, հատանիմ—հատվել, հարկանիմ—հարկվել, հարցանիմ—հարցվել, հերձանիմ—հերձվել, մածանիմ—մածվել, մուծանիմ—մուծվել, յատանիմ—չտվել, յանգչիմ—հանգել, ոռոգանիմ—ոռոգվել, սկսանիմ—սկսվել, սնանիմ—սնվել, սպանանիմ—սպանվել, ստեղծանիմ—ստեղծվել, տարածանիմ—տարածվել, փլանիմ—փլվել, օծանիմ—օծվել:

Ածանցները մասնակի փոփոխվել են հետևյալ բայերի մեջ՝ ազանիմ—հազնվել, անկանիմ—ընկնել, բուսանիմ—բուսանել, գտանիմ—գտրնվել, զբուսանիմ—զբուսանել, թոսանիմ—թոսանել, հեծանիմ—հեծնել, մեռանիմ—մեռնել, պրծանիմ—պրծանել, կորնչիմ—կորչել:

Ածանցները լրիվ պահպանել են՝ բեկանիմ—(բեկանվել), ընդունիմ, լինիմ, ուսանիմ, սերմանիմ, ճանաչիմ, մարտնչիմ, փախչիմ:

Բոլորովին հնացած են՝ ազանիմ (զիշերել), ածանիմ, արկանիմ (հազնվել), եղանիմ (ներկայի հիմքի բոլոր ձևերը), ընդելանէր, ընդմբտեալ, ընդհարկանիմ (ներկայի հիմքի բոլոր ձևերը, ընդհարվել), լուցանիմ (հաղվադեպ լուցել գործածված է), հարկանի (միադիմի բայ պատահում է), շիջանիմ, ջերանիմ, սփածանիմ (մեջքը կապել, ածանիմ), ցուցանիմ (արևմտհ. ցուցնել), փրծանիմ, մատչիմ, պակչիմ, սարտչիմ:

Բավական մեծ թիվ են կազմում հնացած բայերը: Եթե հանենք նույնիսկ կիսով չափ հնացածները, կազմում է 71/14-ի հարաբերություն՝ ավելի քան 19 տոկոս:

Ծթե Ե և Ի խոնարհումները հակադրվում են իրար իբրև ներգործական և չեզոք բայերի տարբեր խոնարհումներ՝ այսինքն ներգործականի և չեզոքի հակադրությունը արտահայտվում է խոնարհումների միջոցով, ապա ու խոնարհման պարագայում այդ հակադրությունը արտահայտվում է ածանցների միջոցով: Ու խոնարհման պարզ բայերը ներգործական են, իսկ ածանցավորները՝ չեզոք:

Քանակական առումով երկու տիպի բայերի քանակը հազիվ 50-ից անցնում է:

Ու խոնարհման պարզ բայեր են՝ առաելում, արգելում, գելում, գերծում, զեղում, զենում, թողում, լեսում, լիզում, կալում, կասում, կիզում, հանում, հեղում, հերծում, հիսում, յառում, յաւելում, յեղյեղում, յեռում, ստեղծում, ցելում, քերծում:

Մրանցից ներգործական են՝ ղեղում, ղենում, թողում, լեսում, լիզում, կալում (կա միայն կալէք. կասկածելի է այս բայի գոյությունը), կասում, կիզում, հեղում, հերծում, յեղյեղում, ստեղծում, քերծում:

Ներգործական և կրավորական իմաստներով են կիրառված՝ արգելում, գերծում, եհիս— հիսեալ, յեռում:

Ներգործական և չեզոք նշանակություններով են գործածված՝ առաւելում, գելում, յաւելում, ցելում:

Միայն չեզոք բայ է յառում:

Հանար (ոսկերօք և ջլօք հանար զիս. Յովբ Ժ 11), ձևից ենթադրվում է հանում, որ կասկածելի է. կամ զա մի ուրիշ բայ է և կամ հանելի պետք է լինի (հյուսելի):

Բնիկ են՝ առաւելում, արգելում, գելում, ղեղում, թողում, լեսում, լիզում, կալում, հանում, հեղում, յաւելում, յեղյեղում, յեռում, ստեղծում, ցելում, քերծում: Քսաներեք բայից բնիկ են 16-ը՝ այսինքն՝ մոտ 70 տոկոս:

Ու խոնարհման ածանցավոր բայեր են՝ այտնում, առնում, երզնում զարթնում, զբաղնում, զգածնում, զգենում, զընկենում, ընթեռնում, ընկենում, ընկլնում, լնում, խնում, կալնում, կլնում, հեղձնում, յենում, շրտնում, ոստնում, ուռնում, պակնում, պշնում, ջեռնում, սարտնում, ցածնում, ցասնում, փախնում, քաղցնում. 28 բայ:

Մրանցից չեզոք են՝ այտնում, երզնում, զարթնում, զբաղնում, ընկլնում, հեղձնում, յենում, շրտնում, ոստնում, ուռնում, պակնում, պշնում, ջեռնում, սարտնում, ցածնում, ցասնում, փախնում, քաղցնում:

Ներգործական են զգենում, զընկենում, ընթեռնում, ընկենում, խնում:

Ներգործական և կրավորական է՝ առնում. ներգործական, կրավորական և չեզոք է՝ լնում: Կրավորական և չեզոք է՝ զգածնում:

Հնացած են՝ այտնում, զընկենում, ընկլնում, շրտնում, պակնում, ջեռնում, սարտնում, ցասնում: Փոփոխված են՝ երզնում (երզվել), զբաղնում (զբաղվել), յենում (հենվել), ուռնում (ուռչել), զգածնում (զգածվել), պշնում (պշել), ցածնում (ցածրանալ), փախնում (փախչել), քաղցնում (քաղցել, քաղցածանալ): Խոնարհման փոփոխությունը հաշվի չի առնվում, որովհետև արևելահայ գրական լեզվում ու խոնարհումը չի մնացել, արևմտահայերենում հիշյալ բայերի որոշ մասը նույնությամբ կիրառված է:

Գո՛գ—գոգջիր, գոգչէք (ասել), և գոյ—գոյր—գուցե պակասավոր բայերից մնացել են բերված ձևերը. բոլորը բնիկ են:

Ինչպես ասացինք, ներգործական բայերը աստիճանաբար բռնում են չեզոքացման ուղին, ուստի պատճառական բայեր են առաջանում փոխհատուցելու ներգործականության պակասը: Թող զարմանալի չլիվա, եթե ասենք V դարի հայերենում ներգործականության ըմբռնումը ավելի ուժեղ է, քան կրավորականությունը*: Դատիմ բայի 231 կիրառությունից կրավորական է միայն տասնյակը. իսկ բազմաթիվ ներգործական բայեր ոչ մեկ հատ կրավորական ձև չունեն: Ներգործականության այդ ուժգնությունը դեր է կատարել, որպեսզի ստեղծվեն մեծ քանակությամբ պատճառական բայեր ևս, որոնց պատճառական իմաստը քիչ է, դրանք մեծ մասամբ ներգործական բայեր են, որոնք են՝ +ազուցանեմ, ազատեցուցանեմ, ազնուացուցանեմ, +աղբատացուցանեմ**, +աճեցուցանեմ, +ամաշեցուցանեմ, +անզգամեցուցանեմ, +անդրանկացուցանեմ, +անզաւակացուցանեմ, +անպիտանացուցանեմ, +անցուցանեմ, +անօրացուցանեմ, +աշխատեցուցանեմ, +պաշեցուցանեմ, +պատամբեցուցանեմ, +պրեցուցանեմ, +առիւծացուցանեմ, +արբեցուցանեմ, +արբուցանեմ, +արդարացուցանեմ, +աւաքեցուցանեմ(բուժել), +բաղմացուցանեմ, բաղ-

* Կրավորականությունը արտահայտվում է բաղադրյալ ձևերով:

** Պլուս նշանով բայերը բնիկ են:

մնցուցանեմ, բանակեցուցանեմ, բարկացուցանեմ, +բարձուցանեմ, +բարձրացուցանեմ, բաւեցուցանեմ, բխեցուցանեմ, բնակեցուցանեմ, +բորբոքեցուցանեմ, +բուսուցանեմ, գազանացուցանեմ, գայթակղեցուցանեմ, գառացուցանեմ (պառկեցնել), +գարշեցուցանեմ, գնացուցանեմ, գոշեցուցանեմ, գոսացուցանեմ (գոսացուցանեմ), +գաղարեցուցանեմ, +գալարեցուցանեմ, գառնացուցանեմ, գատարկացուցանեմ, +գարձուցանեմ, +գիեցուցանեմ, դիմեցուցանեմ, դղրեցուցանեմ, դողացուցանեմ, դրդեցուցանեմ, եկեղեցացուցանեմ, +եռացուցանեմ, +երգիծուցանեմ, +երդմնեցուցանեմ, +երեւեցուցանեմ, +երկեցուցանեմ, +գալթացուցանեմ, գազրացուցանեմ, +գանգիտեցուցանեմ, +գանցուցանեմ, +գառնացուցանեմ, +գատուցանեմ, +գարթուցանեմ, +գարկուցանեմ, գարհուրեցուցանեմ, +գարմացուցանեմ, գբաղեցուցանեմ, գբուսացուցանեմ, +գգաստացուցանեմ, +գգացուցանեմ, +գղեցուցանեմ, գգուշացուցանեմ, +գեկուցանեմ, +գեղուցանեմ, +գեղծուցանեմ, +գետեղեցուցանեմ, +գերծուցանեմ, +գիշուցանեմ, +գկծեցուցանեմ, գղչացուցանեմ, գմայլեցուցանեմ, +գնստուցանեմ, +գովացուցանեմ, գուարթացուցանեմ, գուարձացուցանեմ, գորացուցանեմ, ընդարձակեցուցանեմ, +ընդարմացուցանեմ, +ընդելացուցանեմ, +ընդելուզանեմ, +ընդելուցանեմ, +ընդոստուցանեմ, +ընծայեցուցանեմ, +ընկուզանեմ, ընկողմացուցանեմ, թագաւորեցուցանեմ, թախանձեցուցանեմ, +թանձրացուցանեմ, +թառամեցուցանեմ, թաւալեցուցանեմ, +թաբուցանեմ, թեթեւեցուցանեմ, թշուառացուցանեմ, թողուցանեմ, թուլացուցանեմ, +թուցանեմ, ժառանգեցուցանեմ, +իմացուցանեմ, +իշուցանեմ, +լուուցանեմ, +լուցանեմ, +լոեցուցանեմ, +լսնեցուցանեմ, (լսնագույն դարձնել), լրջացուցանեմ, +լլուցանեմ, +լլուցանեմ, խաղաղեցուցանեմ, խանձեցուցանեմ, +խելամտեցուցանեմ, խոնարհեցուցանեմ, խոտորեցուցանեմ, խոլվեցուցանեմ, խստացուցանեմ, +խրտուցանեմ, +ծանուցանեմ, +ծանրացուցանեմ, +ծնուցանեմ, ծփեցուցանեմ, կաղդորեցուցանեմ, կաթեցուցանեմ, +կառուցանեմ, կասեցուցանեմ, կացուցանեմ, +կարծրացուցանեմ, կարկամեցուցանեմ, կարմրացուցանեմ, կարողացուցանեմ, կափուցանեմ, կաքաւեցուցանեմ, +կենդանացուցանեմ, +կեցուցանեմ, +կողմանեցուցանեմ, +կողմնացուցանեմ, կողկողեցուցանեմ, կորացուցանեմ, +կորուանեմ, կուրացուցանեմ, +կսկծեցուցանեմ, համարձակեցուցանեմ, +հայեցուցանեմ, +հանգուցանեմ, հաշտեցուցանեմ, +հատուցանեմ, (հատուցանիմ), հաւանեցուցանեմ, հաւատարմացուցանեմ, հաւատացուցանեմ, +հեծուցանեմ, +հեղձուցանեմ, հեշտացուցանեմ, +հեռացուցանեմ, հիւանդացուցանեմ, հնազանդեցուցանեմ, +հնա-

ցուցանեմ, +հնչեցուցանեմ, +հողացուցանեմ, հովանեցուցանեմ, +հոլովեցուցանեմ, հպարտացուցանեմ, ձանձրացուցանեմ, ձգտեցուցանեմ, ղողեցուցանեմ, ճակատեցուցանեմ, ճեմեցուցանեմ, ճմլեցուցանեմ, ճըշգրտեցուցանեմ, +մածուցանեմ, +մատուցանեմ, +մեծացուցանեմ, +մերկեցուցանեմ, +մեկուսացուցանեմ, +մեղուցանեմ, +մեղմացուցանեմ, +մեռուցանեմ, +մերկացուցանեմ, +մերձաւորացուցանեմ, մթացուցանեմ, +մոլորեցուցանեմ, +մոռացուցանեմ, +յազեցուցանեմ, +յածեցուցանեմ, յաճախեցուցանեմ, յամեցուցանեմ, +յանգուցանեմ, (յանկուցանեմ), +յանցուցանեմ, +յառաջեցուցանեմ, յառեցուցանեմ, +յարուցանեմ, +յեցուցանեմ, յիմարեցուցանեմ, յիշեցուցանեմ, յուսացուցանեմ, նախանձեցուցանեմ, ննչեցուցանեմ, նիրհեցուցանեմ, նմանեցուցանեմ, նողկտացուցանեմ, նուազեցուցանեմ, +նստուցանեմ, շաբաթացուցանեմ, +շիշուցանեմ, +շլացուցանեմ, շրջեցուցանեմ, շբեղացուցանեմ, +ողջացուցանեմ, +ունայնացուցանեմ, ուռուցանեմ, +ուսուցանեմ, շաղացուցանեմ, շուառացուցանեմ, պակասեցուցանեմ, պայթուցանեմ, պանդխտեցուցանեմ, +պապանձեցուցանեմ, պատկառեցուցանեմ, պատսպարեցուցանեմ, պարապեցուցանեմ, պատրաստեցուցանեմ, պոռնկացուցանեմ, +չեռուցանեմ, սակաւեցուցանեմ, սահեցուցանեմ, +սասանեցուցանեմ, +սաստկացուցանեմ, սթափեցուցանեմ, +սնուցանեմ, +սորեցուցանեմ, +սպիտակացուցանեմ, +սրտացուցանեմ, վախճանեցուցանեմ, +վառեցուցանեմ, վարանեցուցանեմ, վրիպեցուցանեմ, տազնապեցուցանեմ, տապալեցուցանեմ, տառապեցուցանեմ, +տեղեկացուցանեմ, տկարացուցանեմ, +տրոմեցուցանեմ, ցածուցանեմ, ցականեցուցանեմ (չարչարել), ցամաքեցուցանեմ, ցաւեցուցանեմ, ցրտացուցանեմ, +փախուցանեմ, +փայլատակեցուցանեմ, փառաւորեցուցանեմ, փարատեցուցանեմ, փափկացուցանեմ, +փլուզանեմ, փեսայացուցանեմ, +փլուցանեմ, +փութացուցանեմ, +փրփրեցուցանեմ, +քաղցրացուցանեմ, օտարացուցանեմ:

Այս 270 բայից բնիկ են 123 բայ (խաչանիշերով բայերը), որ անուս է մտաւարկուրպես 43 տոկոս:

Այս բոլոր բայերից հնացած են անօսրացուցանեմ, աւաքեցուցանեմ (բուժել), գառացուցանեմ (պառկեցնել), եկեղեցացուցանեմ, երկեցուցանեմ, զանգիտեցուցանեմ, զանցուցանեմ, զեղուցանեմ, զկծեցուցանեմ, զնստուցանեմ, ընկուզանեմ, լուուցանեմ (լսեցնել), լսնեցուցանեմ, կողմանեցուցանեմ, կողմնեցուցանեմ, հոլովեցուցանեմ, ղողեցուցանեմ, ճակատեցուցանեմ, մեղուցանեմ, յանցուցանեմ, յեցուցանեմ, յուսացուցանեմ,

նեմ, նողկատացուցանեմ (գարշեցնել), շարաթացուցանեմ (դադարեցնել, հանդստացնել), ջեռուցանեմ, սորեցուցանեմ, սրտացուցանեմ — սիրտ տալ), վիճակեցուցանեմ, տապալեցուցանեմ, ցականցուցանեմ (շարշարել), վարատեցուցանեմ:

Պատճառական բայերի հնացումը երկու կերպով է արտահայտվում. մեկ որ հիմնածև բայը արդեն անգործածելի է, ինչպես նողկատացուցանեմ (նողկում հիմնածև), կամ եկեղեցուցանեմ (եկեղեցանամ ձևը): Մեկ էլ երբ մենք այդ բայից պատճառական շենք կազմում. օրինակ՝ հոլովեցուցանեմ: 270 բայից հնացած են 34 բայ, որ կազմում է 12 տոկոս:

Աստվածաշնչում բայերի ընդհանուր քանակն է՝ 2060:

Ե. ԱՍՏՎԱԾԱՆՇՆՉԻ ՀՆԱՅԱՄ ԲԱՌԵՐԸ

Հնացած բառերը բաժանվում են մի քանի խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք բոլորովին դուրս են եկել լեզվի գործուն բառապաշարից և կորցրել են կիրառման բոլոր հեռանկարները: Պետք է ասել, որ այդ կարգի բառերը Աստվածաշնչում էլ քիչ են գործածվել, իսկ հետագայում կամ բնավ թղթի երես չեն տեսել և կամ մի որևէ անհատի կողմից վերանորոգության փորձի են ենթարկվել, սակայն այդպես էլ չեն վերանորոգվել: Այս խմբի բառերի տվյալ շարքը բաղկանում է այնպիսի բառերից, որոնք ամենայն հավանականությամբ Աստվածաշնչի մեջ հյուրընկալվել են այդ հսկա գիրքը թարգմանող մեր այն մի շարք մտավորականների կողմից, որոնք խմբվել էին այդ գործի մեջ մեր լայնածավալ երկրի տարբեր գավառներից, որտեղերից և գրական շրջանառության մեջ էին մտցրել դրանք: Այդ բառերը գավառական շահմանափակ և տեղական կիրառություն ունենալով՝ չեն ընդհանրացել, լայն կիրառության համար հասկանալի չեն եղել, գուցե նաև հնրի համար պահպանած են եղել իրենց գավառական արտահայտությունը, ուստի և զերադանցապես միայն Աստվածաշնչում են մնացել՝ չենելով կիրառության լայն շրջան. ահա այդպիսի բառերի մի քանի օրինակ, ագի, ագուռ(բուռ), ազբն, ազոխ, ալոջ(էգ ուլ), ալանողիք, (աչք), աղէ(լավ, ընդունենք), աղխ(ամբոխ), աղտիր(չրարբի տեղ), աճառ(օճառախոտ), ալծի(այծ), անազան(ուշ մնացած), անդեայ և անդի(նախիր), անթանսցիկ(մի անութ օրան), +տեկած(տկար), անկարուրդ(կոշիկ), անկուշեմ(աքացել), ապախտ, ապարահ(դաշտան), ապարում(չվան), ապաւառ(քակոր), ապաւանդակ(պարան), ապուռ(կողոպուտ. ապուռ-չփուռ), +ասղանի(դերձան), արդն(նիզակ), արդու(մի շափ), արսին(մանգաղա-

թեկիկ), աւաքեմ, բարէ(այ քեզ բան), բաղկեմ(կրճատել), բաղմակ(ճըրագ), բաղմակակալ(ճրագարան), +բամ(ասել), բարապան(դոնապան), բարբարեմ(ժամանակ շունենալ), բլշակ(թի), բծկան(արատավոր), բնիոն(մանր դրամ), բոտոտ(որդ)+բուծ(ամլիկ), բուռ(կիր), բօթ, գահակ(օղակ), գաղտամէս(գաղտնամուտ), գաղատոս(որմնագիր), գամ(անդամ), +գան(ծեծ), +գեղձ(գալուկ խոտը), գեր(ողը), գերմակ(մանր ալյուր), +գորշապահանգ(գինդ), +գոգ(ասա), +գուն(ջանք), գրիւ(շափ), գրուան(աման), գրուճ(մանր մորեխ), դահամունք(կաշառք), դանգ(ամենափոքր դրամ), դանդանաւանդ (սանձ), դարապան(դոնապան), դարաւանդ(առաստաղի գերան), դորակ, դրօշ(կուռք), +դուրգն, եղէգ(ճարճատուկ), եղջերիկ(պնդերես), եղտիր(չրարբի տեղ), եռանդ(մյուս օրը), երախան(սեղանակիցներ), երաշխէպ(հարվածի կապտած տեղը), երեիլ(բույսի ժանդ), +երի(երբուծ), երբ(նեղութուն), զածած(չնչին), զարտակ(դեղին), զաղփաղփուն(խարխուլ), +զաշացու(կույր), զմբաղ(հոգս), զովոզ(գործակից), զրահան(կույտ, դեզ), +է՞ր(ինչու՞), +ընկերշակեմ(ընկերներ հավաքեմ), ընչուղ(երինջ), թանգուզեմ(վախից քաշվել գնալ), թաղամասուր(կրտած), թին(խաղողի կորիզ), իղձ(կախարդ), լեփ(շեղ), +լուսն(աչքի փառ), խաղաւարտ(պալար. ուռուցք), խան(մատուցարան, ափսե), խառեմ(ճուտել), խառնիճ(մանր մորեխ), խարաբուզ(ոսնդա), խարագուլ(մորեխ), խարբուզ(իշալծյամ), խոհակեր(խոհարար), խոռապետ (իշխան), խուեմ(չարշարել), խուն(քիչ), խոկեպ(հավաքված), +խօթ(հիւանդ), +խօթամիտ(տկարամիտ), +խօթասիրտ(ծուլ), ծուկամ(մկըկալ), ծպնեմ(կապել, կպցնել), +ծանծաքեմ(ծամծմել), կագ(կոիվ, վեճ), կայթ(շափ), կարաւանդ(սնակուշտ), կիւ(կախարդ), կըղ-կըղեմ(քամել), կշտապանակ(զարդ), կշտապինդ(լավ կերած խմած. մեր խոսվածքում քշտապնդվել), կնճանամ(գոռոզամտել), +կոգի (կարագ), կոզակ(պատի կապ), կոզն(ուղտի ձագ), կոլոփ-կողոփ(կողով), կոճոպեմ(կտրասել), կորդին (թամբ), կորճ(գիշակեր թուշուն), +կովադիաց (քարաթոթոշ), կտապ(կուտապ), կրկուտ(խոիվ), կօշեմ(մոնշալ), հադաղակ(խսիրով շրջափակված շիշ), համակ(գորշախայտ), համարակար(հաշվապահ), համբարակ(շտեմարան), +հանի(տատ), հաստեայ(խմորեղեն), հարկիք(ամուլ), հացարարոց(հացի խանութ), +հաւ(պապ), հեծանոց(փայտե եղան), +հիմ, հիւկեն(երկնագուշն, ազնիվ գունավոր զգեստ), +հօրան(ոչխարի հոտ), +ձետ(պոշ), ձանբակ(բույս է), ձանճիկ(կուռք), ճեղ(ճաղատ), ճեղանակ(ղարդ), ճիկ(ծվոց), մալուխ(ճոպան), մաճառակ (թարմ պանիր), մանգառ(խմորեղեն), մար(շափ), մարթ(կարելի), մարմառոտ(կեղտոտ), մեհեւանդ(ապարանջան), մեղեխ(կացնի կոթ),

մեղմեխ(նենգ), մեց(ցեց), մեցամէս(ցեցակեր), մշտիկ(փնջիկ), +մորի(որջ), +մուն(մանր մոծակ), +մուրկ(աղանձ), մտրուկ (քուռակ), յամայր(շատ), յայրատ(անառակ), յովանակ(քուռակ), նաքարակիտ(դրամական փոքր միավոր), +նէլ(տեղերակիին), նկան, +նու(հարս), նուագ(բաժակ), նուարտան(ծածկոց), նօթ(կարմիր ներկ), շահապ(գավառապետ), շաղամաթ(թել), շարիատ(տոկոս), շեր(ծառի տեսակ), շանթ(շափ), շիզ(կոճակ), շոգմոզ(բանասրկու) շօթ(հացի տեսակ), +ոստին(անշրդի), որգոստա(վաճառանոց), որթ(կողով), օրի(աղուավ), որոջ(գառնուկ), +ուլն(վիզ), +ուլուկ(թիւ), ունդ(մղեղ), ուն(մուրճ), շանշ(շեշ), պախ(խաշած միս), պախրէ(պաշար), պահակեր(խնամող), պաշտատական(օժիտ), պասկուճ(գիշատիչ թռչուն), պառակ(մակաղատեղ), պատաս՝(փաթեթ), պատրուճակ(ոչխար), պատժանակ(գավաթ), պարզունակ(նիգ), պրշակ(առաստաղի տախտակների գարդերը), ջորեակ(մորեխ), սակո(թռչուն), սանգաստական(նախատինք), սապատ(կողով), սատեր(շափ), սարդ(մայրի), սարոյ(նոճի), սկնդիկ(ամուսնամթող կին), սոր(ծակ), սպահ(սպա), ստոման(աման), ստորի(ջուհակի դան), սրեկապան(հարսի սենյակ(ը), վականակ(հասուն օրանի մասին), նկան(հացի տեսակ), նկանակ(նուլը), նթեկ(թաղցից նվաղել), նօթ(կիր), շահեմ(կապել), շոնշան(ճոռան ծեռ), շրտնում(խրտնել), պախիմ(վախենալ), պան(բլիթ), պառակ(զոմ), պտղակն(շիւ), ստորի (կտավազործի դան), վանի, վաղակաւոր(կարճ թուղ), վարապան(սանձ), վարապանակ(զրահապատ թիկնոց), վարշամակ(թաշկինակ), վէզ(վեճ), վէտ(ցիտ), վստակ(վարձ), վտակակ(նեղքնաշոր), վտակակն(մի ասպարեզ), տաղախ(շաղախ), տամալի(տանիք), տապակ (ղարդ), տեռ(շղարշ), տիտեռն(կոկորդիլոս), տոռն(պարան), տրուպ(խեղճ), ցինգ(ծաղիկ), ցիւ(սանիք), ցփսի(այծի մազից գոռոված կտոր), ցթի(օղի), փասքուս(բամբասող), փողոշուկ(զլխազարդ), փոր(կարապ), փքին(նետ), քածաւարտ(կրտած), +քակոր, քաղ(արու այծ), քայո(մանյակ), քաչիկ(մի քիւ), քաքար, քիւ(ուղուկ), քուք(գավաղան), +քուք(ողբ), քոզէք(ապարանջան), +օղի(ոչխար), օն(ղե), օշ(երանի):

Բոլորովին հնացած պետք է համարել այնպիսի պատճառական բայերը, որոնք արդեն գրաբարում էլ ավելորդ կազմութիւններ են, որովհետեւ կան նրանց ներգործականները, որոնք ճիշտ պատճառականների նըշանակութիւնը են կիրառւում, բոլոր դեպքերում, եթե նույնիսկ այդպես էլ չեն, այնուամենայնիվ դրանց նոր ձևի պատճառականները մեր նոր լեզվում չկան և մասամբ հնացած են արմատապես. ինչպես՝ աղատեցուցանել, անդրանկացուցանել (անդրանիկ դարձնել), բաւեցուցանել (բավեց-

նել), գառացուցանել (պառկեցնել), երգիծեցուցանել, երկեցուցանել, զանգիտեցուցանել, զանցուցանել, դեղուցանել, դիշուցանել, զետեղեցուցանել, զնստուցանել, ընկողմանեցուցանել, ժառանգեցուցանել, լսնեցուցանել, կափուցանել, կողկողեցուցանել, հովանացուցանել (հովանի անել), հորովեցուցանել, հնձեցուցանել, հայեցուցանել, դողեցուցանել. մածուցանել, մեկնեցուցանել, մեղուցանել, մերձաւորացուցանել, յաճախեցուցանել, յուսացուցանել, յանկուցանել (դեպի ինքը գրավել), յանցուցանել, յամեցուցանել (ուշացնել), յածեցուցանել, շուսացուցանել, սորեցուցանել, վիճակեցուցանել (հասցնել, բաշխել, տալ) և այլն:

Հնացած պետք է համարել այնպիսի բառերը, որոնք հնչյունական կամ ածանցական շնչին փոփոխութիւններ են կրել (իհարկե որոնց մեջ չեն մտնում յ-ով և ն-ով հանգող բառերը կամ ուղղագրական տարբերակները), այսպես՝ արուարձանեայ (արվարձան), գործօնեայ (գործունյա), դժկամակ (դժկամ), դժգմել (դժկամել), ելամուտ (ելեմուտ), խինջել (խրինջալ) համբարել (ամբարել), մարդավար—մարդավարի), մենքենայագործ (մեքենայագործ), յավէժ (հավերժ), յամել կամ յամենալ, յաղել (աղել), ներքս (ներս), պագանել (պագել), պատատ (փաթեթ), տարբերութիւն (տարբերութիւն), քուեայ (քվե), քերան (քերուք):

Մեր թարգմանիչները Աստվածաշնչի թարգմանութեան ժամանակ հայերեն բառեր ընտրելու մեջ հաճախ խտրութիւն չեն դրել. բնագիրը հայացվի միայն, ինչ գնով ուղում է լինի: Եվ ահա այլևայլ շերտերի բառերի հետ կիրառվել են բազմաթիվ նորաբան կազմութիւններ, որոնք արդունք են բնագիրը ճիշտ հայացնելու պարտադրանքի: Այսպիսի նորաբան բարդութիւնները (իր ժամանակի համար), կամ ուղղակի հունարենի նույնաձև հայացումն են (կաղապարումը), կամ հունարեն կապակցութեան հայացումը մեկ բառով, որոնք հաճախ հայերենի կազմութեան օրենքներից շատ հեռու են, ուստի ոչ միայն հետագայում բնավ չեն կիրառվել, կամ շատ քչերն են փորձել դրանք վերակենդանացնել, այլև մեծ մասամբ չեն հասկացվել իրենց ոչ ճիշտ կամ օտարաբան կազմութեան պատճառով, որոնցից շատերը միայն Աստվածաշնչում են կիրառված:

Աստվածաշնչի բառերի հնացման մի զգալի բաժինը հիշյալ նորակազմ բառերի հաշվին է: Այսպես ունենք՝ ամենահայեաց(ամենատես), անարծաթասէր, անդամաթիւ(պատառ-պատառ արած անդամների մասերը), անկեղծաւոր, աշխարհակոյտ(լայնատարած), աշարձակութիւն (ագահութիւն), ապաժամանա(ստորին, անպետք), առասպելախօս (μυθολόγος), արձակաքաղաք(անպարիսպ քաղաք), աւագափող(մեծ փող.

հուն. մեծ փող), բազմաժողով(բազմամարդ), բարեմարդիկ(երկե-
րեսանի), գաւառակոյտ (գավառից հավաքված), բնադիրք(բանակի դիրք),
գահապուխ(նախագահ), գերարտօսընկից, գինեղէն, գինեհարել(հարբել),
գինեհարութիւն, դարանայոյզ (դարանից զգույշ), եղրածիրանի(զգեստի
տեսակ), եկակոչ(ատյան կանչված), երկծով (Ճիժալասոս երկնեղուց),
երեքքաղաքեան(տրիպոլի), երկնապող(դեպի երկինք ձգվող), զուար-
թառատ(ուրախ և առատ սրտով), զուարթածաղիկ(խաղաղկուն.
ալիքների մասին), զնստագոյն(ավելի խոր), ըղծապատում(սուտ
գուշակ), ընդերկարութիւն(տևողութիւն), ընդմիջաշաւիղ(ճամփամիջի
գիծը), ընդմտատար(հոգածու), խորհրդակորոյս(անխելք. հունարենի
պատճենում), կալանաւորակապ(փականագործ), կախարդասարաս, կա-
խարդ, հասակաշափ(շափահաս), հետահան(հետամտող), ձեռագէտ(ար-
հեստավոր), մանկակալ(ծծմայր), միջնալուսին(լիալուսին), միջնածի-
րանի(ծիրանիխառն գունով զգեստ. μεσοπόφουρος), մոլորանուն(ստա-
նուն), մտադիրագոյն(հաճույքով), մօտակտուր(արմատից կտրված),
մօտաքաղաք(արվարձան. հուն. ἄστυγείτων πόλις), լստաջապահ(պահա-
պան), շարյակինթ(փոխն. յակնթաշար), նեղասաստ(նեղսիրտ), շինա-
կանագոյնս(գոնհկաբար), շուշանագործ(շուշանաձև զարդ պատրաս-
տող, հուն. շուշանի գործ), ոգեսէր(մարդասեր. հուն. φιλόψυχος),
ողջընծա(ողջակեզ. հուն. ὀλόχαυτος), չբարեբարութիւն, շորորդապետ
(երկրի շորորդ մասի պետը), շորորդապետութիւն, սակաւավախճան
(սակավակյաց), վերամարտիկ(մարտում օգնող), պատուածոյ(ոլորածո),
վարագույրաձիգ(սենյակ. հուն. παυτοφόριον), վերամարտիկ(օգնա-
կան կովող), տոհմաթիւ (ճյուղագրութիւն), ցողագին (ցողանը-
ման), փողանշան (փոխն. նշանափող), օտարատեսուչ (օտարի ինչքին
նայող ἄλλοτριεπίτροπος), օրաթիւ (օրական մեկի ծառայութիւնը շու-
բաթական) և այլն:

Աստվածաշնչում կան այժմ քիչ կիրառվող կամ չկիրառվող, բայց
մեր նոր գրական լեզվի բառապաշարը հարստացնող այնպիսի բառեր,
որոնց պակասը մենք զգում ենք և որոնց կարողական հնարավորութիւն-
ները գործածութեան հեռանկարի տեսակետից այնքան մեծ է ու պահան-
ջարկելի, որ կարող են դառնալ մինչև իսկ խոսակցական բառեր: Եւ
կազմութեան կողմից և իմաստային ոլորտով այս բառերը դարդարանք
կարող են դառնալ մեր լեզվի համար: Ահա այդպիսի բառերի մի շարք.
ակնկորել (աչքերը վար գցել), ամենաբեր, անբարեսէր, անզեղ, ան-
ժառանգել (ժառանգազրկել), անձնամատն, անձնանախատ, անտոն
(մահճակալի ոտքերի կողմը. հինը. սնար), աշառանք, առգնող (առնող-

ծախող), առնակին (ամուսին ունեցող կին), արբանեկել (արբանյակու-
թիւն անել), արօտական, աւագամեծար (համեմատիր կնամեծար), բազ-
մածին, բազմածնունդ, բազմօրեայ, բասրանք, բարենշան, բարձրամուր,
բարեսէր բարկասիրտ, գեղմնաւոր, գիշերայն (գիշերը), գողուղի, գրկալիր
(լիքը գրկով), դժուարածին, դիազարդ, զէնընկէց, ընկուղեզարդ, ընտա-
նեակ (ընտանիքի անդամ), լուսն (աչքի փառ), խոչընդակն, ծայրակտուր,
կառաշ, կառապետ, կոչնատէր, կարկել (բերանք փակել), կարթընկէց, հա-
ղաղակ (խսիրապատ շիշ), հայցուած, հացերէց (հարսանիքի վերակացու),
ձայնատու, ձեռնարեկ, ձմերատուն, միորձի (այս գեղեցիկ բառը բար-
բառներում փոխարինված է չափազանց գոհիկ քայտաշաղ բառով),
մոլխոտել, մոխրել, մոխրահեղձոյց, նմանավիշտ, նորագործ, նորաճա-
շակ (մոդեռնիստ), նորանշան, նուարտան (ծածկոց), շաղիղ, շաղփաղ-
փել, շաղփաղփութիւն, շարարուեստ, շազգ, շժողովուրդ, պախրէ (պա-
շար) պատգամաւորել, շարապապահ, պղծաշուրթն, պողախայծ (պողի
հասունացման սկիզբը), վիմարգել, վաստակակից, վաճառակից, վիրա-
բերան, վնասասէր, վտարանդել, գտտել (սա նոր է հնացել), տարեւոր
(մի տարվա), տապել, տօթածամ, քաղաքակից, քօղաձիգ, օթագանալ
(քարթուանալ):

Այս բառերի մի մասը մտել է մեր նոր բառարանը, բայց դրանք
լիարժեք գործածութիւն չունեն:

Ննացած ենք համարել նաև այնպիսի բառեր, որոնք արտացոլում
են հին ավատական շրջանի փոխհարաբերութիւններ, կենցաղային,
առօրյա և ռազմական հասկացութիւններ, որոնք գործածութեան նեղ
ոլորտ ունեն. դրանք կիրառվում են պատմական, պատմավիպական գրա-
կանութեան մեջ, և դրանց հնացումը բառերի ձևով չի պայմանավորվում,
այլ նրանց իմաստային ոլորտն է հնացել: Այդպիսի բառերը կենդանալու
և լայն գործածութեան հող ունենալու հնարավորութիւնից զրկված են,
բայց ունեն հնաբանական բարձրարժեք դեր. դրանք են՝ այգորելի, աս-
պարաբեկ, արդն(նիզակ), արծաթասէր, արծաթսիրութիւն, արտախու-
րակ(խուլրի փաթեթը), արդնընկէց, արքունուստ, աւարաբաշխ, բարձե-
րէց, բարձրնտիր(նախագահ), բղբշխ, գահերէց, գերանդազէն, դայեկոր-
դի, դայեկատոհմ, դպիր, երիցութիւն, ժողովրդապետ, իղծ(գուշակ), լա-
լետող, խրամապահ, կարթահարել, կարթընկէց, հարկապետ, հարկահար,
հանդերձապետ, հարկապետ, հաւահարց, հաւահմայ, հաւորս, մարդա-
հարկ, մաքսապետ, մեծազգի, նախաթոռ, նուիրանոց, շկահին(նետի
սուզելու՝ ձայնը), որեար, պարգևապետ, պսակակալ, ոմբաբար, սակա-

ու, վաղակատր, աիգրնկէց, տիրասպան, քրքմնացան, օղալամբ(օղա-
կի մեջ անցնող լամբակ) և այլն:

Վերջերս լույս տեսած մի վեպում հետնում ենք վտավակ, մեհեմեդ, փոզոշուկ, խոհակերոց, ծաղարար, կշտապանակ, ագար(աքար) և այս-
պիսի շատ բառեր, որոնց մեծ մասը Աստվածաշնչում է կիրառված:

Աստվածաշնչում կան նաև մի քանի միավոր անհաջող կազմութիւն-
ներ, որոնց համանիշները մեծ մասամբ համաժողովրդական բառեր են.
այդ անհաջող կազմութիւնները բնականաբար չէին կարող հարատեւել.
օրինակ՝ աղմկութիւն, աներկաթ(անկապանք), արհամարհութիւն, ար-
ձանութիւն(ամբուսթիւն), գաղտագողանալ(գողանալ-ը արդեն գաղտնի
է), գաղտագողօծք, գէշագէշ(բղիկ-բղիկ), գինեղէն(հարբած), գարեղեն,
գործոյթ(գործին պետք եկող բան), գօտիածու(իրեն գօտին կապող),
դարձադարձ, զոզութիւն, դրամաժողով, երաշտութիւն, երդմնաստութիւն
(ստեղծմնութիւն), զառաջատր(առջև դրած), ըղձութիւն, ժողովրդա-
նոց, լալութիւն, լեռնայն(լեռ), խոհակերեմ, խոհակերոց, կողմանոց(թևա-
շենք), կորովութիւն, հեծելութիւն, հիւրանալ(հյուր դառնալ), ձորձել(շորա-
ցու լինել), մարդաթիւ(յուրաքանչյուր մարդ), մարդաշէն(մարդաշատ),
մեկնակազէն (ինքնազուխ դինվոր), մեղացային(մեղքի գոհ), յանցութիւն,
նախանձընդէմ(միմյանց նախանձող), նշխարել(ուտելուց հետո մնա-
ցորդները թողնել), շարաթումն, պառակամայր(փարախում ծնված հոր-
թի մայր), պարանել(պարանով ետ քաշել): Սակաւավախձան (սակա-
վակաց), վերամարտիկ (մարտում օգնող), վերջայք (կյանքի վերջին
օրերը), տարապարտարօտ (դատարկ բաներ արածեցնող), ցալգութիւն
(գիշեր), փայլածուն (փայլուն), քաղցուալից (շատ մաճառ իմած), օգ-
տութիւն (օգուտ) և այլն:

Ինչպես տեսնում ենք, այդ բառերի մի մասը գրաբարում (նաև
Աստվածաշնչում) ունեցել է իր համաժողովրդական գործածական հա-
մանիշը, օրինակ՝ զոզութիւն (զոզ), երաշտութիւն (երաշտ), ըղձութիւն
(իղձ), մարդաշէն (մարդաշատ) և այլն:

Մի մասը անհաջող կազմութիւններ են և հեռավոր կապերով են
արտահայտում համապատասխան հասկացութիւնը. օրինակ՝ մեկնա-
կազէն, մօտակրտուր, նախանձընդէմ, քաղցուալից և այլն:

Մի մասի հնացումը կապված է տվյալ բառի բաղադրամասի կամ
ամբողջ բաղադրութեան հնացումով. օրինակ՝ պառակամայր, շարահալել
և այլն:

Հնացման ճանապարհ են բռնել նաև այնպիսի բառեր, որոնք միշտ
էլ կիրառվել են ավել կամ պակաս շափով մեր գրական լեզվի երկու:

Ճշուդերում, բնդ որում արևմտահայերենում ավելի լայն շափով, որտեղ
մինչև իսկ առայսօր այդ կարգի բառերից շատերը կենդանի գործածա-
կան են: Եթե արևելահայերենում դրանք զուտ հնարանական կիրառու-
թիւն են ունեցել կամ ունեն, ապա արևմտահայ գրական լեզվում ավելի
լայն են գործածվել և մինչև իսկ այսօր այդպիսիք են. Օրինակ՝ աղածրի,
այլազգ, ասպնջականութիւն, աղն, առաջի («Առջի սեր, առջի բարի»),
առասան (պարան), ահառասիկ, ահառաղիկ, ահառանիկ, ամբառնալ,
անգոսնել, անկապուտ, անձնիշխան, ապիրատ, առեղծանել, ասպնջական,
արտաքոյ, արտօսը, բանդագուշանք, բարապան, բացուտ, բոկ, բռնցի,
բոկանալ, գայլ (բերանակապ), գան, գեղարգն, գործաւորութիւն (գործ,
աշխատանք), գունակ,գոհ, գօսանալ, դայեկարար, դանդաղել, դէպու-
ղիդ, դշխոյ, դպիր, դպրութիւն, դատիկոն, զանխուլ (ծածուկ), զօշարազ,
զօշարաղութիւն, ընչախափել, ընթեռնուլ, թաթաւել, թաթաթուն, թերա-
քամալ, թշնամանել, խաղախորդ, խրաց, խառնաղանձ, խարբալել,
խուսել, կարի, կարապետ, կարկեհան, կատականք, կոշունք, հեղ, ձա-
ղել, մարդախանձ, մարդկեղէն, մարդելոյց, մարմաշել, մոլեկան, յաշա-
ղել, յամայր, յուլանալ, յափրանալ, շահատակութիւն (հարձակում), շա-
հատակել, շայեկան, շիջուցանել, շիջուցիշ, որայ, ոսին, շարակն, շա-
րակնութիւն, շուառական, շուառութիւն, պակշտել, պարեգօտ, պարտասել,
պողովատիկ, սատար, սեղիս, սուտակասպաս, սփածանելի, վասն, վատել,
վարատել, վիրգ, տողուլ(լորձունք), տակառապետ, տակառապետութիւն,
տար, ըն:

Իսկ ինչ վերաբերում է առանձնապես արևմտահայերենին, որտեղ
այս վերելի ցանկի բառերը գեղադանցապես կենդանի գործածական են,
ապա այնտեղ այդպիսի բառերի ցանկը շատ ավելի մեծ է: Դրանք, եթե
չասենք սովորական գործածական են, այնուամենայնիվ հնացման այն-
պիսի կնիք չունեն, ինչպիսին արևելահայ գրականում են. օրինակ՝
ամալ, այնպնակատակ, այտնուլ, աղազուն, այգուն, անագան, անժոյժ,
անձկանալ, անբարեւէր, անուղղայ, ապաշաւել, առականք, ատենադպիր,
ատեք, բանակետող, գան, գանել, գիրգ, գահաւանդ, գիշերական, գլել,
գահեկան, գաշխուրան, դատարկանձն, դժկամակ, դժպատեհ, դժպիրհ,
գիմագրաւ, դարովել, ետեղակալ, երագ, երբուժ, երիցագույն, զանգիտել,
զանցանել, զգնուլ, զգեցուցանել, զեղուլ, զենուլ, զենլի, զենումն, զեր-
ծուցանել, զուարակ, զուրական, զրարանել, զօրհանապազ, ընդարքոյս,
ընդունայն, ընթեռնուլ, ընկենուլ, ընկլնուլ, ընկլուղանել, ընչաւէտութիւն,
ընտասուն, ընտոծին, թաթաղուն, թակոլի, թանալ, ժպիրհ, ժպրհել,
ժտել, իմն, իմովսան, լամբար, լեսուլ, լնուլ, լումայափոխ, լուցանել,

լցուցանել, լօղիկ, խաղախորդ, խեռ, խեռութիւն, խժաբար, խիթալ, խլայ, խնու, խոտորագոյն, խուն, խստապարանոց, խոտել, խրախութիւն, կազել, կապուտ, կնին, կոշնական, կորակոր, կորուսանել, կուփահարել, կրկնոց, հանապազօր, հանապազորդ, հանգոյն, հաշել, հարկանել, հացարար, հացերէց, հեղուլ, հաւասարակից, հեղձնուլ, հեղձուցանել, հետել, հետութիւն, հետի, հոլանել, հրայրեաց, ձաղանք, ձաղել, ղօղել, ճաճանշաւուխտ, ճեպել, մատչել, մարախ, մեծագնի, մեկնոց, մէտ, մտադիր, յանձանձել, յամել, յանձանձիչ, յանձնապատան, յեց, յոյլ, յուլութիւն, նժոքճ, նշկահել, նոյնգունակ, շանխուր, շաղաւաշուրթն (շաղակրատ), շիջուցանել, շղարշատեռն, ոճ, ողնայար, ողջամբ, չուառական, չուառանալ, չուառութիւն, պակնուլ, պարեգօտ, ջամբել, սեղեխ, ստրջանալ, սրարբել, վաղնջուց, վայրապար, վարսել, վտառակ (բաճկոն), վրիժագործ, սարապարտ, տարապարտուց, տրուպ, ցասնուլ, ցռուկ, փութանակի, քառամանեակ, քարրնկէց:

Աստվածաշնչի բառերից միայն գրական լեզվի տեսակետից բարբառայինները հնացած ենք համարել նաև բարբառային արտահայտութիւն ու երանգ ունեցող բառեր, որոնք մեր բարբառներում մինչև այսօր կենդանի ու գործածական բառեր են. օրինակ՝ աղլս, աղխաղխել, աճաւ (ջիլ), անագան (արևմտահայերենում կիրառվող), բունել, բուռ (կիր, գաջ), բռել, գիշերախառն, դանգ, եղնալուծ, եռանդ (մլուս օրը), երի, ժուժալ, ժուժել, լինել (լքնել), խախալել, խան, խախացոց, խոկել, կըրկուտ, կունդ (ճաղատ), կշտապինդ, կողոփ (կոլոփ), կոփել, կտապ (կուտապ), հարած (վերք), հարաւունք (հարվունք), հեծանոց (փայտյա եղան), ձետ, ճենջեր, մալուխ, մուն, յաւել, լենել, յօրանալ (հոռանալ), ներ, շիկաթան, պան, պառակ, սորել, սորսորել (ցրել), տրմուղ, քարկուտ և այլն:

Հնացման խորթ ու անհարգատ արտահայտութիւն ունեն առանձնապէս բայանունները և զոյն ածանցով կազմված ածականները, որոնք շնայած մեր նոր գրական լեզվում հաճախ են կիրառվում, սակայն երբեմն այնպիսի բայերից և ածականներից են կազմվում, որ այսօր հազվադեպ են պատահում, օրինակ՝ ամբարշտագոյն, այլագոյն, առակումն, բոլորումն, գիջագոյն, գիջագոյն (ավելի ցած), լալիք (լաց լինելը), լալուն (լալը), լալօնք (նույնը), խաղաղագոյն, խորագիտագոյն, հարստագոյն, ձգանք (ձգելը), մերկագոյն, մօռացօնք (մոռացում), յանցումն, նստագոյն, (ավելի ցած), ուռուցումն, պատրաստագոյն, պիտանագոյն, սատակումն և այլն: Այս կարգի բառերի մի մասը անշուշտ հնացած է ու բոլորովին անգործածական, սակայն կան սրանց մեջ այնպիսիները,

որոնց գործածութիւնը տարօրինակ չի լինի մեզ համար: Ամբարիշտ բառը գրքային բառ է և գործածական, ուստի և ամբարշտագոյն-ը չի կարող չկիրառվել, այդպէս էլ խաղաղագոյն, խժոժագոյն, պատրաստագոյն և այլն, որոնք սակայն անսովոր են, բայց ոչ ամենևին հնացած՝ ինչպէս զիջագոյն, նստագոյն, լալումն, յանցումն և այլն:

Աստվածաշնչից ենք վերցրել զանազան ժողովուրդների կրոններին՝ հեթանոսութեանը, քրիստոնեութեանը վերաբերող բազմազան բառեր, որոնք արտացոլում են մի քանի հազարամյակի մտավոր, հոգեոր կյանքի, հավատալիքների, սնապաշտութեան, պաշտամունքային այլ երկվույթների հասկացութիւններ և բմբունումներ: Պարզ է, որ այդպիսի բառերը պետք է հնացում ապրեին և դուրս գային մեր լեզվի բառապաշարի կենդանի ոլորտից: Եվ դրանցից շատերը իրենց ժամանակը սպառած են եղել դեռևս Աստվածաշնչի մեր թարգմանութիւնից էլ առաջ. ահա այդ կարգի բառերի մի շարք. այսակիր, անդոճ, առաջատրութիւն, առաջեայք (նվիրված առաջին պտուղը), աստուածագործ, աստուածակողմն (աստծու կողմից եղած), աստուածակոյս (նույնը), աստուածանդիտութիւն (աստված չճանաչելը), աստուածամարտ, աստուածուսուց, արարչապետ, բարեպաշտօն, բէկղեբերուղ, դիւագին, դրօշուած, եղունգն (խնկի տեսակ), զառաջատրութիւն, զառաջեայք, զոհատր (զոհաբերման ենթարկված), թերափ (տնային կուռք), ժողովող (ժողովրդին քարոզի կանչող), լերդահմայ, խնկակալ, խնկաղաց, խնկաման, խնկանոց, խբարդեայ (խփով խնկաման), խաչելեալ, կնդրկախառն, կուսաստան (կուսանոց), կախարդասարաս, կենդանածին, կիւս (կախարդ), կոպարիշտ, համբարու, հաւաղէտ, հաւաղիտութիւն, հաւահմայ, ձօնի (կոպաշտի նվեր), ճանճիկ (կուռք), մաղաղմի, մեհենաղարդ, մեհենապալուտ, մոգել, միակրօն, մարմնակից (մարմնի կցորդ), նորակրօնութիւն, նշանագործ (հրաշագործ), շաբաթակրօն, շաբաթապահ, շաբաթատր (շաբաթ օրվա պաշտամունք կատարող), շաբաթեցուցանել (շաբաթվա հանգիստը պահել տալ), պատրուճակ (մատաղացու), սակաւահաւատ, սաղմոսանուագ, սաղմոսերգ, սաղմոսերգող, սանդարամետ, սանդարամետական, սատան, սպանդարամետ, սպանդարամետական, սքանչելարար, վանատուր, տաճարակապուտ, տաճարակից, տաճարապետ, տեսնակողմն, քահանայապետ, քահանայապետութիւն, քրիստոսեան, քրձաղգած:

Այս բառերի մի մասը մեր եկեղեցական, ազգագրական և այլ կարգի գրականութեան մեջ սահմանափակ կիրառութիւն ունի, բայց մեծ մասամբ գործուն բառապաշարի մեջ դրանք չեն մտնում:

Հնացել են նաև այնպիսի բառերը, որոնց բաղադրիչները միմյանց նկատմամբ կորցրել են հարաբերակցութեան կենդանի կապերը. այսպես օրինակ՝ եսև ածանցը կենդանի գործուն ածանց է, բայց ժամանակաշին բառերի հետ կորցրել է իր կապակցական կենդանի հարաբերակցութեանը, և այս շնորհիվ այն բանի, որ եսև-ը դարձել է ազգանվան շատ զորեղ մի կենդանի ածանց, ուստի և հազվադեպ է մնացել այդ կարգի բառերի բաղադրութեան մեջ. օրինակ՝ հաբիրամնան: Կամ իչ ածանցը իբրև գործողի ածանց ամրացել է իբրև անշունչ իբրերին հատուկ ածանց ի հակադրութուն ող-ի: Այս նույն ձևով հնացել են նաև այնպիսի կազմութիւնները, որոնց անբաղադիր ձևը կամ մի այլ կեղանի ձև հենց տվյալ բաղադրյալի իմաստն է արտահայտում: Նաև այնպիսի բառերը, որոնց ածանցները հնացել են. ահա այս կարգի հնացած բառերի մի շարք. անիծիչ (անիծող), աշոյ և աշու (աջ), առխթել (խթել), արևելեայ, արևմտեայ (արևմտայն), բարոյք (բարք), բարիոք (բարուք), բարձրանձն (բարձրահասակ), բնադիր (բանակատեղ), բնականալ (բնակվել), բնակաւոր (բնակչալ), երեքկարգեան, ընդխառնել (խառնել), ընդմտանել (մըտնել), կապուտակեայ, կատարիչ, կուսան (կույս), հարիրամեան, հացեփեայ (հացագործ), հինգամեան, հոգած (հոգացող), հրաւիրան (հրավեր), ձախոյ (ձախ), ձախարակեայ (ձախարակաձև), նենգան (նենգութուն), ութեմեան, շորեքկարգեան, ջրական (ջրային), սատակիչ, վաթնամեան, տասնականգեայ, տասնփեղկեան, փախստեայ, քաղցրենի (քաղցր), քսանամեան, օրհնիչ:

Հնացած են, նաև մի քանի իրանական հին փոխառյալ բառեր, որոնք համաժողովրդական կիրառութիւն չեն ունեցել ոչ V դարում և ոչ էլ հետագայում. օրինակ՝ ապաւանդակ (պարան), դանդանաւանդ (սանձ), դարապան (դոնապան), դարանաւանդ (ծածկ), դիպահ (նախակալանատուն), խոհակեր (խոհարար), խոռապետ (իշխան), համարակար (հաշվապահ), մեհեւանդ (ղարդ), պատմուճակ (հանդերձապահ), վարապան (սանձ), վարապանակ (վերնազգեստ), վտաւակ (բաճկոն) և այլն:

Հնացած և գործածութիւնից դուրս են մնացել մի շարք մակբայներ, դերանուններ, կապեր, թվականներ, ձևական բառեր, խոսքի մասնիկներ. այսպես՝ աղազաւ, աղէ, ամարայնի, ամարանի, ամենեքեան, ամենեքին, այդր, այդրէն, այժմիկ, այժմու, այսր, այսրէն, այտի, այլուստ, անազանի (երեկոյան), անդ, անդուստ, անդր, առօրին, աստ, առաւօտին, առաւօտու, աստէն, աստի, աւադիկ, աւանիկ, բարէ, բաղումս, բացուստ, բոնալիր (բոով լի), գիշերայն, գիշերաց, գիշերի, դէպ (դեպի), դէպ (անշուշտ), դէպուղիդ, դոյն, դոյնչափ, դուլ, եղիցի (ամեն), երկիցս,

երագս, երեքեան, երեքհարիւրեքին, երեքտասանեքեան, երիր, երկերիւր, երկոտասաներորդ, երկոտասան, երկոտասանեքեան, երկոքեան, եօթանասնեկին, եօթնեկին, եօթանեքեան, եօթնուտասան, եօթնուտասաներորդ, դառաշինն (սկզբում), դիարդ, դի, դինչ, զկնի, զհետ, զօրէն, զօրհանապաղ, զցայդ, զցերեկ, զճանապարհայն, զօրն, էր, ընդէր, իբրու, իմն, ինձէն, ինևտասն, իննեքեան, իննուտասն, իննուտասաներորդ, իւրովին, լիով, կամակորս, կամաւ, կաւրի, կենդանեաւ, կենդանույն, կոյս, հանապաղ, հանապաղօր, հեռի, հնդետասան, հնդետասաներորդ, հնդետասանեքեան, հնդեքեան, հնդեքին, հնգիցս, ճանապարհայն, ձեղէն, ճարպովին, մեղէն, մետասան, մետասաներորդ, մերկուց, յաղագս, մինչև, յակամայ, յայգուէ, յայնկոյս, յայսկոյս, յանկարծուստ, յեղակարծ, յետս, յաւատ (հավատարմությամբ), յարևու, յետուստ, յո՞, յորժամ, յառաջադոյն, յանկարծայն, յայլակարծուց, յով (ուր), յաներևոյթս, յանզգայ, յանիրաւի, յանխնայ, յանծանօթս, յայսկոյս, յունկանէ (ականջի տակ), նա (նամանավանդ), նոյնժամայն, նոյնօրին (տպված նոյն օրին. Բ Օր. ԻԴ 15), շուրջանակաւ (շուրջանակի), ո (ով), ութուտասաներորդ, ութուտասան, ուտեք, չեւ, շորիւր, շորեքեան, շորեքկին, շորեքհարիւրերորդ, շորեքտասան, շորեքտասաներորդ, պարապով, պնդապէս (ուժգին), սակս, սերտիւ, սոյնգունակ, սակաւիկ, սակաւս, սակաւուք, ստիպաւ, վանս, վաղվաղ, վաղիւ, վաղուեան, վաղվաղակի, վայրիկ, վերոյ, վեշտասան, վեշտասաներորդ, վեցեքեան, վեցիցս, տաղնապաւ, տասնեքին, տարածամու, ցորքան, ցերեկօրեայ, ցանկ (միշտ), քանիապատիկ, քեղէն, քսանեքին, օշ (երանի):

Հնացած են նաև սույն կարգի մի շարք բաղադրյալ բառեր ու կապակցութիւններ. օրինակ՝ ամենայն ուրեք, ամենայն փութով, ամ ըստ ամէ, ամ յամէ, ամի ամի, ամիս յամսոյ, այսր անդր, այդուն այդուն, այլ զի, այն իսկ է, այն ինքն է, այսր և անդր, ուղեմն (այնտեղ), առ աշօք (աշքի խաբկանքով), առ ականէ (երեսանց), առ ետեղ, առ սակաւակաւ, այս ինքն է, առ երեկս, առ մի (յուրաքանչյուր), արդ ևս (հենց նոր), աշ թէ, բերան ի բերան (բերնեքերան), գամ մի (մի անգամ), դամ քան զգամ (քիչ-քիչ), գէշ գէշ (պատառ-պատառ), դէմ ընդ դէմ, ընդ այլ, եւ եւս, եւս, քան եւս, եթէ իցէ, եւ ոչ իւր (ոչ մի բանով) զայս օրինակ (այսպես), եւ այսր եւ անդո (ամբի այն կողմ), զգիշերն ողջոյն (ամբողջ գիշերը), զտիւն ամենայն և զգիշերն ամենայն, զի ևս (էլ ինչ), զի է զի (ինչ կա), զհասարակ գիշերաւ, զցայդ և զցերեկ (գիշեր ցերեկ), զօրն ամենայն (ամբողջ օրը), զօրն ցերեկ (ամբողջ ցերեկը), ընդ ամենայն, ընդ այգն (լուսաբացին), ընդ առաւօտն՝ առաւօտն, ընդ

երեկս, ընդ մեջ, ըստ իւրաքանչիւր կարգի, ըստ նմին օրինակի, ժամանակս ժամանակս, թէ քաջ (առառավելն), ի դիմաց, ի հերուն հետէ, ի ձեռն, ի պատճառս, ի սակս, ի վաղիւ անդր, ի տուէ և ի գիշերի (գիշերցերեկ), իցէ թէ, լու ի լու (ի լուր), խոտորնակս, կամակար մտօք (սիրով), կարգ առ կարգ, ըստ կարգի, կարճ ի կարճոյ (համառօտ), հասարակ գիշեր, հասարակ օր (կեսօր), հեռագոյն եւս ուրեք, հուպ ընդ հուպ (անմիջապէս հետևից), հուակ յետո (ամենքից հետո), մերձ ընդ մերձ (անմիջապէս), միայն զի (միայն թե), մի մի (յուրաքանչյուր), յոյժ յոյժ, յօր ամենայն, ոչ ապաքէն, ոտն ոտն (ոտք-ոտք), ոչ ուստեք, ոչ ևս այլ, սակաւիկ ինչ, սակաւիկ մի, սակաւիկ միւս եւս, վայր մի (մի վայրկյան), քան անդր (ավելի), օն եւ օն (այսպէս այնպէս), օր քան զօր, օր յօրէ (օր առ օր):

Հնացած են հին շափերի, կշիռների, դրամական միավորների անվանումները. նույնիսկ եթե բառը ինքնին մնացել է կենդանի, բայց իբրև շափ ու կշիռ անվանում բոլորովին մեռել է. օրինակ՝ ասպարէզ (100 գրկաշափ), եղէզն (= 6 արմնկաշափ), ձող շափոյ, տաղանդ, քանքար, լումայ, դահեկան (արևմտհ.), կանգուն, կապիճ, ճաշակ: Բոլորովին հնացած են աղղու, գրիւ, դանգ, երկդրամեան, հիմէն, մար, մնաս, նաքարակիտ, ուղուկ, սատեր, վտաւան, քոռ:

Այս ամենով հանդերձ կան հնացած այնպիսի բառեր, որոնք իրենց այս կամ այն առանձնահատկութեամբ զրարարչան են. առանձնահատկութունները արտահայտվում են հնչյունափոխութեամբ, նախդրավոր կազմութեամբ, անկենդան բառական բաղադրիչներով, բառական միավորներով, համանիշային առավել հաջողի առկայութեամբ և այլն, որոնք պատճառ են դարձել այս կարգի բառերի մահացման: Սրանց թիվը բավական մեծ է, և հաղիվ թե երբևիցե այդ կարգի բառերը վերագործավեն: Ահա նաև սրանց ցանկը. ախտանալ(հիվանդանալ), ակամայանալ (ակամայից սխալվել), ակօսարեկ(առնել բայով. ակոս բանալ, ակոսել), աղճկորդի (ապօրինի որդի, դավակ), աղտաղտին (խիտ աղի) աղտաղտուկ (նույն նշանակութեամբ), աղտիր (ջրարբի տեղ), ամբարշտել (անօրեննություն անել), ամբոխել (խոռովել. Թումանյանը ունի ամբոխվել), ամբական (ամբոցարնակ), անաւագ (տկար, թույլ), աներկեւան (աներկյուղ), անխայել, անխայութիւն, անձնդիր, (փափկասեր), անյարկ (անտուն), անուրեք, անվկանդ(անդիմադրելի), անսաստել(ըմբոստանալ), անօսրել (նրբացնել), անօրինել (անօրենք գործ՝ գործողություն կատարել), աշխարումն, աշառել, ապախտ (չնչին), ապահարկ (հարկից ազատ), առականել (խայտառակել), առանցանել (զառանցել),

արաց(հայոց 6-րդ ամիսը), արկանել, արկանելի (վերարկու), բազում-ժամանակեայ, բազմաբաշխ (շատերին բաշխված), բաշխուք, (պարգե), բարերարոյ (բարի բարք ունեցող), բարեկիր (հավատարիմ), բարեմոյն, բացագոյն (ավելի հեռու), բռնալիք (լիաբուռն), բռնաւորել (բռնանալ), բռնահարել (բռնել), գահակ (աթոռիկ), գաղանբեկ (գաղանից պատանուված), գանձաւոր (գանձերի վերակացու), գելուլ (ոլորել), գեղցել (նույնը), գերծուլ (սափրել), գերծումն, գթել (գայթել), զժգմնել (զժկամել), գլխադիր (գլխարկ), գձձել (անշքանալ), գունել (գունալորել), գրգռութիւն (փափկակեցութիւն), դանդաղամած (դանդաղկոտ), դաշտաղե-տին (դաշտային), դիմակակաց (ընդդէմ կանգնող), դիրել (հանգստացնել), դիւրիչ (դուրացուցիչ), եկեղեցանալ (հավաքվել), եղտ, երագագոյն, երագընթաց, երեամ (եռամյա), երագել, երկկորեայ (իրիկվա), երկգընդել, երիզապինգ, (երիզով կապված), երիվարիկ, երիթամածեալ (նիհար, թշվառացած), երիցակից, երկբան (երկկերպ խոսող), երկդրամեան, երկխօս, գաղփաղփուն (խախտ), դառածանել (զցել), զբաղնուլ, զգածումն (հագնելը), զեղխել (շափը անցկացնել), զընկենուլ (զցել), զշարել (զայրանալ), ընդաթուր (ընդաթուր հարկանել = սրով կոտորել), ընդհարկանել (միմյանց խփել), ընդմտատար, ընծայութիւն, (մատուցում), ընկիճեալ (հակառակ), ըստգտանել (պախարակել), թշնամանադիր (նախատիչ, հայհոյիչ), ժամակալ (ժամադիր), ժառանգակալ (ժառանգություն պահանջող), ժտութիւն (թախանձանք), ինքնակաց, լիամազիլ (բազմամազիլ), լուալի (լվանալու տեղ), լսնանանալ (սպիտակել), խառնագնաց (ցոփանառակ), խառնակոխ (ընդհանուրի կողմից կոխտոված), խառնածիգ, խղայթել (թարախակալել), խրամակարկատ (խրամ վերանորոգող), կախարդասեր (կախարդ), կամակար (հոժարակամ), կամակարել (վարվել ըստ կամքի), կամակարութիւն (ինքնակամություն), կաշառարեկ (կաշառված), կանդաղեալ (հաստատուն), կապանաւոր (կալանավոր), կառամուտ (կառք քաշող ձի), կարաւանդ (զրահի մասերը միացնող կապ), կեալ (ապրել), կեղել (տանջել), կոգի (կարագ), կողմանել (ընկողմանել), կոփունք (կոուփով խփելը), կտրոց (մկրատ), համաշունչ (միաբերան), համարակար (հաշվապահ), հանապաղորդել (հաճախել, լինել), հանապաղորդեան (մշտական), հանապաղորդութիւն (շատհաճախելը՝ լինելը), հալումն (կոտորած), հասարակաց (հավասար), հասարակորդ (մասնակից), հաստահարուտ (ամուր), հաստեայս (հայս խմորի), հատեալ (կրտած), հարթայատակ (գետնին հավասար հատակ) հարկանել, հարկանող, հարկանի (դիմազուրկ բայ. պատահում է, դիպում է), հեղգալ

(ծուլանալ) հեղզասիրտ (անհոգ), հեղեղատել (հեղեղել, հեղեղվել), հոսիչ (հոսելի եղան), հետախաղաղ (անհետ), հովանոցանալ (հովանել), հրեշտակութիւն (բանազնացութիւն), ձանձախարիթ (կրկին ներկված), ձիաստաց (պիծակ), ձորձաբեր (հագուստաբեր, հագուստի նյութ բերող. ոչխար ձորձաբեր), դամբար, ճամկաւոր (պաճուճազարդ), մածանել (մակարդվել), մարդասպուր (անձը սպատած), մարթանք (հնար), մարթել (կարողանալ), մարթի (կարող է), մեծահաց (մեծ հացկերութիւթ), մեծարոյ (մեծարելի), մետասան, մի (միթել), միաժողով (մի տեղում հավաքած), միախուռն (միահամուռ), միաշաբաթի (կիրակի), միագունդ (միասին խմբված), միաշուրթն (միևնույն լեզվով խոսող), միջօր (կեսօր), մնացուած (մնացորդ), մոլել (ցնորվել), մոլորական (թափառական), մտախար, մտադիւր (սիրով), յամենալ (ուշանալ), յանցանել, յանցուած (հանցանք), յառաջագահ (առաջին բարձ), յառաջագոյն (առաջագոյն), յառաջակաց (զլխավոր), յառաջապահատ (առաջապահ), յառաջել (կանխել), յատանել (էտել), յարկանել (հարկ կառուցել), յեղչեղով (շրջշրջել), յետսամիտ (հակառակ), յերազանալ (երազ գալ), յիմարել (հիմարացնել), յղենալ (հղիանալ), յոլովագոյն (ավելի շատ), յոլովութիւն (շատութիւն), յողողողել (խախտել), յօշուած (կտրատված), նեղասաստ (բարկացած), ներքակողմն (ներսի կողմը), նորանշան (նորհրաշք), նորի (նորահաս բերք), նուազ (բաժակ) նպարակ (նպարեղէն), շահավաճառ (շահավոր վաճառք), շատերդումն (շատ երդում տվող), ո. ոգեխառնել (սրտով միանալ), ոստին (անշրդի), ցամաքային, ոտնկելիք (կանգուն լինելը), ոտնկայ (ոտք դնելու տեղ), ուղխաջուր, ուղղալից (պարարտ), շարականել (նախանձել), շաւաղաշուրթն (խաբեբա), շորեքդրամեան (շորս դրամի արժեք ունեցող), շորեքշաբաթ (շորեքշաբթի), շորեքճարիւր, շորեքօրեայ (շորսօրյա), շորսկոյս (շորս կողմ), շուանեայ (չվանից), պալարակապ (վրան գահվորակ կապած), պահակել (սնուցել), պատմուճակ (հանդերձապահ), պարանցիկ (պար), պառակամայր, պարգեւապետ, պարեկապան, պիտոյ (կարևոր), պնդածիզ (լավ աղեղնածիք) պոռնկոց, պրտուեայ (եղեգնաշեն), ջախջախանք, ջեռնուլ, ջերանալ, ջնաթ (քնար), սառնակերպ, սերմանալ (սերմը հասնել) սայրադիր (սայր), սեւակ (սեւաղեղ), սնտուել (սնտի դառնալ), սպանդարամեա (բաքոս), ստգիտ (մեղադրանք), ստգտանել (մեղադրել), ստերիւել (ծըռնել), ստնանալ (մնասել՝ մի բան անել), ստունգանել (արհամարհել), սրանալ(սուրալ) սփածանել (մեջքը փաթաթել), վալրագաւիթ (դրսի փակ), վատասրտել (վախով բռնվել), վատայր (վախկոտ), վարատել (ցրել), վարատումն (ցրում), վարձանք (օժիտ), վարչամակ (թաշկինակ,

սրբիչ, քող), վարչամակապատ, վիժակ, (վարագույր, ծածկույթ), վշտահան, վշտասեւ (վշտակիր), վտարանջել (թողնել հեռանալ), տաժանել (հոգնել), տախտապատել (փոել), տաղաւարահար (տաղավար շինող), տաշտաւոր (խաղողի տաշտակ՝ որթ ունեցող), տարապարտ (դատարկ, փուլ), տափակողմ (հարթավայր), տեռատես(դաշտանավոր), տեռանակողմն, տեռատեսութիւն (դաշտան), տոհմաթիւ (մարդահամար), տղայակոտոր (մանկակոտոր), տուարածական (հովիվ), ցանկորդել (մնալ), ցուցանել, փայտամայր (մայրի փայտ), փապարել (ծակտուվել), փողանքշան (նշան տալու փող), փորձանաւոր (փորձված), փրանգ (փոյուզացի), քաղաքաժողով (քաղմաժողովուրդ), քաղղեայ (գուշակ), քաղցրաբանութիւն, քանդակագործի (քանդակելու գործիք), քանիօն (որքանով ավել), քանցանք (տաժանելի աշխատանք), քանցել (քերել, պոկոտել), քաշահայր (բարի հայր), քաշեան (քաշաղն), քարընդոտել (ոտքի տակ դրված քարի միջոցով գլորել), քեցել (կորդել), քինալ (քեն պահել), քրքմացան (վրան քրքում ցանած), օթ (գիշերելը), օրինակիր (օրինապահ), օրաթիւ Մտտավոր հաշիվներով Աստվածաշնչի հնացած բառերի քանակը 1450 է: Եթե սրանցից 450-ը հանենք իբրև գործածութիւն կարողականութիւն ունեցողներ, այնուամենայնիվ 1000 բառ հնացած է:

9. ԲԱՌԱԳՈՐԾԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՃԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Որևէ առանձին գրքի բառերի կիրառութիւն հաճախականութեամբ չենք կարող եղբակացնել այդ նույն բառերի հաճախականութիւն մասին տվյալ լեզվի նկատմամբ ընդհանրապես: Առանձին գրքի բառերի հաճախականութիւնը առնչվում է տվյալ գրքի բովանդակած նյութի, ժանրային առանձնահատկութիւն, հեղինակի նախասիրութիւնների, այս վերջինիս ծննդավայրի, ստացած կրթութիւն և այլ կողմնակի պարագաների հետ: Սակայն Աստվածաշնչի հանգամանքը բոլորովին այլ է: Այս գիրքը բաղմարովանդակ է, առնչվում է իր ժամանակի մարդու ֆիզիկական ու մտավոր գործունեութիւն բոլոր բնագավառների հետ: Այս նշանակում է, որ Աստվածաշնչի բառերի հաճախականութիւնը պետք է որ մտտավոր զաղափար տա V դարի մեր լեզվի բառերի կիրառութիւն հաճախականութիւն մասին ընդհանրապես: Աստվածաշնչում ամենաբարձր հաճախականութիւն ունեցող բառերը՝ չհաշված հնչյունաբանական հնացումները, նույն հաճախականութեամբ շարունակում են կիրառվել նաև այսօր թե՛ բանավոր խոսքի և թե՛ գրավորի մեջ: Հիշյալ բառերը մեր համաժողովրդական լեզվի հիմնական բառաֆոնդի բառերն են, որոնք չեն հնացել և

իրենց հաճախականության բարձր աստիճանը պահպանում են առայսօր: Աստվածաշնչի նման գրքի բառերի հաճախականությունը իր մանրամասնություններով և ամբողջությամբ կարող է ներկայացվել մի առանձնահատուկ բառարանով: Մեր նպատակն է այստեղ միայն ընդհանուր գաղափար տալ այդ հաճախականության վերաբերյալ, մի բան, որ առնչվում է հիմնական բառաֆոնդի և բառապաշարի մնացած շերտերի հետ:

Այն բառերը, որոնց հաճախականությունը բարձր է, հնացման համարյա ոչ մի միավոր չեն սալիս. այդ հնացումը, ինչպես արդեն նշեցինք, հնչյունաբանական է և մասամբ իմաստաբանական. այս նշանակում է, որ տվյալ բառը կիրառությունից դուրս չի եկել, բայց ձևով և իմաստով մասամբ փոփոխություն է կրել:

Հաճախականության բարձր աստիճանի նվազագույն սահմանը համարում ենք մեկ հարյուր կիրառությունը, մինչև իսկ 99 անգամ կիրառվող բառերը չեն մտնում այդ սահմանի մեջ: Նվազագույն կիրառված բառերի սահմանը մեկ և երկու անգամն է: 3-ից մինչև 99 անգամ կիրառված բառերը համարվում են միջին աստիճանի կիրառություններ: Մեզ տվյալ դեպքում հետաքրքրում են նվազագույն և բարձրագույն աստիճանները:

Բարձրագույն կիրառություն ունեցող բառերն են՝ ազգ (150), աթոռ (209), ածեկ (460), ականջ (130), ակն (148), ահա (334), ահալասիկ (142), աղախին (120), աղաղակել (240), աղաչել (170), աղքատ (130), աղօթք (150), ամ (525), ամաչել (111), ամբարիշտ (185), ամիս (120), ամուր (115), ամպ (156), այգի (120), այժմ (114), այլազգի (275), այր (1980), այրել (170), անապատ (300), անասուն (180), անարգել (110), անգրանիկ (120), անիրատություն (228), անկանիմ (575), անձն (1061), անուանել (119), անուն (1045), անտառ (100), անօրէն (186), անօրէնություն (140), աշակերտ (243), աշխարհ (338), աչք (500), ապականություն (100), ապրեցուցանել (185), ապրիմ (150), աչ (177), առաջի (1180), առաջին (220), առաւել (156), առաւօտ (216), առաքեմ (727), առիծ (120), առնեմ (1420), առնում (960), ասեմ (մի քանի հազար), արգար (362), արդարություն (414), արեգակն (125), արևելք (121), արին (420), արծաթ (370), արկանել (360), արձակել (320), արտաքոյ (100), արքայ (1312), բազմություն (172), բան (860), բանալ (183), բանակ (136), բանակիմ (150), բառնալ (258), բարբառ (144), բարեկամ (174), բարի (400), բարկանալ (116), բարկություն (260), բարձր (175), բերան (364), բերել (215), բնակիմ (464), բնակիչ (157), բնակություն (112), գազան

(170), գալ (125), գանձ (135), գաւազան (113), գեղեցիկ (123), գինի (221), գիշեր (247), գիտել (882), գիր (237), գլուխ (463), գնալ (885), գործ (636), գործել (420), գունդ (213), գտանել (567), գրել (360), գագարել (152), դաշտ (144), դառնալ (750), դատաստան (300), դատաւոր (115), գատել (220), դարձնալ (126), դարձուցանել (385), դժոխք (103), գնել (700), դուռն (510), դուստր (490), էլանել (1320), էկեղեցի (173), էղբայր (909), էրզնուլ (187), էրես (757), էրեւել (234), էրեք (198), էրթալ (845), էրիվար (103), էրկինք (607), էրկիր (3111), էրկիւղ (139), էրկնչել (379), էրկոտասան (128), էրկու (319), էրկորդ (137), էօթն (220), էօթներորդ (102), զարմանալ (107), զաւակ (204), զգենուլ (116), զոհ (253), զոհել (101), զուարակ (116), զօրանալ (149), զօրաւոր (137), զօր (430), զօրութիւն (700), զօրահանդես (840), էշ (109), ըմպել (237), ընդունել (319), ընթանալ (106), ընկենուլ (133), ընկեր (182), ընտրել (198), թագաւոր (1160), թագաւորել (258), թագաւորութիւն (324), թաղել (103), թիւ (140), թշնամի (470), թողուլ (540), թռչուն (120), ժամ (197), ժամանակ (512), ժառանգել (186), ժառանգություն (240), ժողովել (475), ժողովուրդ (1700), լաւ (118), լեռան (587), լեզու (214), լնուլ (290), լոյս (225), լուանալ (102), լսել (1470), խաղաղութիւն (360), խաշն (140), խաւար (136), խնդրել (675), խոյ (181), խոտորել (100), խորան (392), խորհել (244), խորհուրդ (383), խորտակել (140), խունկ (142), խոտվել (128), ծնանել (408), ծով (370), ծառ (105), ծառայ (860), ծառայել (158), ծեր (200), ունիմ (158), կամիմ (544), կամք (151), կանգնել (159), կանգուն (207), կառք (172), կատարել (254), կարգալ (162), կարեմ (300), կացուցանել (226), կեամ (110), կեանք (352), կենդանի (326), կերակուր (192), կին (100), կողմն (277), կոչել (690), կոտորել (186), կործանել (194), կորնչիմ (165), կորուսանել (190), կորուստ (100), կուռք (100), հայիմ (322), հայր (1482), հանդերձ (185), հանդէս (120), հանել (680) հասանել (529), հաստատել (403), հատուցանել (173), հարկանել (540), հարուած (108), հարց անել (225), հաց (313), հաւատ (252), հաւատալ (260), հաւատարիմ (120), հեթանոս (316), հեղում (122), հզօր (157), հիւսիսի (128), հոգի (427), հողմ (124), հուր (440), հրամայել (243), հրաման (730), հրեշտակ (449), ձայն (500), ձեռն (1600), ճանաչեմ (440), ճանապարհ (860), ճշմարիտ (120), ճշմարտություն (260), մարգարէանալ (112), մարդ (570), մարդիկ (450), մարմին (455), մեծ (315), մեծամեծ (240), մեծություն (165), մեղանչել (245), մեղաւոր (160), մեղք (580), մեռանիմ (650), մերժել (154), մերձենալ (235), միտք (280), միսթարել (128), մնալ (230),

մնացորդ (125), մոռանալ (120), մտանել (1130), յառնել (540), յարուցանել (117), յաւելուլ (152), յաւիտեան (431), յաւիտեանական (110), յիշել (272), յոյս (152), յուսալ (218), նախատինք (123), նաւ (127), նեղել (100), նեղութիւն (185), նմանօղ (190), նշան (185), նոյնպէս (130), նստիմ (500), շաբաթ (154), շինել (467), շնորհ (269), շուրթն (126), շրշել (193), ոգի (245), ողորմիմ (135), ողջակէզ (258), ողջուն (114), ոչխար (160), ոսկի (382), ոսկր (103), ոտն (333), որդեակ (134), որդի (3700), ուխտ (307), ուղիղ (105), ունիմ (360), ունկն (103), ուսուցանել (160), ուստր (120), ուտել (200), ուրախ (240), ուրախութիւն (230), շար(600), շարութիւն (200), շուել (130), պակասել (120), պահել (470), պաշտել (185), պաշտօն (125), պատասխանի (500), պատարագ (230), պատգամ (130), պատել (110), պատերազմ (480), պատմել (550), պատմունճան (115), պատուէր (225), պատուիրել (320), պատրաստել (262), պարիսպ (200), պիղծ (140), պղծել (204), պղծութիւն (105), պտուղ (234), ջուր (650), սահման (250), սատակել (400), սեղան (500), սէր (144), սիրել (316), սիրելի (128), սիրտ (948), սիւն (110), սկիզբն (112), սկսանիմ (240), սուգ (200), սուր (360), սուրբ (480), սպանանել (400), սպաս (100), սրահ (103), սրբել (290), սրբութիւն (460), սրտմտութիւն (232), վախճան (127), վաղվաղակի (110), վէմ (160), վիճակ (150), վկայութիւն (33), տալ (1710), տաճար (335), տանիմ (230), տապանակ (168), տեղի (360), տեսանել (1600), տեսիլ (185), տէր (1260), տուն (1760), ցեղ (250), ցուցանել (280), փախչիմ (200), փայտ (213), փառք (490), փոխանակ (310), փրկել (433), փրկութիւն (300), քահանայ (670), քահանայապետ (174), քաղաք (1400), քար (155), օգնական (100), օգնել (110), օժանել (116=նաև օծել), օտար (166), օր (1100), օրէնք (620), օրհնել (500), օրհնութիւն (22):

Այս ցանկում շին մտնում շաղկապները (և, զի, քանզի), դերանուններ և այս կարգի այնպիսի բառեր, որոնց քանակը շատ է: Հիշյալ ցանկի մոտ 400 բառից հնացել են արկանել, զգենում, զուարակ, զօրհանապագ, ընկեճում, կարեմ, կացուցանեմ, կեամ, հարկանեմ, յարուցանեմ, յաւելում, վաղվաղակի, ցուցանեմ:

Կրթային կիրառութեամբ են մնացել անաստիկ, ամ, ամբարիշտ, առաքիմ, արտաբոյ, երկնչիմ, խաշն, հեղում, յառնեմ, ողջակէզ, ունկն, պատմունճան, սպաս, սրտմտութիւն, վէմ, տապանակ, քահանայապետ:

Ձևական փոփոխութեամբ են գործածվում անկանիմ(բնկնել), անճն, առնեմ (անել), արեգակն, գտանեմ (գտնել), դարձուցանել (դարձնել), դուռն, ելանեմ (ելնել), երդնում (երդվել), երկիմ(երկալ), երկոտասան

(տասներկու), եօրն, լեռն (լեռ), լնում(լցնել), ծնանիմ (ծնել), կամիմ (կամենալ), կողմն (կողմ), կորնչիմ (կորչել), կորուսանեմ (կորցնել), հասանեմ (հասնել), հարցանեմ (հարցնել), հիւսիսի (հյուսիս), ձեռն (ձեռ), մեռանիմ (մեռնել), մտանեմ (մտնել), շուրթն (շուրթ), ոտն (ոտ), պատասխանի (պատասխան), սկիզբն (սկիզբ), սկսանիմ (սկսել), սպանանեմ (սպանել), տեղի (տեղ), տեսանեմ (տեսնել), անկանիմ:

Իմաստափոխութեան են ենթարկվել ակն, բառնամ, բարբառ, կարդամ (կանչել, դիմել), պաշտօն (պաշտամունք), պատարագ (նվեր):

Այս հաշվումները կատարված են Աստվածաշնչի համաբարբառի հիման վրա, մի համաբարբառ, որի պակասավորությունը մոտավորապես հասնում է մեկ հազար 500 բառի: 92 էջի ստուգումը բացահայտում է 71 քառի պակաս:

Եթե ընդունենք, որ այս ցանկի բառերից պակասում է 50 բառ, ապա բարձրագույն հաճախականության (100 և սրանցից բարձր) բառերի թիվը հասնում է 450-ի:

Նվազագույն հաճախականության բառերի քանակը (1-ից 2 կիրառութեամբ) շատ մեծ է, դրանց թիվը 3 հազարից անցնում է: Հաճախականութեամբ է պայմանավորված բառերի երկարակեցութեան ու կարճակեցութեանը: Նախորդ ցանկում լրիվ հնացած բառերի քանակը 14-ից չի անցնում, որ անում է 3,5 տոկոս, մինչդեռ մեկ կամ երկու անգամ կիրառված բառերի հնացումը կազմում է հսկայական թիվ:

Մեկ կամ երկու անգամ են կիրառված այնպիսի բառեր, որոնց կիրառութեան համար Աստվածաշնչում համապատասխան հող չի եղել: ավելի պարզ ասած դրանց կիրառութեան առիթը շատ չի ներկայացել՝ շնայած դրանք համաժողովրդական բառեր են եղել: օրինակ՝ անուխ, աղանեակ, աղբերակն, աղճատել, աղմկել, աղումաղ, ամարանոց և այլն:

Մեկ կամ երկու անգամ են կիրառված այն ժամանակվա համար նորարանական բառեր, որոնք կազմվել են մեր թարգմանիչների կողմից: օրինակ՝ այլամիտ, այլալախառն, ասպարաբեկ, աստուածամարտ, գերարտօսարալիր, երեքբաղաբեան (տրիպոլիս), դաշտամուխ, զուարթածաղիկ, մտայոյզ, սակաւահաւատ, խորագիտագոյն և այլն:

Մեկ կամ երկու անգամ են կիրառվել բազմաթիվ պատճառական բայեր, որոնցից շատերը հավանորեն հարկադիր կազմություններ են, օրինակ՝ գառացուցանել, բորբոքեցուցանել, գազանացուցանել, դալարեցուցանել, երգիծուցանել, դրդեցուցանել, կողմնեցուցանել, կողկողեցուցանել, պարտասեցուցանել և այլն:

Մեկ կամ երկու անգամ են կիրառվել նաև այնպիսի բարբառային տեղական բառեր, որոնց համաժողովրդական համանիշը կամ չի եղել և կամ թարգմանիչը տվյալ պահին չի գտել. այդ կարգի տեղական բառեր ենք համարում ագուռ, բուռ, աղբն, անկուշել (աքացել), ապարահ (դաշտանավոր), ապուռ (կողոպուտ), առասան, արևագալ, բանդագուշել, բլշակ (խուփ), բծկան (արատավոր), բոել (ծեփել), բոթ, գաղատոս (քարագործ), գաղտուկ, գործելի, գոհ, գոհհիկ, դարիւ, եզնալուծ, գածած (նվազ), գմբաղ (հոգս), զովողութիւն, զովօղ (գործակից), ընկերշակել (ընկերակցել), թանգուզել (ճողոպրել), թին (խաղողի կորիզ), լկնել (լրբանալ), խախացոց (շմարաված կերը), խառն(վիզը ճուղտել), խարբալել, խարագուլ (մորեխ), խիթ, խիթալ (վախել), խլայ (լաթ), խոնջել, խոկել, ծուկայր, կակղել, կշտապինդ, կողր (ճյուղ), կորբան (մատաղ) կու, կունտ, կօշել (մոնչալ), հաղաղակ (ծղոսապատ աման), հաշել (մաշել), հերիք, հոյ (վախ), ձանձախարիթ, ճիկ (ծպտուն), մաճառակ (թարմ պանիր), մաշտել (մաղբըրը թափվել), մատղիմ (կպչել), մեղեխ (փայտատի կոթ), մէց (ցեց), մտրուկ, յորսայտեալ (մեջքի վրա պառկած), նաքարակիտ, նէր (տեղրակին), նիտալ (նյութել), նկրտել, շաղ, շաղամաթ (թել, լար), շարժլել, շիլ, շիկաթան, շնորհուկ, շոնչան, ունդ (մղեղ), պախ (խաշած միս), պաղել, պառակ, պողել, սանդատուն, վականակ, տամալի, տառատուկ, տրմուղ, քածաւարօտ:

Մեկ կամ երկու անգամ են կիրառվել օտար շհասկացված սակավադեպ բառեր, բուսանուններ ու կենդանական անուններ, անճիշտ կազմութիւններ, արմատներ և այլն, ինչպես ակքան, անալութ, արմ (արմատ), բակեղաթ (պարկ), բեկ (կտրվածք ունեցող), բնիոն (մանր գրամ), բուտ, բոբկոնիմ (փշի տեսակ), զիու (հրեաների Ձ-րդ ամիսը), գմելին, լիբանոն, խբարդեալ (խնկաման), խնայ (խնայելը), հիւրանալ, հիւրութիւն, յովտ (հոդ), շարիաթ (վաշխ), շրոտս(բաց-կանաչ), շիգդ, պասկուճ (գիշակեր մի թոշուն), սաբեկ (ծառի տեսակ), փեզենայ և այլն:

Եթն մեծ հաճախականությամբ կիրառվող բառերի մի շնչին մասն է հնացել, ապա փոքր հաճախականության բառերի շատ տոկոսը հնացած է:

Բացի կրկնութիւնից մյուս բաղադրյալ բառերը չեն բերված այստեղ, որոնք արդյունք են կրկնության, շրջաբանության, հարագրության և այլ տեսակի կապակցութիւնների, և որոնք մեր հին լեզվի աղն ու համն են պարունակում և անժխտելի վկաներն են նրա համահայկական ընդհանրության: Այսպիսի բառերի հավաքումը, դասդասումը և լեզվաքերականական քննութիւնը մի ամբողջական ուսումնասիրության ծավալ

կազանշնն, ուստի և այստեղ կրավականանանք դրանց մասնակի թվարկումով, որոնք կծառայեն իբրև օրինակ այդպիսի բառերի ձևական և իճաստարանական կատարելության. օրինակ՝ արին խաղողոյ (գինի), յիս տէր (նայիր ինձ, սեր), զառ ի վեր, ազգի ազգի, ինչ ինչ, զառ ի թափ, ել և մուտ, տիկին երկնից, (լուսին), տիկնանց տիկին, արքայից արքայ, որդի մարդոյ, այր մարդ, կին մարդ, աղեղն աստուծոյ (ծիածան), թագաւոր թագաւորաց, տէր տերանց, կանանց տուն (կանանոց), տուն խորհրդոց (խորհրդարան), տուն մատենագրաց (գրադարան), տուն ըմպելեաց (գինետուն), տուն շտեմարանաց (շտեմարան), որդան կարմիր, որդի աստուծոյ, բանն աստուծոյ, է որ (ոմն), թեւ երկրի (սահման), քաշ արանց (կայսր), կաց մնաց, բառնալ թողուլ, արին խաղոյ (քաղցու, գինի), սրտի մտօք (ի սրտե), բեր որթոյ (գինի) ի միտ առնուլ, դատ առնել, խիղճ մտաց (խղճմտանք), ակն արկանել (աչքի առչե դնել, ներկայացնել), ակն դնել, ընդ ակամբ հայել (խեթ նայել), յաչաց ելանել (աչքից ընկնել), յաչաց հանել (աչքից գցել), ըստ այս դատել, սչաց կալեալ լինել (շճանաչել), կալ աչաց (կուրանալ), առ աչօք (երևութապես), ձեռն տալ (ձեռնտու լինել), ձեռն դնել, ձեռն արկանել (բռնել), ի ձեռն (միջոցով), ի ձեռն տալ (շնորհել, տալ), ի ձեռն առնուլ (ստանալ), ձեռն ի գլուխ (գլուխը ծեծելով), Ոտն արկանել (արհամարհել), ոտն կալ (ոտքի ելնել), առ ոտն (մոտիկ, կից), ոտն ոտն-ոտն առ ոտն (աստիճանաբար, կամաց-կամաց), Որ էն (աստված), ողն կալ (բարձրամտել), յողոք ածել (ամոքել), յողոքս անկանել (աղերսել), ողջ եր (ողջ եղիր), ողջ երթ (գնաս բարով), մատն առնել (հանդիմանել) և այլն:

Է. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԿՐԱՄ ՕՏԱՐ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աստվածաշունչը թարգմանված է այնպիսի մի դարում, երբ հայոց լեզուն նոր էր զիր ու գրականության երես տեսնում: Դարերով զիր ու գրականութիւն ունեցող ասորերեն և հունարեն մշակված լեզուների հմայքը գերում էր մեր թարգմանիչներին: Որքան էլ նրանք ձգտեին հավատարիմ մնալ հայոց լեզվի օրենքներին, չէին կարող զերծ մնալ այդ լեզուների գայթակղիչ ազդեցութիւնից, որը թարգմանության ընթացքում ամեն կերպ խցկվում էր թարգմանության մեջ: Բացի այդ Երրայական ու սրանից թարգմանված ասորական օրինակները հունարենի թարգմանվելով՝ այնտեղ կուտակել են բազմաթիւ անմարս երրայաբանութիւններ ու ասորաբանութիւններ, որոնք նույնությամբ անցել են հայերենին: Հայ և օտար բանասերները համեմատել են ասորերեն, հունարեն և հա-

յերեն թարգմանությունները, որպեսզի ցույց տան, թե հայ թարգմանիչը չի կառչել միայն մեկ լեզվին. նա ընտրել է մեկը կամ մյուսը ըստ իր ճաշակի և ըմբռնումների: Ահա մի քանի համեմատություններ, որ բերում է Խ. Ս. Գուրյանը իր հմտալից աշխատության մեջ¹: Մատթ. Ավետարանի ԺԳ 4-ում հունարենն է. «Եւ եկին թռչունք և կերան զնոսա». հայերենը ըստ ասորականի ավելացնում է երկնից «Թռչունք երկնից»: Հունարենը՝ «եթե կամիս ի կեանս մտանել», հայերենը ավելացնում է յաւիտեանկանս՝ «ի կեանս յաւիտեանկանս» ըստ ասորականի (Մատթ. ԺԹ 17): Համբոյր մի ողջունի ոչ ետուր ինձ», հայերենը ըստ հունարենի կրճատում է ողջունի (Ղուկ. է 45): Հայերենը ըստ ասորերենի ունի «Յոր ժամ կոչիցէ որ զքեզ ի հարսանիս և ի կոչունս», հունարենը շունի ի կոչունս (Ղուկ. ԺԳ 8):

Հունարենն է, «Տեսանե՞ս զայս կին, մտի ի տուն քո, ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ և հերով գլխոյ իւրոյ ջնջեաց. Համբոյր մի դու ոչ ետուր ինձ. սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ, ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ. իւղով զզլուխ իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ օծ զոտս իմ, վասն որոյ ասեմ քեզ՝ Թողեալ լիցին սմա մեղք իւր բաղումք, դի յոյժ սիրեաց, զի որում շատ թողուցու, շատ սիրէ եւ որում սակա՛ւ սակա սիրէ» (Ղուկ. է 44—47): Հայերենը հիմնականում հետևում է հունարենին, բայց խմբագրելով. հանում է գլխոյ բառը՝ թողնելով հերով իւրով: Հունարենը ունի «սա իւղով անուշիւ օծ զոտս իմ»: Հայերենը հանում է զոտս իմ, որովհետև նախորդ նախադասությունը վերաբերում է գլխին և ոչ թե ոտքերին: Ասորերենի զանազանությունը ավելի մեծ է, տեսանել բայը անցյալ կատարյալով է. շարադասությունը տարբեր է. ետուր բայաձևի փոխարեն եղիւ է. շկան «իւղով զզլուխ իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ օծ զոտս իմ» (Ղուկ. է 44—47):

Հայերենը գիտական թարգմանություն է. նոր կտակարանի բաղադատական հրատարակության մեջ իբրև ծանոթագրություններ հաճախ կարդում ենք «ի յունին պակասէ», հայ թարգմանիչը շէր կարող պակասը լրացնել առանց որևէ այլ բնագրի:

Գիտված է, որ հայերեն Աստվածաշնչի և հունարենի այս տարբերությունների մեծ մասը գալիս է ասորերենից: Հայերենը նախապես թարգմանվել է ասորերենից, իսկ հետո հունարենից: Իսկ հայ թարգմանիչները

հունարենից թարգմանելու ժամանակ ձեռքի տակ են ունեցել ասորական օրինակը և սրանից թարգմանված հայերենը, որտեղ որ հունարենը պակաս է եղել կամ մոլթ, հետևել են ասորերենին և լրացրել նրանով: Ստացվել է մի կատարյալ թարգմանություն, որ հետագայում օտարների կողմից կոչվեց «թագուհի թարգմանութեանց»:

Աստվածաշնչի թարգմանությունը ազգայնացավ նաև նրանով, որ մեր թարգմանիչները ձգտեցին թարգմանության մեջ գործադրել մեր լեզվի բնձեռած բոլոր լեզվաոճական հնարները թարգմանությունը ճոխու շքեղ և հաղորդական դարձնելու համար:

Մեր լեզվի հատկանիշն է միևնույն իմաստը արտահայտել երկու և ավելի համանիշ բառերով: Այս միջոցը ոչ միայն պակասեցնում է հին բնագրերի անհասկանալի տեղերը, այլև զեղեցկացնում է խոսքը ձևական պեսպիսությունամբ և համանիշ բառերի իմաստային նուրբ զանազանություններով: Մեր հին գրական լեզվի համանիշային պեսպիսությունները իրենց ծագումն առնում են Աստվածաշնչից, որ այս մարզում մեր լեզուն հասցրել է կատարելության: Ասորերենի և հունարենի ոճական զեղեցկությունները փոխադրվելով հայերեն՝ քիչ չեն նպաստել հայերենի հարըստացման և զեղազիտական կատարելությանը: Գրական այս երևույթները, սակայն, ունեցել են իրենց խոշոր բացասական կողմերը, որ կտեսնենք ընթացքում:

ա) ՀՈՒՆԱՐԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամբողջ Աստվածաշնչը թարգմանվեց հունարենից: Որքան էլ մեր թարգմանիչները հմուտ լինեին հունարենի մարզում, այնուամենայնիվ կային այնպիսի հունարեն բառեր, որոնք զժվարիմաց էին և անթարգմանելի: Կային նաև այնպիսի բառեր, որոնց հասկացությունները զժվար էր հայերեն արտահայտել: Քրիստոնեությունը ընդունած հայությունը մեկ հարյուրամյակում արդեն բավականաչափ կրոնական բառեր պնտք է փոխառած լիներ բանավոր ճանապարհով: Հայաստանի արևմտյան մասը քաղաքականապես ենթարկվում էր Բյուզանդիային 384 թվականից, մինչդեռ Աստվածաշնչի թարգմանությունը սկսվում է ավելի քան քսանհինգ տարի հետո: Այդ 25 տարվա մեջ անկարելի կլիներ, որ հայերենը բանավոր ճանապարհով հունարենից փոխառություններ արած և ժողովրդականացրած չլիներ: Ահա այսպիսի հանգամանքների առկայությամբ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ անցել են բավական թվով հունարեն բառեր: Հունարեն բառերը երբայերենի համեմատու-

¹ Խ. Ս. Գուրյան, Մկարպեան Աստուածաշունչը բանասիրութեան լոյսին տակ, Գահիրե, 1944, էջ 549—553:

թյամբ ավելի շատ են ժողովրդականացել և ըստ այդմ էլ դարձել են հայերենի համար գործածական:

Կրոնականեղեցական բառերի հետ մասամբ ժողովրդականացել և ընդհանրապես նոր գրական լեզվին են անցել հետևյալ բառերը, որոնք մեր գրական լեզվի երկու ճյուղերում էլ ընդունված են իբրև գրական բառեր: Այսպես՝ առաջին անգամ Աստվածաշնչում են գրական քաղաքացիութուն ստացել. արբա, աղամանդ, ակատ, այբ, արդասիք, ափսէ, բաղանիք, բաղիստր (նաև՝ բաղիստ), բարբարոս, բեմ, բիրեղ, գալիսոն, գառագիղ, դատիկոն, եկեղեցի, եկղեսիաստէս(քարոզիչ վարդապետ), եպիսկոպոս, զմելին, զմուռս, թէատրոն, լամբար, լապտեր, լիտր, կամար, կանոն, կապար, կէտ, կինամոմոն(կինամոն), կիրակէ, կոնք, հագնի(որից հաղներգութուն), հալուէ, հեգեմոնիդէս, հեթանոս, հերետիկոս, հիւպատոս, մամոնայ, մանեակ, մարգարիտ, մեքենայ, մղոն, յակինթ, յասպիս, յոբելեան, նարդոս, նեոն, պանդոկի, պնակ, պրակ, պոռնիկ, պրաս, ռետին, սաղմոս, սարգիոն, սպունգ, սկուտդ, սպեղանի, ստագիոն, ստամոքս, սրինգ, տաղանդ, տատրակ, տարտարոս, տիտան, տոկոսի, տոմար, տոմս, տպագրիոն, փիլոն, փոկ, փոս, քարտէղ, քղամիդ, քուեա, (քվե), քրիստոնեայ, օշինդր:

Մի քանի բառեր առավելապես արևմտահայերենում են գործածվել. օրինակ՝ դենար, դիդրաքմայ, դենչակ(գոգնոց, սրբիչ), մանրագոր, մեղրապոպ(շամամ), պաղատիտ(թզաչիր):

Կան մի շարք բառեր, որոնք սակավ են կիրառվել նաև գրաբարում, չեն ժողովրդականացել, ուստի չեն անցել նաև նոր գրական լեզվի երկու ճյուղերին. այդպիսի բառեր են՝ ալփա, ակաոն(բերդ), աղիմայ(բույս է), ամաղթեղչիր(ամաղթ-այծ), ամեթովս(սուտակ), անկին(աթոռի բաղուկ), արզ(գործ), երակիկլոն(քամի), թիւինի(մի տեսակ ծառ), եքթեբան(ձկնային), լիբանոն(կնդրուկ), լիբանոս(խնկի ծառ), լիբանովտոն(խնկաման), կամփսակ(աման), կասիա(դարչին), կիպրոս(բույս է), կիվոս(խորանարդ), Հերմէս(փայլածու), հիմէն(չափ), մանդղիոն(բաբան), մանրագոր(խաշխած), մնաս(կշիռ և դրամ), մորոս(հիմար), յոբելիկ(կոթող), յովս(յոտա), իշլոոոս(դեղին), պաղատիտ(թզաչիր), պենտեկոստէ(հոգեգալուստ), սիկարեան(սրիկա, ավազակ), ստոման(աման), տալիթայ(աղչիկ), փսաղտ(սաղմոսերգու), քաղբան(խեծ), քաղկոլիբանոն(մետաղ), քանուն(գահույքի սյուն) քարադր(թռչուն է), քոռ(չափ), քսեստ(չափ), քրիսպրասուս(թանկագին քար):

Հունարենից փոխառված կրոնական բառերը մեծ մասամբ բանավոր խոսքից են անցել Աստվածաշնչի թարգմանութան մեջ և ոչ թե ուղ-

ղակի գրական փոխառութիւններ են: Մեյն գրում է. «Հայերի քրիստոնեական բառային կազմի հին ֆոնդը բացատրելու համար անհրաժեշտ է իմանալ այն լեզուները, որ իրանական երկրի հյուսիսում խոսում էին Արշակունյաց ժամանակաշրջանի քրիստոնյաները: Այդ ժամանակ կոեսնենք անկասկած, թե որտեղից են գալիս այնպիսի խորհրդավոր բառեր, ինչպիսիք են սարկաւագ, վարդապետ, կարապետ, մկրտել, զատիկ և թն ինչպես է բացատրվում իրենց ծագմամբ հունարեն այնպիսի բառերի ձևը, ինչպիսիք են եկեղեցի կամ հեթանոս»¹:

Առաջին խմբում եղած բառերից մի քանիսը նոր գրական լեզվին են անցել վերափոխառությամբ. դրանք են՝ Լեզէոն, հեգեմոն, ստաղիոն, ստոլիկեան, տոմս, ֆարտէս: Մի մասն էլ որոշ ձևափոխությամբ է կիրառվում. օրինակ՝ կիրակէ, պանդոկի, թէատրոն(թատրոն), քուեայ: Ապացուցված է, որ մի քանի հունարեն բառեր մեր լեզվին անցել են պարսկերենի միջոցով. դրանք են լամբար, պոռնիկ, լապտեր, արգասիք, որոնք արդեն աստվածաշնչական փոխառութիւնների ցանկից պետք է հանել: Հունարեն բառերի վրա պետք է ավելացնել նաև մի քանի լատիներեն բառեր. ինչպես՝ արկղ, դենար, լեգէովն, լօդիկ, կայսր, կրկէս, սիկարեան(ավազակ), փոս: Մի շարք բառեր երբեմն կիրառվել են կամ եթե կիրառվում են, ապա շատ նեղ շրջանակներում, ուստի ընդհանրական արժեք չունեն. օրինակ՝ ամեթովս, լիբանոն, կամփսակ, կասիա, մանդղիոն, մանրագոր, մեղրապոպ, մորոս, պաղատիտ, պենտեկոստէ, փսաղտ, դիդրաքմայ:

Հունարենի ազդեցութիւնը շէր կարող միայն բառափոխառությամբ սահմանափակվել: Թարգմանվող լեզվի՝ հունարենի հմայքը խիստ գայթակղիչ էր: Թարգմանողի համար բնագրի այս կամ այն դասավորութիւնը ոճաբանորեն կարող էր գեղեցիկ թվալ նոր գրի առնվող հայերենի համեմատությամբ: Այս է պատճառը, որ Աստվածաշնչի թարգմանիչները շարադասութեան մարզում հաճախ հետևել են հունարեն բնագրին: Ետագաւ որոշիչը հունարենում թարգմանչի համար ունեցել է դասական հնչեղութիւն հայերենի նախադաս որոշիչի համեմատությամբ, ուստի և այդպիսի շարադասութիւնը փոխանցվել է մեր Աստվածաշնչին: Երբ Աստվածաշնչի հայերեն թարգմանութեան շարադասութիւնը համեմատում ենք հայերեն ինքնուրույն գրքերի շարադասութեան հետ, զանազանութիւնը դառնում է ակնհայտ: «Վահագնի ծնունդ» Երգի մեջ ետագաւ

¹ Անտուան Մեյն, Հայագիտական ուսումնասիրութիւններ, Երևան, 1978, էջ 221:

Ածականի և գոյականի համաձայնությունը Աստվածաշնչում պարտադիր օրինաչափություն է, երբ ածականը ետադաս է: Ամբողջ Առակաց գրքում անհամաձայն ետադաս ածականի օրինակներ են հետևյալները. միտք սուրբ, սինք երբ: Մնացյալ հարյուրավոր կապակցությունների մեջ ետադաս ածականները ինչ ձևով էլ լինեն, համաձայնում են թվով և հոլովով: Թվում է, թե սուրբ (փոխն. Սուրբք) այդտեղ վրիպակ է, իսկ երկրորդ օրինակի մեջ եօթն թվական է, որ չի համաձայնում:

Իսկ նախադաս որոշիչները չեն համաձայնում գոյականի հետ. օրինակ՝ յամենայն շարութենէ, յուղիղ նանապարհէ, յարդար յուրհորդայ, երկայն ատուք, յողոք բանի, ամուր քաղաքաց, քեր և շար նանապարհէ, ի բազում առնէ, զիմաստուն բանս, կապուտակ ակաեօղիք, ի մէջ բազում մրբկի, անմիտ հեշտակի, ի բազում փայտից, կամակոր համբոյսս, բարձր ձայնիս, ագահ մարդկան, յառնակին կնոջէ, օտար լեզուի, լրբենի երեսօք, յօտար աղբիւրէ, իմաստուն կանայք:

Համարյա չկա որևէ նախադաս որոշիչ, որ համաձայնի գոյականի հետ, բացառություն են կազմում իմ, քո այս դերանունները: Ի քոց արդար վաստակոց, ի քոց արդարութեան արմտեաց, իմոյ իմաստութեան, իմոց բանից, այսու օրինակաւ: Այս պարագայում Աստվածաշունչը ինքնուրույն է. մինչդեռ խորենացին ունի այսպիսի համաձայնության օրինակներ, որոնք պետք է որ հայերենին հարազատ չլինեն. անարժանք եղեն այնմ առաքելականին արոտոյ (երրորդ գիրք ԺԶ): Երանելան Կիրդի. Հիսիսականացն ազգաց (նոյն տեղում ԺԲ): Մեռելոյն Արաշիսի (ԺԳ): Հատուածելոց կողմանց (ը). յունականացն զօրացն. մնացելոց սանմանացն (ը) և այլն: Եղնիկն այդպիսի համաձայնության օրինակներ չունի: Համեմատիր. զմշտնընկաւոր զօրութենէն. իւրաքանչիւր կարգաց, յանսպառ կենդանութեան, մեծագօր զօրութեամբ, ի զօրացուցիչ զօրութենէն, յամենահեար իմաստութեան, ի բարեբար արարչէն, առողջ մտաց, խօսուոն բերանով, տկար աագովն, ի հակառակ և յանման երիվարաց, ծածուկ ձեռամբ, այնպիսի իրաց և այլն: Բայց և կան համաձայնության օրինակներ. Ինչպես՝ ի բարւոյ արարչէ, այլովքն խոնարհագանիւր, ի մեծի տան, զերկուց մեծացն անօրոց, յանշնչոցն արարածոց, ի շորից երիվարաց, ի համազգեաց երիվարաց, շարաց իրաց, երկուս արս: Եղնիկի գրքում նախադաս համաձայնում են քիչ թվով ածականներ, ստացական դերանունները, երկու, երեք, շոս թվականները, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն ցուցականները. ի նմին յորդութեան, յիւրոցն պաշտօնէից, այսու ամենայնի, ի շորից երիվարաց, երկուս արս, յայնմ նի-

բոյ, յայնմ մրոյ (Եղնիկի բոլոր օրինակները քաղված են Ա գրքի 5 գլուխներից):

Եղիշեով ևս ապացուցվում է, որ V դարում գրաբարի որոշիչը նախադաս էր արդեն գերազանց գերակշռությամբ, իսկ հատկացուցիչը նույնպիսի գերակշռությամբ ետադաս էր: Այսպես՝ նախաբանի և առաջին եղանակի նախադաս որոշիչների քանակը մեկ հարյուր քսան միավոր է, իսկ այսքանի դիմաց ունենք ընդամենը 25 ետադաս որոշիչ: Գրեթե նույնչափ, որքան նախադաս որոշիչներն են (120), ետադաս հատկացուցիչ ունենք և նույնչափ, որքան ետադաս որոշիչները (25)՝ նախադաս հատկացուցիչներ կան: Եղիշեն ևս հաստատում է, որ նախադաս որոշիչները չեն համաձայնում որոշյալի հետ, իսկ ետադասները չեն մնում առանց համաձայնության: Նախադաս որոշիչներից համաձայնում են այս (ըստ այսմ պատճենի, յայսմ եօթն յեղանակիս), նոյն (նովին օրինօք, ի նմին ուխտէ), երկոխան (երկոցունց կողմանցն), քո (քոյոց հրամանիդ, քոյոց բարուցդ), մերոյ (մերոյ ազգիս), մեծ (մեծաւ անարգանօք): Ինչպես տեսնում ենք, բացի մեծ բառից մնացածը դերանուններ են: Հաստատ կերպով պետք է ընդունել, որ ածականների նախադաս համաձայնությունը 5-րդ դարում արդեն բացառության կարգ էր անցած: Ինչպես արդեն ասվեց, խորենացու նախադաս ածականների համաձայնությունը այլ բան չէ, քան հունաբանություն:

Իսկ ետադաս ածականի համաձայնությունը հայերենին հատուկ օրինաչափություն է, որ լրիվ կերպով արտահայտված է Աստվածաշնչում և բացառություններով նաև այլ գրքերում: Այս երևույթը նույնությամբ դրսևորվում է նաև Եղիշեի «վասն վարդանայ և Հայոց պատերազմին» գրքում: Օրինակ՝ սիրով մարդասիրութեամբ, ոմանց բաժանելոց, բանիւք սպառնալեօք, արջք օրհասականք, տերանց ձեռոց մարմնաուրաց, ցլուք սպիտակօք, իշխանութեամբք մեծամեծօք, համեմատիր. Իսկ զոմանս ագարակօք և մեծամեծ գեղօք և զոմանս պատուովք և իշխանութեամբք մեծամեծօք: Յլուք սպիտակօք և գիսաուր նոխագօք:

Աստվածաշնչի հունարենը ազդել է նաև բառակազմության վրա. այսպես՝ հունարենի նմանությամբ կազմվել են նորանոր բառեր. հաւախօս (ἀλεγοροφονία Մարկ. ԺԳ 35), ալլազգի (ἀλλογενής Թիւք ԺԶ 40), ալլեզորոք (ἀμπελοργος Ղուկ. ԺԳ 7), ալլակերպ (εταρομύρφος Դան. է 3—7—19), անսուրբ (ἀνοσιος Ա Տիմ. Ա 9), առնթերակալ (προσπαρῶν Միք. 1 18), սրիչ (ζυράφιον Թիւք Զ 5), սրտազէտ (καρδιογνώστης Գործք Ա 24):

Հունարենի կապակցութիւն է երկրորդական նախադասութեան ենթական հարաբերչալի հոլովով դնել և զլիսավոր նախադասութեան հարաբերչալը զեղչել. օրինակ՝ Քանզի կեանք են, որոց գտանեն զնոսա (Առ. Դ 22): Աղբեր կենաց են միտք, որոց ունիցին զնա (Առ. ԺԶ 23): Գործոց ձեռաց իրեանց երկիր պագին, որոց (փոխն. զորս) արարին մատունք նոցա (Յս. Բ 8):

Աստվածաշնչում հազվագլուտ երևում են նաև հունարանական բացարձակ սեռականը և անորոշի հետ հայցական հոլովով ենթական: Պետրոսի և Պողոսի անվավեղ Գործք-ից նշվում է հայցական հոլովով ենթակա անորոշ գերբայի հետ հետևյալը. «Իսկ մեր նշանս տեսեալ հաւատացաք զնա զոլ Աստուած»:

Ահա թագաւոր, ցուցի քեզ զՄիմովն մոզ և խաբերայ լինել:

Այդպիսի ենթակա է նաև Առակաց գրքի հետևյալ նախադասութեան մեջ իմաստութիւն բառը.

Ասա զիմաստութիւն քոյր քեզ լինել (Առ. է 4): Կամ՝ Որք ասեն զինքեանս հրեայս զոլ (Յայտ. Գ 9):

բ) ԵՐՐԱՅԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերեն Աստվածաշնչունը թարգմանված է հունարենից. հունարեն Աստվածաշնչին են անցել երբայական բառեր, որոնք կամ մասնագիտական կրոնական հատկացութիւններ են, կամ չհասկացված բառեր են: Նույնիսկ կան այնպիսի երբայական բառեր, որ այժմյան հրեագետները բացատրել չեն կարողանում (օրինակ՝ փարաղուն), իսկ բավականաչափ բառեր էլ անորոշ կերպով մեկնվում են՝ բույս ինչ, մի տեսակ գազան, մի տեսակ կենդանի (օրինակ՝ ալկան— մի տեսակ փուշ, ասիդ— անձանոթ թռչուն, բեհմովր— մի մեծ գազան, ևէեղաս— անձանոթ թռչուն, ևէեսա— անձանոթ թռչուն և այլն):

Հույն թարգմանիչները չհասկանալով բառը՝ նույնութեամբ վերցրել են. բայց երբեմն սխալ տառադարձութեամբ կամ անճիշտ վերծանութեամբ բառը աղավաղել են, որ բոլորովին անհասկանալի է դարձել, օրինակ՝ երբայական զանգակ բառը հունարենում դարձել է ձակիտ, հայերենն էլ ինչ որ մի այլ հունարեն ձեռագրի հետևողութեամբ դարձրել է ֆակկով: Երգար բառը կիրառված է Ա. թագ. Ի 19-ում «Եւ նստցիս առ երգարաւդ»... երբայական բնագիրը ունի «Եւ նստցիս առ վիմաւ»: Ընդգծվածը հունարենում ինչ-որ թյուրիմացութեամբ դարձել է երգար, արգար, հայերենն էլ երեք ձևով է վերցրել, երգար, արգար արգոր: Միև-

նույն երգար բառը նույն գլխի 41-ում երբայեղենում նշանակում է ի հաւատոյ կուսէ: Այդպես էլ երբայական հախս բառը հայերենում երեք փոփոխութիւն է կրել: Գ թագ. ԺԳ 9-ում դարձել է ակբան, իսկ Բ Մնացորդաց ին 18-ում երկու կիրառութիւններից մեկը ռֆոզ է, մյուսը՝ եֆկան: Աղավաղումները գալիս են հունարենից: Եթե 70 հույն գիտնականներ չեն կարողացել պարզել այդ բառերը, երբայերեն լիմացող հայ թարգմանիչները ի վիճակի չէին ճշտելու և թարգմանելու: Հունարեն Աստվածաշնչի երբայական բառերը հայերը պետք է վերցնեն նույնութեամբ մինչև իսկ առանց հասկանալու: Այդպես էլ եղել է: Բացի կրոնական, եկեղեցական հատկանշական բառերից մնացածը փոխ է առնվել առանց հասկացվելու: Եկեղեցական բառերն են, որ մասամբ ժողովրդականացել և զրական ու բանավոր խոսքի միջոցով ընդհանրացել են:

Այդ բառերն են՝ աղոնա (աստված, տեր իմ), ալէլու, ալէլուիա (աստվածային օրհներգութիւն), ամասարակովթ (Երուսաղեմի տաճարի մի սյան անունը), ամէն (իրավամբ, արդարև, ճշմարիտ որ), բամա (զոհասեղան), Բէեղզերուզ (սատանայապետ) բելիար (սատանա), գեհեն (ղժոխք), Գաբիլ (սրբութիւն սրբոց), Եղեմ (զրախտ), եղամ (տաճարի մուտքի մոտի սրահ), էլի, էլի (աստված իմ, աստված իմ), թևրափ, թերափիմ (կուռք), կորբան (տաճարին տրվող տուրք), մաննա (անարյուն պատարագ), մեքենովթ (խարխիս), Ովսաննա (օրհնութիւն), պասքա (զատիկ), Ռաբբի (վարդապետ), Ռաբբունի (վարդապետ), սադաուովթ (աստված), սադա (ամենակարող աստված), քովմարիմ (քուրմեր) մեսիա, էլի:

Այս բառերից ժողովրդականացել են ալէլու, ամէն: Գրական գործածութեան մեջ են բէեղզերուզ, բելիար գեհեն, դաբիլ, Եղեմ, Ովսաննա, Ռաբբի, Ռաբբունի: Մնացածները զուրկ են կիրառութիւնից, եթե չհաշվենք քերականութիւնը, որ եղակի-քերակի ձևով կա կիրառված արևմտահայերենում (անային կուռք), նաև՝ մեսիա:

Երբայական բառերի մեջ կան բուսանուններ ու կենդանիներ նշանակող բառեր: Այդ բառերը չեն հասկացվել և մնացել են անկիրառելի. օրինակ՝ ալկան, (մի փուշ) ասիդ (մի տեսակ թռչուն), բեհմովր (մի մեծ գազան, որ հետո հասկացել են իբր գետածի), բորկոնիմ (փուշ է), լեփարան (կետ), ևէեղաս (անձանոթ մի թռչուն) ևէեսա (անձանոթ թռչուն) Որոզ (ղժնիկ), սաբեկ (թավ ճյուղեր), սորեկ (ընտիր խաղող կամ որթ), սուարիմ (ժանտաթուղ): Այս բառերը անդարձ հնացել են և անցյալում էլ չեն կիրառվել:

Վերևում բերվածներից բացի կան նաև այնպիսի բառեր, որոնք պատկանում են տարրեր բնագավառների, բայց որոնք առավել ևս չեն հասկացվել ու իբրև այդպիսիք փոխ են առնվել. օրինակ՝ արբանա(բարձր տեղ, նշանակաձորի Աղավանձոր գյուղում մի բարձր դաշտ անվանվում է արբանա), ագանովք (թակույկ), աղար (եբր. 6-րդ ամիսը), ակեղղամա (արյան գյուղ), աղեմովք (լարավոր նվագարան), ամասարակովթ (անոթ), ամատտարա (նետի թիրախ), անբանի, արանիմ (եբր. 7-րդ ամիսը), ապփովք (կոնք ջրի), արարովք (ձավար), արգոր (քուրձ), արիովք (վայրի բանջար), ափիով (արդ, իրոք, ինքն իսկ), ափիուտովթ (ծածուկ, առանձին), բաղեն (շապիկ), բակեղէր (տոպրակ), բամա (զոհասեղան), բեղեկ (շենքի խորհված մաս), բող (սյուն), բոսոր (կարմիր), բուլ (եբր. 8-րդ ամիսը), Փեղղուր (փոխն. գեղուղ-հեն, ավազակ), զեն (վիհ), զեղզեղ (անիվ), եղմոն (այսինչ), եմակ(ձոր), երգար արգար (բացատրվում է վեմ, քարածայր), ենակիմ(ոչ որ անպարտ չէ), երգաղ (նույնն է երգար), եփուղ (անթև կարճ վեղարկու), եփփարա (բացվիր), զիու (ամասնուն), քալպիովք (զինարան), քալ (եբր. այբուրենի վերջին տառը), թեման (տեղանուն, որ հետո նշանակել է հարավ), բեիէ (սենյակ), լամասարաբանի (ինչո՞ւ թողիր ինձ), կաղեսիմ (իզացող), կապպարա (սալահատակ), կեփագեայ (ոսկյա), կուլի (ոտքի կաց), մագարովք (համաստեղութուն), մաննա (մանանա), մաֆման (սավան), մեսքաղ (սեղանի վերակացու), մեֆենովք (խարխախ), միսքաղ (հանդերձապետ), յաֆում (սյուն), յեգեր(պսակ, թագ), յոբելի (շեփոր), նեկաք (հովիվ), նեսար (ղև), նէեղաս, նէեսա (ջալամ), նիսան (եբր. առաջին ամիսը), ոփելթին (պարսավոր), ոսսիմ (սուրհանդակ), սարաֆ (վանդակաձև հյուսվածք), սարեկ (թաղմ ճյուղեր), սաղեմովք (ձոր, հովիտ), սաղեռովք (զորաշար), սասան (թշնամի), սիան (եբր. երրորդ ամիսը), սորեկ (ընտիր). սուարիմ (ժանտ), փարագուն (զորավորներ), փեղմոնի (այսինչ), ֆակկով (տաճարի գանձարան), ֆաղե (ամսանուն), ֆեբեթին (աղեղնավոր), ֆեփուր (բածակ), ֆոթին (թիկնապահ խումբ), ֆովթար (խոյակ), քովմարիմ (քուրմեր), ման (չափ):

Այս ամբողջ շարքից մեր լեզուն յուրացրել է միայն բոսոր, բեման, ֆովթար, որոնցից կիրառական են միայն բոսոր-ը, և քովթար-ը, մնացածը նույնպես հնացել է:

Ինչպես տեսանք, այս բոլոր բառերը անցել են հունարենի միջոցով երբեմն ոչ ճիշտ տառադարձությամբ: Հունարենի միջոցով մեր Աստվածաշունչն են թափանցել նաև այլ կարգի եբրայաբանություններ, որոնք քերականական ու ոճաբանական բնույթ ունեն և մասամբ հարազատա-

ցել են գրաբարի ոգուն և հետագայում յուրացվել նաև մեր գրողների կողմից: Նախադասությունների սկզբում անհարկի եւ շաղկապի հաճախությունը եբրայական ոճ է համարվում, որ անցել է հունարեն Աստվածաշնչին, այնտեղից էլ մերին: Նույնիսկ հունարենի հավելումների մեջ նախնական ու պարզունակ այդ և-երը, որ հենարան են յուրաքանչյուր համադասական նախադասության համար, ընդգծում են այդ նախադասությունների ինքնուրույնությունը և միաժամանակ նաև շարքի թվարկումների համար հենք են ծառայում, երևում են նույնիսկ հունական հավելումների մեջ» օրինակ՝ եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ, և խաւար ի վերայ անդնոց» և հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց: Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս. և եղև լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն, զի բարի է, և մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն և մէջ խաւարին: Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ և զխաւարն կոչեաց զիշեր: Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդայն: ...Եւ ասաց Աստուած. Եղիցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ, և եղիցի մեկնել ի մէջ ջուրցդ և ջուրց. և եղև այնպէս: Ընդգծված մասը եբրայական բնագրում պակասում է, բայց հունարենի հավելվածը դարձյալ և-ով է սկսվում:

Եւ շաղկապը հաճախ կիրառվում է այլ շաղկապների ու հարաբերական որ գերանվան փոխարեն, որ նույնպես եբրայական լեզվի աղբյուրության հետևանք է. հունարենը վերցրել է իբրև պատճենում, որ նույնությամբ անցել է մեր Աստվածաշունչը. օրինակ՝ «Եւ կացուցից զնա իշխան ի հաւատարիմ տեղոց, և եղիցի յաթոռ փառաց տան հօր իւրոյ (Սուրբ 23): Ընդգծված և-ը որ հարաբերականի փոխարեն է գրված ու խորթ է հայերենին: Այսպիսի օրինակներ են. Եւ եմուտ (Աբրամ) առ Ազար, և յղացաւ (Մննդց. ԺԶ, 4): Եւ ամ զձեզ յերկիրն Ամովրհացուց բնակելոց յայնկոյս Յորդանանու, և ետուն ընդ ձեզ պատեհողմ (Յես. ԻԴ 8): Մի յանդիմաներ զչար, զի մի ատեսցեն զքեզ: Այս ճիշտ հայացի նախադասությանը անմիջապես հաջորդում է, յանդիմանեա՞ զիմաստունն, և սիրեսցէ զքեզ, զանմիտն, և յաւելցէ ատել զքեզ (Առ. Թ 8): Մի թողուր զնա, և պատսպարեսցէ զքեզ: Սիրեա զնա, և պահեսցէ զքեզ (Առ. Գ 6 7):

Աստվածաշունչում հաճախ նախադասության սկզբում զովում են և լինէր, և եղև, և եղիցի զարդահավելվածներ, որոնք թարմատարներ են և հատուկ են եբրայական բնագրին: Այդ կապակցությունները նույնությամբ կոչվում են մեղ Աստվածաշունչում իբրև պարզ պատմողակուն ոճի յուրահատկություն, որի անցյալ կատարյալ ձևը մինչև իսկ անցել է մեր նոր գրական լեզվին: Համեմատիր. Եղաւ մի անգամ անտառի միջին Արծիվն ու կաղնին այսպես վիճեցին (Թումանյան): Աստվածաշունչում

այդ երեք ձևերը նախորդում են նախադասության ստորոգյալներին քստ վերջինների ժամանակների. անցյալ կատարյալով ստորոգյալից առաջ դրվում է և եղև. Եւ եղև ի վեց հարիւրերորդի և ի միում ամի կենաց Նոյի յամսեանն առաջնում, որ օր մի էր ամսոյն, նուազեաց չուրն յերեսաց երկրէ (Մնն. Ը 13): Եւ եղև յաւուրն ութերորդի կոչեաց Մովսէս զԱհարոն և զորդիս նորա և զծերակոյտն Իսրայելի (Ղևտ. Թ 1), Եւ եղև իբրև շուեաց ժողովուրդն ի խորանաց իւրեանց անցանել ընդ Յորդանան (Յես. Գ 14):

Եթե հաջորդող ստորոգյալը ապառնի ժամանակով է, թարմատար հավելվածը նույնպէս ապառնիով է կիրառվում. և եղիցի: Եւ եղիցի յորժամ զայցեն հարբն նոցա կամ եղբարք նոցա դատել ընդ ձեզ, ասասցուք նոցա, թէ ողորմեցաք նոցա (Գատ. ԻԱ 22): Եւ եղիցի յորժամ տանիցի զքեզ տէր Աստուած քո յերկիրն, զոր երզուաւ Տեր հարցն քոց Աբրահամու և Իսահակայ և Յակոբայ (Օրէն. Զ 10): Եւ եղիցի յորժամ հարցանիցէ քզեզ վաղիւ որդին քո (Օրէն. Զ 20):

Իսկ երբ հաջորդող ստորոգյալը կիրառվում է անցյալ անկատարով, թարմատար հավելվածը դառնում է և լինէր: Եւ լինէր իբրև վարէր Իսրայել, ելանէին ալլազդիբն և ապականէին զբերս երկրին: Սակայն պետք է ասել, որ այս վեցիցին ձևով չի հաճախված, և մինչև իսկ այս դեպքում էլ լինում է և եղև: Համեմատիր, Եւ եղև յետ գերութեանն Իսրայելի և աւերածոյն Երուսաղեմի նստէր և լայր և ողբայր Երեմիա զողբս, զայս ի վերայ Երուսաղեմի և ասէր (Ողբ Ա 1):

Ե եղև այնքան է շատ, որ մինչև իսկ լինել բայի անցյալ կատարյալի վրա է դրվում, որ այնքան էլ գեղեցիկ չի հնչում. Եւ եղև յամին մետասաներորդի, որ օր մի էր ամսոյն, եղև բան տեառն առ իս (Եզեկ. ԻԶ 1):

Երբայական աղղեցութիւն է համարվում նաև յաւելում բայի կիրառութիւնը որևէ բայի անորոշ զերբայի հետ, ուր բացի օժանդակ բայի դերից յաւելում արտահայտում է գործողութիւն կրկնութիւնը՝ զարձայլ, մյուս անգամ ևս, մի անգամ ևս, այլևս նշանակութիւններով: Եւ դարձեալ արձակեաց զաղանին, և ոչ ևս յաւել դառնալ առ նա (Մնն. Ը 12): Ոչ ևս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան (նույն տեղում 21): Եւ յաւել ևս խօսել ընդ նմա (նույն տեղում ԺԸ 29): Եւ յաւելին որդիքն Իսրայելի առնել շար առաջի տեառն (Գան. ԺԳ 1): Եւ յաւել սրտմութիւն Տեառն (բարբոքել ի վերայ Իսրայելի Բ Թագ. ԻԳ 1): Եւ յաւել արքայ առաքել առ նա այլ յիսնապետ և զյիսունս նորա (Գ Թագ. Ա 11): Եւ յաւել Աբրահամ առնուլ կին, որում անուն էր Քետուրա (Մնն. ԻԾ 1): Այս կապակցութիւնը նույնպէս տարածված է Աստվածաշնչում:

Երբայական լեզվին է հատուկ ամենայն բառի կիրառութիւնը Ոչ մի կապակցութիւն նշանակութեամբ ժխտական նախադասութիւնից հետո, որ անցել է հայերեն Աստվածաշնչին. օրինակ՝ Յորժամ թագաւոր արգար նստիցի յաթոռ, ոչ դառնայցէ ընդդեմ աշաց նորա ամենայն շարագործ (Առ. Ի 8): Ամենայն բառը այս նշանակութեամբ անցել է նաև նոր կտակարանին: Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի ելցէ (Եփ. Գ 29):

Երբայաբանութիւններ են համարվում նաև երեսուց և ձեռն բառերի հետևյալ կիրառութիւնները. Պատմեցես դու որդւոյն քում և ասիցես. թէ զի պակասեաց գեան Յորդանան յերեսաց տապանակի ուխտին Տեառն (Յես. Գ 7): Եւ յարեաւ Դաւիթ փախեալ յաւուր յայնմիկ յերեսաց Սաւուղայ: Եւ ապրացոյց Յեսու զնոսա յաւուր յայնմիկ ի ձեռաց որդւոցն Իսրայելի և ոչ կոտորեցին զնոսա:

Այս յերեսաց, ի ձեռաց կապերը գալիս են երբայերենից, բայց ինչպէս մեր բարբառներին, այնպէս էլ նոր գրական լեզվին հարազատ են: Այս հարազատութիւնը ինքնուրույնութիւն արդյունք է. և ոչ թե աղղեցութիւն: Այնպէս որ դրանք կարող էին մեր լեզվում ևս հենարան ունենալ:

Երբայաբանութիւններ են խնդրել զանձն ուրախ (սպանել), նաշակել զմահ (մեռնել), առնուլ անուն (անվանի դառնալ) և այլապիսի այլ ընդօրինակումներ:

Երբայաբանութիւն է նաև դնեմ և տամ բայեր կիրառելը առնելու բայի փոխարեն. փոխանակ հայկաբանութեամբ ասելու արարի զխաւարըն լոյս կամ կացուցի զեկ Աստուած, ասվում է. Եւ եղից քբեզ յազգս (Մնն. Ժէ 6): Եւ տաց գնա յազգ մեծ (նույն տեղում 21): Հայր ազգաց բազմաց եղի զքեզ (նույն տեղում Ժէ 6): Զլեզուս եղ պարզախօսս (իմաս Ժ 21):

Աստվածաշնչում հաճախ նկատվում է հոլովված հարաբերականից հետո նույնահոլով մի այլ զերանուն, որ երբայական հավելադրութիւն է և հատկանիշ ժողովրդական խոսքային հավելադրութիւն և հետևանք դեռևս շկազմակերպված խոսքի: Աստուած, Որոյ ճշմարիտ են գործք նորա (Բ Մնաց. ԼԲ 4): Յոսս յուսացեալ էին ի նոսա (նույն տեղում 38): Երկիր, զոր Տէր Աստուած քո դարմանէ զնա, հանապաղ աշք Տեառն Աստուծոյ քո ի վերայ նորա (Բ Օրէն. ԺԱ 12): Քանզի երկիրն, յոր մտանելոց էք ժառանգել զնա, ոչ իբրև զերկիրն Եգիպտացոց է, ուստի ելէք դուք անտի (նույն տեղում 10): Կորուսանելով կորուսչիք զամենայն տեղիսն, յորս պաշտեցին ի նոսա ազգքն, զորս դուք ժառանգիցէք զնոսա (նույն տեղում ԺԲ 2):

Երբայաբանութիւնն է համարվում նաև լինել բայի ստորոգելիական վերադիրը ի նախդիրով հայցական կիրառելը, մինչդեռ բուն հայերենը ուղղական է. օրինակ՝ Այլ Աբրահամ լինելով լինիցի յազգ մեծ (Մնն. Ը 18): Եւ եղեն անդ յազգ մեծ և ի բազում և ի հօր (Յես. ԻԳ 5): Եւ օրհնեցից զնա, և եղիցի յազգս (Մնն. Ժէ 16):

Այդպես պետք է լինի նաև ներգործական բայի երկրորդական խընդիրը ի նախդիրով: Համեմատիր, օծի զքեզ ի բազաւոր ժողովրդեան Տեառն ի վերայ Իսրայելի (Դ թագ. Թ 6): Օծի զքեզ քազաւոր ի վերայ Իսրայելի (նույն տեղում 12): Առանց նախդիրի ձեռն է հարազատ հայկաբանութիւնն:

Աստվածաշնչում երբեմն գիմաժոր բայի իմաստը ուժեղացնելու նպատակով նույն բայի անորոշ դերբայը գործիականով վերադիր է դառնում, որ համարվում է երբայերենի լեզվական հատկանիշ. օրինակ՝ Եւ եղիցի եթէ ուսանելով ուսանեցին զճանապարհ ժողովրդեան իմոց (Եր. ԺԲ 16): Գիտելով զիտասշիֆ, զի ոչ սա յաւելուցու Տէր սատակել զազգսն զայնոսիկ (Յես. ԻԳ 13): Ապա թէ դառնալով զառնայցէֆ և յաւելուցուք յազգսն մնացեալս ի ձէնչ (նույն տեղում 12): Եւ փրկելով ոչ փրկեցնեն զնոսա ի ժամանակի շարեաց իրեանց (Եր. ԺԱ 12):

Նույնպիսի դարձվածքի մի տարբերակն է նույն բայահիմքից կազմուած գոյականի գործիական հոլովի կրկնութիւնը բայի հետ. օրինակ՝ Զի վկայութեամբ եղի վկայութիւն հարցն ձերոց յատուրն հանելոյ իմոյ զնոսա յերկրէն եգիպտացոց մինչև ցայսօր (Եր. ԺԱ 7): Վասն իմ ապականեցաւ ապականութեամբ ամենայն երկիր (նույն տեղում ԺԲ 11):

Երբայական ոճով Աստվածաշնչում միևնույն նախադասութիւնը տարբեր բառերով կրկնվում է ու և -ով շաղկապվում, որ ուժգնութիւնն է տալիս նախորդ նախադասութիւնը, և բոլորովին նոր ձևով է արտահայտվում: Ըստ Այտնյանի ոճական այս ձևը Երբայական բանաստեղծութիւնն էութիւնն է կազմում: Իսկապես որ այդ ոճը ամենից պայծառ արտահայտվում է Սաղմոսներում: Եղեսցուք զկապանս նոցա և ընկեսցուք ի մէնչ զլուծ նոցա: Բնակեալս յերկինս ծիծաղեսցի զնորօք, և տէր արհամարհեսցէ զնոսա (Սաղմ. Բ 3—4): Բանից իմոց ունկն դիր, տէր, և ի միտ առ զաղաղակ իմ (Ե 2): Տէր մի սրտմութեամբ քով յանդիմաներ զիս և մի բարկութեամբ քով խրատեր զիս (Զ 2): Ողորմեա ինձ, տէր, զի հրանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, խոտվեցան ոսկերք իմ: Լուացի զամենայն զիշեր զմահիճս իմ և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի (Զ 7):

Զարմանալի է բնագրի համանիշային հարստութիւնը, մանավանդ որ ամբողջ Սաղմոսները զրված են համանիշային փոփոխականերով,

որոնք միևնույն մաքերը այլևայլ բառերի միջոցով դրսևորում են նոր պատկերներով, թարմ ու արտահայտիչ բառերով՝ դարձնելով այն խոսքային գեղեցկութիւնների մարգարտայա շարվածքներ: Սակայն առավել դարմանալի է հայերեն թարգմանութիւնը, որ ճշտութեամբ ու գեղեցկութեամբ արտահայտել է ոչ միայն բնագրի բանաստեղծական գեղեցիկ ոգին, այլև համանիշային ծով հարստութիւնը՝ միշտ նույնաբանութիւն անխուսափելի վտանգից զերծ մնալով: Սա ապացույց է ոչ միայն լեզվի շքեղութիւնն ու հարստութիւնն, այլև թարգմանիչի լեզվական արվեստի հմտութիւնն և գեղագիտական ընկալման:

Երբայաբանութիւնն է համարվում սեռական հոլովով որոշիչը, երբ այս վերջինը թվով կամ հոլովով համաձայնում է իր հատկացուցիչի հետ. օրինակ՝ Զոճեաց զոհոս խաղաղականաց, լուսաւորեցան ջրովն կենդանութեամբ, ձայնիւ հառաչմամբ, ի խորոց անդնոց երկրէ:

Յարենէ ուտիւոց (փոխն. յուտելոյ զարիւն). Երբայաբանութիւնն է նաև նախդիրի կրկնութիւնը. օրինակ՝ Զուխտն ընդ Աբրահամու, ընդ Իսահակայ և ընդ Հակոբայ՝ ընդ հաւատարիմ ծառայս իւր (ԲՄակ. Ա 2). Փոխն. Զուխտն ընդ Աբրահամու, Իսահակայ և Հակոբայ՝ ընդ հաւատարիմ ծառայս իւր (հայերենում հաճախ բացահայտիչն անգամ նախդիր չի առնում, այլ իշխվում է բացահայտալի նախդիրով):

Գ) ԱՍՈՐԵՐԵՆ ԲԱՌԵՐ

Աստվածաշնչում կիրառված ասորերեն փոխառութիւնների մեծ մասը ժողովրդական բառեր են, որոնք կան ոչ միայն գրական լեզվում, այլև բարբառներում: Խոսվածքներում կիրառվում են զիրկ (զուրկ), թոհուրոհ, խանձարուր, խանութ, խարտել, խլուրդ, խմոր, ծարիր, ծոմ, կացին, կաքաւ, կեղև, կողով, կողոփ, կուպր, հաշիւ, ձէթ, ձիւթ, մալուխ, մանանայ, մանգաղ, մաշկ, շաբաթ, շալակ, շամփուր, շուշան, ուրբաթ, սատանայ, տերև, տղայ, ցամաք, փարատել, փրկել, քահանայ, քարոզ, քուրմ, քօշ: Սրանք անպայման ժող. փոխառութիւններ են:

Գրական բառեր են բուրգն, գաղութ, գուր, դար, զուլգ, թարգման, լումայ, խանձարուր, ծնծղայ, ծրար, կաթսայ, կասկարայ, կեղև, հեթանոս, հրեայ, դեկ, մազաղաթ, մակաղել (մեր խոսվածքում մղղղել), մամոնայ, մաշել, մաշկ, մաքս, մտրակ, շափղ, շափիղայ, շեփոր, շղթայ, շպարել, շայլամն, սկահ, սուին, սուսեր, սպեղանի, տառապել, տեղ (տեղում), փեզանայ, փիլիսոփայ, քանքար, քնար:

Արդեն անգործածական են ամզան (վերարկու), անկան(սանդ), բասրել, (պարսավել), գաղիշ(դեղ), գզաթ(բուրդ), զոպայ, թանգար, թարշիշ (թանկագին քար), իլուլ (ամսանուն), խարագուլ(մորեխ), խարբալի(մաղի), խիլա խլալ (զգեստ), խորգ (քուրձ), կմախի(ողբ, կոծ), հաղբ(որոգայթ), ձանձախարիթ, մաշկն(վրան), մարանաթայ (նզովր), մուլ (էգ էշ), յամոյր (վայրի այծ), նաշիհ (մանր ալյուր), շուփայ (աշրի դեղ), սակուր (կացին), սենն(սունի), սխուր (վարձ գործածված շանսխուր ձևով), սրովթէ, տոփայ(լաստ), քաղղեայ կամ քաղղեայ, քարար (խմորեղեն), քերովբէ:

Արևմտահայերենում գործածվում են բասրել, գզաթ, զոպա, խլա, խորգ, հաղբ, յամոյր, նաշիհ, սենն, շանսխուր: Ընդհանուր գրական կիրառություն են ունեցել թանգար, խարբալի, սակուր, սրովբէ(սերովրեն), քաղղեայ, քաղեայ, քերովբէ: Մեր բարբառում (Արովյանի շրջան Կոտայք) կա անկան-ը անգանակ ձևով:

Ասորաբանություն են համարվում հետևյալ բառակապակցությունները իբրև ասորերենին հատուկ կառույցներ. բանից ընկեր (մտերիմ), լղել աւետարանս (այսինքն՝ աւետարտութիւն), խօսել կալա (սկսեց խօսել), ի հարուածս որովայնի, որ ոչ գոչր նմա բժշկութիւն, ի շափ հասանել հերաց (աճել), գոյ և ալլ, որ ես ստացայ ինձ ոսկի և արծաթ և ալլն: Ասորաբանություն է համարվում համանիշ բայերի միաշար կիրառությունը, որի դասական օրինակները առկա է Փալստոս Բուզանդը: Ապա անգանէր, քաալէր, խնդրէր յԱստուծոյ (Բուզ. Գ 8): Ծինեաց սոյնպէս, կարգեաց, կազմեաց և հաստառեաց (Բուզ. Դ 4): Աստվածաշնչի Մնացորդաց զըրբերը, որոնց ասորերենից կատարված թարգմանությունը հասել է մեզ, ունեն բայական համանիշների այդպիսի շարքեր, երբ հունարենից կատարված նույնի թարգմանությանը պակասում են դրանք: Այսպես Մնացորդաց զըրբերում կան բայական համանիշների բազմաթիվ խմբեր: Օրինակ՝ Բերին, մուծին և եղին: Պատրաստեցան, կազմեցան: Ճակատեցան և համարձակեցան: Անգանհր, տարածէր, հարկանէր և յապականութիւն դարձուցանէր: Վերացեալ, թուցեալ, տարածեալ և խոնարհեալ: Պարզեալ, սրբեալ և զտեալ: Ածից կարեցից և փակեցից: Զօրացաւ, քաշալերեցաւ և ընդխառնեցաւ: Վարեցայց, կազմեցայց և պատրաստեցայց: Մեծամտեաց, հպարտացաւ և բարձրացան սիրտ իւր:

Փոխառված բառերի ընդհանուր քանակն է 386: Մոտավոր հաշիվներով Աստվածաշնչի բառերի ընդհանուր քանակն է ավելի քան 10000:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| Ներածություն | 5 |
| Բառապաշար | |
| Ա. Անբաղադիր բառաշեռերը | |
| ա) Համաժողովրդական բառեր | 60 |
| բ) Գրականության միջոցով համաժողովրդական ընդլից ստացած կամ նոր գրական լեզվին անցած բառեր | 64 |
| գ) Արևմտական բառեր | 68 |
| դ) Մթագնած հին բաղադրյալ բառեր | 69 |
| ե) Բարբառային բառեր | 71 |
| Բ. Ածանցավոր բառեր | |
| ա) Նախածանցավոր բառեր | 76 |
| բ) Նախդիր-նախածանցներով բառեր | 77 |
| գ) Վերջածանցավոր բառեր | 79 |
| Գ. Բարդ բառեր | |
| ա) Կրկնավոր բարդություններ | 125 |
| բ) Կցական բարդություններ | 128 |
| գ) Վերջին բաղադրիչը ձայնավորով սկսվող բարդ բառեր | 130 |
| դ) Հոդակապով բառեր | 133 |
| Դ. Բայերը | |
| Ա. Ա խոնարհման բայերը | 155 |
| Բ. Ե խոնարհման բայերը | 162 |
| ա) Պարզ բայեր | 162 |
| բ) Ե խոնարհման պարզ ներգործական բայերը | 163 |
| գ) Ե խոնարհման պարզ երկօժեռ բայերը | 165 |
| դ) Ե խոնարհման պարզ շեղոր բայերը | 165 |
| ե) Այնպիսի բայեր, որոնց խոնարհումը ըստ Աստվածաշնչի անորոշ է Ե և Ի խոնարհումների միջև | 166 |
| զ) Ե խոնարհման ածանցավոր բայերը | 170 |
| է) Ի խոնարհման պարզ բայերը | 179 |
| ը) Ի խոնարհման ածանցավոր բայերը | 184 |
| թ) Ու խոնարհման բայերը | 186 |
| ժ) Պատճառական բայեր | 187 |
| Ե. Աստվածաշնչի հնացած բառերը | 190 |
| Զ. Բառագործածության հաճախականությունը | 205 |

| | |
|--|-----|
| է. Աստվածաշնչի կրած օտար լեզվաոճական ազդեցություններ | 211 |
| ա) Հունարանություններ | 213 |
| բ) Եբրայարանություններ | 220 |
| գ) Ասորերեն բառեր | 227 |

ՎԱՐԱԿ ԳԱՎԹԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԳԱՐԻ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ

Հրատ. խմբագիր Փ. Հ. ՄԱԿԱՆՅԱՆ
նկարիչ ՅՈՒ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխ. խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ Ա. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ИБ № 656

Հանձնված է շարվածքի 22. 03. 83 թ.: Ստորագրված է տպագրության 2. 12. 1983 թ.:
ՎՋ 12375: Չափը 60×84¹/₁₆ թուղթ № 1: Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր
տպագրություն Պայմ. 13,48 մամ., տպագր. 14,5 մամուլ: Հրատ. հաշվարկ 12,56 մամուլ:
Տպարանակ 1500: Հրատ. № 5907 Պատվեր № 346: Գինը 1 պ. 95 կոպ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 գ.:
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան Մարշալ Բաղրամյան պող., 24:
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.

1 P. 95 4.

8
U-70

42